




ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՈՒՂԵՑՈՅՑ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

Patmutiwn kam ujhetsoyots...

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ


ԿԱՄ

ՈՒՂԵՑՈՅՑ
ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ
Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ
Տ. ՄԿՐՏՉԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ՝
—(1872)—

ԱԶԴ

ՆԵՐԿԱՅ հրատարակութիւնը—ՊԱՏՄՈՒԹԻՒՆ կամ ՈՒՂԵՑՈՅՑ Մ. ՏԵՂԵԱՑ—կը պարունակէ իւր մէջ տեղագրական և պատմական ծանօթութիւնք հին ու նոր յիշատակաց և անցից, որոնք քաղուած են համազգի և օտարազգի յիշատակարաններէ և. խնամով կարգաւորուած 'ի հմտութիւն բարեպաշտ ուխտաւորաց և ամէն հարցասէր ընթերցողաց։ Հետեւապէս, կենդանի առաջնորդ մ'է սա, որով կարէ ընթերցողն, թէ անձամբ և թէ մտօք, շրջագայել Պաղեստինի մէջ և գոհացուցիչ տեղեկութիւններ ըստանալ ամէն տեղեաց, հնութեանց և ազգաց սեպհականութեանց վրայ։

Արդ՝ այսպիսի մի երկասիրութիւն 'ի վաղուց անտի բաղձալի էր թէ մեզ և թէ շատերուն, ուստի և յուսով եմք որ Ներկայ հրատարակութիւնն, լըրումն լինելով բազմաց բաղձանաց, հաճութեամբ կ'ընդունուի և կը քաջալերուի ընթերցող հասարակութենէն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՈՒՂԵՑՈՅՑ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

Ուխտաւորք ի Յոպպէ, եւ ուղեւորութիւն նոցա դէպ ի Ռէմլէ։

ԵՐՈՒՍԱՂԷՄ *ուխտի եկող տէրունական ուխտաւորքը, որ ծովային ճանապարհորդութեամբ կ'ընեն իրենց ուղեգնացութիւնը, նախ Յոպպէ կուգան և յետոյ անտի Երուսաղէմ կ'ելնեն։ Յոպպէ ծովահայեաց ու ամփիթատրոնի ձեւով շինուած քաղաք մի է, որու մէջ օթեւան կամ պանդոկ չկայ ճանապարհորդաց համար, և իւրաքանչիւր ազգաց ուխտաւորք՝ իրենց ազգային վանքերուն մէջ կ'իջեւանեն։*

Այս քաղաքը աշխարհիս հին քաղաքներէն մէկը կը համարուի։ Աւան-

դութեանց նայելով՝ ջրհեղեղէն առաջ եւս կար, Նոյ իւր Տապանը այս քաղաքին մէջ շինեց, և ջրհեղեղին ժամանակ քաղաքը քանդուելով, և անոր Յաբէթ որդւոյն ձեռօք վերստին շինուելով նորա անունն եւս ստացաւ։

Յովնան մարգարէն Տիրոջը ձեռքէն խոյս տալու համար, (որ իրեն կը պատուիրէր Նինուէ երթալ քարոզելու համար,) այս քաղաքս եկաւ, ուրկէ նաւը մտնելով դէպ 'ի Թարսիս կը փախչէր։ Տիւրոսի Քիրամ Թագաւորը Լիբանանու լեռնէն կտրել տուած փայտերը այս տեղ նաւէն դուրս հանեց՝ Սողոմոնին խրկելու, որոնք Ճշմարտին Աստուծոյ Տաճարին շինութեանը գործածուեցան։

Այս քաղաքին մէջ Ս. Պետրոս առաքեալը յարոյց Տաբիթան. և դարձեալ հոս Սիմոն խաղաղորդի տանը մէջ տեսաւ սուրբ և անսուրբ անասնոց տեսիլը։ Այն տանը տեղը մինչեւ ցայսօր կը մնայ քաղաքին մէջ և ծովեզերքէն քիչ մը ներս է, որու մէկ մասը Տաճկաց և մի փոքր մասն ալ Հայոց կը վերաբերի։

Յոպպէի նաւահանգիստը միայն մէկ

նաւամատոյց ունի, այն է մաքսատանը. ուր պարտաւոր են ելնել ամեն ճանապարհորդք։ Մաքսատունէն ելնելով դէպ 'ի ձախ կողմը կ'իյնի Յունաց, Լատինաց և Հայոց վանքերը կարգաւ։ Հայոց վանքը սուրբ Նիկողայոսի անուամբ մատուռ մի ունենալով, նորա անուամը քը կը յիշուի. ունի իրեն առանձին վարդապետ Տեսուչ (լէկիլ) մի, ժամարար մի, և քանի մի միաբանք, Թարգման և Ծառախձի, որոնք ուխտաւորաց հանելուն մեծ խնամք և զգուշութիւն ցոյց կուտան վտանգ մի չպատահելու։ Ուխտաւորք քանի մի օր սոյն վանքիս մէջ կ'անցընեն, և իրենց 'ի բնէ անտի սովորական եղած դարգաս անուանով սուրքը կը վճարեն Թէ՛ Յոպպէի և Թէ Ռէմլէի վանուց համար։ Այն սուրբ Նիկողայոսի վանքին մէջ մեծն Նափոլէոն Ա. հաստատեց իւր զինուորաց համար հիւանդանոցը, ուր պատսպարուեցան ժանտախտէ բռնուածները, և ինքը Նափոլէոն ստէպ կուգար անոնց այցելութեանը. այս տեղս ընդարձակ սրահ մ' էր որ իբր հոգէտուն կը ծառայէր, իսկ հիմակ խուցերու բաժնուած է։

Յոպպէի մէջ 6000 էն աւելի բնակիչ կայ, որոնց մեծ մասը մահմետական են, Հայոցմէ հազիւ թէ 40 հոգի կըհաշուի։ Վաճառականութիւնը բաւական բանուկ է և գրեթէ առ հասարակ քրիստոնեից ձեռքն է։

Յոպպէէն մինչեւ Երուսաղէմ մէկ օրուան մէջ հասնելու համար, պէտք է ձի հեծնալու մէջ բաւական վարժ ըլլալ, և լաւ ձի մը ունենալ. վասնզի 10 ժամէ աւելի հեռաւորութիւն ունի։ Այս պատճառաւ սովորութիւն եղած է նախ Ռէմլէ հանդիպիլ և գիշեր մի հոն մնալ և առաւօտ կանուխ ճամբայ ելնել։ Քաղաքի դռնէն դուրս ելնելէն յետոյ, ճանապարհը շուկայի մը մէջէն է, ուր զանազան տեսակ բերքերով լեցուն է, այսինքն, նարինջ, լեմոն, նուռ, ադամաթուզ, շաքարեղէգ և այլն, աշնան՝ ձմեռուան և գարնան ժամանակները։ Իսկ ամառուան մէջ եղածներն են, լեմոն, ձմերուկ, փօմաք, խաղող, թուզ, թութ, և ամէն տեսակ բանջարեղէն՝ զորոնք ծախողներն են ճերմակ և սեւամորթ արաբացիներ։ Այս շուկային ճանապարհը այնպէս խռնած է

անցուղարձով, որ պէտք է ձիով անց-
նելու ժամանակ խիստ զգոյշ ըլլալ՝ քան
մի չկորանցնելու և կռիւ մը չպատճա-
ռելու։ Վաճառուատեղիէն յետոյ կէս
ժամու չափ երկու կարգ պտղաւէտ
պարտէզներու մէջէն կ՚անցնուի, և այս
պարտէզներուն ծայրն է Սարօնի դալա-
րագեղ դաշտը, որ խիստ պտղաբեր տե-
ղեաց մին կը համարուի։ Այս դաշտը
փոխանակաբար՝ տարի մը առատ հունձ
կուտայ և միւս տարին անմշակ մնալով
գեղեցիկ արօտ կը բերէ երկիրը, գար-
նան մէջ անհամար ծաղիկներով կը ծած-
կուի քրդուհւոյ մը ձեռքով հիւսուած
խալիչայի նման, որոնց մէջ կը գտնուին
կակաչ և հարսնուկ։ Այն դաշտը ան-
ուանի է Սամփսոնի յիշատակովն, ուր
տեղ Փղշտացւոց հունձերը այրեց նա,
300 աղուէս թողլով նոցա մէջ՝ որոնց
ագիներուն վառած ջահեր կապած էր։
Սարօնի դաշտին մէջ տեղն է Ռէմլէ գիւ-
ղաքաղաքը, որ Յոպպէէն 3 ժամ է՝ դէպ
՚ի արեւելք։

Ռէմլէի 40 րոպէ մնալով կը տես-
նուի Լուդ քաղաքը, որ և Դիոսպոլիս
կը կոչուէր, ուր տեղ Պետրոս առա-

քեալ բժշկեց Լ՛նա անուն անդամա-
լոյծը[1] ։ Ս. Գէորգայ ծննդեան քաղա-
քըն է և Նիկոմիդիոյ մէջ նահատակ-
ուելէն յետոյ հոս փոխադրուեցան նորա
նշխարքները , և Յուստինիանոս կայսրը
փառաւոր եկեղեցի մի շինեց յանուն
սրբոյն ։ Այն եկեղեցւոյն մէջ եղաւ 414
Թուին ժողով մի ընդդէմ Պեղագիոսի ,
որ կ՚ուրանար սկզբնական մեղքը և
աստուածային շնորհաց պիտանաւորու-
Թիւնը ։ Ժամանակէ յետոյ Մահմետա-
կանք տիրելով քաղաքին Սալահատինի օ-
րով , եկեղեցին կործանեցին , որուն մէկ
մասը միայն կանգուն կը մնայ և միւս
աւերակ մասին վրայ մզկիԹ և մինարէ
մի կայ ։ Այն եկեղեցւոյ տեղւոյն հա-
մար քանի մի տարի է վէճ կար Յու-
նաց և Լատինաց միաբանուԹեան մէջ ,
որոնք իւրաքանչիւր կը պնդէին իրենց
սեփական լինել . վերջապէս Յոյնք աջո-
ղեցան իրենց իրաւունքն յայտնել և տի-
րելով տեղւոյն սկսան նորոգուԹիւներ ընել

6800 ի չափ բնակիչ ունի , որոնց մեծ
մասը մահմետական են , և 2000 ի չափ
Յոյն , և քանի մի Լատին ։

(1) Գործք . Թ . 32—35 .

ՌԵՄԼԵ

Ռէտէսթէ է հին Նըմէմաթէկո քաղաքը, որ էր հայրենիք Յովսէփայ և Նիկողէ-մոսի , որոնք Քրիստոսի մարմինը պա-տելով գերեզմանին մէջ դրին ։ Ռէտէսթէ կից է Բռստաառն Ծանկանց աշտարակը , ո-րոնք Սեբաստիոյ մէջ նահատակուեցան, և հին ժամանակ եկեղեցի էր ։ Գաւի-թին մէջ տեղը փոքրիկ մզկիթ մը կայ , և աշտարակին ծայրը կ՚ելնուի 113 աս-տիճանով ։

Միջին դարուն մէջ բաւական շէն քաղաք էր՝ պարսպապատ և 12 դռնով. իսկ այսօր աղտեղի և աւերակներով լե-ցուն փողոցները կ՚երեւին, ՚ի բաց ա-ռեալ երեք ազգաց վանքերը ։

Հայոց վանքը շինուած է սուրբ Գէ-որգայ անուամբ , որուն նուիրուած է փոքրիկ մատուռը ։ Այն վանքին մէջ գի-շեր մի կը հանգստանան ուխտաւորք թէ՛ նոր եկած և թէ յետ դարձած ժա-մանակնին ։ Ունի Տեսուչ վարդապետ մի և Թարգման՝ հանդերձ քանի մի մի-աբանով ։ Ուխտաւորք հոս եկած ժա-մանակնին դարպասական ողորմութիւն

չեն տար, ըստ որում Յոպպէ տուքին երկուսը մէկտեղ։ Քանի մի ժամ միայն հանգստանալէն յետոյ գիշերով ճանապարհ կ'ելնեն ուխտաւորք դէպ Յերուսաղէմ ուղեւորելու, որ 7 ու կէս ժամու չափ ճանապարհ է։

Ուղեւորութիւն ի սուրբ Երուսաղէմ

Վանքէն մեկնելով և 10 րոպէ քալելով գերեզմանատունը կը հասնուի, ուր-կէ կ'սկսի դարձեալ Սարօնի գեղեցիկ ու բարեբեր դաշտը։ Անկէ մինչեւ Եը—Պէրրէհ գիւղը որ աջ կողմը կ'ինկնի, 22 րոպէ է. ճանապարհին կամուրջէ մի կ'անցնուի, և տեղ տեղ աջ կամ ձախ դին կ'երեւին պահապանաց աշտարակներ, որոնք Սիւրէա փաշային ժամանակ շինուեցան ուղեւորաց ապահովութեան համար։ 7 րոպէ եւս յառաջելով՝ ձախ դին կ'երեւի Եազուրէ ըսուած տաճկաց գիւղը, և 30 րոպէին բարձր բլրի վրայ Ապու—Շուշէ ըսուած Բիւղէն և ձախ դին ուրիշ Բիւղէ մի Քեֆր—Դօպ անուն հին գիւղը մի աւերակներով պատած, յետոյ կը հասնինք Եը—Ռամպայ գիւղը,

որ ձախ դին կ՚ինկնի։ Այն գիւղին սա-
րադաշտէն վար իջած տեղը Մարօնի
դաշտին ալ վերջին մասն է. ասկէ դէպ
յարեւելք լերան ստորոտը կ՚երեւի
Պէյդ-Նուգա, որ Նըքիմելէք քահանա-
յապետին հայրենիքն էր, նա որ Դրա-
Թի մատոյց Նաւջաւորաց հացը։

Վերոյիշեալ սարադաշտէն վար կա-
մուրջի մի վրայէ անցնելով և 44 րոպէ
յառաջ գնալով՝ աջ ձեռքի վրայ կը հան-
դիպի պզտի աղբիւրակ մի և բլուր մի՝
որու վրայ է Լուդրօն ըսուած կիսաւե-
րակ գիւղը։ Նանդուլթեանք կ՚ըսուի
թէ հոս էր եգիպտացի Դեմոս անուն՝
բարի աւագակին բնակարանը։ Այն
բլրին քով կը վերջանայ Մարօնի դաշտը
և կըսկսին Յուդայաստանի լեռները։

Լազքունէն իբր ութ րոպէ՝ ձախ
կողմն է հին Եմմաւուր. այս քաղաքս
շատ պատերազմներ տեսնելով, յետոյ
Վեսպասիանոս կրկին շինելով Նիկոպօ-
լիս անուանեց։ Նոր մէջ դեռ կը տես-
նուի խիստ հին եկեղեցւոյ աւերակ մա-
սեր յանուն եօթն Մակաբայեցւոց։

Ասկէ շարունակելով ճանապարհը
29 վայրկեան, պահապանաց երկու աշ-

տափարակ կը հանդիպին, և ճանապարհին վրայ տեղ տեղ ջրի ակեր կը գտանուին. երկրորդ աշտարակին քովերը, որ ձախ կողմը կ'իյնան, ջրհոր մի կայ որ Պիր–Էյուպ կ'ըսուի։ 5 րոպէ ետև յառաջ՝ կամուրջ մի կայ, ուսկէ անցնելով ձախ դին բարձրկեկ տեղւոյ մի ծայրը հին ու երեսի վրայ թողուած տուն մի կը տեսնուի, այն է Տէր–Էյուպ բառը, որ կը նշանակէ Յօբայ վանքը։ Ասկէց 17 րոպէ կը տեւէ Պապ–էլ–ուատի (ձորադուռ) ուր աջ կողմը խորճիթ մի կայ իբրեւ սրճարան, ուր սովորաբար ուխտաւորք կ'իջնեն քիչ մի հանգիստ առնելու և սուրճ մի խմելու։

Սրճանոցէն ելնելով անմիջապէս կը մտնենք Յուդայաստանի լեռներուն կիրճը (պօղազ), և երկու շարք լերանց մէջէն 42 րոպէ քալելով՝ Սարիս գիւղի ձիթենաստանին մէջ կ'ելնենք, լերան ոտքը. աջ դին ջրի պզտի ակ մի կայ Այն–Շամիէն կոչուած, բայց ջուրը շատ լաւ չէ։ 20 րոպէէն կը հասնինք Քասթօլ ըսուած գիւղը, և անկէ 30 րոպէ ալ քալելով Կարիէթ–էլ–էնապ (խաղողոյ գիւղը) կու գանք, որ աջ կողմի բլրին ծայրը

զինուած է։ Այս գիւղը որ միւսներուն քով աւելի նշանաւոր է. Առողջ կը կոչուի վաթսուն տարիէն 'ի վեր է, իւր մէկ Շէխին անուամբը, որ երբեմն էր իւր բռնութիւններովը և վանքերուն տուած վնասներովը, ուխտաւորաց վը-րայ անցատուքը դրած էր և շատ նե-ղութիւն կուտար անոնց։ Իպրահիմ փաշայ 1830ին տարը ուժը խորտակեց, և հիմակ այն Շէխին սերունդը յետին չքաւորութեան մէջ են։

Այս գիւղը հին Կարիաթարիմն է, Յուդայի ցեղին մէջ. Այս տեղ Ամի-նադաբայ տանը մէջ մնաց Տապանակը, Փղշտացիք իրենց քովէն հեռացընելէն յետոյ։ Սեմէի որդի Ուրիա մարգարէն Կարիաթարիմէն էր, որ այն քաղաքին և երկրին դէմ կ'ուղղէր իւր մարգարէու-թիւնները, և Յովակիմ արքայն սպան-նել տուաւ զինքը(1)։

Այս գիւղին մէջ հին եկեղեցւոյ աւ-երակներ կան, և շատ ատեն չկայ Ռու-սաց տէրութիւնը խնդրելով Ֆ. Պրա-նէն ստացաւ 'ի պարգեւ` իւր ազգին համար։ Եւ կը յուսացուի որ քիչ ժա-

(1) Երեմիա ԻԶ. 20։

Ժամանակէն կրակին թէ՛ եկեղեցին վերա-կանգնել և թէ վանք մի շինել: Հին եկեղեցին կառուցեալ էր յանուն Երե-միա մարգարէի:

Ապուղօշն անցնելով, աջ դին բար-ձըր լերան վրայ կը տեսնուի հին Մ՛ոդ-իիմը, որ հիմակ Մէդիա կը կոչուի, Մ՛ակաբայեցւոց հայրենիքը. այս տեղ Շ՛մաւօն Մ՛ակաբէ ծնողացը և եղբարց գերեզմաններուն վրայ եօթը բուրգ կանգնեց: Կան ոմանք որ Մ՛ոդիիմը աւելի հաւանաբար Լ՛իւդի արեւե-լեան կողմը երկու մղոն հեռու Մ՛էդի-էհ ըսուած տեղը կը դնեն, ուր կրնար Միջերկրական ծովէն ալ տեսնուիլ յի-շեալ բուրգերը, ինչպէս առաջնոյն հա-մար կ'ըսեն, որ անհաւատալի է:

Ապուղօշէն 17րոպէի չափ հեռանա-լով կամուրջի մի վրայէ կ'անցնուի, հոն մօտերը աջ դին փոքր աղբերակ մի կայ Այն—Տէյը, եւ ձախ դին է բարձրկեկ գետնի վրայ Պէյթ—Նաքուպ գիւղը: Ճա-նապարհին քանի մի անձկութիւն-ներն 'ի բաց թողլով և լեռնաձորերու մէջէն անցնելով՝ բարձր տեղ մի կ'ելնուի ուսկէ կը տեսնուի Նէպի—Սամուէլը, այն

է հին Հռամաթայիմը, Սամուէլ մարգարէի հայրենիքը։ 10 րոպէ քալելով՝ աջ կողմը հեռուանց կ'երեւի Յովհաննու ծննդեան գիւղը, Այն-Քերիմ, ուր մեր այցելութեան ժամանակ պիտի տեսնենք։ Անկէ եւս 20 րոպէ դէպ 'ի յառաջ երթալով կը հասնինք Բաթնիէհ ըսուած գիւղը, որ ձախ դին լերան ստորոտը շինուած է. գիւղին և ճանապարհին մէջտեղը գեղեցիկ ձոր մի կը տեսնուի որու մէջ կան կիտրոնի, լեմոնի, նարնջի և սերկեւիլի ծառեր, այգիներ ու ձիթենիներ, և վեց ջրի ակեր կ'ոռոգանեն, որոնց մին ճանապարհին վրայ ձախ կողմն է և բաւական ջուր ունի։ Հոն կ'երեւի հին գիւղի մի և աշտարակի աւերակներ։

Քանի մի քայլ ալ յառաջ երթալով քարաշէն կամուրջի մի կը հասնինք Դերեպինթ ըսուած հեղեղատին վրայ շինուած, ուր տեղաց Դաւիթ 5 քարերը ժողվեց Գողիաթու դէմ կռուելու իր պարսատիկովը, և այն ձորին մէջ զինքը սատակեց. 35 րոպէ աւելի անդին դար 'ի վեր ճանապարհին վրան աջ կողմը աշտարակ մի և ձախ կողմը

լերան մի ստորոտը Պէյլի-Իշա գիւղը կը տեսնուի, եւ անկէ քիչ մի անդին նոյնպէս ձախ կողմն է Լէֆթայի ձորը և անոր մէջ Լէֆթա գիւղը, որ ջրի աղբիւրակ մի ունի։ Շարունակելով ճանապարհը 11 րոպէ, ձախ կողմը պահապանաց աշտարակ մի կը հանդիպի, և կըսկսին այս տեղաց արեւելեան կողմը Ս. Համբարձման լեռը և աջ դին Խաչավանքի ձորը երեւալ։ Եւ երկրորդ աշտարակ մի եւս հասնելնուս Երուսաղէմը կ'երեւի։ Ճանապարհին երկու կողմը ամառանոցներ են և ուսումնական ու մարդասիրական հաստատութիւններ, որոնցմէ վերջը կը տեսնուի Ռուսաց նորաշէն մեծ վանքը, որու մէջ է նաեւ հիւպատոսարանը, և 1858 էն սկսելով 4 տարուան մէջ լրացաւ։ Ձախ կողմերնիս Թողլով զայն և քիչ մ'ալ յառաջ գնալով կը հասնինք սրճարաններու առաջը՝ որու ծայրն է մաքսատունը, ուր հարկ է կանգ առնել, և ըստ սովորութեան աչքէ անցընել տալ ջորիներուն բեռները։ Եւ յետոյ քաղաքը մտնել Յոպպէի ըսուած դռնէն, որ մաքսատան դիմացը կը բացուի։

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Երուսաղէմ քաղաքը, բաց 'ի իւր պատմական դէպքերէն, որովք բոլոր ազգաց առջեւ երեւելի եղած է, նաեւ մասնաւորապէս սուրբ համարուած է քրիստոնէից համար, վասն զի այս քաղաքին մէջ Տէրն մեր Յիսուս Քրիստոս աշխարհի փրկութիւնը կատարեց: Երուսաղէմայ բնակչաց թիւը կրնայ հանիլ քսան և չորս կամ քսան և հինգ հազարի, որոց երեք մասին մէկը կը բաղկանայ Հրէաներէ, միւսը Տաճիկներէ և երրորդ մասը այլ և այլ ծէսեր ունեցող քրիստոնեաներէ: Հայ ժողովրդոց թիւը չորս հազարի հազիւ կը հասնի:

Ուխտաւորք, ինչպէս ըսինք, Յոպպէի դռնէն ներս մտնելով՝ աջ կողմի ընդարձակ փողոցը կ'առաջնորդուի. ու բողոքականաց ժողովարանին և զօրանոցին առջեւէն անցնելէն յետոյ, ճանապարհը կը նեղնայ, և կամարի տակէ անցնելով շիտակ սուրբ Յակոբայ վանուց հոյակապ դրան առաջը կը հասնէ: Ներս մտնելով վանքին Հիւրընկալ վարդապետը, կամ նա չգտնուած ժամանակ

սենեկապանը (օտաղաչին) կ՚առաջնորդէ
զիրենք դէպ ՚ի հոգետունը, ուր վայր-
կեան մի հանգստանալէն և սուրճ մի
խմելէն յետոյ Հիւրընկալ վարդապետը
կ՚առնու կը տանի զիրենք յեկեղեցին և
սուրբ Էջմիածին անունով եկեղեց-
ւոյն դռնէն ներս մտնելով կարգաւ կը
նստին եկեղեցւոյ մէջ, ուր Դարպասըն-
կալ վարդապետը բարեպաշտ ուխտա-
ւորացմէ Գլխադրի անուամբ մասնաւոր
ողորմութիւնը ընդունելէն յետոյ, ա-
նոնց անուանքը դարպասական տոմարին
մէջ կ՚արձանագրէ. և պահպանիչ ասե-
լով կը խրկէ զանոնք սուրբ Յակոբայ
եկեղեցին, ամեն մէկին ձեռքը երեքա-
կան մոմեր տրուելով, և Ս. Գլխադրի
առջեւ ծնկան վրայ կարգաւ կը շար-
ւին Այն ժամանակ կըսկսին անմիջապէս
դասին մէջէն Որդւոց որոտման քաղցր
շարականը երգելու, և վարդապետաց
մէ մին շուրջառաւ սուրբ Ստեփաննո-
սի մատուռէն դուրս կ՚ելնէ խնկարկելով
և Գլխադրի մատուռը կը մտնէ, և դէպ
՚ի ուխտաւորաց դառնալով համառօտ
ծանուցումով մի նոցա գալուստը շնոր-
հաւորելով, և իւրեանց ճանապարհոր-

դութեան Նպատակը որքան սուրբ և նախնական մինչը յայտնեցաւ կը յորդո-րէ զմեզ ջերմեռանդ ոգւով ներկայ-անալու թէ՛ 'ի սուրբ Պատարագին և թէ բոլոր անօրինական սուրբ տեղիքը : Յե-տոյ երկրպագել տալով նոցա սուրբ Ե-կեղեցւոյն մէջ գտնուած սրբազան խո-րաններէն, կ՚առնու կը տանի Հիւրընկալ վարդապետը 'ի սեղանատունն. ուր տեղ կերակրուելէ յետոյ կը բերէ դարձեալ 'ի Հոգետունն, ուր տեղ նոյն գիշերն հանգիստ կ՚առնուն :

Հետեւեալ առաւօտուն Պարպաս-ընկալը քանի մի պատուաւոր վարդա-պետներով Պարպատասունն կ՚երթէ, ուր կը Հրաւիրուին բարեպաշտ ուխտա-ւորք իրենց մեծ ու գլխաւոր դարպա-սական սրբութիւնը շնորհելու սուրբ Սթոպոյս • Ս.ւեղորդ է ըսել թէ սոյն ու-ղղափառթեան տուող վրայ հը կայանայ գլխաւորապէս սուրբ Սթոտոյն հա-տատութիւնը և պայծառութիւնը, վասնորոյ բարեպաշտ ուխտաւորք կան-խաւ կը յօժարութիւն Պատրաստասուն Ս.նդամնոյ կողմէնէ, որ չնոյնեն իրենց հոգեւոր ողորմութիւնը. ամենապատճառ

բար նուիրելու և իբրեւ ազգային անդամ ազգային վանուց պիտոյից ձեռընտու լինելու։ Յետ այնորիկ իւրաքանչիւր ուխտաւորաց իրենց արժանաւորութեանը եւ թուոյն համեմատ սենեակներ կը տրուին։

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԸ

Պատմական

Երուսաղէմայ առաջին և գլխաւոր սրբավայրը, որ բոլոր քրիստոնէից ուխտագնացութեան միակ նպատակը կը համարուի, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Գերեզմանն է, Ս. Յարութեան ըսուած հոյակապ տաճարին մէջ։ Այս տաճարիս մէջ վեց այլ և այլ ազգեր աստուածային պաշտամանց արարողութիւն կը կատարեն, իւրաքանչիւր ազգ ըստ իւր եկեղեցական կարգաց։ Այս ազգերն են՝ Հայք, Լատինք, Յոյնք, Ղպտիք, Հապէշք և Ասորիք։ Առջի չորս ազգերը իրենց սեպհական մատուռներէն զատ, ունին նաեւ բնակութեան տեղի նոյն տաճարիս ներքին

կողմը, վասն զի դուռը հասարակօրէն փակ կը մնայ և անոր բանալիները դըռնապան Տաճկաց քով կը պահուին։ Այս տեղ բնակող կրօնաւորները չեն կրնար ըստ կամաց իւրեանց անկէ դուրս ելնելու. և դուրս գտնուողներուն հետ մեծ դրան վրայ եղած փոքր դըռնակէն միայն հաղորդակցութիւն կրնան ընել, ուսկէ ներս կը տրուին նաև իւրաքանչիւր ազգի միաբանաց օրական կերակուրը։ Հայք, Լատինք, Յոյնք և Ղպտիք միայն իրաւունք ունին Ս. Գերեզմանի ճակտին վրայ և ներսի կողմը կանթեղներ վառելու, նոյնպէս պատանատեղւոյն վրայ և մնացած մասերուն մէջ այլ և այլ պատկերներու առջև։ Առջի երեք ազգաց Տեսուչ վարդապետները երբ որ կ'ուզեն՝ իրաւունք ունին պահանջել նոյն դռնապան Տաճիկներէն որ Ս. Յարութեան տաճարին դուռը բանան, իրենց հանդիսաւոր տօն օրերուն և ուրիշ պէտք եղած պարագաներու մէջ։ Այս դրան բացման համար փոքրիկ տուրք մի որոշուած է, որ կը վճարուի դռնապանաց՝ դուռը բանալ տուող միաբանութեան կողմէն։

Ա. Պէրբզմանին վրայ պատարագ-մատուցանելու իրաւունքը միայն Հայ, Յոյն և Լատին կրօնաւորաց սեպհականուած է։ Ա. Պէրբզմանին ծառայող կրօնաւորները իւրաքանչիւր ազգ իւր եկեղեցական պաշտամունքները կը կատարէ իրեն սեփական եղած մատրան մէջ, և իւրաքանչիւր Ուխտատեղիքը Թափօրի. պտըտելու և աղօթելու ազատութիւն ունեցողներն, ինչպէս են Հայք և Լատինք, անխափան կը կատարեն՝ բաց ՚ի հանդիսաւոր մեծ Թափօրներէն, Հայք ամէն ուրբաթ, շաբաթ և կիւրակէ երեկոյները, իսկ Լատինք ամէն երեկոյին կը կատարեն հասարակ Թափօրը։ Աւանդութիւնը մեզ կ՚ուսուցանէ որ նախկին Հրէաստանը Ադամին բնակութեան տեղն եղաւ, որ վաղվաղակի հոն ապաստանեցաւ երկրաւոր դրախտէն արտաքսուելէն ետքը. նաև և նոյն երկիր ընդունեց նախահօր մարմինը, որուն գլուխը Թաղուեցաւ նոյն տեղս որ կոչուեցաւ Կրանիոն (Cranion) որ կը նշանակէ տեղի գագաթան, այն է Գողգոթայի. Այս աւանդութիւնը մեզ ուսուցանողն է Ա. Բարսեղ.

Որոգինէս, Ս. Եպիփան, Ս. Հերոնի-մոս և այլք։ Յիսուս Թաղուեցաւ մերձ 'ի Գողգոթա, և յետ երից աւուրց յա-րեաւ մահուան զօրութեան յաղթե-լով։ Քրիստոնէութիւնը հսկայաքայլ յառաջադիմութիւններ ըրաւ. Գող-գոթան և Գերեզմանը ուրկից Աստու-ծոյ Որդին յարութիւն առաւ, մեծ յարգ և պատիւ կ'ընդունէր նորընծայ հաւա-տացեալներէն։ Տիտոս կայսրը Երու-սաղէմը պաշարելու եկած ժամանակ, Յակոբ առաքելոյն յաջորդը՝ Սիմէոն կամ Շմաւոն, որ այն ժամանակ սուրբ քաղաքին եպիսկոպոսապետն էր, քրիստո-նէից հետ Յորդանանէն անդին Պէլլա քաղաքին մէջ ապաստանեցաւ. և պա-շարումէն վերջը Երուսաղէմայ աւե-րակները, Գողգոթան և Ս. Գերեզ-մանն ժառանգելու համար վերադար-ձաւ, որոնք սկսան կրկին պատիւ ու յարգ գտնել։ Ս. Գերեզմանի մայր ե-կեղեցին, որ երկրորդ անգամ(1) Հեղինէի և որդւոյն Կոստանդիանոսի և մեր Տրդ-

(1) Առաջին անգամ սուրբ առաքեալք [illegible] [illegible] պաշտ-[illegible] [illegible] Ադրիանոս [illegible] [illegible] Հեղինէ։ Տես 'ի ձեռագիր [illegible] պատմութեան մեջ։

դատայ ձեռօք ջնջնուեցաւ, շատ անգամ ամբողջ և կամ մասնաւոր կործանումներէն յետոյ, վերջին անգամ (1868) մեծ գմբէթը նորոգուեցաւ Օսմանեան տէրութեան շնորհիւ և հանգամանակութեամբ և խնամօք Ռուսիոյ և Գաղղիոյ կառավարութեանց, և կըսուի թէ երկու միլիոն ֆրանք ծախք գնաց ։

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի տաճար սուրբ Յարութեան ։

Տէրունական ուխտաւորացանեանքները բաժնուելէն յետոյ՝ նոյն երեկոյին Հիւրընկալ վարդապետը կ՚առնու կը տանի զիրենք 'ի Ս. Յարութեան տաճարը ուխտ և երկրպագութիւն մատուցանելու ։ Նախ կը ներկայանան Տեսչին, եւ ըստ սովորութեան իրենց դարպասական ողորմութիւնը նուիրելէն յետոյ, որ է 33 դահեկան[1], տեղւոյն ժամարար վարդապետներէն մին և կամ

(1) Այն ողորմութեան տրոց կը հոգացուի ամբողջ Յարութեան տաճարին մշտավառ կանթեղներուն իւղը, մոմը և ուրիշ զանազան պիտոյքները ։

ուրիշ վարդապետ մը շուրջառազգեստ. Թափօրի առաջակ և մոմ ՚ի ձեռքին, նոյնպէս սարկաւագ մը շապիկով սաղաւարտ ՚ի գլուխ և բուրվառաւ և երկու կերոնակիր դպիրներով և զարդարուած վարդապետներով Թափօրի կ՚ընէ հանդերձ ուխտաւորօք, և բոլոր սրբազան տեղիքն ու մատուռները կը շրջագայեցընէ, իւրաքանչիւր տնօրինական տեղւոյն համեմատ սուրբ Աւետարանը կարդալով, և համառօտ ծանուցմամբ տեղեկացընելով ուխտաւորաց Յիսուսի Քրիստոսի նոյն տեղւոյն վրայ կատարած փրկագործ խորհուրդն և յորդորելով բարեպաշտ ժողովուրդը ՚ի ջերմեռանդութիւն և երախտագէտ զգացմամբք լեցնելով նոցա սիրտերը. Ուրեմն սկսինք ստորագրել իւրաքանչիւր սուրբ տեղիքը որոնք սուրբ Յարութեան տաճարի շրջապատին մէջ բովանդակուած են, նոյն կարգաւ որով ՚ի Թափօր կ՚ընեն մեր անձինք :

Ա. Զնդանը բանտ : Նախ սուրբ Գերեզմանի և Լատինաց եկեղեցւոյն առջևէն անցնելով և դէպ ՚ի աջ դին դըռնելով կ՚երթան առաջին սրբավայրը

որ ձախը դէմ կ'ինկնի, որ է Քրիստոսի ըն-
կերք բանալը, որ մեծին մասն ու մի է և Յու-
նաց ձեռքն է։ Նաւահանգութը կղզուն ի՛ մէ-
ջտեղ վրայ շինուած է, ուրտեղ Փրկիչն մեր
Յիսուս Քրիստոս և երկու առաքեալներն
աղօթեցին մինչև չարչարանաց գոր-
ծերնուն պատրաստութիւնը։ Երէք մա-
սերու կամ խորշերու բաժնուած է, ո-
րով բանտարկեալներն երեք անձինք ըն-
կալեն ցոյց կուտայ։ Ներս չմտած, այլ
կողմը դրանը քով փոքրակի մէջ քան
մի կը նշմարուի մեծկակ քարի մի վրա-
յօք. և այս քարը երկու ոտքաց ծակեր
ունի փորուած. Այսինք այս տեղ մշտա-
պաս կանթեղ մի ունին ու կ'ըսեն թէ՝
Յիսուսի Քրիստոսի բանտարկութեան
ժամանակ իւր երկու ոտքերը այն քա-
րին ծակերուն մէջ դրած էին և մակի
կողմէն երկուսն խարքու ձեռք չըլթայած։
[illegible] Բ. Սուրբ Գ. [illegible] Յիշեալ
բանտէն դուրս. եղներով ուխտաւորաց
Թափօրական Հանդէսը, 12 մեղր [illegible]
[illegible] ձախը վրադէ կ'ինկնի
տաճարը Գ. [illegible] Յունաց
մեղանը։ Նախկին էր, [illegible]
Թեամբ, Փրկչին մահուանէն յետոյ [illegible]

սուրբ կողը նիզակով ծակողը, ուստի բը-խեաց արիւն և ջուր, և այն աղանդներերոյ վերայ հաւատոյ Յիսուսի, և այս անողը եկաւ իւր գործած մեղաց վերայ ողբա-լու:

Գ. Հանդերձեալ բաժանման սերման: Այսմ կողմն երկու մետր հեռու է Հայոց սե-ղանը: Այս սեղանին առջը զանազա-ները իրենց մէջ բաժնեցին Յիսուսի հա-գած հանդերձները, ըստ այնմ «Բաժա-նեցին զհանդերձս նորա. միաձայնաւ (1)»:

Դ. Սուրբ Լուսաւորչի եկեղեցին: Սրբոյ մի յատուկ երթալով նկարաւորեալ թեւանց դուռ մի կը տեսնուի անկիւնը, ուստի 29 աստիճանաւ Հայոց սուրբ Լու-սաւորիչ եկեղեցին կ'իջնուի: Եկեղե-ցւոյն սիւները և տարածին զաւառ բաւա-կան է. ունի և գեղեցիկ գմբեթ մի չորս մարմարեայ սիւներ վերայ: Եկեղե-ցւոյն կ'ըստ ի թէ սուրբ Լուսա-ւորիչ հայր մեր հոս եկած ու իջնէ մի ժամանակ ծածկուած է. վասն որոյ և իւր անուամբ նուիրուած է եկեղեցին: Ա-սոր մերձակայ աւերակներն Հայոց հա-կառակ ազգերն պատմեն հաւն մի կը տեսնուի

[illegible] 35.

ւէ, ուր տեղաց սրբուհին Հեղինէ ըստ աւանդութեան, կ'աղօթէր, երբ իւր հրամանաւը խաչափայտը գտնելու համար գետինը կը փորէին։ Այս տեղը ալ Հայոց սեփհական է, ուր մշտավառ երեք կանթեղ կը վառի։

Ե. Գիւտ-խաչ։ Նոյն եկեղեցւոյն հարաւակողմն եղած 13 աստիճանէն իջնելէն վար Գիւտ-խաչի տեղը կ'իջնուի։

Յիսուսի թաղմանէն յետոյ նորա չարչարանաց բոլոր գործիքները ըստ աւանդութեան Հրէից սովորութիւն էր որ հողին տակ թաղուէին, ուստի թէ՛ խաչերն եւ թէ միւս երկաթեղէն գործիքները բերին հոս նետեցին որ փտին ու ամփոփին տեղմը էր. խաչելութեան տեղւոյն մօտ, եւ հետզհետէ քաղքին դուրս հանուած աղբերով եւ աւերակներու կոյտերով ծածկուեցան. Քրիստոսի 326 թուականին սրբուհին Հեղինէ Ս. Գերեզմանի եւ Գողգոթայի վրայ տնկուած չաստուածոց արձանները կործանել տալէն յետոյ, մտաւ Յերուսաղեմի Մակար եպիսկոպոսին, որ ժամանակին պատրիարքն էր ; եւ քաղաքին ծերունեաց հարցուփորձ ըրաւ՝ թէ ուր արդեօք կրնայ

գտնուիլ Քրիստոսի փրկագործ սուրբ խաչափայտը։ Նոյն ժամանակ Յուդայ Կիւրեղ, որ ծերունեաց մին էր, սոյն տեղըս նորա ցոյց տուաւ, ուր տեղ փորել տալով՝ վերջապէս երկաթի գործիքներըն ու երեք խաչերը գտնուեցան. բայց Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ խաչը որն ըլլալը յայտնի չէր. Մակար հայրապետ աղօթք և հսկումն ընել տուաւ բոլոր հաւատացելոց, որպէս զի ցոյց տայ Աստուած Ճշմարիտ խաչը։ Նոյն միջոցին հոգեվարքի հասած հիւանդ կին մի պատահեցաւ, ուստի սուրբ Հայրապետն ու Հեղինէ առին տարին երեք խաչերն ալ և կարգաւ հիւանդին մարմնոյն մօտեցուցին. առաջին երկուքը զօրութիւն մի ցոյց չտուին, բայց երրորդը մօտեցուցած ժամանակնին անմիջապէս բժշկուեցաւ մահուան դուռն հասնող կինը։ Նոյն օրը սուրբ Հայրապետը ննջեցեալի մի ևս պատահեցաւ որ թաղելու կը տանէին, և նոյն փորձը կրկնելով ննջեցեալը Ճշմարիտ կենաց փայտը և անոր սքանչելի զօրութիւնը. բացայայտ եղաւ. Յիսուսի խաչափայտը միւս երկուսէն յետոյ ննջեցեալն [illegible]

մատեցուցին . անմիջապէս յարութիւն
առաւ ։

Զ. Ձաղանոց վանք կամ Փոշըպանքի
վանք ։ Սուրբ Լուսաւորչի եկեղեցին
շուրջը եղնելով և գործեալ ձախ թևին
վրայ կը տեսնուի Յունաց սեղանը, ու
րուն միջավայրը երկաթեայ վանդակի
մը մէջ կը պարունակի Ձաղանոց սիւնին
մէկ մասը, որ գորշագոյն կրանիթեայ
սիւնի մը կտոր է, և ըստ աւանդութեան
Տէրն մեր Յիսուս Քրիստոս անոր վրայ
նստեցուցին երբ փշեայ պսակով կը պսա
կէին, թշնամանելով և նախատելով Պիղ
ղատոսի տանը մէջ, ուստի յետոյ Հոս
բերուեցաւ յիշեալ սիւնը ։

Է. Սուրբ Գողգոթա ։ Ըսկեց քառա
սնորդաւորդեալ 'ի ձախ դին յառաջանա
լով, Գողգոթային կը հանդիպիք, ուսկից
18 ոտք առաջնորդներէն վեր կ'ելնուի ։
Հոս է Ս. Խաչին ամփոփուած տեղը, որը
վերջոյ բաժանուեցաւ Փրկչին աշխարհին ։
Այս սրբավայրը որ Հայոց սեփական
էր, և 1422 թուին Վ. բռնի յափշտա
կեցին, այժմ Յունաց ձեռքն է ։
Տաճարին սիւները Գողգոթայի ձախա
կողմին Պանկին յետոյ Լատինաց ձեռքն է, որ

րան աւանդութեան կը կարծուի թէ Յիսուս Քրիստոս խաչի վրայ տարածուած գամուած տեղն է ։

Ը. Պապանապէղը ։ Գողգոթայէն վար իջնելով, անմիջապէս դէպ 'ի ձախ կողմն դիմացնիս կ'ելնէ Քրիստոսի պատանուած տեղը, որ սուրբ Յարութեան տաճարի դրան դիմացը կ'ինկնի ։ Այս տեղս կարմրագոյն գեղեցիկ քառանկիւնի քարով մի ծածկուած է. երկու կողմը մեծագին աշտանակներ կան երեք ազգաց, այսինքն՝ Հայոց, Յունաց և Լատինաց, և քարին վրայօք կարգաւ խոշոր և մխանոսակ կանթեղներ միշտ ալ կը վառին, որոնք չորս ազգաց են, այսինքն՝ Հայոց, Յունաց, Լատինաց և Ղպտուոց, ինչպէս կանթեղներուն վարի ծայրը կախուած պղնձին վրայի գիրերը ցոյց կուտան որ ազգին ըլլալը ։ Հին ժամանակ այս սուրբ տեղս գեղեցիկ ճաղավանդակով զարդարուած էր ։

Յովսէփ Արեմաթացի և Նիկոդեմոս Յիսուսը խաչէն վար առնելէն յետոյ՝ այս տեղս բերին պատանեցուցին, որ անշուշտ հարթ ու հաւասար տեղ մի էր. և օծելով սուրբ մարմինը՝ պա-

անցքին մաքուր կտաւով ըստ սովորու-թեան Հրէից ։

Թ. Ս. Ծաղկափթթման տեղը ։ Ըստ աւան-դութեան, Մարիամ սուրբ Կոյսն այս տեղաց անցնելով առաջին անգամ իւր միածին Որդին խաչին վերայ բարձրա-ցեալ, ուժաթափ եղած մարեցաւ և հետն եղող սուրբ կանանց թեւերուն վրայ ինկաւ ։ Կամ ըստ այլ աւանդու-թեան, այս տեղ կայնած էին սուրբ կա-նայք, երբ Յովսէփ ու Նիկոդեմոս Քրի-ստոսի սուրբ մարմինը մաքուր կտաւ-ներով կը պատէին ։ Յիշեալ տեղը Հա-յոց սեփական է, երկաթի ու բոլորակ ճաղով շրջապատուած ու վրան ջահ մի կախուած ։ Այս ճաղս քանի տարի-ճանները Հայոց վերնատունը կը հանեն

Ժ. Իւղաբերից տեղը ։ Յիշեալ տեղէն քանի մի ոտք դէպ 'ի աջ դին կամարին տակն է Իւղաբեր կանանց տեղանք, որ Հայոց ազգին է ։ Այս տեղս եկան յիշեալ սուրբ կանայք միաշաբաթի (կիւրակէ) առաւօտուն Յիսուսի մար-մինը խնկելու, որ արդէն յարութիւն առած էր ։

ԺԱ. Մարէ Գերեզմանէն ելնելէն Իւղաբերից

տեղանքէն վեց մեղր անդքէն նորանշէն մեծ գմբէթի մը տակ և կլորաձև սրահակի մը մէջտեղը կը տեսնուի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Գերեզմանը, և ընդհանուր քրիստոնէից միակ երկրպագելի սուրբ տեղը։

Այս գերեզմանը երկու պզտիկ խուցերով բաժնուած ու ժայռի մէջ փորուած էր, առաջինը երկրորդին իբր գաւիթն էր, ուրկէ անցնելով երկրորդ խուցը կը մտնուէր, ուր տեղ կար քարի մէջ փորուած մսուրի նման փոս մը, որ վիմափոր կամար մի եւս ունէր։ Հեղինէ Թագուհին այս տաճարը շինած ժամանակ գեղեցիկ զարդարելու համար Գերեզմանին հին ու բնական ձևը պակսեցուց. մինչև 1808ին քանի մը ձեւերու մնալէն յետոյ, յիշեալ Թուականին այրեցաւ սուրբ Յարութեան տաճարը, որ ըստ մեծի մասին տախտակեղէն էր, Գերեզմանն ալ քիչ շատ վընասուելով, Բարձրագոյն Դրան կողմէն նոյն ժամանակ Յունաց արտօնութիւն տրուեցաւ տաճարը նորոգելու, որոնք գրեթէ առանց առջի ձևը փոխելու՝ մարմարեայ քարերով և քանդակներով

զարդարեցին յունական մեծագործութիւններով Հրդեհէն առաջ Պերգամոնի չքնաղագոյն սիւնի վրայ հայերէն գիրեր ալ գտնուիլը ծերունի միաբանք կը վկայեն ։

Ս. Պերգամոնի դուռը դէպ ՚ի արեւելք կը նայի , ուսկէ կը մտցուի առաջին խցեակը , որու մէջտեղ կանգնած կը տեսնուի մարմարեայ սիւնաձեւ քար մի որ Հրեշտակի քար կը կոչուի ։ Այս տեղը է սուրբ Աւետարանի Յովհաննու թուած տեղը , ուր կանգնած էր հրեշտակին մէկը սպիտակ հագուած ։ Այս մատուռին մէջ 15 հատ մշտավառ կանթեղներ կան, մէջտեղի 5ը Լատինաց է , աջակողմեան 5ը Յունաց , ձախ կողմեան 4ը Հայոց և մէկ հատ Ղպտուոց ։ Այս մատուռին մէջէն երկրորդ դրով մի կը մտցուի Ս. Գերեզմանը , որու մեծութիւնը թէ՛ լայնութեամբ և թէ երկայնութեամբ երեկու մետրի չափ է ։ Շրջապատերուն մարմարներուն տակը դեռ կը տեսնուի բուն Գերեզմանի բնական ժայռ քարերը , զոր սրբուհին Հեղինէ տաշել ու կոկել տուած էր Զաքարիա մարգարէի Գերեզմանին նման , որուն համար յետոյ պիտի խօսինք ։ [illegible] Տեա-

ուրն մերոյ բուն քնարանի տեղը հիւսի-
սայ կողմն է, ժայռին մէջ փորուած, ու-
րուն կողերն և վերայի կողմը ճերմակ մար-
մարիոններով ծածկուած են, այնպէս որ
բարեպաշտ ուխտաւորք ներս մտնե-
նուն՝ բնականէն մնացեալ բան մի չեն
տեսներ, բաց 'ի մարմարէ, պատկեր-
ներէ և կանթեղներէ։ 45 կանթեղ կը
վառին մշտավառ, իւրաքանչիւր ազգ՝
Հայք, Յոյնք եւ Լատինք 13 ական
հատ ունին, իսկ Ղպտիք 4 հատ։

Ա. Գերեզմանի ներքին կողմը հիւ-
սիսային դին երեք մասի բաժնուած է
և երեք ազգաց կը վերաբերի. մէջ տեղը
Յունաց է, որոնք մարմարի վրայ քան-
դակուած Քրիստոսի յարութեան պատ-
կերն ունին. աջ կողմինը Հայոց, և ունին
յարութեան պատկեր մի նկարուած
կտաւի վրայ. ձախ կողմինը Լատինաց է
'նոյն օրինակ պատկերով զարդարած։ Ա.
Գերեզմանի դրսի դրան երկու կողմե-
րը քարաշէն բարձրկեկ նստարանի պէս
տեղեր շինուած են, որոնց վերայ կան
Յունաց կճեայ աշտանակները կերոնա-
բարձ, և ետեւի կողմերն են Հայոց և
Լատինաց պղնձէ մեծ աշտանակները,

որոնք հանդէսներու և պատարագի ժամանակ կը վառեն ։ Իւրաքանչիւր սաղունի երկերկու զոյգ՝ մին մեծ և մին քիչ մի փոքր ։ Ս. Գերեզմանի արտաքին դըրան ճակտին վրայ դարձեալ սուրբ Յարութեան պատկերներ կան . անմիջապէս դրան վրայինը Հայոց է , երկրորդն է Յունաց՝ և մարմարի վրայ քանդակուած է. երրորդն է Լատինաց՝ կտաւի վրայ նկարած , որոնց առջև մշտավառ կանթեղք կը վառին ։ Մեր պատկերին առջևինը սուրբ Լուսաւորչի կանթեղ կը կոչուի ։

Այս սրբավայրերէս դուրս թէպէտ ուրիշ սուրբ տեղիք ևս կան , առաւել կամ նուազ յարգանաց արժանաւոր , այլ թափօրիւ պտըտելու սովորութիւն չունին Հայք . իւրաքանչիւր բարեպաշտ անձն կրնայ առանձինն պտըտել ծանօթ ընկերի մի հետ և իւր հետաքրքրութիւնը լեցնել ։

Ասոնք են միւս տեղերը .

Ա. Սուրբ Գերեզմանի կից արեւմտեան կողմը Խաչուոց սեղանը , որ սուրբ Աւետարանին 'ի ձախոյ կոչուած տեղն է , ուր տեղ նստած էր միւս հը-

րեշտակը և աւետիս տուաւ Իւղաբեր կանանց «Չէ աստ, այլ յարեաւ» ըսելով։ Այս տեղւոյս յառաջագոյն Հայոց եղած է, ինչպէս կը վկայէ Հաննէ վարդապետ(1), և կ'ըսէ թէ Հեթում թագաւորն շինել տուած է։ Ժամանակէ յետոյ այս տեղւոյս Ղպտւոց տալով, նոցա փոխարէն Եգիպտոս ուրիշ եկեղեցի մի տուած են մերայինք։

Բ. Այն մատուռին գիմացը դուռ մի կայ որ երեք խորշի կամ խցի բաժանուած է մէջ առ մէջ. առաջինը նախագաւիթ մի է ուր տեղ աստիճաններ կան, և վերը Հայ ժամարար միաբանից ննջարանն է. երկրորդ խորշը մատուռ մի է ուր տեղ Ասորիք կը պատարագեն. երրորդը գրեթէ ժայռի մէջ փորուած մութ տեղ մի է քանի մի մանր և անկանոն խորշերու բաժնուած ուր առանց լուսի անհնարին է մտնել. և այս տեղը է Յովսեփայ արեմաթացւոյն գերեզմանը։ Կ'ասեն զի ըստ աւանդութեան այս սուրբ անձը իրեն համար փորած գերեզմանին մէջ Յիսուսը թաղելէն յետոյ, փափաքեց որ ինքն և իւր ընտա-

(1) Հաննէ. պատմ. Ս. Երուսաղէմի, երես 206։

նիքն ալ նորա գերեզմանին մօտ տեղ մի Թաղուին . ըստ որում նոյն գետինը իրեն սեփական կալուածն էր , ուստի նոյն խորշերը այս նպատակիս համար փորել տուած էր ։ Յիշեալ երեք մասերըն , որ Յովսէփ արեմաթացի կը կոչուի , Հայոց սեփական է , և Ասորւոց Թոյլատրած են պատարագելու ։ Համնէ վարդապետի ժամանակ ամէն չորեքշաբԹի օրերն հոս կը պատարագէին մերայինք , և սեղանը նուիրեալ էր յանուն սուրբ Աստուածածնի (1) ։

Գ . Նոյն տեղէն ելնելով և դէպ 'ի ձախ կողմը յառաջ երԹալով և Գերեզմանէն գրեԹէ 12 մեԹր հեռու կը տեսնուի Լատինաց սեղանը Մարիամայ Մագդաղենացւոյ անուամբ , որ ըստ մեզ Պարտէզ կը կոչուի . ըստ որում Յիսուս այս տեղ պարտիզպանի կերպարանքով երեւեցաւ Մարիամու Մագդաղենացւոյ , որ երբ ձայնէն ճանչնալով քովը երԹալ կ'ուզէր , ըսաց Յիսուս . « Մի մօտենար ինձ , վասն զի դեռ Հօրս քով ելած չեմ . այլ գնա իմ եղբարցս ըսէ , Թէ ես իմ Հօրս և ձեր Հօրը քով պիտի

(1) Համնէ . պատմ . Ս . Երուսաղէմի , յեր . 205 ։

ելնեմ, իմ Աստուծոյս և ձեր Աստուծոյն»(1)։ Այն պարտէզին վրայ երկու մշտադալար կանթեղ կան, մին Հայոց և միւսն Լատինաց, ըստ որում երկու կանթեղն ալ նախ Հայոց էր և 1631ին Պարոնտէր կոչուած Գրիգոր պատրիարքը կանթեղին մէկը և երգեհոնի կից եղած խուցը Լատինաց տալով, նորա փոխարէն Սերնատնէն երեք կամար առած և մեր եկեղեցին դէպ 'ի երկայնութիւնըն ընդարձակած է։

Դ. Երէ-Մամն Մատուռ։ Պարտէզին հիւսիսակողմը՝ աստիճանով վեր կ'ելնուի Լատինաց եկեղեցին։ Եւ պարտիզին համար ինչ մեկնութիւն որ տուինք վերը, Լատինք սոյն եկեղեցւոյ տեղւոյն կուտան, հոս երեւցաւ ըսելով Յիսուս Մագդաղենացւոյն, վասն որոյ և եկեղեցւոյն անունը Երէ-Մամն կը կոչեն։ Այն եկեղեցիէն դուրս ելնելուն՝ ձախ կողմը դուռ մի կայ՝ որ է աւանդատուն, և ատոր մէջէն ճանապարհ ունի դէպ 'ի Լատինաց վերնատունը ելնելու, որ սուրբ Գերեզմանի վրայ կը նայի։

Ե. Ադամայ սեղանը։ Պատանատեղ-

(1) Յովհ. Ի. 17։

ւոյն դիմացը դուռ մի կայ, որ դէպ 'ի Գողգոթայի տակը կը բացուի։ Ներս մտնելու ժամանակ աջ կողմը քարէ չի-նուած բարձրկեկ տեղ մի կը տեսնուի, որու համար Լատինք կ'ըսեն թէ Խա-չակրաց առաջին Թագաւոր Կոտըֆը-րուայի գերեզմանն է, որ 1099 ին տի-րեց Երուսաղէմի։ Ձախ կողմը առաջ-նոյն նման երկրորդ քար մի կայ բարձր-կեկ, և այս ալ նորա եղբօր Պօտուէն անուն Թագաւորի գերեզմանն է, որ 1113 ին մեռած է։ Այս երկու գերեզ-մանները 1808 ի կրակէն առաջ դուրսն էին, յետոյ երբ Յոյնք նորոգելու ար-տօնութիւն ստացան՝ ներս առին զա-նոնք ընդարձակելով Ադամայ մատու-ռը։ Պատանատեղւոյն դիմացը դէպ 'ի հիւսիսային կողմը պատին կից եղող եր-կու կարգ սափրճաններուն տակն ալ Խաչակրաց ուրիշ իշխաններու տապան-ները կան կ'ըսուի։

Ադամայ մատրան ներսի կողմը պըզ-տի փոս մի կայ, ուր տեղ ըստ աւան-դութեան՝ նախաստեղծ մարդոյն գըլ-խոյն ոսկորը գրուած էր։ Այս տեղաց կ'երեւի նաեւ Գողգոթայի վրայ խա-

չափայտը անկած ժայռին ճեղքուածը։

Զ. Նսկէ ելնելով և Սուժաթափինն տեղը գալով դուռ մի կայ, ուր տեղ է Հայոց տեառուչ վարդապետին սենեակը, և դրանը քովի աստիճաններէն վեր ելնելով, որ երեք մասերու բաժնուած է, վերնատունը կը հասնի, որ Հայոց սեփական է բոլոր մասերովը։ Հոս կայ եկեղեցի մի երկրորդ Գողգոթա անուամբ, ըստ որում՝ յիշատակարանք կը պատմեն թէ՝ Մարտիրոս պատրիարք Կրայ հետ չկարենալով գլուխ ելնել, որոնք 1422 էն մինչեւ 1431, քանի միանգամ Հայոց ձեռքէն յափշտակեցին զսուրբ Գողգոթայն Եգիպտոսի սուլտանը և մեծամեծները կաշառելով, վերջապէս յուսահատեալ այս տեղս խնդրեց ու ստացաւ արծաթով յիշեալ սուլտանէն։ Եւ յետ դառնալուն յատուկ եկեղեցի մի շինեց 1431 ին և երկրորդ Գողգոթա կոչեց, որովհետեւ ճիշդ Գողգոթայի դիմաց կ՚ինկնի։ Յառաջագոյն այս տեղս թագաւորաց հանգստարան էր կ՚ըսուի, և հոս կը բնակէին թագաւորք և թագաւորազունք ուխտի եկած ժամանակնին։

Այն եկեղեցւոյս դէպ 'ի արեւելեան հարաւակողմը ուրիշ մատուռ մի եւս կայ, Երաշխաւոր սուրբ Աստուածածնի անուամբ ։ Յիշեալ մատրան սեղանին ետեւը դուռ մի կը տեսնուի որ սեղանատուն կը հանէ եւ հոյակապ գեղեցիկ պատուհան մի ունի դէպ 'ի սուրբ Յարութեան տաճարի արտաքին մեծ դըրան եւ բակին վրայ ։ Այս չէնքս, ինչպէս նաեւ սուրբ Լուսաւորչի Հայոց եկեղեցին, 1808 հրդեհին ժամանակ անվընաս մնացած են ։

Սուրբ Գերեզմանի արեւելեան դին եւ տաճարին գրեթէ մէջ տեղը եկեղեցի է Յունաց ձեռքը եւ հարուստ զարդարանք ունի. ոմանք ագիտաբար Աշխարհամատուռ կը կոչեն այս մասը միայն, փոխանակ ամբողջ Տաճարին իմանալու նոյն անուամբ, ըստ որում բոլոր քրիստոնէից տիեզերական եւ համաշխարհական մայր եկեղեցին է սուրբ Յարութեան տաճարը, ուր կը համախմբին ամեն տարի ամեն ազգէ եւ ամեն կողմէ խառն հաւատացեալք Յիսուսի Քրիստոսի Յարութեան սուրբ խորհուրդը տօնախմբելու ։ Յունաց յիշեալ եկե-

ղեցւոյն մէջտեղը անկուած քար մի կայ,
որու համար Յոյնք միամտաբար աշ-
խարհիս կեդրոնը կ'անուանեն ։

Սուրբ Գերեզմանի տաճարի շրջա-
պատէն դուրս, մեծ դրանը ձախ դին
քանի մի աստիճաններով բարձր՝ փոքրիկ
մատուռ մի կայ Լատինաց յանուն ող-
գաւոր սուրբ Աստուածածնի, որ կից է
Գողգոթայի, և պատուհան մի ունի, ո-
րոյ համար Գողգոթայի դուռն էր կ'ը-
սուի յառաջագոյն ։

Յիշեալ Լատինաց մատրան տակը
կը Յոյնք փոքրիկ մատուռ մի ունին
յանուն սուրբ Աստուածածնի որ Հապէ-
շից էր, և մեր ձեռքէն անցնելէն յետոյ
Յոյնք յափշտակեցին Աստուածատուր
պատրիարքի ժամանակ ։ Իսկ հիւսիսա-
յին պատի մէջ արտաքին դաւթին վե-
րայ Խպտիք փոքրիկ եկեղեցի մի ու-
նին յանուն Ս. Միքայէլի, որու մէջէն
աստիճանով վեր ուրիշ եկեղեցի մի կ'ել-
նուի. անկէ ալ ուրիշ դռնով մի Հա-
պէշից վանքը և սուրբ Լուսաւորչի
կամ Գիւտ-խաչի տանիքն կ'ելնուի ։

Այս տեղէն 6 կամ 7 մեդր դէպ 'ի
հարաւ Հայոց սուրբ Յովհաննու ա-

ւեստարանչի· մատուռը կայ երեք սեղա-
նով. աջակողմեան փոքր սեղանին մէջ կը
գտնուի չարչարանաց սիւնին մէկ կտորը,
զոր հաւատացեալք ջերմեռանդութբ
կը համբուրեն 'ի յիշատակ չարչարա-
նաց Քրիստոսի: Անկէ ալ 9 մեթր ան-
դին Յունաց Հայր Աբրահամու վանքն
է, որու մէջ կայ ԺԲ Առաքելոց անուամբ
եկեղեցի մի: Այն եկեղեցւոյս կից կայ
ուրիշ փոքրիկ մատուռ մի ևս, որ ըստ ա-
ւանդութեան Աբրահամու իւր Իսա-
հակ որդին զոհելու տեղն է: Այս
վանքն ալ Հապէշից ըլլալով, յառաջ
Հայոց ձեռքն էր:

Իսկ Ս. Յարութեան աւագ դրան
աջ կողմը հին զանգակատունն է, որ
հիմակ աւերակ է: Ասոր ներքեւը դուռ
մի կայ Յունաց սուրբ Յակոբ եկեղե-
ցին մտնելու, ուր տեղ ուրիշ քանի մի
աննշան մատուռներ ևս կան:

Ասոնք են աւասիկ սուրբ Յարու-
թեան տաճարի մէջն և դուրսը եղած
երկրպագելի և նշանաւոր տեղուանքը:
Տէրունական ուխտաւորք նոյն գիշերն
հոն մնալով և յիշեալ ներքին սրբավայ-
րերը ուխտ և երկրպագութիւն ընելէն

և Ս. գերեզմանի վրայ մատուցուած անմահ Ս. Պատարագին ներկայ գըտնուելէն յետոյ, հետեւեալ առաւօտուն դուռը բացուելով՝ իւրաքանչիւրոք կը դառնայ 'ի սուրբ Յակոբ և Հանգիստ կ'առնու ։ Յետ այնորիկ կրնայ ինքը առաջնորդ մի իւրեան գտնելով, որու կըրնայ առաւելապէս ծառայել և այս գըրքըս, շրջագայիլ կարդալ բոլոր սուրբ և նշանաւոր տեղիքը Թէ՛ սուրբ քաղաքին մէջ և Թէ անոր բոլորտիքը պարսպին մօտ եղած տեղերը, որոնց տեղագրուԹիւնը հոս պիտի ընենք ։

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Խաչին ճանապարհը մինչեւ 'ի գերեզման ամենասուրբ Կուսին ։

Տէրունական ուխտաւորքը քանի մի օր հանգիստ առնելէն յետոյ կը փափագին այցելուԹեան և ուխտի երԹալ Աստուածամօր սրբոյ Կուսին գերեզմանին, որ քաղաքէն դուրս արեւելեան կողմը կ'ինկնի ԳեԹսեմանի ըսուած ձորին մէջ ։ Եւ երկու ճանապարհ ունի եր-

Թալու ; մէկ մի քաղքին մէջէն անցնելով և սուրբ Ստեփաննոսի կամ սուրբ Աստուածածնի ըսուած դռնէն դուրս ելնելով, երկրորդ՝ Սիոնի կամ Փրկչի դռնէն և պարսպին տակովն երթալով. այս ճանապարհը քիչ մի հեռու է, իսկ սովորական ճանապարհն. առաջինն ըլլալով, մենք եւս անկէ առաջնորդենք մեր բարեպաշտ ուխտաւորաց, ցոյց տալով նոցա Խաչի ճանապարհի (1) վրայ գտնուած սուրբ տեղուանքը ։

Եւ որովհետեւ սոյն ճանապարհը Պիղատոսի պալատէն մինչեւ 'ի Գողգոթա կը վերջանայ, ուստի մենք ալ անկէ սկսելով շարունակենք մեր հոգեւոր այցելութիւններն ամենայն ջերմեռանդութեամբ ։

Առաւօտ կանուխկեկ սուրբ Յակոբայ վանքէն ելնելով և դէպ 'ի աջ կողմը ծռուելով՝ կը հասնինք սովորական ճանապարհով մինչեւ սուրբ Յարութեան եկեղեցւոյն դրսի բակը, ուր քանի մի

(1) Խաչի ճանապարհ կոչեցինք, զոր Լատինք ցաւագին ճանապարհ կը կոչեն, այն փողոցները ուսկէ Քրիստոս խաչն ուսը Պիղատոսի պալատէն հանուելով մինչեւ Գողգոթա բերուեցաւ ։

որ յառաջ կատարեցինք մեր այցելու-
թիւնները ։ Բակին արեւելեան կողմի
դանէն դուրս ելնելով, ապրշան ծա-
խող վաճառականաց փողոցին մէջ աջ
կողմը հին կամարադուռ մի կը տեսնը-
ւի ։ Այս տեղս շատ տարի չէ կաշէ-
գործներու գործարան էր, և հին ժա-
մանակ սուրբ Աստուածածնի անուամբ
եկեղեցի կար ։ Հիմակ երկու տարի է
որ Ռուսիոյ տէրութիւնը առած է Օս-
մանեան կառավարութենէն, և մօտերս
պիտի սկսի մեծ շէնքեր շինելու . ար-
դէն սկսած են փորել և յատակը մաքրել,
ուր շատ հնութիւններ և շինութիւններ
կը գտնուին . ամբողջ հին եկեղեցին
յայտնուած է , և հոն աղօթատեղի.ը-
րած են առ այժմ Ռուսիացիք ։

Այս դրանը առջեւէն անցնելով ճա-
նապարհը երկուքի կը բաժնուի , աջ
կողմինը պղնձագործաց և մսավաճառաց
մեծ շուկայն կը տանի . մենք պէտք է
դէպ 'ի ձախ կողմի ճանապարհը ուղ-
ղուինք . և քիչ մի յառաջ երթալով ճա-
նապարհը կը ծռի դէպ արեւելք և յե-
տոյ դէպ 'ի հիւսիս՝ որ կը հանէ մութ
շուկայն ։ Յիշեալ շուկային կամարին

բերանը, ձախ դին աւերակ տեղ մը կ'երեւի բարձր, ուր տասուերկու աստիճանով վեր կ'ելնուի, այս տեղս էր Կոստանդիանոսի ժամանակ սուրբ Յարութեան տաճարի նախադուռը, ուր առաջուան երկու սիւները կանգուն կ'երեւին. և հիմակ ճանապարհ մի է դէպ ՚ի վեր, ուսկէ կ'երթուի Խպտուոց Նորաշէն վանքը և Հապէշից վանքը և ուկէնոր ըսուած սատանիճը, որոնց վրայօք ուրիշ անգամ կը խօսինք։

Ա. Սիոն դափավճոյ։ Նախադուռէն դէպ ՚ի մութ շուկայն յառաջ երթալով, անոր ծայրը չորեքուղի ճանապարհ մի կը հանդիպի. դիմացի ճանապարհը քաղաքին Դամասկոսի ըսուած դուռը կը հանէ, ձախ կողմինը դէպ ՚ի Յունաց և Լատինաց վանքերը, աջ կողմինըն է Խաչի ճանապարհը։ Այս ճամբուս բերանն է Սիոն դափավճոյ ըսուած սիւնը, և ըստ աւանդութեան՝ Տեառըն մերոյ Յիսուսի Քրիստոսի մահուան վճռոյն յայտարար թուղթը այդսեան վրայ կպցուցին։ Յիշեալ սիւնը խանութի մի մէջ տնկուած է, որուն կամարէն վեր կը բարձրանայ և 7—8

մեզի երկայնութեամբ կը տեսնուի։

Բ. Դոպրադանի դուռը։ Նոյն դիմացը իբր 15 քայլ հեռի է Դոպրադանի դուռը, ուսկէ Յիսուս Քրիստոսը խաչն ուսը շալկած դուրս հանեցին։ Կը կարծուի հաւանականօրէն, որ 'ի մահ դատապարտուած ամեն անձինք այս դռնէս դուրս կը հանուէին տանջանարանը տարուելու համար։

Գ. Բերենիկեայ դուռը։ Յիշեալ տեղէն դէպ 'ի աջ կողմի ճանապարհին մէջ յառաջելով 60 մ. դրի չափ, աջ թեւին վրայ պատին մէջ տեղաւորուած սիւն մի կ'երեւի. այս տեղւոյս համար կ'ըսուի թէ սրբուհւոյն Բերենիկեայ (Վերոնիքա) տունն էր, որ Քրիստոս խաչն ուսը անցուցած ժամանակին, չդիմանալով նորա քաշած նեղութեանը, համարձակեցաւ քովը մօտենալ և երեսէն վազած քրտինքները սրբել։

Դ. Պիղատոսին կամարը։ Նոյն ճանապարհը շարունակելով՝ երկու ուղի կ'ելնէ դիմաց, մին դէպ 'ի ձախ կողմ, միւսը դէպ 'ի աջ։ Դէպ 'ի ձախ կողմի ճանապարհը յառաջ երթալով անցքը կը լայննայ, և դիմացը անկիւնագլուխը նոր դուռ

մի կ'ելնէ, այս տեղ է Աւստրիացւոց հիւրանոցը և Նորաշէն մատուռը։ Ասոր հանդիպակաց կողմի անկիւնագլուխը հին բաղնիք մի կայ, զոր Հռովմէական Հայք ծախու առած են, և անոր պատին տակովը փողոցին վրայ մարմարասիւնի մեծկակ կտոր կ'երևի. այս տեղս հասնելով Յիսուս, կ'ըսէ աւանդութիւնը, և խաչին ծանրութեան տակ ընկճուած ըլլալով Սիմոն կիւրենացւոյն պատահեցան, և բռնեցին զինքը որ խաչը նա տանի։ Յառաջ երթալով դէպ 'ի աջ կողմի փողոցին մէջ, ձախ դին կ'երևի Նորաշէն մատուռ մի և անոր կից Գաղղիացի Սիոնի Տիկնայք լռուած մայրապետաց վանքը։ Այս վանքին կըռթընած հին կամար մի կայ փողոցին վըրայ, և անոր վրայ սենեակ մի կամ Տաճկաց աղօթարան մի կ'երևի երկու կողմէն մէկ մէկ պատուհանով։ Այս կամարին վրայէն ցոյց տուաւ, կ'ըսեն, Պիղատոս Յիսուսն Հրէից, զինքը ծեծել տալէն յետոյ, կարծելով թէ այս անգութ ազգին սիրտը կրնայ ամքել, և ըսաւ. «Ահա այր ցձեզ» ։

Ե. Հերովդէսի պալատը։ Քիչ մի աւելի

յառաջ գնալով, աջ կողմն է Հերովդէս Չորրորդապետի պալատին տեղը, այն որ Յովհաննու Կարապետին գլուխը կըտրել տուաւ, և ծաղրաքանութեամբ վարուեցաւ Յիսուսի հետ երբ Պիղատոս անոր քով խրկեց զՅիսուս։

Զ. Ներքինինեան աշտարակ, կամարական դատաւորական։ Պիղատոսի կամարէն 45 մեթր դէպ 'ի արեւելք զօրանոցի դուռը կայ ուր աստիճաններով կ'ելնուի։ Փրկչի ժամանակ այս տեղս Ներքինինեանաշտարակը կար, ուր կը բնակէին Հռովմայեցւոց կողմէն եկող դատաւորները։ Պիղատոս Պոնտացի դատաւորը որքան որ Յիսուսը անմեղ հրատարակեց, այսու ամենայնիւ փոխանակ ազատ արձակելու՝ Հրէից ձեռքը մատնեց որ 'ի խաչ հանեն։ Հոս էր այն ժամանակները Դատաւորական ատեանը։ Յիշեալ զօրանոցին մէջ տեղ մի ցոյց կուտան, ուր տեղ փշով պսակուեցաւ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս։

Է. Փուշ պսակի եկեղեցին։ 45 մեթր առաջ անդին, ձախ թեւին վրայ երկաթեայ պզտի դուռ մի կայ. այս դռնէն ներս մտնելով բակին ծայրը դէպ 'ի ձախ

կողմը եկեղեցւոյ դուռն է, զոր Հայք Փուշապանի կ՚անուանեն. Յիսուս Քրիստոսի ձեռքը մատնուելէն յետոյ գլուխը փուշապսակ դրած՝ այս տեղը բերին ու սկսան խարազանով ծեծել ու ամեն տեսակ նախատինք թուք ու մուր տալ իրեն։

Այս տեղ կը վերջանայ խաչին ճանապարհը։ Բայց մենք շարունակենք մեր այցելութիւնը դէպ 'ի յառաջ, ու կամարի մի տակէն անցնելով, ուր կը տեսնուի Սողոմոնեան տաճարի մէկ դուռը և փոքրացին վերջացած տեղը դէպ 'ի աջ դին նեղած նեղս կ՚երթեւի ուրիշ մէկ դուռը։ Հոս ճանապարհը չորեքուղի է, մէկուն վրայ տան մը կամարը կայ, որ Հայոց վանքին է. այս կամարին տակէն անցնելով և բաւական յառաջ գնալով ձախ դին կ՚երթեւի Յովակիմայ և Աննայի տունը, ուր իրենց անուամբ հին եկեղեցի մի կայ հայկական ձեւով, և 1856 թուոյն Գաղղիացիք սուլթան Օսմանեան տէրութենէ 'ի պարգեւ, և հին շէնքը պահելով նորոգեցին, գեղեցկացած չքնաղօրէն դժուար է նկարագ մանե-րը։ 1187ին Սալահատինն առնելով ա-

որ՝ Տէփլիզեցւոց ուսումնարանըդաւ,
ու Աւլաբէ կոչուեցաւ ։ Ասոր կից է
գրեթէ բաղնիքը որ սուրբ Աստուա-
ծածնի անուամբ կը յիշուի. և այս
բաղնիքին դիմացի ճանապարհը շեղե-
լով, Սողոմոնի տաճարին ուրիշ մէկ
դուռը կը տեսնուի, ուր քով աջ կող-
մը մեծ փոս մի կ'երեւի, որ է Պրո-
պատիկէ աւազանը. իսկ ձախ դին ծը-
ռուելով քանի մի զօքքեր կը տեսնուին
որոնք Աստուածածնի դրան պահապան-
ներն են ։ Այս դուռը դէպ 'ի արեւելք
կը բացուի. աջ կողմը Տաճկաց գերեզ-
մանատուն է, և դիմացի ճանապարհը
բռնելով դարուվար իջնելու ժամա-
նակ ճանապարհը կը բաժնուի 'ի ձախ
և 'ի յաջ. երկրորդ ճամբուն մէջ յառաջ
երթալով դէպ 'ի վար հին ծայրը գետա-
նին երեսը հարթայատակ ժայռեր կ'ե-
րեւին. այս տեղս կ'ըսեն քարկոծուե-
ցաւ Ս. Ստեփաննոս նախավկայն ։ Եւ
դարձեալ ձախ դին դառնալով, ձախ
թեւի վրայ Հայոց Ձիթենեաց պար-
տէզն է, որու դուռը կից է սուրբ Աս-
տուածածնի եկեղեցին իջնելու աստի-
ճաններուն ։

Սուրբ Աստուածածնի Գերեզմանը։ Գէթսեմանի ձորին հիւսիսային ծայրը կ'ինկնի ամենասուրբ Կուսին փառաւոր Տ ի-րեկը. քանի մը ոտք աստիճաններէ վար արտաքին գաւիթը կ'իջնուի ։ Եկեղեցւոյս առաջին հիմնադիր Աբգար Թագաւորի կնոջ Հեղինէէն յետոյ, եղած են երկրորդ Հեղինէն՝ Կոստանդիանոսի մայրն ու Մելքը ։ Գերեզմանը որ ժայռի մէջ փորուած է, դրսի կողմէն տաշելով՝ միայն սուրբ մարմինն ընդունած մասը թողուցած են, չորս կողմը ազատ թողլով՝ որ կ'ինկնի եկեղեցւոյն արեւելեան թեւին մէջ, ըստ որում տաճարը խաչաձեւ է ։ Գերեզմանին ներքին կողմն ալ կոկուած ու զարդարուած է. մարմնոյն դրուած տեղը ճերմակ մարմարինով ծածկուած է բարձր դիրքով ու սեղանաձեւ, որու վրայ ամեն օր պատարագ կ'ընեն Հայք ու Յոյնք միայն. Եւ երկու փոքրիկ դռներ ունի, մին դէպ 'ի հիւսիս եւ մին դէպ 'ի յարեւմուտք ։ Հեթում Բ. Կիլիկիոյ թագաւորը 1300 ին Եգիպտացւոց վրայ արշաւանք ըրած եւ յաղթութեամբ ետ դարձած ժամանակ Երուսաղէմ գալով, 'ի նշան

գոհութեան Գերեզմանին դրան կողմը արեւմտեան դրան կից սեղան կանգնել տուաւ, որ մինչեւ ցայսօր կը մնայ եւ Հայոց միայն սեփհական է, ուր երբեմըն կը պատարագեն եւս։

Սուրբ Գերեզմանի հիւսիսային կողմը սեղան մը կայ Հայոց սեփհական, ուր երբեմն Ասորւոց կը թոյլատրեն պատարագելու. ետեւի կողմը Յունաց սեղան մի կայ, որ նոցա միայն կը պատկանի, եւ հարաւային կողմը Ղպտոց կայ, ուր Մահմետականք երբեմն ուխտի եկած ժամանակնին կ'աղօթեն։ Եկեղեցւոյն հիւսիսային թեւին մէջ Յունաց տեսչին խուցն է, արեւմտեան թեւին մէջ սեղան մի եւս կայ Հայոց սեփհական, ուր երբեմն Ղպտւոց կը թոյլատրեն պատարագելու։

Աստիճաններէն վեր ելած ժամանակ աջ կողմը դուռ մի կայ, ուր տեղ է Հայոց Տեսչին խուցը եւ պահարանը։ Աստիճանաց կէսը հասնելով աջ դին պատարագամատոյց սեղան է Հայոց սեփական, ուր Յովսեփայ Աստուածահօր գերեզմանն է, պատին մէջ առանձին կամարով. դիմացի կողմն ալ Յովակի-

մայ և Սինայի գերեզմաններն են կրկին սեղանով, որ Յունաց ձեռքն է։ Բոլոր եկեղեցին Հայոց և Յունաց կը մերաբերի. նոյնպէս երկու ազգ միայն իրաւունք ունին ամեն օր պատարագելու սուրբ Գերեզմանին վրայ. և զարդերն ալ թէ Գերեզմանին և թէ բոլոր եկեղեցւոյն մէջ զանուած, կանթեղ, ջահ, կերոն, աշտանակ և այլն, հաւասար ունին, թէպէտ իւրաքանչիւրինը որոշուած և զատուած։ Լատինք իրաւունք չունին պատարագելու, բայց 'ի ուխտէ և առանձին աղօթելէ։ Սուրբծննդերու գլուխը եղած ժամանակնիս, աջ և ձախ կողմերը պատով հիւսուած պատուհանի նման տեղեր կ'երեւին, հասարակօրէն կը կարծուի որ վերի եկեղեցին երեսուղուռ եղած ըլլան. ըստ որում, ինչպէս յայտնի կ'երեւի, հին ժամանակ այժմեան Տաճարին վրայ ուրիշ եկեղեցի մի եւս կար, որ եօթներորդ դարուն մէջ դեռ կանգուն կը կենար և բոլորակ ձեւ ունէր։ Վեշտասաններորդ դարուն մէջ յիշեալ եկեղեցին աւերակ մնացած ըլլալով, քաղքին պարիսպները նորոգելու գործածուեցան անոր քարերը։

Սուրբ Գերեզմանի տաճարը երկու-բաժնուած ունի, որոնց մին Հայոց և միւսըն Յունաց լուսարարին քով կը մնան։

Էջկեղեցիէն դուրս ելածիդ պէս ձախ դին նեղ անցք մի կ'երեւի, և պզտի դուռ մի երկաթեայ, և մէջը անշուք խորշեր են ստորերկրեայ՝ երեք սեղանով. այս տեղւոյս համար կ'ըսուի թէ Յիսուս դեռ չմատնուած Առաքելոց հետ եկաւ աղօթելու ուր և տագնապի մէջ մնալով արեան քրտունքը հոսեց իւր դէմքէն, և ուր ասաց յաղօթելն. «Հայր իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս յինէն»։

Գուլիթի արեւելեան աստիճաններէն վեր ելնելով, աջ կողմը խարխուլ պատով հիւսուած տեղ մի կայ որ Ս.-ըմբռնեցաւ է և մէջը գերեզման մի կայ կ'ըսեն.

Քիչ մը յառաջ երթալով Գեթսեմանի ձորին ճանկուածքը՝ ձախ թեւին վրայ փողոց է. դէպ 'ի Ս. Համբարձման լերան ելնելու, և փողոցին բերանը նորոգուած հիւսուած Ձիթենեաց պարտէզ մի կայ, և մէջը ութ ձիթենիք, որոնց բունները առանցնութեանց. Բը

ընտանի ժամանակնէն կը կարծուին . և ողջունի ծառերը կը կոչուին ըստ ռամկաց: Այս տեղս շատ տարի չէ , որ Լատինք խուրացուցին պատ մի չորս դին քաշելով . և հիմակ գեղեցիկ ծաղկանոց է , եւ ամեն ազգէ ուխտաւորք ներս կ'ընդունին . և երկաթեայ պզտի դուռ մի ունի արեւելեան հարաւակողմի անկիւնը : Դռնէն դուրս դէպ յարեւելք ժայռ մի ցոյց կուտան գետնի վրայ , և աւանդութեամբ կ'ըսուի թէ Փրկիչն մեր Յիսուս հոս պառկել տուաւ Պետրոսը , Յովհաննէսն ու Յակոբոսը , և առանձնանալով անոնց որ արթուն մնան ու աղօթեն , ինքը քարընկեց մի տեղ հեռանալով խնդրեց իւր Հօրմէ որ չարչարանաց բաժակը զանց ընէ իրեն խմելու : Երկոտասաներորդ դարուն մէջ եկեղեցի մի կար այս տեղ յանուն Առաքելոց ննջմանը :

Յիշեալ պարտէզին դրան հարաւակողմը 15 մեթր հեռու սիւնի կտոր մի կը տեսնուի , և ասոնկա նշան է այն տեղւոյն՝ ուր Յուդա մատնութեան համբոյրը տուաւ Փրկչին :

Համբարձման լերան այցելութիւնը

ուրիշ աւուր թողով, մենք դառնանք դէպ 'ի քաղաքը Փրկչադռնէն ներս մտանելու և ճանապարհին վրայ գտնուած նշանաւոր տեղուանքը աչքէ անցընելու։

Յիշեալ աւետարանական տեղերէն ետ դառնալով և Ձիթենեաց պարտէզին պատին տակովը յառաջ գնալով, ձախ դին է Ս. Համբարձման ստորոտը և աջ դին Գեթսեմանի ձորը։ Անկէց երեսնիս դէպ 'ի սուրբ քաղաքը դարձուցած ժամանակնիս կ'երեւի Ոսկեղէ-նեան Դուռը, որ պատով հիւսուած է։ Այս ունի կրկին կամարերկու դռներու վերայ, որոնց ամեն մէկուն լայնութիւնն է 2 մետր, ամեն մէկ կամար եւս 2 մետր և 85 հարիւրամետր լայնութիւն ունի. կամարներուն շրջանակի դուրս ցցուած մասերին ալ տերեւաձեւ զարդարանքներով շքեղացուցած է։ Այս դռնէն մետաւ յաղթանակաւ Փրկիչն մեր Յիսուս Ծաղկազարդի կիւրակէի օրը։ Նոյնպէս և Հերակլ կայսր կենաց փայտը Պարսից գերութենէն ազատելով այս դռնէն ներս մտցուց, և ուսին վրայ շալկած տարաւ Գողգոթայի վրայ տնկէց 'ի տես հաւատացելոց։ Մահմետականաց ձեռ-

քըն անցնելէն յետոյ սուրբ քաղաքը, այս դուռը պատով հիւսեցին սուտ գուշակութեան մի հաւատալով, իբր թէ Փռանկ ազգը այս դռնէն կրկին անգամ՛ներս մտնելով պիտի առնէ քաղաքին։ Այս կողմն կը տեսնուին նաեւ Սողոմոնեան պարսպին մէկ մասը, որոնք յայտնի են ահագին մեծութեամբ քարերէն։ Անոնց մէջ կայ մէկ հատ մի որ 6 մետր երկայնութիւն, 2 մետր լայնութիւն, և 1 մետր բարձրութիւն ունի։

Ճանապարհն առաջ տանելով կամուրջի մի կը հանդիպինք, որ շինուած է Կեդրոնի բռնած հեղեղատին վրայ։ Ըստ աւանդութեան Լատինաց. Յիսուս բռնուելով նոյն կամուրջին վրայէն չանցնելու համար՝ հարաւային կողմէն վար Կեդրոնի հեղեղատին մէջ ձգեցին զինքը որ անկէ անցնէին, որոյ նշան՝ ինկած ատենը ոտքերուն և ծունկերուն տեղերը մնացին ժայռին վրայ (1)։ Իսկ մերայինք աւանդութեամբ կ'ըսեն թէ Տեառնեղբայր Յակոբոս առաքեալը Տաճարի աշտարակէն հոս գահավիժեցին Հրէայք,

(1) Հաննէ, պատմ. Ս. Երուսաղէմի. յեր. 256 տպագրեալ յամի 1807.

և Թափիչները՝ որ լուացք կ՚ընէին ձորին մէջ, վրայ հասնելով իրենց Թակերովը գլխուն զարկին՝ երբ սուրբ Առաքեալը դեռ կը գոչէր. «Տէ՛ր Թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»։

Գրիգոր Շղթայակիր պատրիարքին ժամանակ խիստ աւեր ըլլալով սոյն կամուրջն և վտանգաւոր անցուղարձից, 1728 ին մեծ պատով մի ամրացուց ու կամուրջը նորոգեց եւ ընդարձակեց. և այն տեղ զանուած սառնիճին բերանն ալ, որ երկիւղալի էր, նեղցընել տալով՝ ապահովեց բաւական աշխատութիւն կրելով։

Կամուրջին դէպ յարեւելակողմը և հեղեղատին ձախ դին կը տեսնուի Աբիսողոմայ արձանը կամ Գերեզմանը, զոր Աբիսողոմ Դաւթի որդին ինքն իւր կենդանութեանը կանգնել տուաւ (1)։ Այս ժայռ քարէ է, և մինչեւ ծնօտը ([illegible]) ժայռէն կտրուած է. չորս կողմը դէպ 'ի երեսները չորս սիւներով զարդարուած է և անոնց վրայ բոլորաձեւ. տաշուած է ստամանի ձեւով և ծայրը երթալով սրացած, որ կը վերջանայ արմա-

(1) Բ. Թագ. ժը. 18.

ւեննի փնջով մի ։ Ամեն մէկ երեսին վը-րայ չորս պատուհան ունի, և ներսը լեցուած է խիճով զոր անցնող ու դառ-ձող մարդիկ ու տղայք կը նետեն ։ Ար-ձանին յատակն ալ մի եւ նոյն ժայ-ռին մէջ փորուած է գեղեցիկ զարդե-րով, բայց հիմայ հողով ծածկուած ըլ-լալուն չերեւիր ։ Աբիսողոմայ բուն գերեզմանը Յորդանանու արեւելեան կողմն է փոսի մի մէջ, ուր տեղ նետե-ցին զինքը հօրը դէմ ապստամբութեան բռած ժամանակ սպաննուելէն յետոյ(1)։

Աբիսողոմայ գերեզմանին կից արե-ւելեան կողմը կը տեսնուի Յովսափաթու ըսուած Գերեզմանը, գետնին մէջ գրե-թէ թաղուած, որուն միայն վերին ծայ-րը կը տեսնուի գետնին երեսին հաւա-սար ։ Այս չիրիմը հասարակօրէն կը կար-ծուի որ դամբարան եղած ըլլայ և 'ի յի-շատակ երեւելի անձի մը կամ նոյն Յով-սափաթ Թագաւորին կանգնել տուած. վասն զի ըստ Աստուածաշունչ սուրբ գրոց՝ յիշեալ Թագաւորը Երուսաղէմի մէջ թաղուեցաւ (2)։

(1) Բ. Թագ. ԺԸ. 17։
(2) Գ. Թագ. ԻԲ. 51։

Սուրբ Յակոբայ Գերեզմանը։ Նշխարանայ արձանէն 45 մեդր անդին դէպ 'ի հարաւ մահարձան մը կ'երեւի ժայռին մէջ փորուած, ուր սպտի գաւիթ մը կայ երկու սիւներով եւ երկու կէսամոյթերով որոնք նոյն ժայռէն յօրինուած և մարդակով մը իրարու հետ միացուցած են՝ բոլորը մէկ ժայռէ։ Այս մահարձանիս համար քրիստոնեայք Սուրբ Յակոբայ գերեզմանն է կ'ըսեն. Մահմետականք Տիւան-Փարաւոն կը կոչեն. իսկ վրան եբրայեցերէն վերտառութիւն կայ, որու մէջ գրուած է Եզիրայ չիրիմն ըլլալը։ Եզիրի ցեղը Ահարոնէն կ'իջնայ(1)։ Յիսուս Քրիստոսէ քիչ ժամանակ յառաջ շինուած կը կարծուի այս մահարձանս։

Առաքեալք երբ տեսան որ իրենց Տէրը դահիճներու ձեռք կապուած յանձնուեցաւ, իրենք թողուցին փախան. մէջերնէն ութը գնացին տեղ մը պահուըտեցան, որու վրայ ուրիշ անգամ պիտի խօսինք. իսկ Յակոբոս առաքեալ Փոքրը, եկաւ այս շիրմիս մէջ պահուեցաւ։ Աւանդութեամբ կ'ը

(1) Ա. Մնացորդ. ԻԴ. 15։

ռուփ թէ՝ մինչեւ Քրիստոսի յարութիւն առնելը հոս մնայ առանց բերանը բան մի դնելու, և թէ Փրկիչն մեր այս տեղը ճկան երեւեցաւ իրեն։

Յակոբոս առաքեալ Փոքրը Ալփէօնի և Յուդայի եղբայրն է, և Յիսուսի Քրիստոսի հետ մօր քրոջ որդիք են. ասիկայ եղաւ Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը և Յիսուսի Քրիստոսի փոխանորդը։ Հրէայք նախանձելով և թշնամանալով և իրենց քահանայապետէն գրգռեալ Տաճարի պարսպէն վար նետեցին զինքը և հոն թափիչներու ձեռօք չարաչար հոգին աւանդելով այն մահարձանիս մէջ թաղուեցաւ, ըստ ոմանց յամի Փրկչին 62։

Քրիստոնէութեան առջի դարուց մէջ այս մահարձանիս վրայ մատուռ մի կար, ուսկէ վար ձորին կ՚իջնուէր ժայռին մէջ փորուած աստիճաններէն, որոնք դեռ կը տեսնուին։

Զաքարիայի Գերեզմանը։ Սուրբ Յակոբայ շիրմին հարաւային կողմը կ՚ինկնի՝ անոր կից, Զաքարիա որդւոյ Բարաքիայի գերեզմանը։ Բոլորովին միակտուր ժայռէ քառակուսի կտրուած և բուրգաձև

ջուր երեսները երկու կիսասիւնով զար-
դարուած է, որոնց ծնօտները պարզ-
արուեստիւ մի դէպ 'ի դուրս քառաձեւ
ցցուած են. և անկէ սկսելով դէպ 'ի
վեր բրգաձեւ ծածք ունի առանց կոր-
սնցընելու քառակուսի ձեւը. դուռ
չունի, և հաւանական է որ չորս բոլո-
րը դիզուած Հրէից գերեզմաններուն
մէջ աներեւութացած ըլլայ։

Զաքարիա Յովիադայ մեծ Քահա-
նայապետի որդին երբ տեսաւ որ ժո-
ղովուրդը բոլոր կռապաշտութեան ե-
տեւէ ինկաւ, աստուածային նախան-
ձով վառուած, գնաց Տաճարն ու Իս-
րայէլացիքը յորդորեց որ ճշմարիտ Աս-
տուածը չթողուն. բայց նոքա փոխա-
նակ խրատին մտիկ ընելու, Տաճարին
գաւթին մէջ զինքը քարկոծեցին ինչպէս
որ կը կամենար Յովաս Թագաւորը. Յի-
սուս Քրիստոսէ 864 տարի յառաջ [1]։

Հոս վերջացընելով մեր Երկրորդ այ-
ցելութեան շրջանը, դառնանք յետ և
կամուրջին վրայէն անցնելով և Կեդրո-
նի հեղեղատը ձախ կողմերնիս ձգելով
ելլենք դէպ 'ի դար 'ի վեր, բռնելով այն

(1) Բ. Մնացորդաց. ԻԴ. 20, 21.

ճանապարհը որ Փրկչադուռը կը տանի և քաղաքին պարիսպը աջ դինին կ'ինկնի։ Ներս մտնելով դռնէն և միւս կամարաբեռնէն դուրս ելած ժամանակնիս դէպ 'ի ձախ կողմի ճանբան բռնենք, որ երկու փողոց դառնալէն յետոյ ուղղակի Սուրբ Յակոբայ մեծ վանուց հայակապ դուռը կը տանի, որոյ դիմացի պարտէզին մէջի շուճի ծառերը, որոնք բոլոր ընդարձակ հրապարակը կը ծածկեն, աւելի մեծ շքեղութիւն և գեղեցկութիւն կ'ընծայեն տեղւոյն։

Ներս մտնելով հանգիստ տանք խոնջ մարմիննուս, և մի քանի օրէն պատրաստուինք Երրորդ այցելութեան։

ԵՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի սուրբ Փրկիչ և 'ի հարաւային շրջակայքը սուրբ Երուսաղէմի։

Առաւօտ մի նախաճաշ ընելէն յետոյ, երբ գեղեցիկ արեւ և մեղմ եղանակ կ'ընէ, բարեպաշտ ուխտաւորաց խումբը Փրկչի դռնէն դուրս կ'ելնէ Փրկչավանք ուխտ ընելու և սուրբ քա-

գաւքի հարաւային շրջակայքն եղած նը-
շանաւոր հին տեղուանքը այցելելու ։

Փրկչաղանէն դէպ 'ի հարաւ 37 մե-
տր յառաջ երթալով Հայոց Ձիթե-
նեաց պարտէզին ցանկապատին տակը
մը, անոր ծայրը քանի մի ոտք տակ-
ճաններ կը տեսնուին Հայոց հին տա-
պանաքարերով շինուած, որոնց կից կայ
նաև հին սիւնի մի կտոր ։ Այս տեղ-
ւոյն համար աւանդութեամբ կ'ըսուի
թէ՝ Առաքեալներն երբ ամենօրհնեալ
սուրբ Աստուածամօր փոխմանէն յետոյ
անոր մարմինը ճաղի մէջ դրած հասան,
Հրէից խուռն բազմութենէ մի արգի-
լուեցան, որոնք ատելութեամբ զինեալ
կ'ուզէին վար առնել նորա սուրբ մար-
մինը ։ Այլ անմիջապէս պատժուեցան.
մէջերնին ամենէն յանդուգն եղողն որ
քահանայ մի էր, երբ ձեռքը դէպ 'ի
ճաղն երկնցուց որ վար ձգէ, ձեռքը
պառացաւ, և միւսներն կուրցան ։ Այն
պատճառին վրայ ապաշխարելով զղջումն ե-
կան և Առաքելոց միջնորդութեամբ Աս-
տուած շնորհեց անոնց առողջութիւնը.
հաւատացին ամենքն ալ 'ի Քրիստոս
և մկրտուեցան ։

Յիշեալ ստորոտներէն վեր ելնելով դէպ 'ի արեւմուտք 50 մետր ներս՝ երկաթեայ պզտի դուռ մի կը տեսնուի, այս է Հայոց սուրբ Փրկչի հին վանուց դուռը։ Ներս մանելնուս եկեղեցւոյն դաւիթն է, որ եւ գերեզմանատան է սուրբ Աթոռոյս պատրիարքաց, եպիսկոպոսաց և վարդապետաց միաբանից, ինչպէս կը ցուցնեն տապանաքարերը։ Պատրիարքացը բարձրկեկ շինուած են մարմարիանով զարդարուած, ինչպէս կ'երեւին դռնէն ներս մանելնուս ձախ կողմի անկիւնը եւ դաւիթին դիմացի կողմի կամարներուն տակը։ Այս եկեղեցւոյս և վանքիս տեղը, ինչպէս ամեն ազգ կը վկայեն, Կայիափա քահանայապետին տունն է, ուր տեղ Յիսուս Քրիստոս մատնութենէն յետոյ բերին եւ հոս հարցաքննութեան ենթարկեցին քահանայապետին դիմացը հանելով։ Այս տեղ Պետրոս երեք անգամ ուրացաւ իւր Տէրը՝ չեմ ճանչնար զինքն ըսելով, եւ հինգշաբթի գիշերը դէպ 'ի ուրբաթ լոյս այս տանը մէջ անցուց Յիսուս հազարումէկ նախատանաց համբերելով։ Դաւիթին արեւե-

ըլլան կողմն է եկեղեցւոյ դուռը, ուր մտնելով՝ սեղանին ձախ կողմը կողմնակի պզտի դուռ մի կայ և մէջը փոքրիկ սեղան մի, ուր հազիւ երկու հոգի կը պարունակի. այս է երկրորդ բանտը, ուր անցուց Փրկիչն մեր Յիսուս այն մէկ գիշերը։ Եկեղեցին որ առանց սեան սիրուն դիրք մի ունի, մէկ սեղան միայն կը ներկայացընէ, որու պատարագամատոյց սեղանին քարն է Յիսուսի Քրիստոսի սուրբ Գերեզմանի կափարիչ վէմը, զոր հրեշտակը վար շրջեց ու վրան նստաւ (1)։ Այն քարը որ գրեթէ կէս բոլորակի ձեւ ունի, բոլոր սեղանը կը ծածկէ, և երեք տեղէն բաց թողուցած են համբուրելու համար։ Այս կափարիչ վէմիս վաւերականութիւնը ուրիշ քրիստոնեայ ազգերն ալ կը հաստատեն։

Յիշեալ վանքին գոյութիւնը մինչև քրիստոնէութեան առաջին դարը կ'ելնէ, և Հայոց սեփական ստացուածք եղած է իւր հիմնարկութենէն 'ի վեր։ Սուրբ քաղաքս Արաբաց ձեռք անցնելէն յետոյ բաւական նեղութիւն կրած

(1) Մատթ. ԻԸ. 2։

են սուրբ բանտին ծառայող միաբանք. և բաւական ժամանակ լքեալ թողուցուած է բռնաւոր մարդոց ձեռք։ Չորեքտասաներորդ դարուն մէջ Յովհաննու Որձնիչեցւոյ աշակերտ Կարապետ անուն վարդապետ մի Տոսպ գաւառէն Երուսաղէմ ուխտի գալով, և տեսնելով յիշեալ վանքը զոր Արաբացիք Հայոց ձեռքէն յափշտակելով ախոռ կամ խան շինած էին, վշտալից սրտով Եգիպտոս իջնելով 4000 դահեկանի կրկին անգամ ծախու կ'առնու սուլտանէն, եկեղեցին կը նորոգէ, յորում էր կ'ըսէ կափարիչ վէմը։ Զկնի այնորիկ հետզհետէ Ս. Թորոս պատրիարքունք պէտք եղած նորոգութիւններն ըրած են. պարիսպն աւելի բարձրացուցած են Աքոնցւոց յարձակումներէն ազատ մնալու։ Վերջին նորոգութիւններն եղան 1848 ին Կիրակոս պատրիարքի օրով, որ ժամանակ գաւիթն եղած սեղանն ալ նորոգեցաւ, և արեւմտեան կամարներն և սենեակները շինուեցան։

Վանքի դռնէն դուրս ելնելով ձախ կողմէն 7 ոտք աստիճանաւ գերեզմանատունը կը մտնուի։ Այն գերեզմա-

նատունը, որ Սիօն լերան վրայ է, երեք ազգաց կը վերաբերի որոշեալ սահմաններովն, Հայոց, Յունաց և Լատինաց. մեծ մասը Հայոց է, որոնք մարդասիրաբար կը Թողատրեն Հապէշ ու Խպտի ժողովրդոց եւս իրենց ննջեցեալները հոն մէկ կողմը Թաղելու։ Լատինաց գերեզմանատունը նոր պատով բաժնուած է և բաց 'ի հիւսիսային կողմէն ուր Ճանապարհ կայ, միւս երեք կողմէն մեր գերեզմանատան մէջ մնած է, և յայտնի կ'երեւի որ սկիզբը բոլոր մէկ գերեզմանատուն եղած է Հայոց ազգին սեփական, ու յետոյ մէկ փոքր մասը Լատինաց տրուած, ինչպէս կը վկայեն սուրբ Աթոռոյս հին յիշատակարանները։ 1866 ին Լատինք բռնուԹեամբ բացին երկու դուռ միանգամայն մեր գերեզմանատան մէջ, որ վասն Նարձ. Որան բողոքեց սուրբ Աթոռը, բայց և այնպէս սոյն խնդիրը դեռ վճռի տակ է, լրացած չէ։

Գերեզմանատան հարաւային մասը որ սահմանաքարերով բաժնուած է, Յունաց ազգին է. Նորա արեւելեան կողմը պատով շրջապատուած և դէպ 'ի հիւսիս

դուռ ունեցող գերեզմանոցն ալ Մերիկացւոց է։ Յիշեալ վերջին գերեզմանատան հարաւակողմը պզտի գետին մի կը տեսնուի, որ սուրբ Աստուածածնի տանը տեղն է, ուր Յիսուսի Քրիստոսի մահուանէն յետոյ կը բնակէր սուրբ Յովհաննէս առաքելոյն հետ, և այս տեղս ինքն ալ վախճանեցաւ։ Դեռ քանի մի խոշոր քարեր կը տեսնըւին, որոնք աւանդութեամբ կ՚ըսուի թէ նոյն տան հնութեան կը վերաբերին։ Յոյնք այս տեղւոյս չոր պատին քով Պենտէկոստէի օրը աղօթելու կուգան և ժամերգութիւն կը կատարեն, ըստ որում իրենց գերեզմանատան կից է։

Յիշեալ գետնոյն արեւելեան դին իրար անցած տներու կոյտ մի կը նշմարուի գմբեթաւոր և մինարէ մի եւս ունի. Հայք Սուրբ Աթոռ կը կոչեն, մահմետականք Նէպի-Տաուտ, եւ Լատինք Ընթրեաց տեղ։ Երկու դուռ ունի, մին արեւմտակողմը և միւսն հիւսիսակողմը. այս դռնէն ներս կը մտնեն այցելութեան երթող ուխտաւորք։ Սահմանական Միանցիք հոս յատուկ տեղ մի ցոյց կուտան ուխտ ընելու, ուր մտնե-

լու. համար նախ ախտուրի մի մեջէն պէտք է անցնիլ, յետոյ ապարիճաններէ վերքաբայտուակ պզտի գաւաթի մի վրայ կ'ելնուի, և հոն ճախարակողմեան դանէ հին եկեղեցւոյ մէջ կը մնացուի, որ հիմայ մզկիթ է, և կառուցեալ է այն վերնատան տեղւոյն վրայ ուր Յիսուս Քրիստոս իւր Առաքելոց հետ զատկական զատն կերաւ, ուր սուրբ Հաղորդութեան խորհուրդն կատարեց, ուր աշակերտաց ոտքերը լուաց, և թացեալ պատառն Յուդայի տալով՝ յայտնեց անոր ձեռօք մատնութիւնը և Պետրոս առաքելոյն ուրանալը. վերջապէս այս տեղ խոստացաւ անոնց Հոգւոյն սուրբ իջակելու: Երկու անգամ այս տեղս վերնատան մէջ իւր աշակերտաներուն երեւեցաւ. երկրորդ անգամուն իւր կողը բանալով Թովմա առաքելոյն մատովը շօշափել տուաւ ըսելով. «Բեր զձեռն քո և մխեա 'ի կողս իմ, և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ»: Յիսուսի Քրիստոսի համբարձմանէն յետոյ Հոգին սուրբ այս տեղս իջաւ Առաքելոց վրայ (1):

(1) Հանձնէ, պատմ. Ա. Երուսաղէմի, յեր. 247:

Քրիստոնէութիւնը ծաղկած ժամանակէն ՚ի վեր այս սուրբ տեղւոյս վրայ եկեղեցի շինուած էր. և մինչեւ վեշտասաներորդ դար քրիստոնէից ձեռքը մնացած և երեւելի ուխտատեղի եղած էր. իսկ 1554 Թուականին մահմետական Շէյխ մի աքսորելով սոյն տեղւոյն՝ մինչեւ հիմակ նորա սերունդը բազմանալով հոն կը բնակին, որոնք Սիոնցիք կը կոչուին, և դրամական փոքրիկ պարգև մի ընդունելով ուխտաւորացմէ՝ ցոյց կու տան անոնց Վերնատան տեղը, որ ինչպէս տեսանք՝ անշուք և աղտեղի արրահ մ'է ։

Սիոնցիք կը հաւատան թէ Դաւթի և Սողոմոնի գերեզմանները այս տեղը են, և ներքնատուններուն մի ցոյց կու տան զանոնք պարունակող, բայց ներս մտանելու ոչ այլոց կը թողուն և ոչ իւրեանք կը մտնեն. և այս պատճառաւ բոլոր տեղւոյն Նէպի-Տաւութ կը կոչեն ։ Երեք տարիէն ՚ի վեր է, հիւսիսային արեւելակողմը բաւական նոր շինութեամբ ընդարձակեցին, որոնք մինչեւ Փրկչավանքի հարաւային պատը կը հասնի, նեղ ճանապարհ մի միայն երկուսին մէջտեղը մնալով ։

Այս ճանապարհէն ետ դառնալով դէպ 'ի Փրկչադուռը, և անկէ աջ դիւ ճանապարհը շեղելով պարսպի պատին տակովը, մտնենք աջ կողմերնիս եկած առաջին ճանապարհը որ քարակոյտ և անհարթ շաւիղ մի է. և անկէ 200 մետրի չափ յառաջ երթալով դէպ 'ի հարաւ՝ ծակ տեղ մի դիմացնիս կ'ելնէ Սաղոմոնի ջրանցքին մէջ. անկէց ալ դէպ յարեւելք վար իջնելով և 100 մետր ևս քալելով Պետրոս առաքելոյն այրը կը հասնինք, որ Սիոն լերան հարաւային արեւելեան ստորոտին վրայ է, ճանապարհին ձախակողմը և 10 մետր դէպ 'ի ներս։ Պետրոս առաքեալ իւր Տէրն ուրանալէն յետոյ հաւուն խօսքը իմանալով՝ յիշեց Յիսուսի Քրիստոսի կանխասացութիւնը, և իւր յանցանքը ճանչելով՝ եկաւ այս տեղս իւր մեղքը ողբալու։ Այրին բերանը բաւական ընդարձակ է ու դէպ յարեւելք կը նայի։ Այս տեղ Արշակունեաց տէրութեան ժամանակէն փոքրիկ վանք և եկեղեցի ունէին Հայք և կը կոչուէր. «Ս. Վանք Հառաչանաց Պետրոսի», և մինչեւ երկոտասաներորդ դարուն մէջ եկեղեցին

կը ծնար (1) ։

Դառնանք ասկէ կրկին յետ մինչեւ Փրկչադրան կողմը և պարսպին տակովը սովորական ճանապարհաւ յառաջ երթանք քաղաքին Աղբիւսաց ըսուած դուռը (Պապ-էլ-Մաղարպէ), և անկէ դէպ ՚ի Սելովամայ աղբիւրը երթալու շաւիղը բռնելով իջնենք, և ասկէ սկսելով շարունակենք մեր այցելութիւնը զոր Երկրորդ այցելութեան մէջ թողուցինք։

Սելովամայ աղբիւրը։ Ձորին այս դին կ'ինկնի յիշեալ աղբիւրը, զոր Արաբացիք Այն-Սըթթի-Մարիամ կ'անուանեն, որ Մարիամայ տիրուհւոյ (Աստուածածնի) աղբիւրը կը նշանակէ։ Դէպ ՚ի արեւելք կը նայի, ուր տեղ է Սելովամայ գիւղը, և Ոփէլ բլուրին ստորոտը շինուած է, և հարաւային արեւակողմը հին շէնքի մի, որ մզկիթ կը կարծուի, աւերակները կ'երեւին։ 17 աստիճանէ վար կ'իջնուի պզտի տափարակ տեղ մի և անկէ դարձեալ 15 ոտք վար իջնելով ջուրին մօտ կը հասնուի։ Ջրին հոսանքը անկանոն է, ժամանակ կայ օրուան

(1) Տես յընդարձակն պատմութեան Երուսաղէմի գիրք Գ. Գլ. Գ.

մէջ որ կը դադրի, յետոյ նորէն կսկսի, համր ադի է՝ ջրմուղը, բայց ամառը մեծ օգուտ կ'ընէ քաղաքին՝ ջրերուն նուազած ժամանակը։ Աւազանը՝ ժայռին մէջ փորուած պզտի խուցի մուտքը շինուած է, և այս խուցին մէջէն է ջրանցքը, որու միջին լայնութիւնն է 63 հարիւրամեդր և բարձրութիւնը տեղ-տեղ մինչև 4 մետր և քիչ մի աւելի։ Երկրորդ աստիճաններուն վրայ հնաշէն կամարով ծածկուած է։

Յուդայի նախուած ծառին տեղը։ Զաքարիա մարգարէի գերեզմանէն, դէպ 'ի հարաւ 100 մետր հեռու Յուդայի Սկարիովտացւոյ կախուած ծառին տեղն է, ըստ աւանդութեան, հոս է և Հրէից գերեզմանատունը, ուր տեսնելու արժանաւոր բան մի չկայ, բաւական է հեռըւանց ակնարկ մի տալ, և անիրաւ մատնութեան մի աղետալի վախճանը խորհրդածել։

Գայլակղոսեան վեմը։ Պարձեալ. Զաքարիայի գերեզմանէն սկսելով 363 մետր դէպ 'ի հարաւ ձախ թևի վրայ Սրաքացի գիւղականաց գիւղ մի կը տեսնուի Սիլուամ անուամբ, որ Գայլանո-

ղուլեան լերան ստորոտը շինուած է։ Այս լերան գայթակղութիւն ըսուելուն պատճառ այն է, որ Սողոմոն Եգիպտոսէն բերել տուած իւր կռապաշտ կանանց համար այս տեղս կռոց տաճարներ կառուցանելով՝ ժողովուրդը իւր վրայ գայթակղեցուց(1)։ Այս տաճարներէն մին դեռ կանգուն կը կենայ գիւղին քով և անոր հիւսիսային կողմը արտածայր ժայռի մի վրայ՝ միակտուր քար է քառակուսի, ժայռին մէջ փորուած դեղին գունով, և պզտի դուռ մի ունի Կեդրոնի ձորին վրայ։ Ճարտարապետական զարդերէ զուրկ չէ դրսի կողմէն, իսկ ներսի կողմէն՝ արեւելեան ու հիւսիսային երեսները պատուհանի նման երկու խորշեր ունի և առաստաղը խշու կոնըկի ձեւով է։

Անցնինք յառաջ Կեդրոնի ձորին միւս կողմէն և Սելովամայ աղբիւրի առջեւէն զոր արդէն տեսանք, աջ կողմերնիս է Օֆէլ ըսուած բլուրը. ձախ կողմերնիս Արքունի Պարտէզը։ 300 մեդրի չափ հեռուն, ճանապարհին վրայ ջրի աւազան մի կը հանդիպի ուղեւորաց. հոս կուգան

(1) Գ. Թագ. ԺԱ. 8.

կը Թափին Սեւլավամայ աղբիւրի ջուրը ապառաժի մէջ փորուած ստորերկրեայ ջրբուխէ մի անցնելով։ Գիւղի Ծէլլուհ կանայք այս աւազանիս մէջ կը լուան իրենց կտաւեղէնները, եւ քաղաքին պահապան զօրքերը անկէ կուգան ջուր առնելու։ Նոր չորս դրին գետինը պառկած կ'երեւին նշանաւոր շէնքի մը աւերակներ, որ հաւանաբար մեծ աղբիւրի մի մնացորդ. նիւթեր եղած պիտի ըլլան, որ Գ. Եզրասի մէջ կը կարդանք (1)։ Այս աւազանէն ջրովը կ'ոռոգեն Սեւլավամայ պարտէզները, այն է սուրբ գրոց Պարտէզ արքունի ըսածը (2)։ Այն աւազանը Սիլէի հարաւային արեւելեան ծայրը կ'ինկնի։

Սողոմոնի լիճը։ Այս աւազանէս 4—5 մետր դէպ 'ի հարաւային արեւմտակողմը կը տեսնուի Սողոմոնի լիճը, զոր Յովսէփ Փլաբիանոս կը յիշատակէ, ուրուն մէկ մասը ժայռին մէջ փորուած է, և հիմակ բանջարեղինաց պարտէզ ըրած են։

Սեւլավամայ աւազանը։ Վերոյիշեալ ա-

(1) Գ. Եզրաս. Բ. 14։
(2) Դ. Թագ. ԻԵ. 4։ —Երեմ. ԼԹ. 4։

ւապանէն 83 մեդր դէպ 'ի յարեւմուտք է Սելովամայ աւազանը, Օփէլի հարաւային արեւմտեան մասին Տիրոպէոնի ձորին դէպ 'ի ծայրը ձախ կողման վրայ շինուած. յիշեալ ձորը Օփէլ բլրին և Սիոն լերանը մէջտեղէն անցնելով Յովսափատայ ձորին հետ կը միանայ։ Այս աւազանիս համար ըսաց Փրկիչն մեր Յիսուս 'ի ծնէ կուրին, որ երթայ Սելովամայ աղբիւրին ջրովը աչքերը լուայ որ տեսնէ (1)։ Հին ժամանակ այս տեղ եկեղեցի կար և աւազանը անոր մէջ առնուած էր, և երկուքի բաժնուած՝ մին այր մարդոց և միւսը կանանց համար. որոնք իրենց ցաւոց բժշկութիւն գըտնելու համար լուացուելու կու գային։ Երկոտասաներորդ դարուն մէջ դեռ եկեղեցւոյն կամարներն ու սիւները կեցած էին, և շատ հաւանական է որ Հայոց 70 եկեղեցեաց մին եղած ըլլայ, որոնց կարգին մէջ կը յիշուի թէ չորս վանք կան Սելովամայ կողմը։

Այս աւազանս 15 մեդր երկայնութիւն և 4 մեդր միջին լայնութիւն և 5 մեդր բարձրութիւն ունի։ Արեւելեան

(1) Յովհ. Թ. 1—7։

պատին մէջ դեռ քանի մը սիւներու բեկորներ կը տեսնուին ։

Ափէլի բլուրը և Սիօնի մէկ մասը որու դիմացը կը գտնուինք, հին Երուսաղէմի պարսպին մէջն էին. Յովաթամ Թագաւորը Ափէլի պարսպին վրայ շինութիւններ ըրած է (1) ։

Եսայի մարգարէի սղոցման տեղը ։ Ասկէ 130 մետր անդին գետնէն բարձրացած ու քարերով ամրցուցած տեղ մի կը տեսնուի Սողոմոնի լճին հարաւային արեւելակողմը, և վրան թթի ծառ մի կայ այժմ՝ բաւական հին. աւանդութեամբ կ'ըսուի թէ Եսայի մարգարէն հոս սղոցեցաւ Մանասէ Թագաւորին հրամանաւ, և այն տեղուանքը թաղւեցաւ ։

Յօբայ հոր ։ 400 մետրաչափ նախ դէպ 'ի հարաւ, յետոյ դէպ յարեւելք յառաջ երթալով երկու շէնք կը հանդիպին այն տեղ ուր պարտէզները կը վերջանան ։ Այս շէնքերուն մէկը մահմետականաց աղօթատեղի է, որուն քով ջրի տաշտ մի կայ, և միւսը հորի մի վրայ խարխարեալ շինուած մի է զոր Արա-

(1) Բ. Մնացորդ. ԻԷ. 3.

բացիք Պէր-Էյուպ կը կոչեն, այն է Յօբայ հորը, զոր ռամիկք սովորաբար Աէբ-Բայ-հոր կ'անուանեն։ Հաստատակօրէն կը կարծուի թէ Հռոգելի աղբիւր ըսածն այս է, Յուդայի և Բենիամինի ցեղին սահմանագլխոյն վրայ շինուած։

Սոյն հորին մէջ, ինչպէս կը կարծուի, Իսրայէլացիք Բաբելոն գերի երթալէն առաջ Երեմիա մարգարէի հրամանաւ Տաճարի նուիրական հուրը պահեցին։ Գերութենէ դառնալէն յետոյ Նեեմի հուրը պահող քահանայից որդիքը խըրկեց որ երթան զայն փնտռեն. բայց անոնք թանձրացած ջուր միայն գտան հան։ Այն ժամանակ Նեեմի հրամայեց որ այն ջրէն առնուն և փայտերուն ու զոհերուն վրայ ցանեն. այն միջոցին երբ արեւն ամպերուն մէջէն դուրս ելնելով անոր վրան փայլեցաւ, յանկարծ կրակ մի բռնկեց, որով նուիրական հուրը ըլլալը յայտնուեցաւ։ Այս ջրհորը 29 մեդր խորութիւն ունի, և խիստ մեծ քարերով շինուած է, որով անոր հնութիւնը կ'իմացուի. կենդանի ջուր է որ նոյն հորին տակէն կ'անցնի կերթայ, բայց ուր երթալը մարդ չգիտեր. երբ սաստիկ ան-

ձորեւներ տեղագրութեան, ընդդէմ այնքան կ'ածէ, մինչեւ բերքեղէն գիւղեր. Տեսնելով տարածութեան մը կը կրէ գիտէ եւ բնակչութեան ա-ղեր կը տեսնէ. մինչեւ մեծ մասամբ ջարդուա-ծակ հայերը տեղահանուած է։ Նոյն այս յոր-դութիւնը բնակչութեան հինգ տարուա-ան թէեւան նշանն է. եւ մեծ թշուառու-թեան մասն կը կրթութիւն. Աեգրանի ձա-ըսեմ մէջ Յօրայ-Հօրեան բնակիչները, ցոր-ցակ որ տեսեւ անուր յորդութիւնը. Ցրեն Հաւաք Աելիւանայ աղբերեւ բնակ այս ամէն չէ. կրկնայ խաւեր գործածութեան։

Յօրայ-Հորէն եւ դարատակով իբր 150 մեթր ճանապարհ, ալ կողմերնիս թող-լով Աեգրոնի ձորը եւ Աելիւանայ պար-տէզները, մանելով այն նոր ճանապար-հը որ կիրճի մը մէջ կադէ կը հանէ ա-րեւմուտքէն դէպ յարեւելք։ Այս խոր կիրճը Լեռնի օրդուպի ձորն է, որը տեղա-ցի Հիմնէն Աստուածանայ նշնում կամ Աստ-[illegible] կը կոչէն, որ Յովդայի ցեղի [illegible] ցեղէն կը գտնէր։ Այս ձորին մէջ Լուսաւորչեան կը պաշ-տէին Սօղոմ ըսուած կուռքը, որուն մինչեւ զմարդիկ կը զոհէին։ Յուդայի Մանասէ թագաւորը իբր զաւակները

այն Մ՝ուղղայ կրօնքն անցաւ (1).

Այս ծովը՝ զոր Պտղոմէոս կոչէ Կասպ[illegible] բանծի որ կոչուած է Խուալինսկայեան այն տեղ. Երեմիա մարգարէին [illegible] հետեւեալ եղբօրն պատմութեան (2): Իսկ Նյոբեմիա [illegible] բէն Նամանծոյ, հրամանաւ այն ծովին մէջ հողէ թրծեալ աման մի բռնելով ծովու ժողովոց եւ քաղաքացւոց, հետս մեկնելոյ ղրկեց. գետնի զարնելով խորտակեց զայն ըսելով «Այսպէս. Կ՚ըսէ Տէր զօրութեանց. Տէրս այս խեցեղէն ամանս փշրեցիս որ կոտրեցաւ, այնպէս պիտի ջախջախեմ այս ժողովուրդս եւ այս քաղաքս, եւ այլ չպիտի բժշկուին (3):

Յիշեալ ծովին մէջ կղզիներ կան, որոնց փոքրածոյ [illegible] մէջ [illegible] լով, ընդարձակ գետերէ [illegible] մի կը գտնուի, որ [illegible] հին. Տան փէթին եղած [illegible] ըլլալ [illegible] մէջ փոքրամած [illegible] ներ: [illegible] ծովամանակ [illegible] ծագ լուսոյ [illegible] եղած էն, եւ [illegible] կը [illegible] անաւնց [illegible]

(1) [illegible]
(2) Երեմ. Ե. 31—32.
(3) Երեմ. ԺԹ. 11—14.

Սուրբերը անմիջապէս 150 մետրա-
չափ տեղ բարձրացեալ եւ բազմադարեան ծառոց
փորուած ... արտաքինները ... մեր ։ Եկե-
ղով ձախ կողմը ժայռին մէջ փորուած
չենք մը կ'երեւի ու թէ ճգնաւորութեան
եւ թռչունքով զարդարուած ։ Նորոգեալս եր-
կու կորդ խաղող ։ երկու սրահ ։ եւ չորս
վարդ ։ որոնք խորանէ երկու բարակ զա-
ւազանաձեւ՝ զարդարեալ քանդակեալ են ։
Սրբութիւն սենեակը մեծ մասամբ ա-
ւերած է ։ Ս. Ս. չէնքը Սուրբերը անմիջ-
ապէս կը կոչուի ։ վանքը ըստ աւան-
դութեան, Յիսուս Քրիստոս Զինեն-
եալ սպարապետին մէջ բանակներէն յետոյ,
Ս. Առաքելոց 7 կամ 8 հոգին հետ եկան
առանձնացան ։ Ս. ... մեծ քահանայա-
պետին հանդարտ այս տեղ թաղուեցաւ
կ'ըսուի ։ Յետոյ Միսիոնար անապատա-
կանը այստեղ բնակելու եկաւ ։ ուր ժամա-
նակէ մը յետոյ պզտիկ մատուռ մը եւս
շինուեցաւ , ինչպէս ցոյց կու տան նը-
կարներու կացարաններ ։ Մէկը գերեզ-
մանատուն խորշերը գետ կ'երեւին , ուրիշ
բարձրիկեն նաւասարանի ձեւով ու կամա-
րով մը յարկացած ։ ...
Սինդրամ կամ Պղտամիրը Սամբե-

քոյ առանձնացած տեղւոյն կից է արեւմտեան կողմէն Ահեղզամանայն կամ Ագարակ՝ արեւան քառուածը սուրբ Աւետարանին, ուր կ՚ելնուի 4 մետր բարձրութեամբ ժայռի մի վրայէ անցնելով. այս գետինը Յուդային յետ դարձուցած երեսուն արծաթով գնեցին քահանայապետքը՝ օտարաց գերեզմանատուն ընելու համար (1). Դշխոյն Հեղինէ սարխապով պատած էր այն տեղը, որու մէջ կ՚երեւի Հայոց Դ. տառերը (2), զոր Հաննէ պատմագիր եւս Հեղինէի շէնքը ըլլալ կը կարծէ. գետնափոր տեղ մի է առանձին դռնով, որ հինակ գետնին տակ ծածկած և պատով հիւսուած է, ինչպէս ներսի կողմէն կ՚երեւի. առաջին մասը ժայռին մէջ փորուած է. պատերը խիստ հին են և վրան խաչաձեւ գմբէթ ունի՝ ութ տեղաց ծակեր բացուած, ուսկէ մեռեալները վար կ՚իջեցնէին. Բոլոր շէնքը 20 մետրաչափ երկայնութիւն և 12 լայնութիւն ունի. Ինչպէս ըսինք, այս շէնքը Հայոց սե-

(1) Մատթ. ԻԷ. Ե—7.

(2) Այս անուններ առնուած է [illegible]

փակուած է և տարուէ տարի գետնին վարձքը (ճծաւ) մինչեւ ցարդ կու տան։

Շարունակելով ճանապարհը ձորին եզերքով, որ երկթաղով իւր խորութիւնը կը կորսնցնէ, այլ գետն եղած ճանապարհին վրայէն ձորին միւս եզերքը երթալով՝ ձախ կողմը լեռ մը կը տեսնուի. զոր ոմանք անեղացիք Ղեղեւեւ Բաղդրոր կը կոչեն, որ «Պերերզմանացի լեռ» ըսել է. այն գերեզմանատան պատճառաւ զոր վերը տեսանք. իսկ ոմանք աւելի զարծանական անուամբ Տէր—պուր—Թօր կը կոչեն, որ կը նշանակէ՝ «Ցուլին հօրը վանքը»։ Ուրիշ Քրիստոնեայք «Չար խորհրդի լեռը» կ՚անուանեն, վասն զի Կայիափա քահանայապետը հոն ամառանոց մը ունէր, ու ըստ աւանդութեան՝ անոր էն խորհուրդն ըրին Յիսուսի Քրիստոսի դէմ, ըստ Յովհաննու աւետարանին (ԺԱ. 47_53.) որ կ՚ըսէ թէ քահանայապետք և փարիսեցիք ժողով ըրին, և Կայիափա մեծաւոր՝ որ լաւ է մէկ անձ մը մեռնի ժողովրդեան վրայ և բոլոր ազգը չկորսուի. և այն օրէն 'ի վեր խորհեցան որ Յիսուսն սպաննեն։ Այս ամառանոցին տեղը հիմակ յայտնի է

ըներանիք ծանրը չինուած մէկ երկու յար-
ներէն. [illegible]

Բուրգանախնաց դաշտը. Զորին ձախա-
կողմն եղերքէն յառաջ եղծուածոյ ան-
ձեռքին մէջ մեր հանգստի. քաղաքական-
նաց դաշտը Սիսի ընդարձակ դաշտն 'ի մէջ
առաջնորդին մեծ կառուցած, առաջ մէջ
հին թուին դիրքն 'ի մէջ միջոցին մէջ
արձաններ կ՚երեւին միջոցին, որ քաղ ու
մեծ Գաւթի մանուկներէն կը կարծուի
Դանիապարհին ձախու կողմը Ջուր [illegible]
ծածկելու մեծ աւազան մը կայ, որուն
Պերճէն — Կեն — Մնացած կը կոչեն, և Սուրբ
Կրոց Ա. Դ. բերանովը կառուցելոյ ” ըստ ծը
կը կարծուի (1), որ 180 մետր երկայնու-
թիւն և 80 մետր լայնութիւն ունի.
Հինմանի աւերակը է և ցուցը [illegible]
ների երկիր. Ենմիք [illegible] մէջ
չինուած է: Ըստ աւանդութեան [illegible]
[illegible] կայ. Ձորին [illegible]
թեան մէջ չինուած [illegible] կա-
մաւորուած, որ Երեմեայ [illegible]
կէն [illegible] կը կարծուի. [illegible]

(1) Գ. Եզրաս. Գ. 16. Կաղնիս բառը, որոյ եր-
բալեցուցիչն է Ալիշան, 'ի 1880 աշխարհագրութեան և ա-
ռաջ [illegible] չինուած կը ճշմարի.

բանեցին։ Վերջնոյս զանազանութիւն մեկնած
մի նորոգեց, ինչպէս կը պատմէ Յովհան-
նէս։ (Պերճ. ԺԸ. Ա.). Տաճարին զան-
ձակը, որու պղնձաձուլութեան մէջ խառնու-
թիւն ծագեցաւ, զանազանութիւն և մոլո-
րութեան մէջ և յայտնութեան. Հայերէնը բա-
ցատրելու համար. Երբեմնակերպ Սողոմոն
թագաւոր, ինչ Սահմանադրական Թագաւորութեան
Թագաւորին կ'անուանուէին. Մեր ժամանա-
կակիցները, շատ անգամ մէջ բերելով կա-
ռավարութիւն Լոնդոնի մամուլն և նորոգեց
և Փարիզ հինգերորդ Լուդովիկոսի ժամանակ.
Օգոստոս անունով բերելով կոչուած. բայց
մեր Կոստանդնուպոլսի կոչելու աղօթեցաւ
ձայնիւն.

Նոյն բան զանազանեցին Հայաստանի
մէջ պետք մեզ, Տիգրանած պետականութեան
շրջանը մի կը կանոնաւորէ, որ Ամենայն
բնակիչ Հայաստանը, հայերէնը, մինչև որ
անոր Վրաց աշխարհագրական, ինչպէս կը բնակին
կառավարութիւնը, անցիր կառավարութիւն
գանձեցաւ, Ռուսաց թագաւորութեան մէջ 1860
թիւ հիմնեցաւ, և մեր Հայաստանը մի
ենք.

Վերջապէս զանազանութիւն հայերէնին ա-
րևմտեան կողմը, որու մի կը կանոնաւոր,

ուր մտող կայ Յովհաննու եկեղեցւոյն մէջ յա-
նուն Ս. Գէորգայ. առեւշուութիւնը աշ-
խարհահռչակ Բեթղեհէմեան մի ձեռքն է.
ուր ընտանիքները կը բնակին, և իւր ըն-
թանուցքի պատմութեան քաղաք էր Բեթ-
ղեհէմի հայոց մի որդի բնակը, որոց հայե-
րը չեմին պատմութեան. Յովհաննու կրօն-
քը ընդունած է. Այդ եկեղեցին պա-
րունակող քաղաքին ձեռագրաց ամենամեծ
մասը Հիսթենեայ պատրաստած է, և Նիկո-
փորոսեան կրօնքի, յանուն Նիկողոփորի յայն
քահանայից մի, որ տարածին անգամ ծա-
խու առնելով տեղը՝ պատրաստած ունէի և
չէնքեր դրուց, որ զրօսավայր է հիմնե-
ալէց կը անտանուի Յովակէի դուռը, որ
քաղաքին ամենէն աւելի գործածուածն
է և անկիւ բարեկամութիւն պահելու չէ։
Սուրխանոս հայրը այս դրան վրայ մայր
ճամբուն քարէն խոյն պատուելը մի կինե-
նեց, արձանագրել [illegible] որ հոն չմնաց-
նան և [illegible] կը պատրաստե-
ւէր։ Գրիգոր [illegible] [illegible] կ'ը
մանուկը, որ 1544 թիւ Սուրբ Ամենափրկ
որդին Սիւլէյման Բ. [illegible] է։
Օսմանեան [illegible] [illegible] [illegible] [illegible]
ժամանակին [illegible] [illegible]։

փոշայն բառ սովորութեանն՝ սոյն դրան բանալին Հրէից փոխանորդին (վէքիլն) կը յանձնէ, որու քով գիշեր մի կը մընայ, և անով արտօնութիւն կը շնորհէ Հրէից ազգին քաղաքին մէջ բնակելու և Պաղեստինու երկիրը ազատ շրջագայելու։ Եթէ մոռցուելու կամ ուշ մընալու ըլլայ սոյն խորհրդաւոր բանալին յանձնումը, Հրէից հասարակութիւնը սուրբ քաղաքի պարսպին մէջ բանտարկուած կը մնայ։ Վերջին անգամ Սուլթան Ապտիւլ-Մէճիտ մեծահամբա կայսեր գահը բարձրանալուն առթիւ եւս տեղի ունեցաւ սոյն բանալիի արարողութիւնը։

Երրորդ այցելութիւննիս այս տեղ կ'աւարտի։

ՉՈՐՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Սուրբ Յովակիմայ եկեղեցւոյն և [illegible] մէջ։

[illegible]

մի ընել տալ Սուրբ Յակոբայ մայր ե-
կեղեցւոյս և վանուցս ուրիշ նշանաւոր
տեղուանքը, թէ՛ հոգեւորականս մխի-
թարելու և թէ իրենց փափագն ու հե-
տաքրքրութիւնը լեցընելու, բայց ս-
րբոյ սոյն պայծառութիւնս բոլորովին աղ-
քատին հաստատութեանց կը վերաբերի,
և խորաքանդակիւր որ իր տուն մէջ հայ-
կաւ կղերայ ուրախութիւն և միաբանու-
թիւն մի, տեսնելով այդպայծն [illegible]
ընդարձականմ հնութիւնները և ուրիշ
աստուածական հաստատութիւնները :
Մտնենք ուրեմն Ս. Եկեղեցւոյ մէջ
և մօտենանք աւագ սեղանին. մեր մէջ
երկրպագութիւնն ու կրօնաւորական
պարտականքս հոն նուիրելով. Այն աւագ
սեղանիս ներքեւ, ազգային աւանդու-
թիւն մի կ'ըսէ, թէ թաղուած է Ս.
Յակոբայ Տեառնեղբօր մարմինը, եւ
խիստ հաւանական է, որովհետեւ սոյն
եկեղեցւոյս տեղն էր Ս. Յակոբայ տա-
նը, և հոն ամփոփուեցաւ միւս Ս. Յա-
կոբայ Զեբեդեայի որդւոյն գլուխը:
[illegible]
[illegible]
Տեառնեղբօրն է, ուր [illegible]

մի՝ յիշեալ սուրբ Նաւասարդեան տօնին ա-
ըր ժամանակին գտնուած Պարսկաստանը
կ'երևէ կը բաղձի աստուածեան ժամեր-
գութեան միջնցին, և բոլոր դաստակետն
միացանք անք կը համբուրեն։ Նոր քա-
մի աթոռն է պատրիարքականը, որ
ուղղորդաբար կը նստի Պարսկաստանում։
Երկու դար մի յառաջ այն եկեղեցիա
ամենայն վրաբր լինելով բարեբախտութեան,
Փիլիպպոս կաթողիկոս եկած ժամա-
նակ ամենի ընդարձակված է արևելեան
կողմէն առաջ խորանեն քրիստոս երկոր
սեղանենտանուածքները նորոգեալ աշխատան-
քով. և սառեանի յատակին ալ գեղեցիկ
քարերով և ներքին կերպով ձեւերով յարդ-
ներ առած է. պատերն խոյց լանուտ սկբան
ու պայծառ զմրուխտ մի ունի պատառու-
համբերով ժողովուրդ կանգնած օրհնէին
մինչ և բարակուած չորս մարթերուն
մեջնակը։ Սույն եկեղեցույն պատկերա-
ներքեն ներքին երեսները երկու կարգ
պատկերներով ծածկուած են. վերի
կարգի պատկերները, երկու գաւիթքրան
մեջ՝ այլ կողմերը՝ Նշան սուրբերի երևեն
հայրապետաց և ձայն կոնդակներ ...
նշանաւոր և ուրիշ հայրապետաց պատ-

կերպերը կը ներկայացնեն համանի զգես-տաւորուած. իսկ սրահին մէջի վարի կարգի պատկերներն են ճշմարտաւոր ազ-քոյց և մարտիրոսաց նահատակութիւն-ները. երկրորդ կարգինները են Յիսու-սի Քրիստոսի անօրէնութեան և աւե-տարանական պատմութեանց պատկեր-ները. Նմանապէս չորս մոյթերն ալ ա-մեն կողմանց երկու կարգ զանազան պատկերներով ծածկուած են ոսկեզօծ շրջանակներով; և իւրաքանչիւր պատ-կեր իւր մէջը կը պարունակէ շղթայա-կիր Գրիգոր պատրիարքի ժամանակ զա-նակք յիշատակ բառերուն անունները. ըստ որում յիշեալ մեծանուն հայրա-պետը եղած է եկեղեցին նորոգողն ու զարդարողը, ձեռնտուութեամբ Կոս-տանդնուպոլսոյ պատրիարքը և իւր համ-շիրակ Կոլոտ Յովհաննէս եպիսկոպոսի, ինչպէս ցոյց կու տայ Աւագ սեղանի խաչկալին վրայի ոսկեզօծ խոշոր երկա-թագիր յիշատակարանը գրեալ 'ի թու-ւին Հայոց ՌՃՀ (1721).

Եկեղեցւոյս մասնաւորութիւնն է նաեւ Էջմիածնի եկեղեցին, ուր կը պահուի փառաւոր մի նշխար Ս. ... կամսարականաց

և սիւնազարդ․ մէկ խորան ունի միայն յանուն Ս. Էջմիածնի, զոր Եղիազար կաթողիկոս շինել տուած է և յետոյ Ճ. ղթայակիր նորոգած։ Հարաւային պատին կից խորանաձև պզտի տեղ մի կ'երևի Սուրբ Աննա անուամբ, որու տակը երեք խոշոր քարեր կան, որոնց մին Սինէական լեռնէն, մին Յորդանան գետէն և միւսը Թափօրական լեռնէն բերուած են, որոնց համար տես 'ի գիրս Հանդէս(1)։ Եկեղեցւոյս երկայնութիւնը 28 մետր և լայնութիւնը 7 մետր է․ դա սադըրուխը պատրիարքական աթոռ մի կայ։ Հոս կը կանգնին կանայք, և հոս կ'ընծայեն բարեպաշտ ուխտաւորք ի բենց Պղատագրի դաւանապատական ողորմութիւնը, արեւմտեան դռնէն ներս մտանելով։ Հարաւային կողմէն պատին կից աստիճաններով վերնատունը կ'ելնուի, ուր տեղ կան երկու փոքրիկ սեղաններ յանուն Հռիփսիմեանց և Գայիանեանց, ուր Նրաց Հինգշաբաթի օրերը պատարագ կը մատուցուի կանանց համար։ Այս վերնատունը 1835 ին շինուեցաւ Պապազեան պատուական օրով, որ ժամա-

(1) Ս. Հանդէս Եկեղեցական, երես 89. 90.

նակ Ս. Դրիմանուպօլսեցի Պօղոս պատրիարքն կառավարիչ ընտրուած էր ազգային անօրէնութեանն Ս. Աթոռոյս պարտուց ներքեւ ճնշուած միջոցին, ուսկէ ազատելէն յետոյ ձեռք զարկաւ թէ այս վերնատանս և թէ ուրիշ շինութեանց։

Ասկէ վար իջնելով և նոյն դռնէն մեծ եկեղեցին մտած ժամանակնիս՝ աջ կողմերնիս հայրապետաց պատկերներուն կարգին սատափեայ դուռ մը կ'երեւի միափեղկ, ուսկէ պատին մէջ վեր ելնելով՝ ձախ դին պատուհան մը կայ, որ մեծ եկեղեցւոյն դասին վրայ կը նայի. և աջ դին պատուհան մի կայ ուրիշ Էջմիածնի տանիքին վրայէն եկեղեցւոյ մէջ կը նայուի, և քանի մը ոտք ելնելով՝ դիմացը սեղան մը կ'երեւի. և անկէց դէպ 'ի ձախ կողմը քանի մը աստիճան վեր ելնելով աւագ խորանին ետեւէն անցնելով և քանի մը ոտք վար իջնելով աջ կողմը դարձեալ սեղան մը կը տեսնուի, որոնք մեծ եկեղեցւոյն վրայ Միածնի երկու խորաններուն վրայ շինուած են յանուն առաքելոցն Պօղոսի և Պետրոսի։ Եւ ուրիշ երկու մեծ խաչեր

րամեւ. պատուհաններ որոնք երկու-
դամերուն վրայ կը նային. Այս սեղանե-
ներուն վրայ ալ պատարագ կը մատուցա-
նուի յիշեալ Առաքելոց տօնին և ուրիշ
մի քանի անգամ տարուան մէջ: . . .

Եկեղեցւոյ աջ սկողմեան դրան ուղղը
Էջմիածնի միջնադրան դիմացը նոյն մեծ-
ծութեամբ դուռ մի կայ կամարաձեւ,
բայց երկու բաժնուած է հարթզանու-
թով. փոքր մասը դուռն է սարկաւագաց
փեղկերով և մեծի մասը անդիմեն ձեւա-
ցուցած է, ուր կը կարդացուի Յայսմ-
աւուրքը: Այս դրան ներս է սուրբ
Աստուածածնայ մատուռը երկու մեծթէ կը-
րայ կառուցեալ, և երեք սեղանով. Մէ-
ւորդ սեղանն է յանուն Ս. Աստուածածնա
յի ննջմանն, աջակողմեանը Ս. Յո-
աքիմայ, իսկ ձախակողմեանը՝ Ս. Կիւ-
ղի Երուսաղէմայ հայրապետին, որոյ
սեղանակարգին տակն է դեանեզուած սրբ-
հին [illegible] [illegible] [illegible] մէջ.
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]: Այս [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible].
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible].

է սահմանակից եւ խաղաղուն ։ Յեհեալ մենաստանը Ճիւախաղին կողմը երկաթի փայլուն գետը միւսնի, ուսկէ կ՚երթալի մեծախառնուներ . Քաղաքայքն և Հաստարան մի- սրբանոց ստեղծակներ ։ Այն մատրան մէջ կերպարանաւորին ժամանակ վար- դապետը ։

Սուրբ Ստեփաննոսի սատապեյ դրան կից դէպ 'ի յարեւմուտք ահեղա- նակիան պատկերին է և Սուրբ Յակոբայ բարձակապրոս առաքելոյն գլխատուէր կը նորոգուագիլէ . և սորա առաջք մատ- ռուցէայ նեղ սեղանաքար մի կայ ։ Նշ դժն է Պղնձագիրը, զոր առաջին օրն տեսանք . բայց 'ի Հայրաւոյին Հասարակ գանձէն, յարեւմուտքէն այլ դուռ մի ունի, ուսկէ կ՚երթուի առեւծանդութիւնքբաղանգուանբա- կէն մի մէջ երկու դռնով . Հրեշտակին դռնէն ներս՝ որ միջա վարագուրով ծած- կած է, սուրբ Ս՚հետայ մատուռը կը մտցուի, ուր կայ երկու սեղան, մին յանուն Ս. Ս՚հետայ և միւսն յանուն Ս. Սեղրգոսի ։ Նոյն մէջ է աւանդատունը ուր կը պահուին եկեղեցւոյ բոլոր զարդ- դարդանքները և զգեստեղէնները առանձ- ձին խնկամանը և խաղաղական բարձրուած ,

որոնց պահպանութիւնը յանձնուած է աւագ Լուսաւորչին։ Սուրբ Մ՚ինասայ մատուռը ունի երկու սեղան և յախճապակէ պատերը զարդարուած է ամէն տեսակ հասարակ և ընտիր գաւազաններով։

Այն մատրան և պզտիկ բակին հարաւային դռնէն դուրս ելնելով դէպ՚ի արեւմուտք և դրան կից ուրիշ ատափեայ դուռ մի կայ, ուր է Սուրբ Մ՚ակարայ անուամբ սեղան մի, որուն ներքեւ ամփոփուած է նոյն սրբոյն մարմինը․ ասիկայ Երուսաղէմի հայրապետներէն մին եղած է չորրորդ դարուն մէջ։ Հիւսիսային կողմն ալ մարմարեայ նեղ սեղան մի կ՚երեւի, որու տակ կայ Ս. Լուսաւորչի մասունքէն։ Այս մատուռը միանգամայն և խոստովանարան է, ուր կը գտնուի միշտ այր մարդոց խոստովանահայր վարդապետը։

Այս մատուռին դիմացը առանձին երկաթեայ արգելքով բաժնուած տեղ մի կայ, որ Գ՚ինետէր դուռ կը կոչուի, ուր տեղ կը կանգնին եկեղեցականք և դպրաց դասը երբ սուրբ Պատարագը Պ՚ըլխաղերի մէջ կը կատարուի. շաբաթ օրե-

րը, ուր տեղ կայ եւ պատրիարքական աթոռ մի ։ Այն աթոռին քովը որ եկեղեցւոյն հիւսիսային արեւմտեան անկիւնն է, դուռ մի կայ, ուսկէ 30 ոտք աստիճանով հիւսիսային պատին մէջէն վեր կ՚ելլուի Սուրբ Նշանի խորանը, ուր կը պահուէր յառաջ կենաց Փայտը, և Գրիգոր Հայրապետ Շղթայակիր 1722 թուին նորոգելով պատարագամատոյց սեղան կանգնեց, և պատուհան մի բացաւ պատշգամով որ Գլխաւորի մատրան փայտէն դէպ 'ի Ս. Յակոբայ եկեղեցւոյն մէջ կը նայի ։

Աստիճաններուն գլուխը ուրիշ ճանապարհ մի կայ, ուսկէ կը մտցուի Երկոտասան Առաքելոց փոքր մատուռը հընաչէն, զոր Թագաւորաց աղօթարան կը համարի Հաննէ (1), ըստ որում երկրորդ դուռ մի եւս ունի որ 'ի տանիս կը հանէ ։ Այն մատուռս ալ Գրիգոր Հայրապետ 1722 թուոյն նորոգելով՝ գրքատուն ըրած էր և ցիցուցան եղած ձեռագիր հին գրեանքը կարգել տալով այս տեղ ամփոփած էր ։

Յիշեալ տանիքին վրայ որ առանձին

(1) Պատմ. Ս. Երուսաղէմի, եր. 89.

բակ մը է խիստ հին ժամանակէ մնա-ցած, Առաքելոց մատրան պատկից ու-րիշ խորան մը կայ յանուն Սուրբ Հով-Բարջման, ուր տեղ տարին անգամ՝ մի պատարագ կը մատուցուի։

Այն տանիքին հիւսիսային դռնէն դուրս մեծ տանիքներն կ'երթուի. դի-մացնիս դէպ 'ի աջ կողմը փոքր կամարի մը մէջէ քանի մը աստիճանով վար նոր դուռ մը կ'երեւի երկու փեղկով. ա-սիկայ է Գրչատունը որ սովորական ա-նուամբ Թանգարան կը կոչուի։ Մէջը երկրորդ դուռ մը ունի ուր տեղ է բուն Թանգարանը. այս Թանգարանիս հաս-տատութիւնը Եսայի ներկայ Սրբազան Պատրիարքին կը պարտաւորի, նորա անխոնջ ջանից արդիւնքն է, որու մէջ միայն ձեռագիր 1700 էն աւելի հատոր կը պարունակի, բաց 'ի ուրիշ լեզունե-րէ եւ տպեալ հին ու նոր գրքերէն։

Յիշեալ Գրքատունէն դուրս ելնե-լով եւ դէպ 'ի աջ դին ծռուելով, նոյն Գրքատան պատին ծայրը դուռ մը կայ, ուր մտնելով եւ քիչ մը յառաջ երթա-լով երկու աստիճան դիմացնիս կ'ելնէ, մէկը վար իջնալու, ուրկէ Մոմատուն

կ'երթուի, և միւսը քանի մի ոտքով վեր ելնելու, ուր կը մնացուի դռնէ մի, և անմիջապէս աջ ու ձախ դիերնիս մէկ մէկ դուռ կ'երեւին, այս տեղս է լուսանկարչութեան գործարանը, որ նոյնպէս ներկայ Արքազան. Պատրիարքը հաստատած է։ Ուղղակի երթալով եւ դէպ 'ի աջ կողմը շեղելով կ'երթուի Հոգւոյն Սրբոյ փոքրիկ մատուռը, որու դրան վրայի պատկերէն յայտնի է. ասոր մէջ փոքրիկ պատուհան մի կայ ուրկէ վար սուրբ Թորոսի եկեղեցին է, զոր հիմակ պիտի տեսնենք։ Այն մատրան շինութեան վրայ աւանդութիւն մի կայ, որուն ստուգութեանը վստահ չըլլնելով՝ զանց կ'առնումք յիշատակել։ Այս տեղ եւս տարին քանի մի անգամ և Հոգեգալստենէն յետոյ պատարագ կը մատուցուի։

Այս տանիքին վերջին ծայրը անկիւնի մի գլուխ երկու դուռ կայ, ձախ կողմինը հին Տպարանինն է, իսկ միւսը տանիքի դուռ է։

Ասկէ կրկին յետ դառնալով մինչեւ Գրքատան դուռը, և դէպ 'ի ձախակողմի աստիճաններէն վար իջնելով՝ դէ-

մացնիս դուռ մի կայ, որ ուխտաւորաց ժամանակ փակեալ կը մնայ ։ Նոյն դռնէն դուրս դարձեալ տանիք է, դիմացի պատին հիւսիսային անկիւնը դուռ մի եւս կայ, ուսկէ աստիճաններով վար կ՚իջնուի սուրբ Թէոդորոսի եկեղեցին, որ առանձին երկաթեայ դուռ մի ունի հարաւակողմը, և ուրիշ դուռ մի եւս յարևմուտք ։ Այն եկեղեցւոյս համար Հաննէ կը վկայէ թէ ՂԼԵ[1] թուին Լեւոն թագաւոր շինել տուած է 'ի յիշատակ եղբօր իւրոյ Թորոսի որ պատերազմի մէջ մեռաւ ընդդէմ Եգիպտացւոց, և նորա մարմինն եւս այս տեղ փոխադրել

(1) Պատմ. Ս. Երուսաղէմի . յերես 96 ։ Հաննէ վարդապետ թէ պատմութեան և թէ թուականին մէջ սխալած կ՚երեւի , ըստ որում ՂԼԵ թուականին , որ Հայոց վերջին Լեւոն Լուսինեան թագաւորին ժամանակն է , թագաւորութիւնը արդէն խափանած և ինքը Եւրոպիա մեկնած էր ։ Նոյնպէս եթէ այն վերջին Լեւոնն է ըսածը , գիտեմք որ նա մանչ զաւակ չունէր ինչպէս Հաննէ կ՚ըսէ ։ Ուստի եթէ ուզենք սխալներն ուղղել՝ առանց պատմական վկայութեան մի յենլոյ , ՉԼԵ թուականին եղած պիտի ըլլայ յիշեալ եկեղեցւոյ շինութիւնը Լեւոն Գ. հրամանաւ , 'ի յիշատակ եղբօրն Հեթմոյ ինչպէս գրինք ։ Այն Լեւոն Եգիպտացւոց տուրմանէին բով գերի ինկած ժամանակ Երուսաղէմ ուխտի եկաւ ։

տուաւ, որու գերեզմանը, կ՚ըսէ Ճաննէ հիւսիսային անկիւնը կը գտնուի։ Ըստ որում այսպիսի գերեզման մի հիմակ չը տեսնուիր; ուստի Ճաննէի պատմութիւնը, որ առանց հաստատութեան վկայութեան է, որ աստիճանի ստոյգ ըլլալը յայտնի չէ։

Եկեղեցին առանց սիւնի է. յառաջագոյն աւելի փոքր էր և նեղ, զոր Պըրեգոր Շղթայակիր յետոյ մեծցուցած է. ունի հիմակ 15 մեդր երկայնութիւն եւ 7 մեդր լայնութիւն։ Առանձին դասով բաժնուած է. աջակողմեան դասին մէջ մկրտարան կայ, և անոր քով դուռ մի, ուսկէ քանի մի աստիճանով սրահարանը կ՚եջնուի. Հոս պատերուն վրայ ագուցած բաւական հին՝ քարէ վրայ փորագրուած յիշատակարաններ կան, որոնց ոմանք դժուար կը կարդացուին։ Ձախակողման դասին մէջ աւագ սեղանին հարաւային անկիւնը աստիճանով վեր փոքրիկ մատուռ մի կայ յանուն Սուրբ Մերկերիոսի. Այն եկեղեցւոյս մէջ 'ի տօնի Ս. Թէոդորոսի և Ս. Մերկերիոսի և ուրիշ քանի մի անգամ տարին պատարագ կը մատուցուի։

Եկեղեցւոյս պատուական գանձն դուրս ելնելով և աջ դիէն քանի մը աստիճանով վեր դէպ ՚ի աջակողմը՝ Սրա-նախաղը կ'երթուի. իսկ ձախ դին դէպ յառաջ երթալով և կրկին շեղելով ձախակողմը՝ նեղ ճանապարհէ մի դէպ ՚ի սուրբ Թորոսի վերնատունը կ'երթուի՝ ուսկէ ներս մտանք, այս դրան աջակողմը խուց մի կայ, որ Հեթում թագաւորի անունով կը կոչուի աւանդութեամբ ։

Յառաջ գնալով և քանի մը աստիճաններէ վար՝ Պրոատացոց Բաղէ դրան աջէն կրկին քանի մը աստիճան վար իջնելով, ձախակողմեան դռնէն դուրս Յովսափաթայ մէջ կը գտնենք զմեզ, ուր հարաւակողմը շինուած է Սուրբ Զարափի բառուած փառաւոր յարկը, չորս գեղեցիկ սիւներով և առանձին [illegible], զոր Նիկողոս պատրիարքը շինել տուած է 1859 ին ։

Ճանապարհը շարունակելով սուրբ Յովսափաթայ պարտէզին տակերը, ձախ կողմերնիս ձգելով Հոյնոց և Սիղոմ Բաղերը, դէպ ՚ի աջ դին կ'ելնենք վանքերին պարտէզին մեծ դրունթը, և զինուորներուն կ'երթանք խոնարհաձեւ քարայրէն և երկա-

թի ճաշով սանդուխ մի, ուր կան երկու սենեակ, որոնք Պօղոս պատրիարքի կառավարչութեան ժամանակ շինուեցան ։

Այս սանդուղքին հարաւակողմը կ՚ինկնի Հոգետունը, զոր արդէն եկած ժամանակ տեսանք ։ Հոգետան աջ կողմը երկաթի վանդակներով պատսպարուած լայն արձակ տեղ մի կ՚երեւի ։ այս տեղս Հաննէի ժամանակ նորաշէն ախոռ էր, և յետոյ փայտատուն և մէկ մասը փուռերնոց էր, զոր 1866ին Ամենապատիւ Եսայի Պատրիարքը նորոգելով՝ հօս փոխադրեց Տպարանը ։ Հինգ մասի բաժնուած է, Ա. մասն է գրաշարից տեղը, Բ. տպելու գործարանը, Գ. կազմարանը, Դ. ձուլարանը և Ե. ընդարձակ գրադարանը և թղթատունը ։ այս վերջին երկու մասերը շինուած են 'ի յիշատակ Կեսարիոյ Թաղուցի մեծատուն մահտեսի Յակոբ Աղբէնտիի Անգուեան որ յԱղէքսանդրիա ։ Յիշեալ ընդարձակ յարկերն [illegible] 'ի գաւիթ[illegible] վրայ է Պէյթօղի Թաղը, և առնոր և [illegible] կողմը Ճ[illegible], որու պատ[illegible] Հայկեան [illegible] [illegible] [illegible]

նային, զոր Հաննէ Ներսէ պարտէզ կը կոչէ։ Տպարանի մուտքը սենեակ մի կայ ուր տեղ կը ծախուին տպուած բոլոր գիրքերը։

Ս. Յակոբայ վանուց միւս մասերն ու Թաղերը զանց կ'ընեմք այս տեղ քաղաքագրել. ուխտաւորք ինքնին կրնան շրջագայել և տեղեկութիւններ առնուլ։ Բայց չեմք կրնար առանց յիշատակութեան թողուլ՝ սրբոյ Պատրիարքարանը զոր 'ի հիմանէ շինել տուաւ Զմիւռնացի Յովհաննէս Ս. Պատրիարքը 1853ին։ Նոր ճանապարհն է Ս. Յակոբայ փոքր գաւիթին մէջէն, ուր կ'երեւին քարեայ աստիճաններ հարաւային պատին մէջ, ուրկէ կ'ելնուի նախ Ս. Մինասայ կամ Եպիսկոպոսաց Թաղը Պօղոս պատրիարքի կառավարչութեան ժամանակ շինուած։ Աստիճաններէն վեր ելնելուդ՝ դիմացը կ'երեւի Պատրիարքարանին մեծ դուռը վրան յիշատակարանով։ Այս դռնէն ներս մտնելով և քանի մի ոտք մարմարեայ աստիճաններէ վեր ելնելով՝ դիմացնիս ընդարձակ սենեակ մի կայ փայտեայ յարկով. աջ կողմերնիս փառաւոր դուռ մի է.

ուսկէ կը մտցուի ընդարձակ սրահը, ո-
րուն երկայնութիւնն 21 մետր է և լայ-
նութիւնը 7 1/2, մէջտեղը գեղեցիկ գմբէ-
թով: Աջ կողմի առաջին սենեակն է
Ս. Խնկարանը որու մէջ կայ պահարան մի
և գրքատուն մի ձեռագրաց: Ս. Խնկարա-
նի հիւսիսային պատուհանները սուրբ
Յակոբայ վանուց արտաքին հրապարա-
կին և աւագ դրան վրայ կը նային: Եր-
կրորդ դուռն ալ դարձեալ սենեակ մի
է որ պարտէզին վրայ կը նայի: Ձախ
կողման առաջին սենեակն է Խորհրդա-
րան Տնօրէն Ժողովոյն. Նորա քովի երկ-
րորդ դռնէն, ուր տեղ փոքր սենեակ
մի եւս կայ իբր պահարան, ճանապարհ
ունի նաև ստորին յարկը իջնելու. որ
քանի մի մասերու բաժնուած է, հոն
է նաև բաղանիքը: Վարի յարկը երեք
դուռ ունի, մին 'ի պարտէզ ելնելու
և երկուսն 'ի փողոց, որոնց մին կամա-
րին տակ կը բացուի. ըստ որում յի-
շեալ Պատրիարքարանը շինուած է մեկ
մասը վանքին մէջ և միւս մասը պարտէ-
զին վրայ, որոնց մէջ տեղն է փողոց, և այն
փողոցին վրայ է դարձած կամարը, որով
երկու մասերը իրարու հետ կը միանայ:

Հրապարակին վրայ վանուց դրան առջեւի պարտէզին պարիսպը Նմեն. Արքայական Պատրիարքը ուղիղ գծի վրայ նոր կանգնել տալով հինգ խանութ ալ շինել տուաւ ոմանց միաբաններից ծախու-քը. և հիւսիսային հին կամարին տակն ալ, որու վրայ է Սեղանատունը և Դար-պասատունը, ուրիշ երկու փոքր խա-նութ և վեց մեծ ու ընդարձակ շտե-մարաններ շինել տուաւ, որոնց վերջին կամարաբերնին կից եղածն է վանքին Դե-ղարանը. Նոյնպէս հին գինետունը փա-տատունի փոխելով՝ երկու դուռ բա-նալ տուաւ, մին յիշեալ կամարին տակ և միւսն Դեղարանին դիմացի փողոցին մէջ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի վանս Սուրբ Հրեշտակապետի և յաղագս մէջ գտնուած ուրիշ պատմական տեղերը:

Սուրբ Յակոբայ տաճարին մեծ դաւթին դէպ ՚ի հարաւակողմի մէկ ան-կիւնը երկու կամար կ՚երեւին, ասոնց

վրայ Նաղուպ Եղայի չորրորդն է․ որ Պզտիկ Զատրտախ կ'ըսուի ձախ կողմը կիսակամարին տակէն Պանձալը Բողը կ'երթայ, զոր Կիրակոս պատրիարքն շինել տուած է 1859ին․ իսկ աջ կողմը կամարին տակ երկաթեայ փոքր դուռ մի կը տեսնուի, այս դռնէն ելնելով կ'երթուի Սուրբ Հրեշտակապետի վանքը։ Բայց մենք դեռ հոն չգնացած, ճանապարհին վրայ երկու նոր շէնքերուն այցելութիւն ընենք։

Յիշեալ երկաթի դռնէն դուրս ներշուրին յառաջ գնալով դիմացնիս անմիջապէս նոր շէնք մի կ'ելնէ թեղօշ ծառերով շրջապատուած․ վրայի յիշատակարանը մեզ կիմացընէ Զամ Բողն Թելալը, որ Օ. Միւռոնացի Յովհաննէս պատրիարքի օրով շինուեցաւ 1852ին. և թէպէտ այն ժամանակ իւր ուսումնական նպատակին չծառայեց, իսկ հիմայ ներկայ Արբազան Պատրիարքին տնօրինութեամբը Ճեմարանին մէկ մասը կը կազմէ, և է հանգստարան ժառանգաւոր աշակերտաց, ուր տեղ երբեմն ըստ ժամանակին դաստատութիւն ալ կը լինի։ [illegible] կը պարունակէ 45 սե-

նեակ. զատ են նկարչարաններն ու դա-սարանները, սեղանատունն, աղօթա-րանն և այլն։

Այն շէնքերու արեւմտեան կողմի փա-ռաւոր ու հոյակապ շէնքն է բուն Ճե-մարան կոչուածը, որուն ձեւը շատ նը-մանութիւն ունի կ՚ըսեն Գաղղիացիք Փարիզու Սորպոնին։ Տասը մարմարեայ լայնարձակ աստիճաններէ վեր կ՚ելնուի։ Ճեմարանի ներքին ձեւն է խաչաձեւ, չորս անկիւնը չորս փառաւոր սենեակ-ներ բռնած են, և կեդրոնը գմբէթ մի ունի. երեք թեւերուն մէջ, դէպ՚ի ճակատը երեքական ընդարձակ պա-տուհաններ և երկու կողմերը չորս չորս դարաններ կան ապակեփեղկերով, ո-րոնց մէջ կը պարունակին հնութիւննե-րը, իւրաքանչիւր ըստ իւր տեսակին կարգաւ զետեղուած դարաններուն մէջ. յիշեալ հնութեանց և թանկագին նիւթոց մէկ մասը Հնդկաստանի Անգղիա-նաց առատաձեռնութեան շնորհքն է, զոր Պ. Ներսէս Ծայրագոյն վարդա-պետը հետը բերաւ 1870ին։

Ճեմարանէն դուրս արտաքին մեծ հրապարակը, ճանապարհ է դէպ՚ի Ս.

Հրեշտակապետի վանքն երթալու, և տախ-
տակեայ միափեղկ դռնէ մի անցնելով ա-
նել փողոցի մէջ, և դիմացը երկաթեայ
փոքր ու ցած դուռ մի կայ, որ է յի-
շեալ վանքին դուռը. փողոցին միւս
ծայրը ուրիշ փողոցադուռ մի կայ տախ-
տակեայ Նորաշէն, որ դէպ 'ի Փրկչա-
դուռը և Սուրկանոցը կը հանէ: Վան-
քին դռնէն ներս մտնելով, դէպ 'ի աջ
կողմը բաց դուռ մի կայ որ եկեղեցին կը
հանէ՝ ձախ կողմին վերայ: Երկու մասի
բաժնուած է, առաջինը կանանց կայնելու
տեղն է, ուր կայ պատարագամատոյց
սեղան մի Չարչարանաց Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, և մկրտարան մի
գեղեցիկ՝ յիշատակ Տաշճի-պաշի մահ-
տեսի Վարդան Աղայի: Երկրորդ մասն
է բուն տաճարը երեք խորանաւ, Նուի-
րեալ յանուն սրբոց Հրեշտակապե-
տաց. ձախակողմեան դասին մէջն է ա-
ւանդատունը, ուր 1725 ին Գրիգոր
Շղթայակիր տեղը մեծցընելով սեղան
մի կանգնեց յանուն Հռիփսիմէ կու-
սին: Տաճարին հիւսիսակողմն է պա-
տին մէջ ուրիշ սեղան մի Գեղարդի
մատրան ձևով, որ է Քրիստափորի տա-

գին Ելանոր։ Աստն զի ըստ պատմու- թեան Ս. Աւետարանի, սոյն տեղս Աննա Կայիափայի տունն ըլալով, մատ- նութենէ յետոյ Յիսուս դռնէն (Պաղ -ըլ-Մաղարդէ) ներս մտցընելով, ուղղա- պէս բերին նախ յիշեալ քահանայա- պետին տունը, և մինչև նորա ատեանն հանելու ժամանակ. գաւիթը Ձիթենի ծառի մի կապեցին, և հոն ապտակ մի կերաւ քահանայապետին ծառայէն (1)։ Տաճարին կից է գրեթէ դրան կողմէն Ձիթենիին տեղը, որու արմատը դեռ կը մնայ և հիմակ նորա շառաւիղներէն մեծցած ծառացած են, և այս պատ- ճառաւ Նորաբացիք վանքին Տէր-էլ- Օ՛լիւնէ կը հոչեն։ Ձիթենիին քովքա- նի մի խոշոր քարեր ևս կը տեսնուին, որ Աննայի ժամանակէն մնացած են, և Մկաննոյն քարեր կը կոչուին։

Այս եկեղեցւոյս գոյութիւնը ժա- մանակակից է սուրբ Տեղեաց շինու- թեանը. ինչպէս Կայիափայի տունը (Ս. Փրկիչ), նոյնպէս և այս տեղս անյիշա- տակ ժամանակէ 'ի վեր Հայոց սեփա- կանած է, և ասոնց հիմնադրութիւնը

(1) Յովհ. ԺԸ. 22.

Աբգարու կնոջ Հեղինէ թագուհիէն կը կարծուի, որ առաջին հիմնադիրն է սուրբ Տեղեաց. և որովհետեւ Տիտոսի ժամանակ Սիոնի վերայ կառուցեալ շէնքերուն մէկ մասը կանգուն մնացին, այս տեղուանքս եւս այն ժամանակէն 'ի վեր թէ՛ յայտնի և թէ գաղտուկ կը պահպանուէին Հայ կրօնաւորաց և բարեպաշտ առանձնացելոց՝ ձեռօք մինչեւ յերկրորդ Հեղինէ մայրն Մեծին Կոստանդիանոսի. այս կարգին մէջ է նաեւ Սուրբ Յակոբայ եկեղեցին։

Ս. Հրեշտակապետի վանուց մէջ Կիլիկիոյ թագաւորք եւս ըստ իւրեանց կարգի նորոգութիւններ ըրած են, ինչպէս Լեւոն Գ. թագաւորը Հայոց ՉԼԵ թուականին[1] (1286) պարիսպը շինել տուած է, ըստ յիշատակարանին գրեալ Ս. Յակոբայ եկեղեցւոյն մոյթին վերայ։ Վերջին անգամի շինութիւններ և նորոգութիւններ եղած են Գրիգոր Շղթայակիր հայրապետին օրով, և 1848 ին Կիրակոս պատրիարք Աւագ խորանին խաչկալը ոսկեզօծել տուաւ։

(1) Նոյն է սա որ սուրբ Թէոդորոսի եկեղեցին եւս շինեց, ինչպէս վերը պատմեցինք։

Այն վանուցս մէջ պատսպարուեցան ժամանակ մը Լատին կրօնաւորք Ս. Անտոնի վանքէն վտարուելէն յետոյ, մինչեւ որ Բ. Դրան հաճութեամբ հիմնական իրենց Սուրբ Փրկչի վանքը ստացան, որ յառաջագոյն Վրաց վանք էր Ս. Յովհաննու անուամբ ։

Ս. Հրեշտակապետի վանուց մէջ կը բնակին Մ՛այրապետք և յաշխարհէ մեկուսացեալ հաւատաւոր կանայք, որոնք սուրբ Յակոբայ միաբանից պիտոյքը կը ծառայեն և խնամք կը տանին նոցա մայրաբար. ունին իրենց առանձին գլխաւոր մի իրենց մէջէն ընտրուած, որ Տնտես կ'անուանի ։ Դարձեալ եկեղեցին Տեառն վարդապետի մի ձեռօք կը կառավարուի, և հոս կը մատակարարուի քաղաքի հայ ժողովրդոց հոգեւոր պէտքերը ։

Այս վանքս երկու դուռ ունի, բաց անկէ ուսկէ մտանք, երկրորդ դուռն է հիւսիսակողմը՝ նոյնպէս երկաթեայ եւ ցած, ու քաղաքի ժողովրդոց Թաղերը կը հանէ, ուրիշ երրորդ դռնէ մի անցնելէ յետոյ ։ Այս երկու վերջին դռներուն մէջտեղի անցքին մէջ աստիճաններով

ելնելու յարկ մը կը տեսնուի, որ քաղաքացի օրիորդաց դպրոցն է, 1861ին հիմնարկեալ ծախուք Նախըջեւանցի բարեպաշտ Ճուլղարեան մահտեսի Սարապետ Մղայի. 40 ի չափ աշակերտուհիք կը գտնուին, որոնք բաց ’ի տեսակ տեսակ ասղնէագործութենէ՝ կ’ուսանին իրենց մայրենի լեզուին քերականութիւնը, քրիստոնէական վարդապետութիւն և այլն:

Նորող վանքը: Ս. Գէորգ տաճարին դռնէն դուրս ուղղակի երթալով և աջակողմը փողոց մը թողլով, երկրորդ անել փողոց մը կը հանդիպի նոյն կողմը, ուր տեղ է Յունաց Ս. Գէորգայ անուամբ փոքր մը, որ նոր հաստատութիւն է և չունի ոչ պատմական և ոչ տեղագրական կարեւորութիւն մը: Մենք նորա կից միւս փողոցն ալ աջ գինիս թողլով և դէպ ’ի ձախ կողմը ծռելով Ս. Յակոբայ պարսպին պատին տակով շարունակենք ճամբանիս, ուր քառուղի փողոցաբերան մը կը հանդիպինք. դարձեալ շարունակելով դէպ ’ի հիւսիսային փողոցին մէջ և կամարի մը տակէն անցնելով և յետոյ դէպ ’ի արե-

ամէնք ծառաներով՝ ուր կոտորեցին անհա-
մարելի առնելը երկաթեայ միջով դուռ
մի կ'երթէ, ուր է Մարիամու տունը։ Նոյն
տան Յովհաննու՝ Մարկոս կոչեցեալ
Ս. առաքեալները ժողովուած էին, ու Պետ-
րոս առաքելոյ բանտէն հրեշտակի ձե-
ռօք ելնելով և պարապագաներէն անցնե-
լով. եկաւ դուռը զարկաւ, երբ հաւա-
տացեալք ներսը ժողովուած իրեն հա-
մար աղօթք կ'ընէին. և աղախին մը ի-
մանալով դրան զարնելը և ճանչնալով
Պետրոսի ձայնը՝ ուրախութենէն ներս
վազեց լուր տալու. որոնք թէպէտ չէ-
ին հաւատար, բայց երբ դուռը կրկնա-
կին զարնուեցաւ, բացին ու տեսնե-
լով զՊետրոս զարմացան(1)։

Այն եկեղեցւոյս քննութիւնն ալ
թագաւորական է, Նուբարեան յանուն
Սուրբ Աստուածածնի։ Դրսէն Շ ըն-
թարձակին ծածկանակ Հայոց միաբանու-
թեան ձեռքն էր սոյն վանքս. պարտուց
փոխարէն գրաւ դրուած, և ուրիշ ժա-
մանակներ ալ Սիոնի Հայոց հետն-
ամէ կամ՝ նոյն պատշաճաւորութեան ներ-
քեւ քննուած։ Իսկ հիմա միաբանն չէ րա-

(1) Գործք. ժբ. 1—19.

նուած ժամանակ Հայք կը հոգային ե-կեղեցւոյն։ 1727 ին Գրիգոր հայրապետ Շղթայակիր նորոգեց զայն և մինչև մեր օրերը տակաւին հայագիր յիշատակա-րաններ կային, իսկ իւրեանց վերջին ե-պիսկոպոսն Աբտ—ըլ—Նուր հեռացնելէ զանոնք եղծանելով Ասորերէն գրել տը-ւաւ, և ուրիշ նորոգութիւններ եւս ըրաւ։ Ունի ինքը երկու երեք միաբան և եթ, իսկ ժողովուրդ միայն մէկ տը-նուոր։

Ասորւոց վանքէն դէպ 'ի հիւսիս ուղղելով, ձախ կողմն վրայ Անգղիացւոց հիւանդանոցը կայ, Հրէից ազգին համար հաստատուած, որոնց դարձին համար մեծ հոգ ու խնամք կը տարուի քանի մի ժամանակէ 'ի վեր։ Յառաջ դնալով կամարի մի տակէն մինչև ծայ-րը, անկիւնագլուխը հին ու քանդա-կածոյ սիւնի մի կտոր կը տեսնուի, Հան-նէ վարդապետ այս տեղս կը դնէ քա-ղաքին Երկաթի դուռը, ուսկէ Տէրոջ հրեշտակը Պետրոս առաքեալն անց-նելով քաղաքին մէջ մնացուց ու ինքն ա-ներեւոյթ եղաւ, և Պետրոս գնաց Մարկոս աւետարանչի մօրը տունը,

ինչպէս քիչ մը վերը պատմեցինք։ Իսկ Լատինի պատմագիրք այս երկաթի դրան տեղը կը նշանակեն Աջակողմեան փողոցին ծայրը դիմացի պատին երեսը տեսնուած հին ու խոշոր քարերով շինուած կամարը, որ հիմակ գետինը բարձրանալով կամարին վերի մասը միայն կ'երեւի. և աւելի հաւանական և ընդհանրապէս ընդունուած է այս կարծիքըս։ Երկու տարի յառաջ Անգղիական Հնախուզական ընկերութեան կողմէ գիտնական ճարտարապետ մի ուրիշ շատ տեղերէ 'ի զատ՝ այս տեղս ալ փորելով, հին շէնքեր և խցի նման յարկեր գտաւ տակը։

Անկէ դէպ 'ի հիւսիսային փողոցն ուղղելով և մսավաճառաց կամ փերեզակաց (ախպար) շուկայէն անցնելով ուղղակի կ'ելնենք Սուք շուկային մէջ, ուր Երկրորդ այցելութեան ժամանակ (յերես 46) տեսանք Սուրբ Յարութեան Տաճարի Նախադրան տեղը, որոյ 'ի նշան կանգուն կը մնան երկու հին ու մաշուած սիւներ։ Աստիճաններէն վեր ելած ժամանակնիս, որ միշտ դէպ 'ի աջ դին շեղելով կ'ելնենք, ձախ

դին պատով հիւսուած գետին մի. կ'ե-
րեւի, այս տեղը Սուրբ Խաչատրոյ վախ-
ճանեալ քահանայէն գնեցին 10–12 տա-
րի յառաջ, և այժմ Կարապետ եպիսկոպո-
սը կ'ուզէ զայն յետ դարձնել իբր ազ-
գային ստացուածք։ Յիշեալ գետնոյն
մէջ կ'երեւի Հրէից Թագաւորութեան
ժամանակի քաղաքին երկրորդ պարսպա-
պէն մնացեալ աւերակ մասեր սրբատա-
շեալ մեծ քարերով շինուած։

96 Մեզր յառաջ գնալով անկէ Ճա-
նապարհին մէջ, աջ դին կանգուն սիւն
մի կայ, որ Խաչի Ճանապարհին նշա-
նակեալ մէկ տեղն է։ Այս տեղ երկք
դուռ կ'երեւին, ձեռ 'ի ձախկամն ե-
ղած մեծ ու նորաշէն դուռը Խպտոյ
վանքինն է, զոր քանի մի տարի է նորո-
գեցին, և քաղ 'ի նեկեղեցին գեղեցիկ
ու բարձրադիր Աստուածածնայ մի եւս
կանգնած ունին։ Աջ կողմն դանէն Սի-
նէհոր կ'իջնուի, զոր Մատթէոս Սուրբ
Հեղինէի գանձատունը կը կոչեն, և
նա շինել տուած է։ Անկէ հոն կամ գան-
ձատուն կոչուելուն սրատեսակ տուան
պեղուած կը համարուի։ Մատթէոս կ'ը-
սէ թէ յիշեալ Թագաւորին՝ իւր Թէո-

վը հողը քարացընելով՝ ոսկի կը գոյացը-նէք, և մշակները կը փորձառորէր սուտ-տօրէն։ Ձախ կողմի դուռը Հայերէն վանքին է. և անմիջապէս տեսնուած բա-կին նախան քարայատակը Հայոց Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ տաճարն է, ո-րուն մէջնաշերը բարձրացած է յիշեալ ե-կեղեցւոյն գմբէթը հանդերձ պատու-հանոք։ Այս փոքրս աւերակաց կոյտ մի է, և յայտնի ցոյց կուտայ բնակողաց խեղճութիւնը, որոնց արտայայտիչ ապրու-րըն ու հայցն անձամ Հայոց միաբա-նութիւնը կը հոգայ։ Միւսին եկեղեցի մի յանուն Ս. Աստուածածնի։ Հայկէ-ցոց փոքրը Ս. Յարութեան տաճարն արեւելակողմը կ'իյնի, ուր անդղաց լա-կ'երեւի հին տաճարին մասերը, որոնց վրայ խոտացած է ժամանակը իւր աւե-րիչ ձեռքն երկրորդն։ Չորրորդ դա-րուն այս փոքրիս տեղն առ Ս. Յարու-թեան Տաճարին մէջը պատուանդուած էր։ Գմբէթին և ուսերակներուն մէջ տեղը Հայերէք ձիթենիք մի ցոյց կու-տան, քուրձերու կտորներով զարդա-րուած, որու համար կ'ըսեն թէ Հայր Ներսէս այս տեղ ապրեց զոհել իւր

միածնին որդին։

Նոյնէ կոչին յետ դառնալով սահմա-
րին Նախադռան ըսած տեղերնիս, սու-
ներուն քովէն վար իջնելով և Մութ շու-
կային մէջ ուղղուելով աջ կողմերնիս ե-
լած առջի փողոցին մէջ մտնենք, որոյ
ուղղութիւնն է արեւմտաքէն դէպ ՚ի
յարեւելք։ Նոյն մնած ժամանակ աջ
թեւերնուս վրայի առաջին շէնքը նոյն
եկեղեցի մի է, որոյ անունը ծանօթ չէ,
բայց անտարակոյս կը թուի մեզ որ Գա-
ղատոնի վանք ըսածն է այս, կառուցեալ
յանուն Ս. Հռիփսիմէի և Գայիանէի,
որ Հայոց ունեցած 70 վանուց 22դ էր,
որոյ համար գրուած է թէ Ս. Յարու-
թեան դրան քովն է (1)։

Յիշեալ փողոցին մէջ ձախ դինիս
թողլով Երուսաղէմի հիւպատոսարանը և
յետոյ դառ ՚ի վեր գնալով աջ կողմեր-
նիս մեծկակ դուռ մի կայ, որ բա-
ռամկաց Գըլխոյն Հեղինէի խաչեններուն դը-
ռը կ՚ըսուի և բաս Լատինաց Սուրբ Հե-
ղինէի հիւրանոցը կը կոչուի. իսկ Երա-
բացիք Թէքիյէ-թըլ-խասէքի կ՚անուանեն.

(1) Տես յընդարձակ պատմութեան Երուսաղէմի Ս. Ն-րսէսեանցի, ձեռագիր. Գիրք Գ. Գլ. Դ.

ժամանակ մի հիւանդանոց էր, բայց հիմակ երբեմն միայն աղքատաց համար ապուր կ'եփեն. ուր դեռ հին ժամանակէ մնացած երեք խալկին կան ահագին մեծութեամբ, և յանուն Հեղինէի կը յիշուին։ Նոյնպէս և հաւաստագոյն կարծեօք սոյն հաստատութիւնս Աբգարու կնոջ Հեղինէի պալատին տեղւոյն վրայ է, որ Ակրայ լերան վրայ կը գտնուէր, և նա էր որ սովու ժամանակ աղքատաց համար ցորեն բերել տալով բաժնեց ու խնամք տարաւ, 'ի յիշատակ սոյն մարդասիրական գործոյն մնացած է այնքան դարերէ 'ի վեր իւր պալատին մէջ սոյն անջնջելի նշանը և ճշմարիտ քրիստոնէութեան օրինակը։

Շատ դարերէ յետոյ Ռոքսելան սուլթանուհին որ սուլթան Սէլիմի որդւոյն սուլթան Սուլէյմանի տիրուհին էր, նորոգել տուած է այս մարդասիրական հաստատութիւնս, և Սուլէյմանն անոր մշտնջենաւորութեան համար Պէյթճէլէ գիւղն Բէթլէհէմի և Սելուանայ եկամուտները նոյն տեղւոյն շնորհած էր, Թէպէտև մինչև ցայսօր

բաւական փոփոխներ ունի, բայց աղքա-
տաց կերակրելու համար բաւական խո-
տաւէք չստանուիր ։

Թէ այն Թէոփիլէի դուռը և Թէ փո-
ղոցին նոյն կարգին վրայ գտնուած քա-
նի մի շէնքերը որ հիմակ էֆէնտիներու
տուներ են, բաւական հնութիւններ
ունին. շատ տուներուն ճակատը ձևա-
քարով յօրինուած են, և բաւական
ճարտարապետական են. որոնք մինչև
Լուսաւորչեայ ժամանակ կը համնին ։

Դէպ Հռովմէական հիւրանոցէն կամ
Թէոփիլէն ելնելով և դէպ ՚ի յարևելք
ճանապարհը շարունակելով մեծ ուղին
կ՚երթէ, որ է Պարսկաստանի գրան ճանա-
պարհը, և Յովնանապատի լայն հեղեղատ կը-
չած լեռնանցքմէջն է. դէպ ՚ի աջ դին
առնուելով և ճանապարհին ծայրը հա-
սած. ժամանակին բաւական գարու-
մեր է, և հեղեղատին ծայրն է որ Ս՚ա-
կրպայեցի Խաչատուր հրամանատար այրա-
պետ ... Մ՚կրտչ ...
ուր Սողոմոնի ... ճանապարհին ...

Ալեքսան ճանապարհներն դուրս ելնե-
լուս. ճամբու դրնի ... կ՚երևի
գիւղի կողմէն ... , որ Սալգիա-

ձեւ գլխոյ կը կոչուի, բառ որուն մ՚նա եղաւ հիմնադիր․ և այսօր ալ դարձեալ գլխաւորն է Մահմէտականաց։

Այս տեղէն 20 մետր աւելի. նորա՝ գեղեցիկ աղբիւր մի կը տեսնուի Այն-Մելիք անուամբ․ սոր ջուրը Աղբիւր Կնքեալէն կուգայ, որ նախ Տաճարը գալով կը թափի և յետոյ անկէ կը բաժնուի։

Այս աղբիւրին հարաւային կողմն է Դատաստանատունը (Մէհքէմէն)։ Այս տեղ քարի մէջ փորուած տապանակի ձեւով տապան մի կար (1), Թագաւորաց գերեզմաններէն բերուած, և 1869ին Գաղղիոյ հիւպատոսին խնդրանօք Փարիզու կայսերական Թանգարանը խրկուեցաւ։ Մզկիթին բակին մէջ մի օրինէ յօրինուած գեղեցիկ աղբիւր մի կը տեսնուի, որու ջուրը նոյնպէս Աղբիւր Կնքեալէն կուգայ։

(1) Այս նման արկղաձեւ և քարի մէջ փորուած տապան մի Ս. Յակոբայ վանուց մէջ կար ժամանակէ մի 'ի վեր. բակի սանդուխին քով դրուած, և իբրեւ ծաղկաման գործածուած. և ասոր այնպէս թողուած. այն տապանը նախ 1866 թուոյն երբ տաճարանը շինուեցաւ. հոն անկիւն մի իբրեւ ծաղկաման կը գործածուէր. իսկ ներկայ տարին Ս. Պատրիարքը հնութեանց թանգարանը փոխադրել տուաւ։

Սէն-Սէպիլի յարեւելակողմը և կէս ստոր՝ Սողոմոնեան (արդի Օմարայ) տաճարին Պապ-էլ-Սպաթլէ կոչուած դուռըն է :

Սէն-Սէպիլէն 200 մեթր եա դառնալով նոյն փողոցին մէջ, երկու տուն կ'երեւին մին աջ՝ միւսն ձախ դին, որոնք թէպէտեւ խախտեալ, այսու ամենայնիւ նշանաւոր գեղեցկութիւն մի ունին։ Աջակին տունը, որու դուռը չթաքարով յօրինուած է, Խաչակրաց ժամանակ դպրոց էր, Սալահիէ կը կոչուի; և այսօր Մուսա Էֆէնտի Մուֆթի-էլ-Հաֆիհիէ անուն անձին է : Երկրորդը, որ նոյնպէս Խաչակրաց ժամանակ դպրոց էր օրիորդաց, այսօր դարձեալ վարժարան է մահմետական աղայոց եւ Շէյխ Իսմայէլ Տանայրին է, և Ըլ-Ըզէլթէ կը կոչուի, յանուն այն պարուկուհւոյն որ Սալահէտտինի մէկ պաշտօնէին կինն էր և հոս թաղուեցաւ, ուր կը տեսնուի դեռ գերեզմանը :

Յիշեալ տանց առաջնոյն դիմացը փողոց մի կայ, ուր չորս րոպէի չափ քալելէն յետոյ, միշտ դէպ 'ի ձախ դըռնալով, կը հասնինք Տաճարին պարտիզին

քով, ուր տեղ Հրեայք ուրբաթ օրերը աղօթելու և արտասուելու կուգան, գլուխնին զարնելով նոյն պարսպին. աբուն քանի մի կարգ քարերը խիստ հին են և Սողոմոնի ժամանակէ մնացած կ'երեւին. որոնց մէջ մինչեւ 3 մեդր երկայնութիւն ունեցող քարեր կան: Հրէից այս արարմունքը տեսնելով՝ ընտուգուած կը համարուի այն ճշմարտութիւնը զոր Երեմիայի (1) բերնով զգուցեց Տէր. «Օ՜հ գոչես 'ի վերայ բեկմանս քո, սաստկայն ոչ արարից քեզ փախճան. բուռն են ցաւք քո. վասն բազմութեան անօրէնութեան քո սաստկացան, մեղք քո արարին քեզ զայդ»: Ողբալի տեսարան մի է արդարեւ այսպիսի ցրուեալ ազգի մի վիճակը, որոնք աշխարհիս ամեն կողմէն խումբ խումբ կուգան իւրեանց արտասուաց կաթիլները խառնելու նախահարցը արտասունքին, որոնք տասնեւինը տարիէն 'ի վեր է կը թափեն նոյն տեղւոյս վրայ, ոչ ուրիշ բանի համար բայց մեզ՝ եթէ ոչ մարգարէին վերոյգրեալ խօսքերը ճշմարտելու:

(1) Երեմ. Լ. 15:

Այս արտասուաց տեղը սալայա-տակուած բակ մը է 30 մեթր երկայնու-թեամբ և 4 մեթր լայնութեամբ։ Հիւ-սիսոյ կողմէն Ս՝Նէհէմիի պատն է. Հա-րաւէն մասնաւոր անձի մը տունն է, ուր տեղ հին Տաճարի պարսպին դրան մէկ վերմնացորդը կը գտնուի։ Արեւ-մուտքէն ուրիշ տուներով ծածկուած է. իսկ արեւելեան կողմն է Տաճարին պա-րիսպը, այն զոր Հրէից արտասուելնե-րովն ու համբոյրներով կը պաշտեն ու կը յարգեն։

Յետ դառնալով այս տեղաց մինչև ձախակողմի առաջին փողոցը, անկէ 'ի հարաւ շեղելով մինչև Հրէից արտա-սուած տեղւոյն պատոյն ծայրը, այսինքն՝ Օմարայ Մ՝զկիթի պարսպին հարաւա-յին արեւմտեան անկիւնը, հոն կը տես-նուի Կամարին խարխալեալ մնացեր, որ յառաջ Տիւրոպէոնի ձորին վրայ ձգուած էր և Մ՝օրիա լեռը Սիոն լերան հետ կը կցէր։ Այս կամարը, ինչպէս կ'երեւի, 15 մեթր լայնութիւն ունեցած է, և Հրէից Թագաւորները շինած են հաւանաբար. Արիստաբուլոս մեծ քա-հանայապետը կործանել տուաւ այս

կամուրջը (64 տարի Ք. Ա.) որպէս զի Պոմպէոս չկարենայ անկէ Տաճարը մըտնելու (1)։ Այն կամուրջին մէկ ծայրը Մակաբայեցւոց պալատին կը հասնէր Սիոն լերան վրայ։

70 Մեր աչքի առջին դէպ 'ի հարաւ աղամանսթղեններաց երկու անտառանները մէջէ անցնելով Ազբեւսայ դաշտը կը հասնի։ Իւրեց մենք յետ դառնալով եւ ձախ կողմի առջնի փողոցը մըտնելով մինչեւ Մայրենին բառած տունը հասնինք, ուրկէ դարձեալ ձախ կողմի ճամբարհը դէպ 'ի յարեւմուտք յառաջ քալենք։ Այս փողոցին կէսէն սկսելով մինչեւ ծայրը շուկայ է, ձախ դիմին Հրէից Թաղը կամ շուկայն է, այս կողմերնին տուները քայքայուած երեւալով ձախ դիմը Սէն ճամբան (Սուա-կէլ-Րէգինէ) ընդարձակ է. տուրք արեւմուտեան ծայրը խանութներուն եռեւելի կողմն է Եղեկայն տապանակը, որ կըտեսնուին տասնուիլ քարերը Արձանագրին մեջեւն, որ առաջինին տըրայ կը նայի, եւ ուրիշ ընդարձակ տունենքին։ Այս աւազակն շատ Հնագէտներ Եդեսիոս Թագաւորի չինել տուածն եւ

(1) Յովսեպոս Գիրք. Ա. Ճ.

Ավոտքին աստղան լուածը կ'իմանան, ուր Վերին աւազան, 'ն ջրանցքը մ'ալ բանալ տուաւ Եզրեատանցւոց Սենեքերիմ Թագաւորին պալար ժամանակը, որպէս զի պաշարման մէջ ջուր ունենան։ Վերին աւազան լուածնիս այժմեան Յոպպէի դրան դուրսն եղածն է, Տաճկաց գերեզմանատանց մէջ, և ջրանցքը մինչեւ հիմայ կը մնայ նոյն նըպատակին ծառայելով անձրեւաց յորդութեան ժամանակ։

Յիշեալ Մ՚եծ շուկային ծայրը՝ աջ կողմն է նորաշէն Մ՚եծ Հիւրանոցը (Հօթէլ) և առաջը փոքրիկ հրապարակ մի, ուր Ֆէլլահ կանայք կը նստին բանջարեղէն և փայտ ծախելու։ Աջ կողմը դէպ 'ի հարաւ երթալով դուռ մի կը տեսնուի քանի մի պահապան զօրքով պահպանուած. ասիկայ է քաղաքին բերդը, և ռամկօրէն Դաւիթի Բերդը կը կոչուի, ըստ որում նորա չինել տուած աշտարակին կամ պալատին տեղն է (1). և հիմակ զինարան է։ Քաղաքին բոլոր շէնքերէն բարձր է. մինչեւ Սուրբ Յակոբայ գմբէթէն։ Հերովդէս մեծը այս

(1) Բ. Թագ. Ե. 18.

տեղս երեք աշտարակ շինել տուած էր, առաջինն էր Հիպպիկոսի ըսուածը, երկրորդը՝ Մարիամնեայ, երրորդը Փասայելի. և այս աշտարակներուն հնութիւնները դեռ մինչեւ ցայսօր կ՚երեւին այն խոշոր վէմ քարերէն, որոնք մինչեւ Դաւթի ժամանակէ մնացած կը կարծեն գիտնականք: Այս երեք աշտարակներէն ՚ի զատ երկու հատ եւս կան որոնց շինութիւնն ու քարերուն մաքրութիւնն ալ կը վկայէ որ Հերովդէսին ժամանակէն չեն, շատ շատ մինչեւ Սուլէյման Բ կ՚ելնեն:

Փողոցին ձախ դին Դաւթի բերդին դիմացն է Բողոքականաց աղօթարանը, որ շինուած է Հերովդէս Մեծի պալատին տեղւոյն վրայ: Այս աղօթարանին քով ետեւի կողմէն դեռ կանգուն կը տեսնուի փոքրիկ եկեղեցի մի յանուն Յակոբ առաքելոյ որ Եագուպիէ կը կոչուի: Ասկէ իբր 55 մետր դէպ յարեւմուտք կան երեք փոքր մատուռներ ձախ ձեռքիդ վրայ, նուիրեալ յանուն Երից Մարիամանց, որոնց երեւցաւ Յիսուս յարութենէն յետոյ այս տեղս, ըսաց. «Ո՛ղջ էք»: Նոքա ալ

մօտենալով անոր ոտքերը պագնելու ու ղինքը պաշտելցին(1)։ Այս տեղւոյս մեռ քայլինք Ի—ղաճերից դուռն կ'անուանեն։

Անկէ դուրս ելնելով հասարակ ճանապարհին վրայ դէպ 'ի Սուրբ Յակոբայ վանքն երթալու, կամարին քերանը հանելուս մեր վանուց Դեղարանին դիմացի փողոց՝ ն մէջ ձախ դին առաջին դուռը Թողով՝ երկրորդ դուռն է Թովմայ առաքելոյ փոքր տեղը, որ անկեան վրայ է։ Համնէ պատմագիրը կ'ըսէ թէ՝ Թովմայ առաքելոյն Յիսուսի ձեռօք Հնդիկ փաճառականաց ծախուած տեղն է․ որն և իցէ, հին ժամանակէ 'ի վեր եկեղեցի էր յանուն Թովմայ առաքելոյ; և 200 տարի կայ որ Մահմետականք չընչին պատճառաւ մի յափշտակելով խըրացուցած են, բայց հաւատալով թէ նորա մէջ կեցողը առանց պատժոյ չմընար, լքեալ Թողուցին․ և վերջին առէրըն հասած էր, երբ 1865 ին կրկին նորոգեցին և դուռ մի դրին որ միշտ փակ կը մնայ։

Հոն հոս կը լսենք մեր Զերրայոր-այցելութիւնը, և կինանք դարձեալ մի

(1) Մատթ․ ԻԸ․ 9․ [illegible]

քանի օր հանգիստ առնուլ, և Վեցերորդ այցելութեան պատրաստուիլ գնալ 'ի Սողոմոնեան աւազանքը ։

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի Տաճարն Սողոմոնի, (Մ՚զկիթն Օմարայ)։

Դիտողութիւն

Այն տաճարն, կամ լաւ եւս Մ՚զկիթը, Օմար իսլամ խալիֆայ շինած է, որ Մ՚էհմէտ Ա. օրէնսդրին երրորդ յաջորդն էր, ճիշտ նոյն տեղւոյն վրայ, ուր շինուած էր յառաջագոյն Սողոմոնի ձեռօք Աստուծոյ Տաճարը, վասն որոյ սովորութիւն եղած է հասարակաց՝ Սողոմոնի անուամբ կանչել, ինչպէս և մեք շատ տեղ պատմութեանս մէջ սոյն անունը գործածեցինք ։

Եւ որովհետեւ Մ՚ահմետականք իրենց նուիրական տաճարներէն մին կը համարին, վասն որոյ արգիլեալ էին մինչեւ մօտ տարիներս որ եւ իցէ ուրիշ կրօնքէ եղող անձի մի ներս մըտնել, և մինակը իբր պղպայիքով՝ մա-

հուամբ կը պատժուէր։ Ղրիմու պատերազմէն յետոյ եւրոպական դեսպանաց միջնորդութեամբ այն արգելքը քիչ քիչ վերցաւ, և հիմակ Եւրոպացիք իրենց հիւպատոսաց ձեռօքը և արեւելեան քրիստոնեայք Հայք և Յոյնք իրենց վանուց Թարգմաններուն ձեռօքը կրնան հրաման ընդունիլ կառավարութենէն, և խումբ մի կազմուելով երթալ պտըտիլ Թարգմանաց հետ յիշեալ Տաճարին մէջ. ուր տեղւոյ շէխերէն մէկը իրենց կ'առաջնորդէ ցոյց տալով ամեն մասերը, որու փոխարէն կը ստանարին իւրաքանչիւրոք 4—5 դահեկան տալ իբրեւ պարգեւ։ Ուրբաթ օրերն արգիլեալ է, ինչպէս և Ռամազան ամսոյն մէջ։

ՄՈՐԻԱ ԼԵՌԸ

Պարմակեան

Այս հռչակաւոր լեռը Սիոն և Ակռայ լերանց (որոնք հին Երուսաղէմը կը կազմէին) արեւելեան կողմը կ'ինկնի։ Աւանդութիւն մի կ'ըսէ, թէ Հայր Աբրահամ այս տեղը ուզեց զոհել իւր

որդին Իսահակը։ Դաւիթ իւր ժողովուրդը աշխարհագիր ընելուն համար զԱստուած բարկացընելով, և 'ի պատիժ իւր այս յանցանացը մահ խընդրելով՝ երեք աւուր մէջ 70,000 մարդիկ մեռան։ Նա աղաչեց զԱստուած որ այս սոսկալի պատուհասէն զինքը ազատէ, ուստի Գադ մարգարէն Աստուծոյ կողմէն եկաւ իւր քով և հրամայեց որ Ոռնայի Յեբուսացւոյ կալին մէջ սեղան մի կանգնէ, և հոն Տիրոջը զոհ մատուցանէ։ Դաւիթ հնազանդեցաւ, 600 սիկղ հատուցանելով գնեց յիշեալ կալին տեղը, և զոհը մատուցած ժամանակ երկնից հուր իջնելով լափեց զայն։ Ընդունեց Աստուած եւ կոտորածը դադրեցաւ (1)։ Ասոր վրայ Դաւիթ 'ի նշան երախտագիտութեան իւրոյ ուզեց տաճար մի կանգնել ճշմարիտ Աստուծոյն. բայց Աստուած իմացուց իրեն որ ըսած Տաճարն իւր որդւոյն ձեռօքը պիտի շինուի, այն է Սողոմոնի, որ իւր թագաւորութեան 4դ տարին Տաճարին հիմերը դրաւ, եօթը տարուան մէջ լմնցաւ, և անոր մէջ դրաւ Տա-

(1) Ա. Մնացորդաց ԻԱ. 1—28.

պանակն ուխտի ։ Այս շէնքս 476 տարի յետոյ Նաբուգոդոնոսորայ ձեռօք այրեցաւ(1)։ Կիւրոս Պարսից Թագաւորը Քրիստոսէ 536 տարի յառաջ հրաման տուաւ կրկին շինութեան։

Անտիոքոս Եպիփան անհամար մարդիկ սպաննելէն յետոյ՝ Տաճարին մէջ գտնուած ինչ որ Թանկագին բան կար, յափշտակելով Ողիմպեան Արամազդայ պատկերն ալ հոն կանգնեց(2)։ Երկու տարի յետոյ Յուդա Մակաբէ սրբեց Տաճարը և ճշմարիտ Աստուծոյ պաշտօնը կրկին հաստատեց։

Պոմպէոս բռնի զօրութեամբ տիրեց քաղաքին, մտաւ Տաճարին մէջ, բայց ձեռք չդպցուց, այլ ընդհակառակը յարգութեամբ վարուեցաւ։

Յիսուս Քրիստոսէ 17 տարի յառաջ Հերովդէս Մեծը տաճարը վերանորոգեց(3), 10,000 գործաւոր, 1000 կառք և 1000 ալ քահանայ աշխատցընելով, որոնք միայն կրնային ներս մըտնել. այս շինութիւնը 46 տարի տևեց

(1) Դ. Թագ. ԻԵ. 9։
(2) Ա. Մակ. Ա. 23։
(3) Յովհան. Բ. Ի։

կ՚ըսէ Յովհաննէս աւետարանագիր · բայց այս շինութեան վրայ տարբեր կարծիք-ներ կան ։

Այն տաճարին մէջ երեւցաւ Տէ-րոջն հրեշտակը Զաքարիա մարգարէին և նորա որդւոյն Յովհաննու ծննդեանը աւետիսին տուաւ ։ Նոյն տեղ եկաւ Մարիամ, ամենասուրբ Կոյսն իւր ան-դրանիկ որդին Տիրոջն ընծայելու , ուր Ծերունին Սիմէոն փառք տուաւ Նա-տուծոյ որ արժանի ըրաւ զինքը աշ-խարհիս Փրկիչը տեսնելու ։ Յիսուսի Քրիստոսի համբարձմանէն 37 տարի յետոյ Տիտոս գալով կործանեց այս Տաճարը ։

134 Թուականին Ադրիանոս կրկին շինեց քաղաքը և Էլիա կոչեց, և յիշեալ Տաճարին տեղւոյն վրայ Արամազդայ անուամբ մեհեան մի կանգնեց , և նոր քաղաքին տեսուչները Տաճարին մօտ ՚ի պատուոյ Ադրիանոսի արձան մի տնկե-ցին ։ Հրեայք դադարմով թագաւորութիւն տալով նոյն կայսրէն տարին անգամ մը Երուսաղէմ գալու և Տաճարին ա-ւերակաց վրայ լալու ։

Հեղինէ Թագուհին և որդին Կոս-

տանդիանոս այս տաճարս կործանեցին (327), բայց արձանին չդպան, որ ժամանակ մը եւս մնաց :

Յուլիանոս անօրէնն իր ուրացութենէն յետոյ (361) արեւելք եկած ժամանակը մարգարէից խօսքերը ստելու համար՝ հրաման տուաւ Հրէից որ Տաճարին աւերակները փորեն և նորէն շինեն . բայց հիմերուն տակէն կրակ ելնելով և գործաւորները այրելով վերջ տուաւ գործին : Նոյն յետոյ քաղաքին բնակիչները, ինչպէս սովորութիւն է, ամսոյ տեղ մը նկատելով զայն, աղբանոց ըրին :

636 Թուին Քրիստոսի Օմար խալիֆայն Երուսաղէմին առնելով, ուզեց որ գտնէ այն տեղը ուր Յակոբ նահապետ քուն եղած տեղը աւերակքին մէջ տեսաւ գետնէն մինչեւ երկինքը բարձրացած սանդուղը: Խալիֆային առաջնորդողը այս տեղս ցոյց տուաւ իրեն, և նա հաւատալով որ իր փնտռած տեղն է, մաքրել տուաւ գետինը, նախ իրական ժայռը դուրս ելաւ և Օմար նորա վրայ շինեց գեղեցիկ մզկիթ մը, որ 50 տարի յետոյ Աբուսանեաց որդի Նաս—ը

— Մելիք ամիրապետը ուրիշ տալով դրամ՝ նորէն կանգնեց աւելի փառաւոր, և հետզհետէ ուրիշ ամիրապետներ ևս գեղեցիկ սիւներով, մուսիւններով և շքեղ վանդակներով՝ ճոխացուցին: Այս 8ւ դարուն երկրաշարժէ մը խախտելով, յետոյ դարձեալ ուզան որ նորոգուե-ցաւ, սակայն առջի շքեղութիւնը չու-նեցաւ:

1099 ին Խաչակիրք տիրեցին Տաճա-րին՝ տասն հազար Մահմետական քա-պաններով մէջը. և եկեղեցւոյ փոխար-կելով Սողոմոնին վրայ սեղան մը կանգ-նեցին: Իսկ 1187 ին Սալահէտտին կըր-կին առաւ և մզկիթ ըրաւ, որ մնաց մինչև ցայսօր:

Սուրբ տաճարը, ուր պիտի այցե-լենք, առաջը դուռ ունի: Ուխտաւորք հրապարակէն Պապ-էլ-Սըլսիլէհ կը-չուած դռնէն կը մտնեն, որ է հիւսի-սային արեւմտեան անկիւնը հին Սի-րոյի մօտ, և Հարէմ-էլ-Շերիֆ մեծ հրապարակը կը հասնի, որ 500 մեթր եր-կայնութիւն և 300 մեթր լայնութիւն ունի: Ձախ դին կ'երեւի այն մզկիթն երեսը, որու վրայ շինուած էր Սողոմոնի

Նեռան աշտարակը, զոր Շամուռն Անա-
կարէի որդին Հիւսկանու մեծ քաղա-
նայապետը շինեց Քրիստոսէ 120 տարի
յառաջ (1)։ . . . . . . :

Աջ կողմէն Բիրջէ լուսաւոր բոլորակ, և գմբեթաւոր աղօթարանի մը քովէ կ՚անցնէուի. այս տեղ պահուած կը-կե-նայ Նուրիական ժայռին (Սուր Սանկրո) մէջ մասը, որու վրայ ըստ Մահմետականաց՝ Յակոբ նահապետ պառկեցաւ և անդորութիւն տեսիլքը տեսաւ։ Յետոյ գեղեցիկ բայց ցամաք աղբիւրի մը կը հանդիպինք, ուսկէ դէպ 'ի հարաւ շրջելով կ՚անցնինք Սրբոց Հելիանոսաց ը-սած տեղւոյն մէջէն մինչև վերջ տաք ատոնիճաններուն քով։ Այս տեղ պէտք է ուխտաւորաց ուշադրութեան արժանիները համբոյն ու այնպէս երկրն քարայատակ գեղեցիկ քանդակին վրայ, որ Յովսէփատին Սրբոց Նորոգելոցացն կամ Տաճար ըսուածն է, որ պատով մի շրջապատուած էր յառաջ։ Այս տեղ Յիսուս Քրիստոս շատ հը-րաշագործութիւններ ըրած է. այս տեղ գտած գիտցը իր ծնողքը երբ նա քարոզչութեան հետ հարցմունքներ կ՚ը-

(1) Յովսէփ. Գիրք ԺԸ. Ե.

նէր, և անկէ դուրս հալածեց վաճառականներն ու սեղանաւորները. այս տեղ մարգարէացաւ Տաճարին աւերումը, զոր Տիտոս 37 տարի յետոյ եկաւ կատարեց։ Նոյն հեթանոսաց մարգիկեալ էր մանել։

Օմարայ Մզկիթին արեւելակողմը, որ այն բակին վրայ է, տասնեկիւնի չէնք մի կ՚երեւի վրանաձեւ՝ 17 սիւնով. անիկայ Սողոմոնեայ սեղանին տեղւոյն վրայ է. այս սեղանին և Տաճարին մէջտեղը քարկոծուեցաւ Զաքարիա (Ազարիա) որդին Բարաքեայ (1)։ Մահմետականք այս տեղւոյս Մէհքեմէ—Տաւուտ կ՚ըսեն, այսինքն Դաւթի դատարանը։

Գանք հիմայ արդէն Մզկիթին որ Օմարայ՝ անուանքը կը յիշուի. այս ալ Գուպպէթ—էլ—Սախրահ կը կոչուի, որ ժայռին գմբէթն ըսել է. ութանկիւնի է, ամեն մէկ անկիւնին երեսները՝ որ մարմարով և չինիով զարդարուած է, 20 մէտր է. Եօթը պատուհան ունի գունաւոր ապակիներով, և վրան ոսկեձաղման գմբէթ մի։ Չորս դուռ ունի. հիւսիսայինին դուռը Պապ—էլ—Ճէննէհ

(1) Բ. Մնացորդաց ԻԴ. 20։

(արքայութեան դուռ) կը կոչուի։ Արեւելեան դռնէն ներս կը մտնեն. Ներքին կողմը խիստ մութ է. կեդրոնական մասը երկու ութանկիւնի չըջապատով բոլորած է, առաջինը արտաքին ողմով, երկրորդը ութ մոյթերով և 16 ընտիր մարմարեայ սիւներով, որոնց բունը միակտուր է. Մզկիթին վերի կողմերը բոլոր միւսիւններով և ոսկէզօծութեամբ ծածկուած են. և տեղ տեղ Ղուրանէն հատուածներ կան ոսկէգրով դրոշմուած։ Բուն կեդրոնը չորս մոյթով և 12 սիւնով գօտուած և անոնց միջոցները երկաթեայ գեղեցիկ վանդակներով պատուած են. Յետոյ դարձեալ ուրիշ վանդակ մի կայ տախտակեայ և արհեստաշէն, որով չըջապատուած է Սախրան (Մուալլագ տաշը ըսած ժայռը)։ Ժայռին երեսը բաց է և անհարթ և բարակ ծակ մի ունի մէջտեղը ուղղահայեաց, և հիւսիսային և արեւմտեան մասերը տափկացած են. վրան՝ մարդաչափ բարձրութեամբ Պէքէհ կախուած է., որ տեսակ մի վրան է, կանաչ և կարմիր կերպասէ. Մահմետականք այս Պէքէհը տեսնելով՝ քաս իւ-

թեանց աւանդութեան կը յիշեն Աս-
տուածոյ Ադամին տուած վրանը, երբ
Մ՚էջքէի քով լերան մի վրայ Եւան
գտաւ կ՚ըսեն հարիւր տարի որոնելէն
յետոյ։

Այս ժայռը Աւանդութեան կայն է, զոր
Դաւիթ Յերուսաղեմերէն գնեց, որու
վրայ շինուեցաւ յետոյ Սողոմոնեան տա-
ճարը եւ Տապանակին ուխտի հետ դրուե-
ցաւ եւ կոչեցաւ Սրբութիւն Սրբոց.
ուր տարին մի անգամ միայն մեծ Քա-
հանայապետը կը մտնէր։

Ժայռին արեւմտեան կողմը ձեռքի
նշան մի կայ, որ Գաբրիէլ հրեշտակա-
պետինն է կ՚ըսեն Մահմետականք, եւ
ինչպէս մեալը պատմութեամբ մի եւս կը
հաստատեն, զոր մէջ բերելու հարկ
չկայ հոս։ Ժայռային արեւմտեան
անկեան դիրքը տախտակներով շրջանակ-
ուած մէջ բարակ, փայլուն եւ մութ կա-
պոյտ գունով քար մի ցոյց կու տան 80
հարիւրամերդը լայնութեամբ ու երկա-
րութեամբ. ասոր ետեւի կողմը վեհան
մի կայ կախուած որ Համզայինն է. կ՚ը-
սեն, որ Մ՚էհէմմէտի հաւատարիմ ըն-
կերին. ու հօրեղբօրն էր։ Վահանին

վրայ անօրոշ նկարներ կ՚երեւին և միայն արձանագրութ. մի յայտնի կը ստեղծուի ։

Ամհրահի հարաւային արեւմտակողմը տեսակ մի վանդակ կայ երկաթի, և ծակ մի ունի, որու մէջէն ձեռքերնին խոթելով Մ՚էհմէտի մէկ ոտքին հետքը կը շօշափեն Մահմետականք և կը յարգեն. կենքը մարմարեայ քարի մի վրայ է ։

Հարաւակողմը կ՚երեւի մարգարէին (Մ՚էհմէտին) դրօշը որ իւր նիզակին վըրայ պլլուած է, և Օմարայ նշանը (Սանճագ) արձակ թողուած ։ Այն տեղը կ՚երեւի նաեւ Էլ-Գուպպէթ-Էլ-Մըզէյնը (1) ։

Պապ-էլ-Ճիպրէէլ ըսած դրան առաջը շինուած տեղւոյն մէջ յատակիս (Իպադի) քարէ տապանակ մի կայ, որու վըրայ Մ՚էհէմմէտ 19 տարի գամեր գամած է, և տանիք աշխարհիս սեւութեան ժամանակը ցոյց կուտայ։ Իւրաքանչիւր դար վերջանալուն գամերէն մին կը քակուի, աներեւոյթ կը լինի կ՚ըսեն Մահմետականք։ Նաեւ կը յաւելուն թէ օր մի սատանայ վերջիններս գամէն [illegible]

(1) Էլ-Գուպպէթ [illegible]

նել որ չուտով աշխարհիս վախճանը մօտենայ . բայց Պօղոսթիէլ հրեշտակապետ վրայ հասնելով հալածեց զինքը սրբավայրէն ։ Հիմակ չորս հատ միայն կը մնան ։

Հարաւային արեւելեան կողմը 15 ոտք ամպդուութք մի կայ , որ առջին յորջը կ'ընկեցընէ , որուն տառատարն է Մահրան , որ ըստ առից Մուրբացուոց՝ օդին մէջ կախուած կը կենայ առանց նեցուկ մի ունենալու , բայց ժայռին երեսը կոտրուած մի ծածկած է ։ Մէխատաւորները պարբաշխնող առաջնորդը որ Տաճարին բռնատարը կը լինի միշտ , շատ բաներ կը խօսի յիշեալ յարկին զանազան անդրերուան վրայ , որոնք նշանաւոր եղած են Մեծկամէկ դէպքերով . ուղղը կրնայ մտնել ընել առաջնորդին , բայց նախ ոչխար է նոյա այծառ տասնկերեքնը հաւկրնայ ։ Յիշեալ բռնատարը ասքը գետինը պառնելով ձայն մի կ'ենէ . եւ կ'ըսէ թէ այս անտը հոգիներուն եղն է (Պիր -Էլ-Արուահ) , ուր շաբաթը երկու օր հաւատացեալներուն հոգիները ժողվելով կ'աղօթէին Աստուծոյ ։

Հիւսիսային դռնէն զուրս ելնելով

և պատին տակովը երթալով, որ ձախ դին կուգայ, աջակողմը երկու Թիւրպէ կը տեսնուի գմբէթաւոր և ճերմակ մարմարեայ սիւներով, պզտիկը Մէհէմմէտին աղջկանը Ֆաթիմէի անուամբն է, միւսը կը կոչուի Գուպպէթ-էլ-Միրաճ, որ ըսել է Մէհմէտի համբարձման գմբէթը։ Հարաւային դրան քով երկուք և կէս մեդր բարձրութեամբ պատին երեսը մարմարեայ քար մի կը տեսնուի, որուն երակին գիծերը երկու թռչուն կը ձեւացնեն. ասոնց վրայօք ալ պատմութիւն մի կայ, և կ'ըսեն թէ երկու սիրամարգ են, որոնք իրենց գոռոզութեան համար պատժուած են։

Հարաւային դրան դիմացը կամարակապ սրահ մի կը տեսնուի, և ասոր չորս կամարներէն կախուած է կշիռը, որու մէջ վերջին դատաստանին օր պիտի կշռուին վարձքերն ու մեղքերը իւրաքանչիւր ոգւոյ։ Այս սրահիս մօտ արեւմտակողմը մարմարեայ գեղեցիկ ամպիոն (Մըմպար) մի կ'երեւի, որ կ'ըսուի Փուրհան-էտտին-Գատի։ Ուր Ռամազան ամսոյն մէջ ամէն ուրբաթ օրերը քարոզ կը տրուի։

Դէպ 'ի հարաւակողմը յառաջ երթալով, և ջրի աւազանի մի քովէ անցնելով, 30 մետրաչափ աւելի անդին 18 աստիճաններէ վար ստորերկրեայ տեղ մի կ'իջնուի. ուղղութիւնն է հիւսիսէն դէպ 'ի հարաւ, երկու մասէ կամ սըրահէ կը բաղկանայ՝ գմբեթայարկ և մոյթերու վրայ յենած: Ծայրը չհասած՝ 8 ոտք աստիճան կան, ուսկէ վար իջնելով ձախակողմը սիւն մի կը տեսնուի խիստ մեծութեամբ և վերին խոյակը արմաւենիի նման տերեւով զարդարուած է: Այս ստորերկրեայ յարկիս ծայրը երկու դուռ կան որմով հիւսուած, որոնց վերի շեմերը կը կենան: Այս դրուներուն և երկու պահներուն համար մեծ գիտնականք կ'ըսեն թէ Սողոմոնի Տաճարին դուռն են և նորա շինածները, սակայն երբեմն երբեմն նորոգութիւն տեսած են: Այս ստորերկրէն դուրս ելնելով Էլ-Աքսա ըսուած մզկիթը կ'երթուի, որուն մէկ մասը սոյն ստորերկրին վրայ է:

ԷԼ ԱՔՍԱ

Պարմաչան

Օմար Աւռնայի կալը մաքրել տալէն յետոյ, զոր ինքը Դուլթի. Տաճար կ'անուանէ, գնաց անոր վրայ չինուած Սուրբ Հատուածածնեի եկեղեցւոյն մէջ աղօթելու, և պատուիրեց որ այն տեղը յատուկ աղօթարան ըլլայ Իսլամացւո-ոց Մզկիթի փոխելով՝ անունը դրին Էլ-Աքսա։ Յօթներորդ դարուն վերջերը Ապտ-էլ-Մէլէք անուն ծ.ք խալիֆայն յիշեալ Մզկիթին գմբէթը ոսկւով և արծաթով պատել տուաւ։ Նոյն խալիֆային և իւր որդւոյն Ալ-Վալիտի օրովը արեւելեան կողմի մէկ մասն փլելով ինկաւ, և հաստատ հիմ չունենալուն բոլոր կործանեցաւ։ Քառասուն տարի յետոյ Աբու-Ջաֆար-էլ-Մանսուրի ժամանակ արեւելեան և արեւմտեան կողմերը սաստիկ երկրաշարժէ մի փլաւեցան, և դրանը վրայ պատած ոսկին ու արծաթը քակել տալով ու դրամ կտրելով՝ անով նորոգուեցաւ. ուրիշ անգամ մի ետս Էլ-Մահտիի խալիֆա

յուլթենէն առաջ (որ եղաւ 775–785), քաղաքոյլին կործանեցաւ երկրաշարժէ, անոր համար Սուրբ Նաւուածամոր ա-նուամբ եկեղեցի եղած ժամանակին նիւթաւոր հնութիւններէն գրեթէ բան մի մնացած չէ հիմակ. Էլ–Մահտին կրկին շինել տուաւ Էլ–Աքսան, բայց չափականցութիւն չկրնալով տալ, երկայ-նութիւնը պակսելով՝ լայնութիւնը ըն-դարձակեցաւ:

1099 ին Խաչակրաց զօրով պալատի փոխուեցաւ, և Սողոմոնի պալատ կը կոչուէր. այս տեղ կը նստէին և Տաճա-րականք ըսուած զինուորաց կարգը. և 1187 ին Սալահէտտին մաքրել տալով այս տեղը, անոր մէջ հաստատեց այն հո-յակապ ամպիոնը, որու վրայ յետոյ պի-տի խօսինք:

Էլ–Աքսայի մզկիթը արտաքին սրա-հէ մի կը մտնուի եօթը կամարով, որոնք Մզկիթին ներքին եօթը սրահներուն կը համապատասխանեն: Այս ընդար-ձակ շէնքէս, որ 80 մեթր երկայնութիւն ունի, ներս մտնելու ժամանակ միջին սրահին մէջ փոքրիկ տեղ մի կայ վան-դակով շրջապատուած և մէջը ուղղան

կիւնի.քար մի, յատակին մէջ անկած։ Ըստ պատմելոյ Մահմետականաց, այս տեղս Ահարոնի որդւոցը գերեզմանն է, Նադաբայ, Աբիուդի, Եղիազարայ և Իթամարայ(1)։ Թէպէտ և սոյնք խոստացեալ երկիրը չմտած անապատին մէջ մեռան։ Այն քարին արեւելակողմը հոր մի կը տեսնուի, որուն Տերեւի հոր կը կոչեն. ըստ որում մարդուն մէկը այս հորին ճանապարհաւը Արքայութիւն մտեր և յետոյ կրկին նոյն ճանապարհաւ յետ դառնալուն՝ ականջին ետեւը կանանչ տերեւ մի ունեցեր է, և ասկէ մնացեր է հորին անունը Տերեւի հոր կոչել։

Միջին սրահը՝ որ ամէնէն լայն է, սիւներու վրայ հեծած է, և ծայրը աւոր գմբէթ մի կայ միւսիններով զարդարուած և չորս մոյթերու վրայ բարձրացած, որոնք ամէն մէկը երկներկու մարմարեայ սիւներ ունին առ ի զարդ։ Նոր հարաւային ծայրն է Միհրապը և անոր արեւելակողմը Մինպար մի կայ, այսինքն սիրուն ու գեղեցիկ ամպիոն մի որ խիստ մեծ արհեստով քանդուած է

(1) Ղեւտականք Գլ. Ժ։

Հալէպի մէջ Նուրէտտին սուլտանին հրամանաւը, որ 1145 ին Նստաւ աթոռը։

Արեւմտեան կողմը՝ ամպիոնին եւ մզկիթի հարաւային պատին մէջտեղը երկու Միհրապով մատուռիկ մի կայ, ամպիոնին մօտ եղածը՝ Մովսէսի և միւսը Իսայի (Եսայեայ) անուանը նուիրած է. վերջի Միհրապին մէջ ոտքի նշան կայ քարի վրայ, զոր Իսլամք Եսայեայ Քրիստոսի ոտքը անեղն է ըսելով մեծ յարգ կ'ընծայեն։ Համբարձման տեղւոյն վերայ եւս մէկ ոտքի նշան կայ, բայց թէ միւսը ո՞ւր է արդեօք, չենք կարող ըստուգել։

Գմբէթին տակովը և անոր արեւմտակողմը երկու սիւներ կան, որոնք փոքրիկ սիւներ կը կոչուին. և որովհետեւ խիստ կից են իրարու, այնպէս որ հազիւ թէ մարդ մի կարէ անոնց մէջէն անցնիլ. ուստի եթէ կ'ուզէ մէկը փորձել գիտնալ թէ մեղաւո՞ր է արդեօք՝ թէ անմեղ, երկու սիւներին մէջէն փորձ կ'ընէ անցնելու. եթէ անցաւ, որդի արքայութեան է, թէ որ քիչ մի մնաց ըլլալով չկարաց անցնիլ, թող ինքը մտա-

ծէ թէ ո՞ւր պիտի երթայ նա (՜)։ Ըսա-
է անոր որ ընաւ այդ փորձին չմօտենայ։

Ըստ աւանդութեան Մարիամ ա-
մենասուրբ Կոյսը, Աննա մարգարէու-
հին և ուրիշ կուսանքներ այս տեղ կը
բնակէին. և այս տեղ մարգարէացած
պիտի ըլլայ Սիմէօն Ծերունին (1)։

Իսկ ասոր դիմացի արեւելակողմը,
մզկիթին հարաւային պատին դէմ կը
տեսնուի Օմարայ աղօթած տեղը, որոյ նը-
շան Մինհրապ մի կայ և անոր երկու կող-
մը երկու հատ խոյաբու պլլուած ոլորուն
սիւներ վերնախոյակներին դէպ ՚ի վար։

Դէպ ՚ի դուրս՝ ուսկէ որ մտանք,
դառնալու ժամանակ աջ դին Մինպար
մի կայ գեղեցիկ սիւնակներով զարդա-
րուն։ Այս տեղուոյն համար կ'ըսեն Իս-
լամք, թէ Զաքարիա մարգարէ և իւր
որդին Յովհաննէս Մկրտիչ աղօթելու-
եկան։

Այս մզկիթէն դուրս ելած ժամա-
նակ ազատ են ուխտաւորք իրենց ոտից
ամանները հագնելու, և ուրիշ քանի
մի նշանաւոր տեղեր ալ աչքէ անցընե-
լու։ Արտաքին մեծ հրապարակին հա-

(1) Ղուկ. Բ. 34. 35.

բաւական արեւելեան անկիւնը Սուրբ կերպայ յարկ մի կայ, որ 32 ոտք տարա-ծածքերէ կ'իջնուի. այս տեղ կը տես-նուի Յիսուսի Քրիստոսի Աղբան բանձը։ Նոյնպէս հասարակ քարի մէջ փորուած փոս մի է, որուն վերի կողմը քանդա-կածոյ է, և հոռոմաքանդակեան դրոշմով զե-տեղուած է հովանոցի մի ներքեւ, որ չորս մարմարեայ սիւնակներու վրայ բարձրացած է։ Աւանդութեամբ կը կարծուի որ Սիմէօն Ծերունին այս տեղ բնակեցաւ և ամենասրբուհի Կոյսն ալ իւր անդրանիկ Որդին Տէրոջը ընծայե-լէն յետոյ քանի մի օր Ծերունիին քով մնաց։ Նորաբացիք Սուլեյման—Նաջիա կը կոչեն այս տեղւոյն։

Յիշեալ տեղէն 50 մեդրի չափ դէպ 'ի արեւմուտք, պարսպի հարաւային պատին գլխոյն ծակ մի կայ բացուած, ուսկէ կ'երեւի մեծ ստորերկրեայ տեղ մի կամարակապ և 96 մոյթերու վրայ յենած. ներս մտնելը դժուար է, որովհետեւ աստիճան չունի։ Այս շէնքը հաւանա-բար Սողոմոնի ժամանակէն է, և ուրիշ Թագաւորաց օրովը նորոգութիւններ առած պիտի ըլլի։ Այս տեղ մինչեւ

հարկ չկայ, մանաւանդ որ մէկերկու-
տարիէ է որ ծաղկին ալ գացած են, բայց ու-
րախ զօրքերը ցորեկը հոս պահուըստե-
լով` գիշերը գիւղերն կրնային փախչիլ։

Հռոմկլայի արեւելեան պատին
տակիմէը դէպ 'ի հիւսիս երթալով Սիրանթ
բաց կամուրջը կը հանդիպիք, ուր տեղ
Միջնայ մի եւ գետակը պատուած սիւն
մի կայ, որուն ծայրը պատերին մէջէն դուրս
ելած է, այնպէս որ դրսէն տեսնողը
թշնամւոյթի բերան կը կարծէ դէպ 'ի
Համբարձման լեռը ուղղած։ Նոյն Սի-
րանթ բաց կամուրջը յիշեալ սիւներն
ծայրէն մինչեւ Համբարձման լեռը ձգ-
գուած է անձեւի բերնին բարակու-
թեամբը, ուստի եւ անտեսանելի է բաց
հեռուստոյ Մահմետականաց. եւ այս
կամուրջին վրայէն պիտի անցնին հա-
ւատացեալց հոգիները, որ եթէ ար-
դար են, իրենց հրեշտակին պահպա-
նութեամբը երկինք չուանին. իսկ մեղա-
ւորը` իրենց հաւատապարակչութեանը
կորանցընելով` Յովսափատու ձորին մէջ
կը իյնէ դժոխքին յատակը պիտի գա-
հավիժին։ Նոյնպէս կը մերժէ Օմարայ
մզկիթին տապանոր քառասպարը Սկիւ-

թեւոյ կամրջին խարիսխները։

Նոյն ուղղութեամբ յառաջ երթալով ապամանթզենիի անտառ մը կը հասնինք, ուր տեղ կ՚երեւի աշտարակին նըմանն բարձրացած Ոսկեդռնեան դուռը, զոր Երկրորդ այցելութեան ժամանակ Գեթսեմանիի ձորին կողմէն տեսանք։ Այդին դուռ է՝ արեւելեան կողմէն պատով հիւսուած. ներսի կողմէն երկու մեծկակ միակտուր քարերայ սիւներով երկու մասի բաժնուած է, մին կը կոչուի Պապ-էլ-Թաուպէ (դուռն ապաշխարութեան), միւսը Պապ-էլ-Րահմէ (դուռն ողորմութեան)։ Երկու մասն ալ մեծթերպավ զարդարուած եւ ծայրերնին հաստատ քանդակագործութեամբ յօրինուած է. երկու գմբէթ ունին, որոնց պատուհաններէն լոյս կ՚առնու ներքին կամարը։ Դրան վրայ եղերը համար տապանաքարներ կան, ուսկէ խիստ գեղեցիկ տեսարան կ՚ընծայէ մարդոյս աչաց Յովսափատայ ձորը եւ բաժանեալ Հարամ-էլ-Շէրիֆի տարածութիւնը։

Քիչ մը անդին հեռուն դէպ 'ի հիւսիս ալ ձեռքի վրայ պզտիկ Մէչիթ մը կը դառնանք. երկաթի վանդակապատներէ

ներս նայած ժամանակ Բիւրղէ մի կ'ե-
րեւի, որոյ հանճար լուսաւոր առաջ-
նորդը Սողոմոնի աթոռը կ'անուանէ. իսկ
արդեամբ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ դա-
տարկ շիրիմ մի (Բիւրղէ) իշու կանգնած
ձեւով քանդակուած, որ բոլոր Սէջե-
տը բռնած ու վրան կանանչ չուխայով
ծածկած է. Ասկէ քանի մի քայլ անդին
է Հարամ–էլ–Շերիֆի հիւսիսային
դուռը, ուսկէ դուրս կ'ելնեն ուխտա-
ւորք իրենց այցելութիւնը և հեռա-
քերլութիւնը լեցընելով:

Սուրբ քաղաքիս մէջ եղած ուխտա-
տեղեաց այցելութիւնը այս տեղ կը լը-
րանայ. Թէպէտեւ կան քանի մի ուրիշ
նշանաւոր պատմական տեղեր, սակայն
անոնք այցելութեան հասարակ ցուցակէն
դուրս կը համարին, բայց 'ի մէկ քանիք
էն, որոնց կարգին է Փոլոնեցի Աննէ-
տանը: Սողոմոնեան աւազանները վերջի-
շեալ հիւսիսային դռնէն դուրս ելնե-
լով և Պետրոսի ... դէպ
'ի ձախ դին դառնալով և Յովսափաթայ
և Անդրեայի եկեղեցւոյ առջեւէն անցնե-
լով՝ այլ ձիթենեաց լերան եկած առջի վա-
ղուցը մեկնը. հոն այլ թեւի լերան վերջին

տունն է Սիմոն Փարիսեցւոյն տանը տեղը, ուր Մարիամ Մագդաղենացի Յիսուսի ոտքերը արտասուքներովը թրջելով անոյշ իւղով օծեց (1)։ Այս տեղ Նայինք փոքրիկ եկեղեցի մի ունէին, որ հիմակ Արաբացւոց ձեռքն է, անարգ վիճակի մէջ։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի լեառն Սրբոյ Համբարձման (Ձիթենեաց)։

Պատմական

Սրբազան լեռներէն մին է Ձիթենեաց լեռը, ուսկէ Յիսուս Քրիստոս համբարձաւ յերկինս իւր աշակերտաց քարոզչութեան իշխանութիւն շնորհելէն յետոյ, և յետ այնորիկ Համբարձման լեռ կոչուեցաւ քրիստոնեայ ազգաց քով, և Արաբացիք Ճէպէլ-էլ-Թուր կ'անուանեն, որ Երուսաղէմի արեւելեան կողմը կ'իյնայ, և Միջերկրականին ծովէն 800 մետրաչափ բարձր է։

Տիտոս երբ Երուսաղէմը պաշարելու եկաւ, իւր տասներորդ խումբը

(1) Ղուկ. է. 37—38։

Ձիթենեաց լերան վրայ բանակեցուց (1)։

Նոյնպէս Խաչակրաց ժամանակ Տանկրետ Ձիթենեաց լեռը ելաւ, ուսկէ լաւ կը նկատուի քաղաքին վրայ. այն տեղ հինգ արաբացի Մահմետականք վրան յարձակեցան, որոնցմէ երեքն սպաննեց և երկուսը փախան։

Քրիստոսի տնանտեղւոյն վրայ Հեղինէ Թագուհիի ժամանակէն շինուած եկեղեցի կար. այս եկեղեցին Պարսից Խոսրով Թագաւորի յարձակման ժամանակ (616) կործանեցաւ. Երուսաղէմի Զաքարիա պատրիարքն և Քրիստոսի սուրբ Խաչը գերի տարուեցան։ Երբ Զաքարիայի փոխարէն իբր տեղապահ Մոդեստոս նստաւ, նա կրկին նորոգեց եկեղեցին սուրբ Համբարձման, ըստ որում քիչ ժամանակ յետոյ եկող ուխտաւոր պատմագիրք կը ստորագրեն յիշեալ եկեղեցին, որ բոլորաձեւ էր և վերը կտուրը բաց։ Եւ 8դ դարուն մէջ ականատես պատմագիր մի կ'ըսէ թէ Քրիստոսի տնանտեղւոյն վրայ կախուած լուսաւոր ջահը քամիին դէմ պատսպարուելու և անձրեւէն ազատ ըլլալու

(1) Յովսեփ. Ե. 8։

համար ապակիէ վանդակով մի ծածկած էր վերի կողմը։

Խաչակրաց ժամանակ եկեղեցին պայծառ մնացած էր. բայց երբ նոցա ձեռքէն իշխանութիւնը դարձաւ Մ՛ահմետականաց անցաւ, կրկին խանգարեցաւ Ս. Համբարձման եկեղեցին, ուրուն աւերակ հիմերը դեռ կ՚երեւին բակին մէջ։

Յայտնի չէ ո՛ր դարուն մէջ շինուած է արդի մատուռը, որ աւելի Մ՛ահմետական ձեւով է քան թէ Քրիստոնէական, ութանկիւնի է 6 էն մինչեւ 7 մետր տրամագիծով և վրան գմբէթով։ Այն եկեղեցիս Հայոց սեփականուած է, բայց որ դարէն 'ի վեր՝ յայտնի չէ։ Նախ անգամ՝ մի հրամանագիր տուած են Հայք, որ կ՚արդիլէ գիւղացւոց Հայոց վանքին մօտ տուն շինելու. ժամանակէ յետոյ դարձաւ Հայ միաբանութիւնն անկէ դուրս ընելով՝ Մէլլահք վանքը կ՚աւրեն, և իրենք պարսպին կից մզկիթ մի կը շինեն հանդերձ մինարէով։ Երկրորդ անգամ Սուլդան Սէլիմ Ա.ի օրով հրամանագիր ստացած են Հայք Հիճրէթի ١٠٢٢ ին, ու-

րով արտօնութիւն կը տրուի Հայոց պատրիարքը շինելու և բանկը քարայատակելու . այս հրովարտակին մէջ կը յիշուի որ ուրիշ քրիստոնեայ ազգերն ալ իրաւունք ունին ուխտ և պաշտօն կատարելու ։ Երրորդ անգամ հրամանագիր կ'ընդունին Հայք , որով կ'արգիլեն Պէյլահից պարապին մէջ մեռեալ թաղելու ։

1834ին շարժէ մի վնասուելով գըմբէթը , Լատին միաբանք ուզեցին որ նորոգեն . Հայք և Յոյնք իմանալով ոտք ելան , և ժամանակի դատաւորը և ոչ մէկ ազգի իլամ տալ ուզեց մինչև որ հաստատուի որ ազգին վերաբերութիւնը ։ Հայոց միաբանութիւնը , որ գիտէր իւր քով հին հրովարտակ գտնուիլը , յիշեալ երեք հրովարտակները տարաւ դատաւորին և ժողովին ներկայացուց , որ վաւերական գտնելով զանոնք՝ իլամը տուաւ , և այն իլամին վրայ Բ . Մահմուտ հրաման ելաւ (1836) նորոգութեան և սենեակներու շինութեան . ուստի անմիջապէս սկսան Հայք բանկին աջակողմը , կէս մի բանկին մէջ և կէս մի բանկէն դուրս սեփական երկրին վրայ սե-

նախանձներ չունել կղզիայարկ, և ուրիշ կրօնաւորութիւններ լսել, և մինչև առ նաստեղուոյն զմբէթայարկին դրանը կից արտաքին դռնէն սկսելով վրան գեղեցիկ տախտակաչէն ծածք յօրինել, առանց դպչելու այլոց ազգաց իրաւանցը։ Սատինք չկարենալով տանիլ Հայոց ձեռօք եղած շինութեանը, քանի մի անգամ Պօլիս մարդ խրկեցին, և Գաղղիոյ դեսպանին ձեռօք Խաթրիր աւրն Տէրութեան, գանգատելով որպէս թէ Հայք կ'արգիլեն իւրեանց որ հոգևոր պաշտօններն կատարեն. ասոր վրայ հրաման կ'ելնէ որ քննութիւն ըլլայ Երուսաղէմի դատական ժողովոյն մէջ։ Սատինք այս նպատակիս համար առնուած թուղթը, որ Շալթրզատէ Արիֆի անուն երեւելի անձի մի հետ խրկուած էր քննելու պաշտօնով, ալեցին իրենք իբր թէ յիշեալ քննութիւնը ընելու համար տրուած ըլլայ այն հրամանագիրը, և յիշեալ Շալթրզատէն եւս դեսպանին կողմէն շահուած ըլլալով, ուզածին պէս քննութեան կ'առնու Ս. Համբարձման տեղը և Հայոց նոր շինութիւնները և եւս դառնալուն՝ դեսպ.

պատմաց կրկին թախանձանքներով Բ. Պօղոս վերջապէս յանկարծայս զիջաւ իւր առջի հրովարտակը ետ առնուլ և բակին մէջ շինուած սենեակները աւրելու հրաման տալ: Այն հրամանին վրայ հայ միաբանութեան սիրտը կարեվէր խոցուելով չուզեց պաշտպանել և չթողուլ որ բակէն դուրս իւր սեփական գետնոյն վրայ շինած սենեակներն ալ փլցնեն. վասն որոյ Լատին և Յոյն միաբանութիւննին հասարակ ժողովրդոց հետ մէկտեղ Ձիթենեաց լեռը դրացած լինելով վերջին հրամանագիրը կարդացած օրը՝ հանդերձ պատրաստութեամբք, սկսան մէկէն 'ի մէկ սենեակներուն ու բոլոր ինչ որ Հայոց միաբանութիւնը շինել տըւած էր թէ՛ մէջն և թէ դուրսը, վար առնել, որպէս թէ կանգնածներն կուտուն եղած ըլլար. թէպէտեւ արդէն Լատին և Յոյն միաբանութիւնք դատ վարած ժամանակնին ըսած էին թէ Հայոց բարձման տեղւոյն վրայ եղած շէնքը ոչ մի քրիստոնէի է, այլ Մահմետականաց մզկիթ է և մենք այնպէս գիտեմք (1):

(1) Տես յընդարձակ պատմութեան մերում Ս. Երուսաղէմի, ձեռագիր: Գիրք Ը. Գլ. Դ.

Այն վիճակիս մէջ կը մնայ դեռ մինչև ցայսօր յիշեալ Արքայական Տեղը, որ ախոռ և մակաղատեղի է գիւղացւոց, և տարին անգամ մի մեծ պահոց մէջ, երկրորդ անգամ Քրիստոսի համբարձման օրը՝ պատարագ կը մատուցանեն՝ Հայք և ուրիշ ազգերը: Հայոցմէ միաբանք առջի երեկոյին երթալով՝ գիշերը գըմբէթին տակը՝ Ոտնատեղւոյն վըրայ, իսկ առաւօտուն բակին վըրայ աջակողմը արեւելեան անկիւնին մէջ պատարագ կը մատուցանեն: Յոյնք հարաւային անկիւնակողմը, և Ղպտիք և Ասորիք երկու անկեան մէջտեղը վրաններն կը լարեն և պաշտօն կը մատուցանեն:

Այս տեղեկութիւններէն յետոյ բականք մեր այցելութիւնն ընել:

Երեք ճանապարհ կայ վեր ելնելու, առաջինն է Փրկչադռնէն դուրս ելնելով և Աբիսողոմայ արձանին քով հասած ժամանակ Հրէից գերեզմանատան մէջ ղըռուն նեղ շաւիղ մի կ'երեւի, որ Համբարձման լերան ձախակողմը կը հանէ: Միւս երկու ճանապարհներն են, Սուրբ Աստուածածնի դռնէն եւ

նելով և նորա Գերեզմանի եկեղեցւոյն առջեւէն անցնելէն յետոյ արեւելեան ճանապարհը բռնելով որ Լատինաց պարտիզին քովէն է. մէկ ճանապարհըն է աւելի խորդուբորդ, այն ուր տեղ Քրիստոս յաւանակաւ եկած ժամանակ քաղաքը տեսնելով լացաւ անոր վրայ (1)։ Միւսն է հիւսիսային կողին վըրայ որ աւելի հանգիստն է, և սովորական ճանապարհ։

Գեթսեմանիի պարտէզին քովէն 20 մեդր քալելով, աջ ձեռքի վրայ ճերմակ ժայռ մի կը տեսնուի, ուր ըստ հին աւանդութեան մի՛ Թովմաս առաքեալ ամենօրհնեալ Տիրամօր գերեզմանը տանելու գնացած ժամանակ տեսաւ Նորա երկինքն վերափոխումը, և այս քարին վրայ վար ձգեց Տիրամայր իւր գօտին։ Ամէն ազգացմէ աւելի Յոյնք կը յարգեն այն վէմը, թերեւս յիշեալ գօտին իրենց քով ըլլալուն համար (2)։

(1) Ղուկ. ԺԹ. 41։

(2) Թովմաս առաքեալ գօտին առնելէն յետոյ, Հայաստան և Հնդկաստան ճանապարհորդեց, անշուշտ հետը տանելով գօտին իբր Արքայական աւանդ. մի՞ զուարթ զարմանալի է որ Լատինք Դոսկանայի մէջ Բրադոյ ըսուած տեղն է կ'ըսեն. իսկ Յոյնք իրենց

Երկան գլուխը հասնելու մօտ ճա-
նապարհը երկուսի կը բաժնուի, աջ
կողմինը Համբարձման տեղը կը տանի,
որ Զէյթուն կոչուած փոքրիկ գիւղի մի
արեւմտակողմն է. ձախ դիու ճանա-
պարհը Գալիլէա կը տանի, որ Ձիթե-
նեաց լերան մէկ մասն է ։ Այս երկու
և ուրիշ մէկ երրորդ ճանապարհի մի
մէջտեղը եռանկիւնաձեւ տեղ մի կայ,
ուր երեք ձիթենի կը տեսնուին գրե-
թէ իրարու կցուած. այս տեղս յառա-
ջագոյն եկեղեցի էր, և այն վայրն էր՝
ուր Գաբրիէլ հրեշտակապետ Աստուա-
ծամօր մահուան լուրը տուաւ իրեն զոր
Հաննէ Արաբիոնին փեղը կ'անուանէ (1) ։
Այս տեղս անշուշտ 70 վանուց մին է
Հայոց ձեռքը, և ինչպէս կը յիշատակուի
Անօրէից գրքին մէջ, վեց վանք ունէին
Հայք Գալիլիայ լերան կողմը, որք են
Գալունեաց վանք, Ընձեւացեաց վանք,
Գաղակունեաց վանք, սուրբ Բառա-
նից վանք, Բաջբերունեաց վանք և Սա-

քով ըլլալ կը պնդեն, ինչպէս որ անցեալ տարի քա-
ղըր Կ. Պոլսոյ Թաղերուն մէջ պտըտցուցին քոլերայի
ախտը փարատելու համար ։

(1) Պատմ. Ս. Երուսաղէմի, եր. 274.

հառունեաց վանք ։

Ճանապարհը դէպ ՚ի ձախ կողմը յառաջ տանելով 200 մեդր, Գալիլեա կը հասնինք, որուն Սահմետականք Բարձ-ձէլ-Սայտ կ՚ըսեն ։ Աւանդութիւն կայ թէ Կանա-Գալիլեացիք այս տեղ իջեւան կամ հիւրանոց մի ունէին ազգային, ուր կը բնակէին Զատկի տօնին Երուսաղէմ եկած ժամանակնին, և ասկէ մնացած է տեղւոյն անունը Գալիլեա կոչել. անոր համար Տէրն մեր Յիսուս Քրիստոս համբարձած ժամանակ հրեշտակն ըսաց. «Արք Գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս (1)» ։ Այս տեղս ալ վանք մի և եկեղեցի կար, և անշուշտ վերջիշեալ եկեղեցիներէն մէկն էր ։ Հին աւերակներու մնացածներ դեռ կան, և շատ տարի չէ որ Յոյնք առին այս տեղս ։

Յետ դառնալով ասկէ դէպ ՚ի հարաւ 400 մեդրի չափ, Ձէյթուն գիւղին մէջ Մինարէի մի քով կը հասնինք, որ կից է այն բակին յորում կ՚երեւի գմբէթին տակ Քրիստոսի համբարձման զոր թողուցած Ամենափրկչոյն Նշանը ժայռի մի վե-

(1) Գործք. Ա. 11 ։

բայ՝ դրօշմուած ,՚ և ինչպէս կը կարծուի՝ ձախ ոտքին նշանն է․ և ժայռին մէկ մասը բաց թողլով բարեպաշտից համբուրելու համար, միւս բոլորտիքը քարայատակ ըրած են որչափ տեղ որ յարկի տակ առնուած է (1) ։

Բակէն դուրս ելնելնուս հարաւային կողմը Տէրվիշի բնակարան է․ տեղւոյն Շէխին քանի մի փող տալով կը թողուվեր Մինարէն ելնելու, ուր մարդոյս աչքին գեղեցիկ տեսարան մի կընծայանայ. արեւմտեան կողմէն Գեթսեմանի ձորը, բոլոր Երուսաղէմը և 'ի մասնաւորի Օմարայ մզկիթը, Սուրբ Յակոբայ վանուց գմբէթը, և քաղաքին միւս եւսի կողմը Սուսաց վանքը, և այլն․ արեւելեան կողմէն կը տեսնուի Յուդայի երկրին անապատը մինչեւ Յորդանան ու Մեռեալ ծովը և լեռներու շղթայ մի՝ որու հարաւային ծայրինն է Մովաբայ լեռները ։

(1) Միւս ոտնատեղւոյն համար Մահմետականք Օմարայ մզկիթին (Էլ—Աքսա) մէջ է կ'ըսեն․ բայց այդ հաւանական չէ, ըստ որում երկուքն ալ զատ զատ ժայռեր են, և եթէ քովէ քով դրուելու ըլլային, երկու քայլին մէջ տեղը բնականէն աւելի տարածութիւն մի կը գտնենք ։

Մ՚ինարէէն վար իջնելով և դէպ 'ի արեւմտեան հարաւակողմն երթալով չէնքերուն անկիւնը դուռ մի կը տեսնուի երեսը դէպ 'ի արեւմուտք, ուսկէ կը մտնուի Սրբուհւոյն Պեղագեայ այրը։ Այս սրբուհին Անտիոքացի էր Մարգարիտ անուն և գուսանութիւն կ՚ընէր. յետոյ Եդեսիոյ Նոննոս եպիսկոպոսի ձեռօք դարձի գալով 5դ դարուն, Պեղեքեայ անունը կրելով եկաւ այս այրին մէջ ապաշխարելու, ուր որ մեռաւ և թաղուեցաւ։ Այս տեղ ալ հին ժամանակ վանք մի կար, և դեռ կը տեսնուի սատորին լուսա մի կամ գերեզման մի ուր 16 ոտք աստիճանով կ՚իջնուի։ Մահմետականք պատուով կը բռնեն այս տեղս և միշտ գոց կը պահեն։

75 մեդր դէպ 'ի հարաւ և քիչ մի Մինարէին դէպ 'ի արեւմտակողմը՝ այն տեղն է ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս Տէրունական աղօթքը ուսոյց էր աշակերտաց։ Քանի մի տարի է որ այս տեղս Դուր տը Օվերնի իշխանուհին գնոյ առնելով պարիսպով պատեց։

Յիշեալ տեղւոյն հիւսիսային արեւմտեան դին իբր 30 մեդր հեռու է Ն...

տանելոց Հանգանակին յօրինած տեղը, ուր հին ժամանակ եկեղեցի կար, և հոն 12 խորշերու մէջ Երկոտասան Առաքելոց արձանները գտնուած են : Ահմետաւ-կանք այս տեղի քարերը Հրէից ծախած են տապանաքար ընելու համար :

Այն տեղւոյս հիւսիսակողմը և անոր կից՝ դաշտակի մի մէջ գետնին երեսը Գերեզման մի կայ ժայռին մէջ փորւած, և կայ մէջը 9 խորշ մոուրի նման : Այս տեղս քանի մի տարի է որ Սուաք գնած են, եւ անցեալ տարի հիմնարկութեան համար փորել տուած ժամանակնին՝ կարգաւ գերեզմաններ յայտնուեցան, և ատոնց վրայ միւսիոն քարերով յօրինուած գեղեցիկ նկարներէն ՚ի զատ որք են երկու ձուկ, աքաղաղ և սագ, նաեւ հայերէն հետեւեալ տապանագիրը գտնուեցաւ Սուսաց Նշիմանորիոսին խնամքովը . « ԱՅՍ Է ԳԻՐ ԽՐԱՆՆԵԼՈՅՆ ՇՈՒՇԱՆԿԱ ՄԱՒՐՆ ԱՐՏԱԻԱՆԱՑ . ՀՈԳԻ ՃՂ[1] » : Դարձեալ երկրորդ տապանագիր մի գտնուեցաւ, որուն լուծումը դժուար էր :

Հանգանակի չինուած տեղւոյն դէպ

(1) Տե՛ս ՚ի ՍԻՕՆ, Զ տարի. Յունիս :

'ի հարաւային արեւելակողմը 400 մետրաչափ հեռու, Ձիթենեաց լերան ստորը, Գեթսեմանիայի ճանապարհին վրայ, այն տեղ ուր ձորի մի բերանը գոցելու համար կարծես թէ յատուկ շինուած է, Գեթսեմանէ ըսուած տեղն է, ուր երբ մօտեցաւ Յիսուս, իւր աշակերտներէն երկուսը դիմացը եղած գիւղ մի խրկեց որ հոն կապուած էշն ու յաւանակը իրեն բերեն, որոնց վրայ հեծնալով հանդէսով Երուսաղէմ մտաւ (1)։

Անկէ գնալով դէպ 'ի արեւելք Ղազարոսի գերեզմանը կը հանէ, որ հիւսիսային կողմը բացուած դռնէ մի ներս մտնելով և 27 ոտք աստիճաններով վար կ'իջնուի. բնական դուռը այս չէ, վասն զի Մահմետականք առջի՛ դրան վրայ մզկիթ շինելով արգիլեցին Քրիստոնէից ներս մտնելը։ Ուխտաւորք հոս եկած ժամանակ պէտք է որ հետերնին մոմ ունենան, վասն զի խիստ մութ ու ստորերկրեայ է գերեզմանը, և կարգաւ մտնեն ու ելնեն, որ շնչառութեան կօգնէ չնեղուելին. Ղազարոսի գերեզմանին վերայ 7ր դարուն եկեղեցի կար, և Մար-

(1) Ղուկ. ԺԹ. 29.

բացիք տիրած ժամանակնէին կործանած պիտի լինին, ինչ ժամանակ Հայոց 70 եկեղեցեաց եւս մէկ մասին տիրեցին եւ մէկ մասը աւերեցին ։

Նոյն տեղէն 80 մեդր դէպ 'ի արեւելք եկեղեցւոյ մի աւերակ մասեր եւ միւսխինով չինուած յատակի մի կտոր դեռ կը տեսնուի ։ 40 մեդր Ղազարու գերեզմանէն հեռու դէպ 'ի Հարաւ Մարիամ Մագդաղենացւոյ եւ Մարթայի տանը տեղն է ։ Նոյն տեղս մօտ տարիներս Մատամ—Նիգոլայի անուամբ հարուստ տիկին մի գնեց ։

Իսկ 180 մեդր դարձեալ Ղազարու գերեզմանէն հեռու դէպ 'ի յարեւմուտք Սիմոն բորոտի տանը տեղն է, ուր Մարիամ Մագդաղենացին եկաւ եւ Փրկչին մերոյ գլուխը անոյշ իւղով օծեց։ Նոյն տեղս ալ յառաջ եկեղեցի էր, բայց հիմակ եւ ոչ աւերակները կ'երեւին ։ Գիւղացիք արա ըրած են ու փարուցան կ'ընեն ։

Ղազարու գերեզմանէն դէպ 'ի արեւելք 10 րոպէի չափ քալելով պարոյ ծայրը մի կայ գետնին երեսը. այս տեղ հանդիպեցաւ Մարթա Յիսուսին՝

իւր եղբայրը մեռնելէն յետոյ, ու ըսաց իրեն. «Տէր եթէ աստ եղած ըլլայիր. իմ եղբայրս չէր մեռներ (1)։

Յետ դառնալով Ղազարու գերեզմանէն, քանի մի քայլ դէպ 'ի յարեւմուտք գնալով, ձախ դին առջի ճանապարհը կ'ելնենք և 10 րոպէին Երուսաղէմ դիմացնիս կ'երեւի. Հոս ճանապարհը դէպ 'ի աջ դին կը խոտորի, ուրկէ 12 րոպէ գնալով՝ ձախ կողմերնիս պզտի արտի մի ցանկը կայ, յորում Յիսուս Քրիստոս անիծեց թզենին։ Ըսած տեղիս ժայռի մէջ փորուած խաւաչ մի կ'երեւի. և այն ժամանակուան պէս հիմակ ալ ուրիշ թզենի մի կայ։

Այս տեղէն 6 րոպէ եւս քալելով դէպ 'ի աջ կողմը, որ է հիւսիս, ձախ դիննիս թողլով Գայթակղութեան լեռը և Սելովամայ գիւղը. ու վար Գեթսեմանի ձորին եզերքը ճանապարհէն վրայ իջնելով, ձախ կողմինը դէպ 'ի Փրկչադուռ կ'առաջնորդէ, և աջ կողմինը դէպ 'ի Ս. Աստուածածնի Գերեզմանը և անկէ Քաղաքին Ս. Աստուածածնայ ըսած դուռը կը տանի։ Այս ճա-

(1) Յովհ. ԺԱ. 21։

ճանապարհները արդէն բարեպաշտ ուխ-տաւորք սորված կը լինին, և հարկ չէ մեզ կրկին առաջնորդել իրենց մինչեւ ՚ի Սուրբ Յակոբ ։

ՈՒԹԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի ԲԵԹՂԷՀԷՄ և ՚ի շրջակայս նորին ։

Պատմական

Բեթղէհէմը, որ Ս. Գրոց մէջ երկիր Յուդայ և տուն Եփրաթայ կը կոչուի, Միջերկրական ծովէն 846 մեդր բարձր է, լերան մի վրայ շինուած և չորս կողմը ձորերով պատած ։ Հիմնարկութեան սկիզբը երբ ըլլալը յայտնի չէ, միայն գիտեմք որ Քրիստոսէ 1740 տարի յա-ռաջ կար ։ Հոս ծնած է Եսեբոն, որ եօ-թը տարի դատաւորութեան պաշտօն վարեց Իսրայէլի ժողովրդոց, և աստ մեռնելով թաղուեցաւ (1) ։ Նոյնպէս և Ղեւտացի խեղճ կինը, որուն մարմինը չարաչար մեռնելէն յետոյ 12 կտոր ըլ-լալով Իսրայէլի 12 ցեղին խրկուեցաւ (2) ։

(1) Դատաւորք. ԺԲ. 8 ։

(2) Անդ. ԺԹ ։

Եղիմելէք և Նոյեմին, որու որդին Մա-
ալոն՝ Մովաբացի Հռութն առաւ, և
յետոյ այրի մնալով կինը, իւր կեսրոջը
հետ Բեթլեհեմ եկաւ և Բոոս զինքը ի-
րեն կին առաւ, որ նոյնպէս Բեթլեհեմ-
ցի էր, և անկէ զաւակ մի ունեցաւ Ով-
բէդ անուն, որ եղաւ հայր Յեսսէի,
ուսկէ ծնաւ Դաւիթ (1) (1087 տարի
Ք. Ա.)։

Բեթլեհեմի մէջ Սամուէլ մարգարէ Աստուծոյ հրամանաւն օծեց զԴաւիթ թագաւոր Իսրայելի, երբ նա տակաւին մանուկ էր։ Եւ ուրիշ շատ երեւելի ու նշանաւոր անձինք ծնած են այս քաղքիս մէջ, ինչպէս Յովաբ, Ասաէլ, և այլն։ Ռոբովամ Սողոմոնի որդին ընդարձակեց Բեթլեհեմը. և Բաբելոնի գերութենէն յետոյ 123 անձինք միայն Բեթլեհեմցիներէն յետ դարձան բնակելու։

Մատթան և իւր որդին Յակոբ՝ Յովսէփ Աստուածահօր հայրը, Բեթլեհեմի մէջ ծնան (2)։ Նմանապէս և ամենօրհնեալ Կուսին մայրը Աննան եւս

(1) Մատթ. ա. Զ.
(2) Մատթ. ա. ԺԵ։

կը կարծուի որ առտ ծնած ըլլայ։ Վերջապէս Բեթլէհէմի մէջ ծնաւ յամենասուրբ Կուսէն աշխարհիս Ազատարարը, Տէրն մեր Յիսուս Քրիստոս, անարգ այրի մի մէջ, որ իբրեւ ախոռ եւ օտար գիւղացիներու իբր բնակարան կը ծառայէր անշուշտ, որոնք իրենց անասուններն աղ՝նէրս քաշելով իրենց ընակալից կ՚ընէին. վասն որոյ մանուկն Յիսուս ծնանելէն յետոյ՝ խանձարրով փաթթուելով մսուրի մէջ դրուեցաւ։ Աստ թլփատեցաւ դարձեալ ութ օրէն յետոյ ըստ սովորութեան Հրէից, ինչպէս կը հաւաստայ սուրբն Եպիփան։ Այն մսուրին մէջ գտան երեք մոգերը, Մելքոն Գասպար եւ Պաղտասար, երբ յարեւելքէն եկան աստղի մի առաջնորդութեամբ երկրպագութիւն ընելու նորածին Թագաւորին։

Աբգարու կինը Հեղինէ բարեպաշտ թագուհին սոյն տեղը մաքրել տուած եւ պատով մի շրջապատելով երկրպագութեան տեղ որոշեց. քիչ տարիներէ յետոյ ուրիշ քրիստոնեայք աղօթարան մի շինեցին վրան, զոր 135ին Ադրիանոս կայսրն եկաւ քակեց եւ տեղը անտառ

ռով մի շրջապատելով նուիրեց Ադոնիս չաստուածոյն և մուրքին վրայ Ափրոդիտեայ արձանը անկեց երկրպագութեան համար, ինչպէս կը վկայէ Ս. Հերոնիմոս առ Սրբուհին Պաւլինա գրած նամակին մէջ։

327 Թուին՝ Մեծին Կոստանդիանոսի մայրը Հեղինէն կրկին մաքրել տալով Սրբազան տեղը, շինութեան ձեռք զարկաւ, և յետոյ իւր որդին, կամ ինչպէս ազգային աւանդութիւն մի կը հաստատէ, Տրդատ Թագաւորը լրացուց չէնքը՝ փառաւոր և հոյակապ Տաճար մի կանգնելով։ Օմար խալիֆայն երբ Երուսաղէմի տիրեց, Բեթղեհէմ եկաւ և Ծննդեան եկեղեցին մըտնելով աղօթքի կեցաւ այրին մէջ. բայց նոյն օրը հրամանագիր հանեց, որով կ՚արգիլէ Իսլամաց որ երեք հոգիէն աւելի միատեղ չգան աստ աղօթելու։

1029 ին՝ Հաքէմ իւր կողմէն մարդիկներ ղրկեց որ Ծննդեան եկեղեցին կործանեն։ Երբ ասոնք հասան այրին մօտ, ճառագայթաւոր լոյս մի երեւալով իրենց, գետինը զարնուեցան ու հոգինին փչեցին. և այս հրաշքովը եկե-

վերջին ազատ մնաց։

1187ին Սալահէտտին առերեց Բեթ-ղէհէմն ալ, և հինգ տարի յետոյ Սա-լեապուրի եպիսկոպոսը խիստ դժուա-րաւ հրաման ընդունեց յիշեալ սուլ-տանէն որ Բեթղէհէմի վանքին մէջ եր-կու Լատին քահանայ միայն մնան քա-նի մը սարկաւագներով իրենց աստուա-ծային պաշտօնը կատարելու, ինչպէս Հայք շատ դարուց 'ի վեր կը կատա-րէին. բայց Լատինք շատ տարի չքշեց կրկին վռնտուեցան Բեթղէհէմէն. 1227ին Տէր Աբրահամ և Տէր Առաքել ա-նուամբ հայ եկեղեցականք իբրև տէր և իշխող Տաճարին՝ Ներքին դուռը շի-նել կուտան տախտակեայ պատուական քանդակագործութիւն մի զարդարուած, հետեւեալ յիշատակարանով, որ մինչև ցայսօր անեղծ կը մնայ, հայերէն և ար-աբերէն լեզուաւ. «ԹՎ. ՈՀԶ, ԿԱԶՄԵ-ՑԱՒ ԴՈՒՌՍ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ ՁԵ-ՌԱՄԲ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԵՒ ՏԷՐ ԱՌԱ-ՔԵԼՈՅ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ ՀԵԹ-ՄՈՅ ՈՐԴՒՈՅ ԿՈՍՏԱՆԴԻՆԻ. ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏ-ՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ»։ Իսկ ա-րաբացի յիշատակարանին Նորին Թարգմա-

նութիւնն է այս. «Կատարեցաւ դուռ-
նըս մկրտութեան Աստուծոյ յաւուրս
փառաւոր արքային մերոյ ի թուին ՌՂԷ»։

1621_1622 թուին Գրիգոր Գարան-
Տէր նոր եկեղեցի մի հիմնեց վանքին
մէջ Սուրբ Աստուածածնի անուամբ,
նոյնպէս և խուց, որու դուռը դէպ 'ի
հիւսիս հրապարակին վրայ կը բացուի.
նոյնպէս ուրիշ սենեակներ և նորոգու-
թիւններ եւս ըրաւ վանքին մէջ։

Գրիգոր հայրապետ Շղթայակիր
1727 ին վերոյիշեալ եկեղեցին նորոգե-
լէն 'ի զատ՝ ուրիշ երկու սեղան եւս կան-
գնեց յանուն Սուրբ Յովհաննու Կա-
րապետի և Ստեփաննոսի Նախավկայի.
նմանապէս և հիմակուան ստորին յար-
կին վրայ եղած սեղանատան մէջ դուռ
մի կար՝ որ գետնափոր ճամբով մինչեւ
Ս. Ծննդեան եկեղեցւոյն տակն եղած
ստորերկրեայ մատուռները կը տանէր.
այս դուռը մեծ աշխատութեամբ հիւ-
սէլ տուաւ և տեղը մաքրելով Սուրբ
Երրորդութեան անուամբ եկեղեցի մի
շինեց. այս եկեղեցւոյն տեղը, ինչպէս
ըսինք, հիմակ սեղանատուն է, ուր Ս.
Ծննդեան խթման երեկոյին Ս. Պատ-

բնակիչք հանդերձ միաբանօք և ուխտաւորօք այրեցեալ կործանեալ ընկղմեցաւ : Նոյնպէս 'ի դառն Պարսից պատերազմաց միաբանութեան վերայ հինգ մեծ ամենայներ եւս չքացել տուաւ, ներքին գաւիթն և արտաքին մեծ հրապարակը քարայատակել տուաւ, այն է Տաճարին արտաքին փոքր երկայնեալ դռնէն մինչեւ մեր վանուց անկիւնածայրը :

Նոյն տարիները (1732) Ներսէս Հէմի մեա եղած Ճանապարհի անցքը խխա ներ քննելուն՝ կեսարացի Տարախանու գիւղէն Մ՝ եղիսան իշխանը բաւական տաակ ծախս ընելով ընդարձակել տուաւ, որ ուխտաւորք հանգիստ անցնին :

1813 թուին՝ Յունաց Հայոց հետ ունեցած մեծ վէճէն և դատէն յետոյ բարեպաշտական Մաւլանան Մահմուտ մեծ կայսեր տուած հրովարտակաւ (١٢٢٨) Հայք Ս. Ծննդեան եկեղեցւոյն վերայ եւս Յունաց հաւասար իրաւունք ունեցան, բայց որովհետև բաւական տարի է 'ի վեր մինչեւ 1813 Թուականը արգիլուած էին Հայք սուրբ պատարագ մատուցանելու Ս. Այրին մէջ և բաւական իրաւունքներ կորուսած էին. Նոյն

եկեղեցւոյն մէջ Յուհանց։ Միաբանու-
թեան կրօնաւոր եւ Քրիստոնէական վար-
ժութեամբ, որ մինչեւ կը ծաղկեն բոլոր՝ որդ-
բազմաց աշխարհը իսպառանց սրբութիւններ ։
Սուրբ միաբանութեան Քահանայապետին, բազմ-
ձրագոյն Հայրապետական եւ Ներքին պաշ-
տպագրութեանը Հանդէսը եկող Ներսէս եւ
Փէնասէ արքեպիսկոպոսի գործակալին ջան-
քովը կատարուեցաւ Հայոց Հայաստանեա-
րեայ առաջնորդութեամբ միաբանուած։ Սուրբ
Սարգիս եպիսկոպոսին Յովհաննու եւ Պատ-
նայ ուխտապահներուն Հաւատացեալ կար-
թողներ կառավարել եւ պաշտպաններ Հաստա-
տել։ Սոյն ամենայնիւ առաքելական շատ
իրաւունքներ ունին։ Հայոց կարգուած
թէ Պատրիարքը եւ բոլոր Յովհաննու բազմու-
թեանէն. ինչպէս եւ, օրինական Համայնք, Հիւ-
սիսային դաշնակցութեան մէջ եղած դրական
նութեանց բարեկարգեալ Պատրիարքին կարգ-
որոնք իրենց անդամակցութեան
կ'ընեն Հայոց միաբանութեան մէջ-
պաշտօնեան մէջէն։ Դարձեալ 1869 ին
Սուրբ Սարգիս մէջէն Պատրիարքը ձեռք
պատուիրակութեան գրութիւնը ։

Ա. Օրինաւոր Եկեղեցին Հիմնական
սրբան ունին առաջնորդներ ու երկու ժամա-

րէն դուրս, որոնք տպագրուած են ժողովրդոց կայսերու սրտահներէն, և երեք զատ ու ամենն … կը պարզուին ծերիս տպագրութեան … ամենեցունց մէջ: Հին տպարան պատմը հայոց է, Գերմանիա և … դըրան հանճար յառաջացաւ մի ու ամեն: Հիմա տպագրութեան չորս հազար. կառքոցաւ … միակտուր … պատրաստուած են, որոնք քանի ամենեւ 50 հազար են:

Ի ԺԵերորդ դարուն մէջ 5000 քաղաքներ կան, Հոլլ. Գերմ. Իտալիա. և Մ. Բրիտանիա կանխէ. Գերմ. և Իտալիա քանի զանազան տպարաններ հաստատած էին. Հոլլ 100 հոգւոյ չափ կը հատուցանէ … և քիչ … քաղաքի քանի զԳերմ. և զԻտալիա տպագրութեան … Բայց մի պարտ է որ բազմապատկեն այս … ժողովարանի մէջ հաստատուած են, այն քաղաքին մէջ հետ դադարեր ըլլալու:

Ի ԺԸերորդ հետ և նոր տպագրութեան մէկ պարզատ … տարէ … մէջ … մէջ պարզելութիւնն ալ ըլլալու:

Այս ճանապարհորդութիւնը ու-
վրաստանը ձիով կ'ընեն, մեծապէս և շատ
բարեպաշտաշատ անձինք և խնայասէրք տու-
քովն ալ կ'ընեն. բայց որուն երկու ժա-
մի ճանապարհ է Երուսաղէմէն մինչև
Բեթղեհեմ՝ հանգիստ երթալով:

Յոպպէի կամ Հայոց Սրբոցվանքու
լսուած դռնէն ելնելով, ձախ դին հան-
դիպած զառ ի վայր ճանապարհը կ'եր-
թայ, և անկէ Գեհոնի ձորն անցնելով
և Հրէից հիւանդանոցի պատոյին առջէն
ուղղակի ճանապարհ է Բեթղեհեմ գի-
նալու: Անկ կողմը կ'իյնայ Սիոնէն կամ
Չար խորհրդոյ լեռը, զոր Երուսաղ-
բաւթեան մէջ ցոյց տուինք (յեր. 85):
Յառաջ գնալով ճանապարհին ձախ կող-
մը քիչ մի ներքով հարթ դաշտի մը մէջ
աւերակ մի թողով, ալ կողմը կ'ըսկսի
երևալ Տիգրանեանց կամ Սիոնի բաժն
հայրենիքը, ուր. Գուրիկ Աստուծոյ հը-
րամանաւ Արքայութեան դէմ ելնելով
կռուեցաւ ու յաղթեց անոնց, և կոտո-
րեց անոնց այրեց (1):

(1) Ա. Մնացորդ. ԺԴ. 11—14: Բ. Թագ. Ե. 22:

Բաւական երկթաղով և ձախ կողմն եղած բլրակի մի սարոյակէն քանելով, այլ կողմը Յովհաննու Մկրտչի Չխթենեաց արարածոց տաճարը Ճանապարհի վրայ Ս. Գէորգեան նորը կայ, որուն առաջացիք իրենց ընդունում Պիր-էլ-Ասեփ կ՚ըսեն, որ Աստուածին հօրն բանել է : Աւանդութիւն կայ որ երբեք Սողերը Նշաւորեալ մանկաբեան՝ իրենց աչքին դիմացէն անկերպութեան երկար սաւանդորդող սայտերը. Հերոսիկէսի մեն անեղութեան երթալէն յետոյ, երբ Պորէն Ճանապարհ եղան Բեթղեհէմ գնացող, այս հօրին քով հասած ժամանակներին կրկին անդամ սատորը երեւնալու իրենց, և առաջնորդելով բերաւ մինչեւ Սուրբին տեղը, ուրուն մէջ էր ծնած Մանուկն Յիսուս :

Ասկէ 5 րոպէ մը քալելով Չխթենեաց երկու կարգ գետնեցին արարածներու մէջ տեղէ, կը հանդիպի Սուրբ Նշխարքի վանքը, որու դուռը ձախ կողմը անհեթ փողոցին մէջն է : Այս վանքը, նախ Սրբոց Նիկոլայոսի էր, Հիմնել Յոնաց ձեռքին է : Այսօր Հայկական թիւնը Ֆրանկի կայսերը կը տրամի : Կիկեղեցին

[illegible] 1345 [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

(1) [illegible]

տան մը պատմին տակէն անցնելով կ՚երթա-
ւի Սուրբ Գէորգեան այն կողմը, որուն մէջ
տերը նոր գերեզմաններ եւս կան Բեթ-
ղեհէմցի Սարգսայ եւ Թամարայ.
Ծննդոց գրքին մէջ (ԼԵ. 19) կը յիշա-
տակուի որ Յակոբ նահապետս Միջա-
գետքէն դառնալուն, իւր կինը Ռաքէլ
Եփրաթայ (Բեթղեհեմի) ճանապարհին
վրայ մահացաւ եւ հոն թաղուեցաւ.
վրան շիրիմ մը կանգնեց. այս [illegible]
վրայ է առ [illegible] [illegible]
շէնքը. Ա. Թագաւորութեանց գրքին
մէջ եւս (Ժ. 2) կը յիշուի Ռաքելի գե-
րեզմանը. Յովսեպոս Փլաւիոսն որ քրիս-
տոնէութեան առաջին դարուն մէջ
ծաղկեցաւ, յիշատակութիւնը կ՚ընէ [illegible]
Յետոյ [illegible] ճամբորդաց ու րիշ պատմա-
գրաց եւ ուխտաւորաց գրքերուն մէջ
յիշուած կայ այս գերեզմանս. Մէկ [illegible]
գմբէթ մը ունի, զոր քանի մը տարի
յառաջ Ս՚ր Մոնթէֆիօրէ երեւելի Հրեայն
Լոնտոնայէն եկած ժամանակն նորոգել
տուաւ: Գերեզմանը քառակուսի [illegible]
է, մէջը [illegible]
[illegible] եւ [illegible] [illegible] [illegible]

(1) Հնախօսութիւն [illegible]

[illegible]կանք կը յարգեն այն տեղը . մանա-
ւանդ Հրէից մեծ ուխտատեղի է, և
ամուսնացեալ կանայք կը յաճախեն՝ անոնք
որ զուրկ են ծննդականութենէ ։

Այն յիշատակարանին արեւմտեան
կողմը գիւղ մի կ'երեւի նոր շէնքերով,
որ է Պէյթ—Ճ'ալա, ուր Յովսէփ և Մա-
[illegible] եկեղեցի ունին ։ Նոյն գիւղին մէ-
ջերն է Պարոն—Տէրի այգին. և [illegible]
[illegible], որ Հայոց է, ուր անոր ունին
բարեպաշտ ձիթենիք ։

Բեթղեհէմի գերեզմանատունը քաղքէն անդին է-
րին. և քառորդ ժամ քալելով կը հաս-
նինք գիւղին մօտ, և ձախ ձեռքերնուս
վրայ [illegible] է ; և շատ քաղքեցիք [illegible]
[illegible] երկու ցանկապատով մէջ՝ [illegible]
[illegible] 100 մեղրաչափ [illegible]. Դաւիթ [illegible]
[illegible] [illegible] կայ ։ Նոյն [illegible]
[illegible] Դաւիթ [illegible], [illegible]
[illegible]. [illegible]
[illegible] ... [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

Այս անէջ ուխտաւորք վար ի Յիսե-
րով կոչեցեալ ծխերքէն, և երկաթեայ փոքրիկ
դանակներով մուծած ձանձրացոյ երկու դուռ.
Եւս կը տեսնէ պղինձ բունի մի վրայ.
դրոշմեալ է տառախառնակեայ դուռը, որոյ
համար՝ Ջերթուն Թագաւորի ժամանա-
նակ շինուած է՝ ըսինք (յէր. 175), ձախ
կողմինը՝ այսպէս ասուին կամ յարդարանին
դրան է Յունաց ձեռքը, որ նախ Հայ-
ոց Քաղաքացիներն էին, նաև Յոյնք յափշտա-
կած են. իսկ աջ կողմինն է Հայոց
վանքին դուռը, ուստի ներս մտնելով
և պղինձ դամբարանի մի մէջէն անցնելով՝ աջ
կողմը դրան, կեց եղած աստիճաններով
զինք վանքին մեծամեծաւորին կը հանեն:
Այս վերջինք է քիչ մի համբարան առանձ-
նաբնակ մի խուցերով: Հին ժամանակներն ՚ի
վեր աստիճանաբար աւելի տարածուն ու-
ղղութիւն առաւ հօս, բայց քանի մի
տարիներ ՚ի վեր բոլոր կարգադրութեան
Ս. Երուսաղէմի Աթոռոյ պատրիարքութիւնն որ
է 33 ամբողջ Սաղիմ Յակոբեայ վանքին մէջ
մէջ, [illegible] կ՚աւանդէ. ....
[illegible] Հայոց վանքին [illegible]
[illegible]
[illegible]

գտած մի կը փոխուին, ունի և տասնի չափ հնաւորակ միաբանք։ Սուրբ Ծննդեան խորհրդեան և առաւօտու եկեղեցական հանդէսներն Սուրբ Տաճարին մէջ կը կատարուին, և այն եղեալ օրը բոլոր ուխտաւորքը Ս. Խորհրդին ճաշակիւքը կը [illegible]րանկրուին։ Բայց ի վանքի յատուկ եկեղեցիէն զոր մերը յիշեցինք, ունի Պատրիարքարան մի եղեալ մանր խցե-րով, մեծ հիւրանոց մի և ուխտաւո-րաց և միաբանից համար 16 սենեակ մանր և խոշոր։ Գեղեցիկ է իւր տանի-քը, որ քաղաքի հրապարակին վրայ կը նայի. Հիւսիսային կողմը կ'երեւի մին-չեւ Ս. Եղիայի վանքը և հարաւային կողմը Եղիսաւայ ծործորը և այլն.

Այս համառօտ տեղեկութիւնե-րը առնելէն յետոյ իջանք վար Ս. Ծննդ-եան այրը ուխտ ընելու։

Հոս ուխտաւորաց առաջնորդողն կը ցուցնէ կամ վանքին Տեսուչը և կամ ժամհարորդաց մէկն հանգստեան սարկաւա-գաւ և դպիրք, մեկնելով կ'ըսեն. Տա-ճարին [illegible] [illegible] [illegible]
[illegible]

պերճութեանց։ Մեծն շարականը երգեցաւ
Հիւսիսային գաղղիեն և Հայոց դասին մէ-
ջէն. անցնելով կ'երթանք Սուրբ Ղազար. և հոն
Ղևոնդեանց կարգադրով և Փառք ՚ի բարձ-
ունս բանէն յետոյ՝ համառօտ ճա-
նուցումով կը սկզբնաւորուէր առաջնորդող
վարդապետը խոր բանականութեամբ սուրբ տեղե-
րը և անոնց վրայ եղած խորհուրդները։
Յիշեալ այրը երկու գաւառ ունի, մին
Յունաց հարաւային գաւառն կողմէն 13
աստիճանով, և միւսը Հայոց հիւսիսային
կողմէ 16 աստիճանով. և Նոյր վերին Ն-
ւաց խորաններն ձիշտ տակը կ'իյնան, որ
տանեմանն հետ մէկտեղ երկու կողմնա-
կի դասերէն 70 հարիւրամետր բարձր
է։ Հայոց գաւառն վար իջած ժամանակ՝
վարի աստիճաններն կից ձախ կողմի ան-
գամն է Յովհաննէս Մկրտչի ծննդեան տեղը,
որ անցքերին տակն է մարմարեայ յա-
տակով և կիսաբոլորակ ձևով, որուն
մէջտեղը փոսիկ մի կայ արծաթեայ
ձանձամբ մի աղուացած, եւ բոլորակին
Լատիներէն այսպէս գրուած. «ԱՅՍ
ԾՆԱՒ. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԱՐԻԱՄԱՅ
ԿՈՒՍԷՆ»։ Այս այրը 16 կանթեղ կախ-
մշտավառ, 4ը Լատինաց, 6ը Հայոց

է 6րդ Յունաց. Այս [illegible] քաղաք
Հայոց և Յոյներ կը պատմագրեն՝ իրենց
[illegible] իրար [illegible] [illegible]
[illegible], և յետոյ [illegible] [illegible] [illegible]։

Այս նկարագրէս 3 մեթր գիծը ’ի հա-
րաւային արեւմտեան [illegible] երկու ատամ
[illegible] վար կ’իջնայ Այրարատ. աղօթա-
րանը [illegible] մէջ փորուած և [illegible]
[illegible] մէջը արդուցած է, ու-
նի 2 ու կէս մեթր երկայնութիւն և 2
մեթր և 30 հարիւրորդամեթր լայնութիւն.
Հիւսիսային արեւելեան [illegible] երկու հը-
նադոյն [illegible] [illegible] պատուա-
պատուած է, որով մնացեալ երկուսը կը
բացուին, ուր առաջ [illegible] երկու մէկ մէկ
[illegible] [illegible] [illegible] մտնելով։
Այս աղօթարանին՝ [illegible] [illegible]
մի է. [illegible] [illegible] [illegible] [illegible] ու-
[illegible] յանուն [illegible] Մ[illegible], [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] Մ[illegible]
[illegible] [illegible] [illegible] Թ[illegible]
[illegible] [illegible] [illegible]։ Այս [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] էր (1)։
Յ[illegible] [illegible] մէջ փորուած
[illegible] [illegible] [illegible] [illegible]

(1) [illegible] [illegible] Մ. [illegible] էջ 286.

բուժելիք դրդու անհնարհնելոյ Երկան Մ'ա-
բիտանութեան տասանորդաց Ռուսիոյ. Մայր
մայրենիքում. պատրաստուած է, որ ունի
5 ժողովական կանթեղ ունին 4 Լատինք,
և պատուանին երբեմն ներքերքի վերաբերեալ պատրաստած
է և ասելի կ'երևէ քանի ծայրը:

Ծննդեան Սուրբ Այրը 10 մետր և
55 հարիւրորդի երկայնութիւն և 3էն
միջեւ 4 մետր լայնութիւն ունի, թէ
գետինը և թէ պատերուն երեսները ճերմակ
մարմարեայ խաչերով քարերով ծածկուած
են. առաստաղը կամարով մի ամրա-
ցուցած է որպէս մի հայրենեաց վերի և
կերպեցուցած ծածկութեան դիմանալ, բստ
որում մայրին բուն ժայռը կարծր քարէ
է: Առաստաղէն կախուած 11 կանթեղ
ունին Հայք, 14 Յոյնք, և 4 Լատինք:
Գաղթեայ 11 պատկերը ունին Հայք;
որոնցմէ 4 Լատին միաբանք 7 հատը գող-
ցան 1860ին: Եւ սակայն յաւուր սուրբ տօնա-
կին վերջինները ծածկում մշտելով կանգ-
թեղաց չուանները ալ պրտեցան ու կանգ-
թեղները ալ ինքնին լրցուեցան.
բայց որովհետև ծածկութեան ենթարկեալ ըլլալով;
Լատինք Սուրբ այր բերանը ներքինք
առաջնորդին հետ Հայոց և Յոյնք ընդ թու

դուռը, այլ պատմածնատու փոքրն փոքրե-
ցին ծածկոցն այգերու, և յետոյ Հայոց
պատուհաններուն աղ գաղթան : Ս. Նշանայն
կողմէն Ս. Փրկչը ծղած բողոքային Տէ-
րութիւնը զինուորներով երկու պատկերայն
կրկին դրուելուն Հրամանն եղաւ, և մը-
նաց Հինգ պատկեր պակաս : Նոյնն յա-
րեւմտակողմն դուռ մի կայ, ուսկէ անց-
նելով և փորուածոյ նեղ անցքի մը մէ-
ջէ գնալով Հայր Յովսէփայ անուամբ մա-
տուռիկ մի կը տեսնուի Լատինաց. Նո-
կէ սորկերութեայ Ճանապարհ կայ Լա-
տինաց եկեղեցին երթալու :

Յիշեալ եկեղեցին սրբուհւոյն Կա-
տարինէի անուամբ կառուցեալ է. ու-
նի աւագ խորան մի և երկու կողմնա-
կի սեղաններ : Ներս մտած ժամանակ
աջ թեւի վրայ երկաթեայ վանդակով
պատած աստիճաններ կը տեսնուին,
ուսկէ կ'իջնուի Անմեղներուն Տապանները :
Հոն կը տեսնուին առանձին խորշեր,
որոնք են մատուռ մի յանուն Ս. Հե-
րոնիմոսի, որ ժամանակ մի Բեթղեհեմի
մէջ առանձնանալով քարի վերայ մի ու-
նեցած է, և աստ թաղուած կը համա-
րի, որու գերեզմանին վրայ բեմ մի կա-

ռու ուրիշ սեղան մը կանգնած է ։ Այլ և կը տեսնուին հոս որբուհւոյն Յոսափատայ Գերեզմանը առանձին խորանով ։ Աւելի յառաջ գնալով Ս. Հերոնիմոսի աշակերտաց Եւսեբիոս կրեմոնացւոյն Գերեզմանը կայ խորանով մը ․ և ուրիշ ներքնագոյն խորան մը յանուն Բեթղեհեմ մանկանց, զոր Հերովդէս Մեծն կոտորել տուաւ ։ Վերջին սեղանն է Հայր Յովսեփայ անուամբ եղածը, զոր վերը տեսանք այն դրան քով, ուսկէ Սուրբ Այրին մէջ կը մտնուի ։

Սուրբ Այրին հարաւային դռնէն դուրս Յունաց կողմը կ՚ելնենք, ուր է եկեղեցւոյն ձախակողմեան դասը, ուր հարաւային կողմը երևցած աստիճաններով դռնէն իրենց վանքը կ՚երթուի ։ Աւագ խորանին ատեանը ելնելու՝ միջին դրան կից՝ հարաւային սիւնին վրայ հայերէն հին գրեր կը տեսնուին, զոր Յոյնք ասկէ իբր 30 տարի յառաջ յատակի մարմարները ջնջել տուած և ծեփած ժամանակնին նոյն գիրերն ալ ծեփել տուեր են, անհետ ընելու համար ։ Իսկ հիւսիսային աջակողմեան դասուն մէջ, որ Հայոց սեփականն է, երկու սեղան

կայ, մին դասին առաւանին վրայ, և միւ-
սը ներսի կողմը անկիւնացեալ մասին
վրայ՝ որ կից է Աւագ. խորանին. ըստ ա-
ւանդութեան Հայոց՝ կ'ըսուի թէ մա-
նուկն Յիսուս այս տեղ թլփատուե-
ցաւ։ Այս սեղանոյս վրայ տարին ան-
գամ մի թոյլտուութիւն կ'ըլլայ Ղպտ-
ւոց և Ասորւոց իրենց Ծննդեան օրը
պատարագ ընելու։

Այն Հիւսիսային դասուն մէջի մար-
մարեայ սիւնին վրայ եղած հին պատկեր
վրայ դեռ կը տեսնուին միւսինէ նկա-
րուած քանի մի պատկերներ, որոնց մին
կը ներկայացնէ զՔրիստոս, որ իւր աստ-
ուածային կողը բանալով Թովմայ առա-
քելոյն շօշափել կու տայ. այն նկարներէն
մնացորդներ կ'երեւին նաև դրսի սիւնա-
զարդ սրահին կամարապատերուն վրայ
երկու կողմը տեղ տեղ, մնացեալ մա-
սերը նոր ծեփուած են. Եկեղեցւոյն ա-
ռաստաղը փայտաշէն է և դրսի կողմէն
արձճապատ։ Յիշեալ արտաքին սրա-
հին մէջ արեւմտեան երկու ծայրերը
դիմացէ դիմաց երկու դուռ կը տես-
նուին, որոնց մին Յունաց վանքը և
միւսը Լատինաց վանքը կը հանէ։

Արտաքին երկաթեայ դռնէն դուրս Հայոց վանքին անկիւնը անցնելով դէպ ՚ի հարաւակողմը ձախ դին եկած առ-ջի փողոցին մէջ յառաջ երթալով, գիւ-ղին ծայրը աջ թեւի վրայ կ'ինկնի Պա-տանից այրը, զոր Լատինք Կաթին այ-րը կ'անուանեն, հետեւեալ պատմու-թիւնը մէջ բերելով: Մարիամ սուրբ Կոյսը Հերովդէսի սպառնալիքներէն փախ-չելու համար Հայր Յովսեփայ հետ այս այրին մէջ կուգայ կը պահուըտի քանի մի օր, որ անկէ լաւ պատուէ-րելոյ հրեշտակին՝ Եգիպտոս փախչի իւր նորածին մանկանը հետ: Այն այրին մէջ Ս. Կոյսը զՅիսուս դիեցուցած ժամա-նակ քանի մի կուսական կաթէն կաթի-ներ կը թափին գետնին վրայ, որոնք զօրութիւն կուտան հողին կաթ չունե-ցող ծծմայր կանանց կաթը առատացը-նելու: Եւ յիրաւի մինչեւ ցայսօր շատ կանայք փափաքանօք կ'առնուն յիշեալ Այրին հողէն, որ փխրուն ձերմակ քար է: Այս պատճառաւ Լատինք Կաթին այրը կ'անուանեն այս տեղը, եւ քան զամեն տեղերը մեծ կարեւորութիւն և յարգ ցոյց կուտան Այրին, զոր ,

թէպէտ և 'ի հին դարուց հետէ ընդհանուր քրիստոնեայ ազգաց սեփականնած է, որու ապացոյց է դուռը առանց նգի միշտ բաց մնալը, այսու ամենայնիւ Լատինք երբեմն երբեմն ոտք ելնելով իրենց իւրացընելու համար ջանքեր ըրած են. ինչպէս և 1865ին գիշերանց գաղտուկ արտաքին փոքրիկ բակին պատերը նորոգելով Լատինք ալ կըղպանք դրին. ասոր վրայ Հայք և Յոյնք ոտք ելնելով և իրենց քով եղած հաստատութեան թղթերն ու հրամանագիրերը ցոյց տալով Ի. Դրան առջեւ և իրենց համաստացական իրաւունքն վաւերացնելով հրաման ելաւ որ նոր շէնքերը փլցընուի և կղպանքը քակուի, այսու ամենայնիւ Լատինք միայն կըղպանքը քակելով թէ դրսի և թէ ներսի նոր շինութիւնները անեղծ պահելու դիմադրեցին. և մինչեւ ցայսօր դեռ այնպէս կը մնայ, և Ի. Դրան հրամաններուն գործադրութիւնը կախ կը կենայ։

Քառանից այրին մէջ քարափոր աստիճաններէ կ'իջնուի։ Յառաջագոյն, այսինքն 6 տարի յառաջ, միայն անշուք

սեղան մը կար մէկ կանթեղով, և դուռ-
ըր բաց ձգելով գիւղացիք թէ՛ Քրիստո-
նեայք և թէ Իսլամք, ձէթ և մոմ կը
տանէին վառելու. այժմ այս սեղանը
Լատինք ոչ միայն զարդարեցին, այլ և
ուրիշ քանի մը տեղեր և անկիւններն
եւս խորաններ հաստատեցին, պատ-
կեր և կանթեղներ կախեցին, և դուռն
ալ միշտ կը պահպանեն։

Քառասնից այրէն ելնելուն՝ դէպ ՚ի
աջ կողմի արեւելեան ճանապարհը ձեռք
առնելով, 7 րոպէին կը հասնինք Հայր
Յովսէփայ տանը տեղը, որ փոքր արտի մը
մէջ և ճանապարհէն իբր 30 մետրաչափ
ներս՝ աջ դին է։ Կիսաքոլորակ խորանի
մը մնացորդէն յայտնի է յիշեալ տեղս,
որ ժայռի մէջ փորուած է։ Այս տեղ-
ւոյ ժամանակաւ եկեղեցի կար, որու
քարափոր հիմերը դեռ կը տեսնուին։
Աւանդութիւն կայ թէ Հայր Յովսէփ
ամուսնութենէն յառաջ այս տանը
մէջ բնակած է, և ժամանակէ յետոյ
երբ ամենասուրբ Կոյսին հետ ելաւ,
մէջն եղող տանտէրը կամ վարձուորը
զինքը չընդունեց. և ստիպուեցաւ եր-
թալ այրին մէջ բնակելու։

100 մետրաչափ աւելի դէպ յարեւելք լերանը ստորոտը կը հասնինք. Հոս իջնելէն յետոյ, դէպ յարեւելք և ետքը քիչ մը դէպ՝ի հարաւ շեղելով՝ չորս րոպէին Պէյթ-Սահուր (Հովուաց գիւղը) կը հասնինք, ուր կը բնակէին, ինչպէս կը կարծուի, այն հովիւները, որոնց Տեառնըն հրեշտակը Յիսուսի Քրիստոսի ծնընդեան աւետիքը տուաւ:

Գիւղէն դուրս փոքրիկ դաշտ մը դիմացնիս կ'ելնէ, որ է Բոոզի դաշտը: Այս տեղ եկաւ Հռութ հասկ քաղելու, ու Բոոզի հետ ծանչւորուելով ամուսնացաւ հետը, և Դաւիթ մարգարէի մեծ հայրը Ովբէդը ծնաւ:

Յետոյ դէպ յարեւելք ծռուելով, 12 րոպէին կը հասնինք Հովուաց այրը, քառակուսի գետնի մը վրայ, ուր կան ձիթենիներ՝ քարէ չոր պատով մը շըջապատուած: Ըստ աւանդութեան՝ այս է հրեշտակին Հովուաց աւետիս տուած տեղը, ուր Հեղինէ եկեղեցի մը շինեց, և հիմակուան տեսնուածը անոր ստորերկրեայ յատակն է, և հին եկեղեցին անհետացած է: Այրին մէջ 21 աստիճաններով կ'իջնուի:

Հովուաց այրէն 250 մեթր յետ դառնալով և Պէյդ-Սահուր գիւղի ճամբան թողլով, հիւսիսային արեւմը-տեան ճանապարհը բռնելու է, և յի-շեալ գիւղին առջեւէն 9 րոպէի չափ քալել անցնելէն յետոյ, չորս րոպէ մի եւս աւելի յառաջ գնալով՝ ու ձախ ու աջ դին եղած ճանապարհները թողով՝ ուղղակի գնալու է դարուվեր, և մէկ քառորդին կը հասնուի վանքին և սուրբ Սաբի եկեղեցւոյ առջեւի հրապարակը։

Բեթլէհէմի մէջ և անոր մերձակայ-քըն եղած ուխտատեղիք ասոնք են զոր տօրագրեցինք․ ասոնցմէ դուրս կան նաեւ մի քանի այցելութեան արժա-նաւոր պատմական տեղեր, ուր շա-տերը կը ցանկան երթալ տեսնել, որոնց փափաքը լեցընելու համար և մեք աշ-խատութիւն յանձն կ'առնումք իւր-եանց առաջնորդելու։ Ասոնք են բռած տեղերս․ Ս․ Գէորգայ վանքը, Արքեալ աղբիւրը, Հին ամրոցը, Սողոմոնի ա-ւազանները․ Արտասայ քօ-ռը, Պար-տէզ փակեալը, Ֆրանկըը և Թեքուան։

Բեթլէհէմի հարաւային կողմէն դուրս ելնելով և դէպ 'ի արեւմուտք

շեղելով, 13 րոպէին քաղաքին ծայրը և Ուատի—Սահէին ըսած ձորին մէջ իջնելու ճանապարհը ձախ դին ձգելով՝ 2 րոպէին դէպ 'ի հարաւային արեւմուտք գնալէք ճամբան ձեռք կ'առնենք ։ Այս տեղ հանդէպնուս Պէյդ—Ճ'ալա գիւղը կը տեսնուի, և 5 րոպէ քալելով՝ ձախ թեւուի վրայ նեղ ճամբայ մի կը հանդիպի. ասկէ անդին՝ ալ ճանապարհը քարուտ ու դժուարակոխ է ։

22 րոպէ մի եւս յառաջ գնալով, աջ կողմը նեղ ճամբայ մի կ'ելնէ, զայն թողլով դէպ 'ի յարեւմուտք գնալու եմք, և 12 րոպէ յետոյ հեռուանց աջ կողմի վրայ ձորի մէջ կը տեսնուի Ս. Գէորգայ Յունաց վանքը ։ Այս վանքին եկեղեցւոյն մէջ շղթայ մի կայ, ուր խելագար մարդիկ տանելով կը կապեն, և կը հաստատեն որ շատերը շղթային զօրութեամբը զգաստացած են ։

Աջ թեւին վրայ ուրիշ ճամբայ մի եւս թողլով, մեծ ճանապարհին մէջ յառաջ երթալու է, որ այս տեղ հառնելէնս յետոյ՝ դէպ 'ի հարաւային արեւմուտք կը ծռի. և 5 րոպէին Գ[illegible] —[illegible]—Պօյնու կը հասնուի, որ [illegible]

Ներոս բերդ ըսել է ։ Այս կարծուի որ այս ամրոցը Պէլաուն չինուած ըլլայ, որ Քրանցքին ալ ինքը նորոգած է 13ր դարուն մէջ․ նա է որ Թրծած հողէ չինուած ապուղաններ գործածեց Քրանցքին համար ․ Իսկ յիշեալ բերդը քառակուսի է՝ միջին դարու ձեւով, պարսպին ծայրերը աշտարակներ և ակռաներ ունի ․ երկու երեք անկանոն զօրք կը հսկեն այս տեղ Թէ՛ Պերբոնի ճանապարհը և Թէ ջուրերը պահպանելու համար ։ Այս տեղ Իպրահիմ փաշայն Պէլահներու դէմ պատերազմ մի կորսնցուց ։

Բերդին արեւմտեան կողմը 100 մետրաչափ հեռու կ՚երեւի պզտի շէնք մի, որու տակն է Այն-էլ-Նիւեալը ։ Ցած դուռ մի ունի և 26 աստ աստիճանով ստորերկրեայ խուցի մի մէջ կ՚իջնուի ․ տեղը մութ ըլլալուն, պէտք է մոմ ունենալ ու վառել ։ Խուցը կամարաչէն է և պատերուն մէկ մասը ժայռին մէջ փորուած են ։ Խուցին երկայնութիւնն է 12-13 մեդր եւ լայնութիւնը 3-4 ։ Գետինին մէջտեղը պզտի աւազան մի կայ, ուր մէկ կողմէն ջուրը կու գայ կը լեցուի եւ միւս

կողմէն դուրս կ՚ելնէ ։ Արեւմտեան կողմը դուռ մի կայ, ուսկէ երկրորդ խցի մէջ կը մտնուի՝ նոյնպէս միմաւոր ըստ մասին եւ կամարակապ. Հոս Հարաւային պատին երեսը Միհրապի պէս տեղ մի կայ եւ մէկ մ՚ալ արեւմտեան կողմը, ուսկէ ջուրը խիստ պայծառ ու փայլուն դուրս կը բխէ, եւ ադուգայով մի աւազանի մէջ կը ժողվուի, եւ անկէ ելնելով առաջին խցին աւազանին մէջ կը հոսէ ։ Տեղացիք Նղխուր կնքեալին Ա՛ա–էլ–Նայն կ՚ըսեն, որ աղբիւրակին գլուխըն ըսել է ։ Նոյն յիշատակութիւնը Սուրբ Գրոց մէջ կայ (1) ։

Ներքին հարաւային արեւմտակողմը պզտի աւազան մի կայ վրան չէնքով ծածկած, ուր Կնքեալ աղբիւրէն ջուր գալով, յետոյ կամ Սողոմոնեան երեք մեծ աւազաններուն մէկուն մէջ կը թափի, եւ կամ ջրմուղով Բեթլէհէմ կուգայ եւ անկէ Երուսաղէմ ։

Այս ըստ տեղէս 30 մեղրաչափ անդին է Սողոմոնեան աւազաններուն աւազանը. այսպէս կը կոչուի, ըստ որում կը կարծուի թէ Սողոմոն ինքն շինած ըլ-

(1) Երգ. Դ. 12.

բայ Փակեալ պարտէզները ջրելու համար։

Այն առաջին աւազանին եզերքովը, որ 116 մեթր երկայնութիւն, 70 լայնութիւն և 7_8 մեթր խորութիւն ունի, դէպ ՚ի արեւելք գնալով՝ երկրորդ աւազանն է. ասիկայ ունի 129 մեթր երկայնութիւն, 70 լայնութիւն, 12 խորութիւն։ Ասկէ ալ 49 մեթր հեռու երրորդ աւազանն է, որ ամենէն մեծ է, ունի 177 մեթր երկայնութիւն, 64 լայնութիւն, և 15 խորութիւն։ Այս աւազաններուն ջուրը անձրեւէնն է. առջի երկուսին ջուրը երրորդին մէջ կը հոսէ, և անկէ թողով պարտէզները կը ջրեն։

Ճանապարհը շարունակելով դէպ ՚ի արեւելք, ջրմուղը աջ դին թողով, 6 քայլ քալելէն յետոյ, ձորին միւս կողմը աջ թեւին վրայ բլուր մի կ՝երեւի աւերակներով լեցուն, որ կը կարծուի թէ հին Եթամ ըսած տեղն է, ուր Սամփսոն Այլազգիներուն հունձքերը այրելով, փախաւ եկաւ հոս այրին մէջ պահուեցաւ (1)։ Իսրայէլի Թագաւորութիւնն երկուքի բաժնուելէն յետոյ, Ռոբովամ այն բլուրին վրայ քաղաք մի

(1) Դատաւորք. ժե. 8։

չինեց, և այս անունը դրաւ անոր [1]։

Այս բլուրին ստորոտէն կըսկսին Սա-ղոմնի Փանկէալ Պարպէղ լըածները։

7 րոպէ մի քալելով պզտի գիւղ մի կը հասնինք Արփաս անուն, զոր Հայք Եփրատայ Գիւղ կ'անուանեն, որ լերանք զառ 'ի վայր կողմը չինուած է, աջ դին, և ունի 600ի չափ բնակիչ։ Գիւղացիք 1831ին Իպրահիմ Փաշային տուրք տալ յանձնառու չըլլալով, կործանել տը-ւաւ բոլոր գիւղը, և ետքէն նոր սկսան չինել։ Այս տեղաց բոլոր պարտէզները մէկ տեսութեամբ մարդոյս աչացը կ'ե-րեւին Եփրատայ ջրին մէջ, ուր արե-ւուն ճառագայթներուն տաքութիւնը մէջը ամփոփուելով, և ջուրն ալ առատ լինելով՝ խիստ բարեբեր ըրած են հողը։

Պարտէզները գիւղացւոց են, բայց մեծ մասը Մէհհուլամ անուն, բողոքա-կան Հրէի մի կալուածք եղած է, որ շատ տեսակ ընդեղէններ և բանջարե-ղէն յառաջ կը բերէ։ Յիշեալ Հիւրա-սէր անձը 1860ին իւր պարտէզին արե-ւելեան կողմը փորած ժամանակ միւսի

(1) Բ. Մնացորդք. ԺԱ. 6, ուր փոխանակ Եսան: մի՝ Եսամ կ'անուանէ։

մով շինուած գետնայատակ մի գըտ-նուեցաւ և կորնթեան ձևով սիւներու և սիւնախոյակներու բեկորներ. շատ հաւանական է. որ Սաղոմոն հոս պալատ մը շինել տուած ըլլայ ։

Ճանապարհը շարունակելով Ջրանց-քին շաւղովը, կէս ժամուն Բեթլէհէ-մի դիմացը կը գտնենք զմեզ, դժուա-րին ճանապարհներու վրայ կոխելով. և կը հասնինք Հայոց վանքին պատին քով և անկէ դէպ 'ի արեւելք դառնա-լով Տաճարին դուռը կ'երեւի ։

Հոս կը լմննայ Ութերորդ այցելու-թիւնը; և բարեպաշտ ուխտաւորք կըր-նան մինակ յետ դառնալ Երուսաղէմ նոյն ճանապարհաւ որ եկան ։

ԻՆՆԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի Գերեզմանս Թագաւորաց, Դատաւորաց, և այլն ։

Մեր իններորդ այցելութիւնը Ս. Երուսաղէմի հիւսիսային կողմերը պի-տի ըլլայ. և ըստ որում քանի մի ստո-րերկրեայ տեղուանք կան, պէտք է ուխ-

տաւուրք հետեւորդին մէջ՚ն բուցկիք ու-նենան ՚ի պատրաստի :

Այն այցելութիւնս կըսկսի Սուրբ Աստուածածնի դռնէն, ուսկէ դուրս ելնելով ձախ կողմի ճամբան կը բռնենք, և 60 մեթր երթալով խրամին երկայնու-թեամբը, ձախ դին կը հանդիպի Պէր-քէթ—Սիթթի—Մ՚ըրիէմ ըսած աւազանը, անոր վրայօք հին յիշատակութիւն մը չկայ :

3_4 րոպէէն քաղաքին հիւսիսային արեւելեան անկիւնը կը հասնինք, ուր դէպ ՚ի յարեւելք, որ Յովսափատու ձորին արեւմտեան եզերքն է, հին չէն-քի մը մնացորդներ կ՚երեւին. ըստ ո-մանց այս տեղս է Ադիաբենու կնոջ Հե-ղինէ Թագուհւոյն գերեզմանը զոր Յով-սեպոս Փլաւիանոս և Պաւսանիաս յոյն մատենագիրը կը յիշեն : Ճանապար-հը շարունակելով՝ առանց քաղաքին պարիսպը թողլու, դէպ ՚ի յարեւմը-տեան ուղղութեամբ և անկէ ՚ի հարաւ չեղելով, 6 րոպէէն կը հասնինք քաղաքին մէկ դուռը, որ միշտ փակ կը մնայ և Հերովդէսի դուռ կը կոչուի. իսկ տե-ղացիք Պապ—էզ—Զահիրէ (ծաղկանց

դուռ) կ'անուանեն։ Անկէ 160 մեդր անդին, աջ կողմը նեղ ճանապարհ մի կայ և անոր ծայրը դուռ մի կ'երեւի, այն է Երեմիայի այրը, զոր մերայինք Աբիմելէքի ջրամբարը կը կոչեն, անոր համար որ, ինչպէս կը գրէ Հաննէ պատմագիր (1), Երեմիայ մարգարէի աշակերտը Աբիմելէք, Բաբելոնի գերութեանը ժամանակ հիւանդաց համար թուզ բերելու խրկուելով հոս Երեմիայի հրամանաւը, սոյն այրին մէջ 68 տարի քնացաւ, և արթնցած ժամանակ իւր քաղած թուզը դեռ դալար քովը կեցած գտաւ։ Իսկ Երեմիայի այրը կը կոչուի, որովհետեւ աւանդութեամբ կը կարծուի, որ Երեմիա մարգարէն իւր Ողբերը այս տեղս յօրինեց։ Սոյն այրը Տէրվիշի մի ձեռքն է, վասն որոյ ներս մտնելու համար քանի մի դահեկան պարգեւ տալու է իրեն։ Ներս մտած ժամանակ աջ ձեռքի վրայ Տէրվիշներու քանի մի գերեզմաններ կը տեսնուին, որուն Մահմետականք մեծ յարգ կ'ընծայեն։ Անկէ փոքր բակի մի մէջ սառնիճ մի կայ, որուն համար Երեմիայի

(1) Պատմութիւն Ս. Երուսաղէմի, երես 295։

քանդն է կ՚ըսուի (1)։ Այրին բնակած կա-
մարին տակ մտնելով, ձախ դին պզտի
պատի չէնքի մը միւս կողմը վերնատուն խուղ
մը կ՚երեւի, ուր ձեռքի սանդուղով
կ՚իջնուի. այս տեղւոյս համար կ՚ըսուի
աւանդութեամբ թէ՝ Երեմիա պատկե-
ցաւ գուբը նետած ժամանակնին, Սե-
դեկիայի օրով։

Երեմիայի այրին վրայի բլուրը Բե-
զեթա ըսուած լերանը հիւսիսային ծայ-
րըն է, զոր Հերովդէս Ագրիպպաս հա-
րաւային մասէն զատեց, որու վրայ շի-
նուած էր Նոր քաղաքը, և քաղաքին
երրորդ պարսպին գիծը անկէ անցուց։
Այն բլուրը հիմակ Մահմետականաց
գերեզմանատուն է։

Ճանապարհը դէպ յարեւմուտք 87
մեդր. յառաջ գնալով՝ գետնին երեսը
ծակ մը կ՚երեւի, ուսկէ կ՚իջնուի Թա-
գաւորական այրերը, զոր Յովսեպոս Հրեայ
պատմագիրը կը յիշատակէ (2) քաղաքին
երրորդ պարսպատին վրայ խօսեցած ժա-
մանակ։ Այս տեղէս կ՚երեւի թէ շինու-
թեան համար քար կտրած են հին ժա-

(1) Երեմ. ԼԸ. 6։
(2) Պատմ. պատեր. Ե. 13։

ճանապհները, և տեղը Թագաւորական քաղաքին՝ անունն ալ Թագաւորական այգեր մնացած է։ Նոյն տեղ ջրի կաթիլներ կը կաթեն, որ կ'երեւի թէ վերան եղած սառնիճի մի ջուրն է՝ որ քամուելով այգին մէջ կը կաթէ։

90 մեղրաչափ դէպ յարեւմուտք, որ յիշեալ այգերուն հարաւակողմը կ'ինկնի, քաղաքին Դամասկոսի կոչուած դուռն է, զոր տեղացիք Պապ-էլ-Շամ, կամ Պապ-էլ-Նասր կը կոչեն։ Այն դրան դէպ հիւսիսային արեւմուտք 250 մեղր յառաջ գնալով՝ տափակ ժայռ մի կը տեսնուի. Նախնիք այս տեղւոյս համար կը կարծեն թէ Թէոդոս Բ կայսեր կին Եւդոքսիա ափկնոջ Սուրբ Ստեփաննոսի անուամբ շինել տուած եկեղեցւոյն տեղն է, ուր երեք գերեզման կայ, որոնց մին յիշեալ Եւդոքսիային է կ'ըսեն, ըստ որում իւր շինել տուած եկեղեցւոյն մէջ թաղուեցաւ։

Յետոյ դէպ 'ի հիւսիս շեղելով մեծ ճանապարհին վրայ, 8 րոպէին սառնիճի մի քով կը հասնինք, որ ճամբուն աջակողմեան եզերքին վրայ է. այս սառնիճէն 20 մեղր դէպ 'ի հարաւային արե-

ւերակոյտն կը տեսնուի Թագաւորաց Գերեզմանները (1) : Բոլոր շէնքը ժայռի մէջ փորուած է, և քարէ դռներ ևս ունէր քանդակեան ծաղիկներով ; խաչակէս մինչեւ ցայսօր կը տեսնուի մէկ քանին : 22 ոտք աստիճաններէ վար իջնելով, որոց լայնութիւնն է 9 ու կէս մետր, բոլորը միաժայռ, դուռ մը կը հանդիպի պատին երեսը, որ վերջէն 'ի վայր ժայռին մէջ կարուած է հաստատուն շինուած սրահի նման : Այս դռնէս ներս քառակուսի բակ մը կայ 27 մեդրաչափ դէպ 'ի լայնքն ու երկայնքը, և սորա պատերը նոյն ժայռէն յօրինուած են միակտուր, և բարձրութիւնն է 7էն մինչեւ 8 մետր :

Արեւմտեան երեսը լայն դաւիթ մը կայ խոր անցք, որ յառաջուց երկու սիւներով ամփոփած էր նոյն ժայռէն կարած՝

(1) Ըսածն որ Թագաւորաց Գերեզմանք կը կոչուին, մենք սուրբ Գրոցմէ գիտեմք, որ Յուդայի 23 Թագաւորացմէ 17ը սուրբ քաղաքին մէջ թաղուեցան. այսինքն Սիոն լերան վրայ. մէկը Գալիլեա փախստականեցաւ. միւսներուն համար սուրբ Գիրքը տեղ մը չյիշեր. և յայտնի գիտեմք ալ որ միայնակ 5ը պատուով թաղուած չեղեցան. Լաւ ինչ այս մէկը Աբգարու կնոջ Հեղինէի հրաշակերտ գերեզմանը կը համարին. այս կարծիքը մեզ ալ ընդունելի է, բաւ որով շէնքը Թագաւորական է.

և երկու այլ մոյթք. այսպիսին կայ։ Այս երկու սիւներուն մէջ կամարը գետնէ առաստաղէն վար հեր կախուած կը տեսնուի։ Դրանթքին և ժայռին երեսին վըրայ փորուած գրերով և ընտիր ճաշակով քանդակուած երկար շրջանակի կամ ճուար (ֆիրիզ) մի կայ, որուն մէջտեղը խաղողի կուզ մի կ'երեւի։ Այս ուձախ դին չափակցութեամբ քանդակուած կան երկքկին արձանէնք, մէկ այրական և ուրիշ ճարտարապետական զարդեր, մէջտեղերնին փոփոխակի ունենալով բաժակի ձեւով զարդեր կամ վահաններ և կամ՝ ինչպէս ոմանք կը կարծեն՝ Հայի նշանակներ երեքական հատ (1)։ Ասոնց վերի կողմը ձախ կ'երեւի տերեւներէ

(1) Որովհետեւ այս քանդակներուն զարդերը ժամանակին երեսէն քիչ շատ մաշուած են, և բատ մեծի մասին անորոշ են, սակայն հաւանական է որ Հայոց քանդակներէ եղած ըլլան, որով կը հաստատուի Աբգարու կնոջ Հեղինէի շէնքն ըլլալը, և Հայերը 'ի յիշատակ քանդակուած են այն մեծ տեղուն, յորում իւր գանձերը թաղուած և նշխարքն առատ ցորեն բերել տալով քաղաքին այնչափ բարեմտութիւնը Հայոց կը բարկերեց։ Այլ և կուզ մի խաղողի և Հայի նշանակները քրիստոնէութեան դիտաւոր խորհրդանշանէն մին է, և ուրիշ կը յայտնեն քրիստոնեայ թագուհիի մը՝ քան թէ խորթի թագաւորաց։

ու պտուղներէ հիւսուած պսակ մի ։ Ո-րու ձախ կողմի մասը ժամանակէն մա-շուած ու աւրուած է ։

Նոյն մուտքը, որ գաւթին հարաւ-ւակողմն է, 90 հարիւրամետր բաց-ւածք ունի, որ երբեմն երկանաքարի ձեւով հաստ քարով մի կը փակէր եղեր, ինչպէս որ դեռ քարը արեւելեան նեղ անցքի մի մէջ պառկած կը կենայ ։ Դը-րան առաջը ուրիշ նեղ անցք մի կայ որ կ'երթայ մինչեւ գետնին երեսը ժայ-ռին մէջ փորուած տաշտաձեւ աւազա-նը . այս աւազանիս ինչ բանի համար ըլլալը չգիտցուիր, միայն կը կարծուի թէ մեռեալներուն վերջին ծառայութիւնը հոս կը կատարէին ։

Գերեզմանը(1) փակ եղած ժամանակ երկու նեղ անցքերն ալ կը գոցէին, ինչ-պէս յայտնի է անկիւնաւոր ձեւով տա-շուած տեղերէն, որոնց մէջ քարէ սահ-նակները կը տեղաւորուէին, պատու-հաններու փեղկերուն նման ։

Գերեզմանին մէջ մնացած ժամանակ քառակուսի նախասենեակ մի կը տես-

(1) Գերեզմանն կը կոչեմք բոլոր շէնքը միեւնոյն անունով ։

նուի, ուր տեղ կան չըրիմներու(1) մնա-
ցորդներ ։ Հիւսիսային արեւմտեան
անկիւնը ոսկրատան (կէ—բէ—ոկէ—ո) նման
խորշ կամ խուց մը կ'երեւի ներսի ծայ-
րը ծակած, եւ այս ծակերուն մէջ եւս
մէկ մէկ դի դնելու համար խորշեր կան։
Հարաւային պատերուն երկու ծայ-
րերը մէկ մէկ դուռ կայ. արեւելեան
դռնէն քառակուսի սենեակ մը կը մըտ-
նուի, որու հարաւային եւ արեւելեան
պատերը իւրաքանչիւրը երեքական խոր-
ջեր կամ ոսկրատուններ ունի, որոնց
երկուքը իրենց յատակներին ակօսի ձեւով
ածուներ ունին մէկ մէկ դիակներու
համար ։ Յիշեալ սենեկին հիւսիսային
արեւմտեան անկիւնը ուրիշ քառակուսի
սենեակ մը կայ երեք ոտք ցած, եւ մէջը
երեք դիակ պարունակելու խցիկներ
նաւակարանի ձեւով, որոնց ամեն մէկը ա-
ղեղնաձեւ կամարներ ունին ։
Քանի մը տարի յառաջ Պ. Սաւըրի
դիտմամբ Կէօրզըզեզին այս սենեակս
գտաւ, որու մէջ կար չըրիմ մը Թագու-
հւոյ մը ամբողջ ոսկրները պարունակող ։

(1) Շիրիմ բառով կ'իմանանք մարմինը պարունա-
կող աճիւնաձեւ քարը ։

Երկրորդ սենեակին մէջ, որուն դուռը նախասենեակին հարաւային պատին միւս ծայրն է, ուրիշ վեց ոսկրատուներ կան, որոնց շատերը ակօսաձեւ բաժնուած են։ Հիւսիսային արեւմտեան անկիւնը քանի մը ոտք վար կ'իջնուի սենեակի մը մէջ, ուր միայն նստարանի ձեւով երեք խցիկներ կան։

Նախասենեակը դառնալով՝ արեւմտեան պատին երեսը բացուած դուռ մը կ'երեւի, ուսկէ ուրիշ սենեակ մը կ'երթուի, որուն հիւսիսային արեւելեան եւ արեւմտեան կողմերէն բացուած դռներ կան, որոնց ամեն մէկէն դարձեալ ուրիշ սենեակներ կը մտնուի, իւրաքանչիւրը երեքական հանգստարաններով կամ նստարաններով եւ վրանին կամարներ դարձուցած։ Հիւսիսային պատին կողմի սենեակէն նեղ անցքով մը ուրիշ սենեակ մը կը մտնուի, որ այն ալ իր արեւմտեան կողմը դարձեալ ուրիշ հանգստարան մը ունի նստարանի ձեւով, եւ երկու հատ ալ հիւսիսային կողմը։ Այս երեք հանգըստարանները կամ մահճակալները քան զմիւս ամէնքը երկար են դիրքերնին։

Այս ծակերը կամ խորշերը, ինչպէս յայտնի կ'իմացուի, բոլորը մէկ ահագին ժայռի մէջ փորուած են ։

Գերեզմանէն դուրս ելնելով՝ յետ կը դառնանք մինչեւ աջ կողմն եղած առաջին ուղին դէպ 'ի յարեւմուտք, և կը շարունակեմք մինչեւ առաջին մեծ ճանապարհը՝ դարձեալ աջակողմը, որ Ամերոց Բլուր ըսած տեղը կը կոչէ, որուն վրայ յետոյ պիտի խօսինք ։ 10 քայլէն ձախ կողմերնիս ուղիի մի առջեւէ կ'անցնինք, յետոյ 22 քայլ քալելով՝ երկու կողմը խորշ խորշ բացուած ժայռեր կը տեսնուին, և աջ կողմը ճանապարհէն քանի մի քայլ ներսով՝ Դատաւորաց Գերեզմանն է ։

Այս յիշատակարանին հին շէնքն ալ բոլոր մէկ ժայռէ է, որ իւր գեղեցիկ պարզութեամբ բոլորտիքն եղած գերեզմաններէն կ'որոշուի ։ Ասոր մուտքն ճակատ մի ունի, որուն եռանկիւնաձեւը փայլուն տերեւներով, ծաղիկներով և պտուղներով զարդարուած է, թէպէտև չափականութիւն չունի ։ Դրանը և եռանկիւնիին բոլորտիքը գեղեցիկ շրջանակներ կան ։

Դաւթին ներքին կողմը և պատին

մէջտեղը փոքրիկ գեղեցիկ դուռ. մի կայ՝ խփուած. նեղ ցցաձեւ. շրջանակով մի պատած, և անոր վրայ արմաւենիով զարդ մի՝ վրան տերեւներով ։ Այս դռնէն ներս մտնելու ժամանակ դամբանական քառակուսի սրահի մի մէջ կը գտնեմք զմեզ, որոյ ձախ կողմի պատին երեսը երկու կարգ իրարու՝ վրայ գերեզմանական խորշեր կան, բայց այնքան նեղ՝ որ կ'երեւի թէ առանց շիրմի միայն պատուանդանը կը դնէին մեռեալը անոնց մէջ. վերի կարգը վեց և վարի կարգը եօթը խորշ ունի ։ Հիւսիսային արեւմտեան անկիւնը միայն մէկ խորշ կայ. և հիւսիսային արեւելեան անկիւնի գետինը ծակ մի կայ, ուսկէ 5 ոտք վար իջնելով փոքրիկ բակի (ատեանըրգ) մի վըրայ կ'ելնէ, որու ծայրը պզտիկ ցած դուռ մի կը բացուի, որ բարձրկեկ դարեւանդով (շրգմա) մի երկրորդ բակիկ մի կը տանի, ուր կան երեք խորշ դամբանական ։

Այն երկրորդ բակիկին ներքին պատին երեսը դարձեալ դուռ մի կայ խփուացած, որ միւսին պէս դարեւանդով մի քառակուսի աշտոր սենեակ մի կը

հանէ, որ իւր ներսի երեք երեսներուն վրայ կամարներ կան պատուհանի կամարներու պէս, որոնք Մ՚իհրապի ձեւ ունենալով, տակի կողմերնին նստարաններ կը կազմեն, որոնց վրայ չորս մեռեալ դնելու դամբաններ կան աջ ու ձախ դին, և երեք հատ ալ ներքին երեսին վրայ, և ասոր ձախակողմը ուրիշ դամբան մի եւս կայ, որու ներսի կողմը քառակուսի սենեակ մի է, և աջ դին հասարակ դամբան մի։

Դրան առջեւն եղած որահը յետ դառնալնուս, ներքին պատին երեսը մէջտեղը պարզ դուռ մի կը տեսնուի, ուսկէ քառակուսի փոքրիկ որահ մի կը մտնուի. հոս ալ երկու կողք իրարու վրայ դամբանական խորշեր կան երեք պատին երեսը. վերի կարգերը չորսական, իսկ վարինները երեքական։

Ձախակողմեան պատերեսին մէջտեղը դուռ մի կայ, ուսկէ ուրիշ քառակուսի սենեակ կը մտնուի, որու երեք պատին վրայ երեքական խորշեր կան, և երեք խորշերուն վրայ երկու կամար, որոնց ամեն մէկուն տակ դամբանական երկերկու խորշեր բացուած են։

Վերջապէս, հարաւային արեւմը- տեան անկիւնը գետնին երեսը ծակ մի բացուած կայ, ուսկէ սենեկի մի մէջ կը մտնուի, բայց այս սենեկին շէնքը անկատար թողուած է և գերեզմանա- կան խորշեր չունի։

Այն Դատաւորաց գերեզմանատը- նէն ելնելով՝ յետ կը դառնամք կրկին մինչեւ Ս՝ Փիրոյ Բլուրը։ Նայ բլուրս ինչ- պէս որ ինք անուամբը կը յիշուի, մա- խիրներու դէզ մի է բլրի չափ բարձրա- ցած. ոմանք կը կարծեն որ Սողոմոնի Տա- ճարէն հանուած ու հոս թափուած են. իսկ տեղացւոց կարծիքը աւելի խելքի մօտ է, որանք օճառի գործարանէ հա- նուած կը կարծեն։

Նշ. կողմի շաւիղը բռնելով և 280 մեդրի չափ տեղ քալելէն յետոյ, ձախ դիհուն փոքր ճանապարհէն 29 մեդր ներ- սով կը ձգուի պարտ մի հիւծր, 40 մեդր եր- կարութիւ և 3 մեդր լայնութեամբ։ Կար- ծող կայ որ այս նոր չէնքիս տեսակցողնե- րը Հերովդէս մեծին կոչուածդէմ դուրս չինել տուած ամփիթէատրոնին է (1), Թէպէտեւ այդպէս ձեւը, (որ անհնարին

(1) Յովսէփ, Հնախօս. Հր. 2։

քարերով՝ մինչեւ 2 մեդր երկայն ու-րայն եղողները կան,) բոլորակութիւն մի չեն ցոյց տար. ուստի ըստ այլոց՝ Մա-նասէ Թագաւորին սուրբ քաղաքէն բա-ւական հեռու՝ արուարձաններու բո-լորտիքը շինել տուած աշտարակի կամ ամրոցի մնացորդներ կը համարուին (1).

Եօթը րոպէ յառաջ քալելով Սիօ-նայ վանքին դրանը առջեւը, որ աջ թե-ւին վրայ կ՚ինկնի, քաղաքին պարիսպը կը հասնինք, որոյ հիւսիսային արեւմտեան անկիւնը Պսեփինեայ աշտարակին վրայ հիմ-նարկուած է, զոր Մեծն Հերովդէս շի-նել տուաւ՝ ութանկիւնի, և 70 կան-գուն, այսինքն 35 մեդրաչափ բարձ-րութիւն ունէր (2).

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Յովհաննու Ոսկեդեան գիւղը (Ն[illegible] [illegible]), Գնչէ Մ.ղէլոյի Փիլիպոսի:

Ճանապարհորդութիւն

Երուսաղէմէն մինչեւ Յովհաննու Ոսկեդեան գիւղը, զոր տեղացիք Այն—

(1) Յովսեփ. Հնախօս. Ժ. 4.
(2) Յովսեփ. Հնախօս. Ե. 12.

Պաղեծ կը կոչեն, երկու ժամու հեռաւորութիւն կայ, ուստի այն այցելութիւնը ընել փափաքող բարեպաշտ ուխտաւորք ինծէ կ'ուզեն հանգիստ երթալ գալ, պէտք է ձիով կամ յաւանակով ուղեւորին։

Յոպպէի դռնէն ելնելով ու Բեթլեհէմի ճամբան ձախ դին թողլով, 90 մեթր քալելէն յետոյ երկու ճանապարհ դիմաց կ'ելնէ. աջ դիու ուղին որ Յոպպէինն է՝ թողլով, ձախակողմեան ուղին յառաջ երթալու է, ուր 475 մեթրաչափ քալելէն յետոյ՝ աջ դին Պիրքէթ-Մամիլլա ըսած աւազանը կը հանդիպի. որ ըստ սուրբ գրոց Վերին աւազան կամ Վերի ճանապարհի աւազան ըսածն է(1). չորս դին Մահմետականաց գերեզմանոց է. Գեհոնի ձորին ծայրը կ'ինկնի, ուր Սադովկ մեծ քահանայապետը եւ Նաթան մարգարէ Դաւթի հրամանաւ իւր որդին Սողոմոնը թագաւոր օծեցին։

Նոյն աւազանին մօտ Եսայի մարգարէն Աքազ թագաւորի ժամանակ մարգարէանալով ըսաւ այն նշանաւոր խօս-

(1) Դ. Թագ. Ի.

քը. « Ահա կոյսն յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ (1)։

Այն աւազանին Հիւսիսային գետանին վրայ բանակեցաւ Ռափսակ՝ Սենեքերիմ թագաւորի մեծ սպարապետը, երբ Երուսաղեմին տիրելու եկաւ, և Հրէից պատգամ խրկեց որ հնազանդին Ասորեստանեայց թագաւորին. և Աստուծոյ դէմ եւս արհամարհանօք խօսեցաւ։ Իսրայելացիք իրենց Եզեկիա թագաւորին հետ աղօթքի և ապաշխարութեան դիմեցին. և Եսայի Աստուածակոյս կողմանէ եկաւ թագաւորին մօտ և քաջալերեց զինքը որ չվախնայ։ Ասորեստանեայք չպիտի մտնեն երբէք Երուսաղեմ, ըսելով։ Հետագայ առաւօտուն Ռափսակ ելաւ ու տեսաւ որ իւր բանակէն 185000 մարդիկ յանկարծամահ եղած են, ուստի մնացեալ զօրքերն ժողվելով անմիջապէս փախուստ տուաւ (2)։

Այս աւազանէս շատ հեռու չէ Հերովդէս Ագրիպպայի թաղուած տեղը, ուր որ Յակոբոս առաքեալը սպան-

(1) Եսայի է. 3—14։
(2) Դ. Թագ. ԺԸ. 17. ԺԹ։

ծել և Պետրոս առաքեալը բանտարկել տուաւ, և ինքը Պաղեստինի Կեսարիայ մէջ մնաւ. երբ ժողովուրդն իրեն աստուածային պատուով կը գովաբանէր(1)։ Նաւահանգէն 100 մեթր դէպ 'ի յարեւմուտք գերեզմանական գետնափոր մի կայ, ժայռի մէջ փորուած, որ յիշեալ Հերովդէսին կը կարծուի։ Այս տեղը 1861ին փորել տրուած ժամանակ, պատի մի երեսը գրուած գտնուեցաւ Հայերէն գիրով Սարգիս Վարդապետ, որ յայտնի ապացոյց մի է որ յառաջագոյն այն տեղը Հայոց ձեռքն էր։ Նախանձաս օտարազգիք գիշերանց երթալով եղծեցին գիրերը։ Դանիէլ Իգումենոս, ազգաւ Ռուս, 12դ դարուն սկիզբը ուխտաւորութեան եկած ժամանակայս տեղուանքս վանք մի տեսած է, ինչպէս կը գրէ իւր պատմութեան գրքին մէջ։ Նոյնպէս և միջին դարու մէջ կրօնաւորաց վանք մի ըլլալը Լատինք կը վկայեն իրենց վանուց յիշատակարաններէն ցուցանելով. և որովհետև կրօնաւորաց Հռոմէական ըլլալը չխօսիր, ինչպէս ուրիշ տեղեր եղածները կը յիշատակէ,

(2) Գործք ԺԲ.

վան որոյ ամենայն հաւատութեամբ կը կարծուի որ բնաւ կրճատուածք չոյ էին։

Աւազանին արեւմտեան կողմն է Աբրահամեան Մամբրէի անուամբ վանքը, ուր տեղ յիշեալ Սրբուհին շատ նահատակներու մարմինները թաղուած է 614 թուոյն միջոցները։ Եւ այս Սրբուհւոյս անուամբը աւազանն ալ իւր անունը առած է, որ Պիրքէթ-Մամիլա կը կոչուէր, և յետոյ միջին դարու մէջ Պատրիարքի լիճ եւս կոչուեցաւ։

Ճանապարհը շարունակելով 5 րոպէի չափ՝ կը հասնինք տեղ մի, ուր ճանապարհը երկուսի կը բաժնուի, աջ կողմինը բռնելով և 440 մեդր կամ 7 րոպէ քալելով, դարձեալ ճանապարհը երկուսի կը բաժնուի։ Աջ կողմինը թողլով, որ Յովհաննու Ծննդեան գիւղը կը տանի, ձախակողմեան ճանապարհը 10–12 րոպէ գնալով Խաչաւանքը կը հասնինք։ Այս վանքը որ Վրաց էր, և հիմակ Յունաց ձեռքն է, միջին դարու ամրոցներու ձեւով շինուած է ձորի մի մէջ, որ վանքին անունովը Խաչաւանքի յոր կը կոչուի, Վատի-էլ-Մասլըպէ։ Եկեղեցին 7ր դարուն Հերակլիոս կայսր

շինել տուած է, այն տեղւոյն վրայ, ուր ըստ Յունաց աւանդութեան՝ Քրիստոսի խաչափայտին ծառին տեղն է։ Սուրբ Աւետի հաւանական աւանդութիւն մի կայ թէ՝ Հերակլ կայսր Պենոց փայտը յետ դարձուցած ժամանակ այս տեղ հանգիստ առած և խաչին վրայ լուսեղէն կամար մի ծագած տեսած է, և 'ի յիշատակ սոյն սքանչելեաց այս եկեղեցին կառուցած է(1)։ Աւագ խորանին տակը տեղ մի ցոյց կուտան Յոյնք, որ տեղւոյն համար կ'ըսեն թէ Սուրբ Ծառը տնկած էր։ Եկեղեցւոյն շէնքը հին է. յատակը բոլոր մուսիններով զարդարած է ծաղկանկար. Նոյնպէս և պատերուն և մոյթերուն ծեփին վրայ բոլոր պատկերներ նկարուած են և պատմական հատուածներ ալ կան։ Այս վանքիս մէջ տասը տարիէն 'ի վեր է որ Ժառանգաւորաց դպրոց հաստատուած են։

Խաչափայտէն ելնելով՝ 200 մեթրաչափ դէպ 'ի հիւսիս կ'երթանք Ճանապարհին վրայ ելնելու, որոյ ուղղութիւնըն է դէպ 'ի յարեւմուտք՝ Խաչավանքի ձորն անցնելով, 20 քայլէին (վանքէն

(1) Հանդէս. պատմ. Ս. Երուսաղէմի. յեր. 291.

սկսելով) տարածութի մը վրայ կ'ելլենք և յետոյ Սարփ-Էլ-Մասիհ ըսուած ձորը կ'իջնենք ։ Քառորդ մը ժամ անկէ ետքի մը վրայ ելնելով դէշ ճանապարհէ մը և Սարփ-Էլ-Կադոսէ, Պետրութիւներու ըսուած ձորէն անցնելով, աջ դին կը հան-դիպի Խէրպէթ-Նահլէի աւերակները ։

10 րոպէ մը ևս յառաջ երթալով Սարփ-Տիմաղ ձորին ծայրէն կ'անցնինք, և աջ դին բլրին ստորոտը Խէրպէթ-Այն-Ճ'ատէ ըսուած գիւղին աւերակները կը տեսնուին ։ Ըզրին վրայ հասած ժամանակնիս յարևմուտքէն Միջերկրական ծովը և յարևելքէն Համբարձման լե-ռը սուրբ քաղաքին մէկ մասին հետ միասին կը նշմարուին ։

Աջ կողմը ձոր մը Թողլով, ուր իջ-նելու ճանապարհն ալ կ'երևի, ձախ կողմէն` քառորդ մը ժամ քալելէն յե-տոյ, Պէյթ-Իքսա ըսուած գիւղի մը ա-ւերակներու մօտէն կ'անցնինք ։

Հոս քարոտ ճանապարհէ մը դա-րուվար իջնելէն յետոյ, 17 րոպէին Յով-հաննու Ծնունդեան գիւղը կը հասնինք ։ Մի-ջին դարու Հայք Լ[illegible] կ'անուա-նէին ․ իսկ տեղացիք իրենց լեզուով Այն

պ՚Բնագրէն կը թողենք), կ՚երեւի, որ հին ժա-
մանակներ Սըսի բաւ քաղաքն է, որ
Յովդիթի ցեղին մէջ էր ու քահանայից
ցեղին կը վերաբերէր (1)։ Կղզւոյն քով
մի վանք շինուած է. Տէր Լատինք
վանք մի և եկեղեցի մի ունին։

Զաքարիա քահանայապետն իւր կը-
նօջն Եղիսաբեթին հետ աստ կը բնա-
կէր, ուր ծնաւ և Յովհաննէս Մկրտիչ։
Քրիստոնէութեան առաջին դարերէն
՚ի վեր եկեղեցի շինուած կար այս տեղ.
Դանիէլ Եգումենոս Ռուսը 1113 ին ե-
կած ժամանակն տեսած է վանքեր ու ե-
կեղեցիներ։ Լատինաց ձեռքն եղած ե-
կեղեցին 1621 ին տաճկի միջնակի մէջ
գրաւուած ժամանակ, յաւարած են և ե-
կեղեցին [illegible] վանք մի ևս քովը
շինած են։ Եկեղեցւոյն աւանդատան
գաւթին մէջն է, 7 աստիճանով վար իջ-
նելու վայրին խորան մի՝ ժայռին մէջ փո-
րուած։ Աստ ծնաւ, կ՚ըսեն, Յովհան-
նէս Մկրտիչ։

Լատինաց վանքէն երեւելով՝ այն դին
եղած [illegible] և [illegible]
[illegible]

(1) [illegible]

3 րոպէէն աղբիւր մը կը հանդիպի․ տեղացի քրիստոնեայք Ս. Աստուածածնի աղբիւր կ'անուանեն․ բաւ ջուր մը ունի և գիւղի պարտէզներն անով կը ջրեն։ Այնչեալ աղբիւրին մօտ Մահմետական գիւղացւոց աղօթարանն է, որոնք 500 հոգւոյ չափ կան, իսկ քրիստոնեայք հարիւրի մի չափ։

Աղբիւրէն դէպ յարևմուտք գնալով, և 100 մետր քալելէն յետոյ ձախ թևի վրայի ճամբով բլուր մը վերայ կ'ելնուի, և 4 րոպէէն երկաթի դրան մը քով կը հասնի․ այս դուռը հին եկեղեցւոյ մը է, զոր Լատինք այցելութեան կը կոչեն, և կ'ըսեն աւանդութեամբ թէ՝ Զաքարիա քահանայ այս տեղ ամառանոցին տուն մը ունէր, և թէ Մարիամ սուրբ Կոյսը այս տեղ այցելութիւն ըրաւ իւր մօր քրոջ աղջկան Եղիսաբեթին։

Այն վանքը խախտած աւերակ էր, և կը կոչուէր Լեռնակողման վանք, և մինչև հնգետասաներորդ դար քրիստոնեութեան ձեռօք մնացած է մեր քով․ վեշտասաներորդ դարուն մէջ, կամ քիչ մը յառաջ, Մաղրըպի արքայիքը

յարձակելով սուրբ Երկրին մէջ, յիչեալ գիւղի բոլոր վանականները հարստահարեր ու հալածեր և վանքերուն տիրած են։ Չորս եկեղեցիք կը յիշուին այն ժամանակներն Հայոց ձեռք գրաւուած, որք են՝ Սուրբ Կարապետի, Սուրբ Վխմի, Սուրբ Աստուածածնի և Սուրբ Ծննդեան (Յովհաննու Կարապետի). վերջինը նոյն է, ինչպէս կը կարծուի, զոր այժմ Լատինք ունին, և ինչպէս վերն ըսինք, 1621ին ստացած են։ Այցելութեան վանք ըսածը Լատինաց, կ'երեւի որ Սուրբ Աստուածածնինն է, ուր Տիրամայր սուրբ Կոյսն ողջոյնը տուաւ Եղիսաբեթի։ Այն վանքին մէջ աղբիւր մի կար, որ Մաղքայնոց վանքը կործանած ժամանակնին աղբիւրն ալ անհետ եղաւ, բայց հիմակ Թէ հին եկեղեցւոյ աւերակները և Թէ աղբիւրը գտնուած է նորէն և Լատինք իրենց սեփականած են։ Հաննէ ջրհոր մի կը յիշատակէ հոս, որոյ ջուրն է կ'ըսէ, բարեհամ, ցուրտ և անոյշ[1]։

Այս տեղ կը կարծուի որ Թլփատեալ ըլլայ Սուրբ Յովհաննէս Մկրտիչ։

(1) Պատմ. Ս. Երուսաղէմի, եր. 293։

Հերովդէս ՄԵԾՆ ԲԵԹՂԷՀԷՄի և շըր-ջակայ գիւղերուն փոքր երեխայ.քը ըս-պաննել տուած ժամանակ, Եղիսաբէթ իւր մանուկը գրկելով փախաւ և մէծ քարի մի կռթընելով պատսպարուիլ կ'ուզէր. քարը մոմի պէս կակղնալով՝ իւր մէջն առաւ պահեց մանուկը։ Այ-չեաւ մէ՛ծը սոյն վանքիս մէջն է, որու վրայ մատուռ կար Սուրբ Վ Յովի անուամբ ըստ Հայ յիշատակարանաց, և բարե-պաշտ քրիստոնէիցմէ յարգանք կ'ընդու-նի մինչեւ ցայսօր։

Եկեղեցւոյն մնացորդներէն դեռ կ'ե-րեւին, նոյնպէս և վանքին, զոր և Հան-նէ կը յիշատակէ, և կ'ըսէ որ կանգուն աւեռնուած մնացորդ չէնքը գինետուն մէկ մասն է (1)։ Վանքը՝ եկեղեցիէն ել-նելուն՝ ձախ դին կ'ինկնէր, և Հաննէի լսած ջրհորը ներսի կողմը դրանը կից էր, որ մինչեւ ցայսօր դեռ կայ։

1861 Թուականէն 'ի վեր է որ Ֆրան-ցիսկեանց Լատին միաբանութիւնը իրեն սեփականած է սոյն վանքս ալ, ո-րուն տեղը մաքրել տալով հին եկեղե-ղեցին գտնուած է հիմակ։ Ներս մտած

(1) Պատմ. Ս. Երուսաղէմի. յերես 293։

ժամանակ աջ դրան խորշին մը մէջ Վէմին մէկ կտորը կ՚երեւի, որու մէջ պահուեցաւ Յովհաննէս Մկրտիչ: Հիւսիսային դրանն պատին մէջ Մկրտութ—Բեթանի աւազանին տեղը դեռ կը տեսնուի քար | ատինք հոյակապ եկեղեցւոյ ձեւանկէրպութեանը տեղեակ չըլլալով, չենք գիտեր, կ՚ըսեն, թէ կը նշանակէ այս մեծկակ խորշը այս պատին վրայ, և ոգիտութեամբ կը կարծեն թէ Սուրբ Յովհաննէս հոն թաղուած պիտի ըլլայ:

Այն Հայոց աւերակ վանքէն դուրս ելնելով՝ քիչ մը դառնալու է մինչեւ Ճանապարհին վրայ, ուր տեղւոյ դէպ ի յարեւմուտք չհասած երթալով դառնալէժ ճամբու մը եղերքով, 20 րոպէէն յետոյ աջ կողմէ վրայ Պաղտնիէ գիւղը կ՚երեւի, որու առջեւէն կ՚անցնին ուխտաւորք Նազարէթ երթալու ժամանակնին: Յետոյ քարակոյտ տեղ մը կը հասնուի ճամբուն մօտ, որուն ծածկուած է ժայռին մէկ մասը, այն որու վրայ Ս. Յովհաննէս կը քարոզէր:

12 րոպէէն յետոյ Սիամի—Ջամոսան ըսած ձորէն կ՚անցնինք, որ գեղեցիկ մշակուած հողեր մէ է, այգիներով զար-

դարձուած և առապարուտ. մի կէս. կը ձգէ գետինը։ Յիշեալ ձորին ձախակողմեան եզերքով գնալով դէպ յարևմուտք՝ ուղ-ղեալ՝ 10 րոպէ անդին անկիւն մի կը հանդիպի, հոն հպատակելուն՝ աղօթողի ճանապարհը բռնել երթալու է։ Հիւ-սիսային դին Մոդիինը կ'երեւի, որ հիմակ Մոդիա կը կոչուի, և բարձր բլրան մի գլուխը շինուած է։ 17 րոպէին Նայ-Խաթփա կը հասնուի, ուր քանի մի ձի-թենիներ և փոքրիկ շէնք մի կայ։ Այս տեղ ձիէն իջնել պէտք է, որովհետեւ դառուվար տեղ մի է դժուարին և քա-նի մի քարէ աստիճաններէ կ'իջնուի, ուր տեղ կայ եղջերենիի գեղեցիկ ծառ մի պզտի արտի մի մէջ, որ Նայ-Խաթփային աղբերակին ջուր կը ջրուի։ Յիշեալ ջու-րը թէպետեւ նուազ բայց սպառու-կան է, և փոքրիկ աւազանի մի մէջ կը թափի։ Այս հասած ժամանակնիս 12 տղայ քարափոր աստիճաններէն վեր կ'ելնուէր, ուր դռնակ մի կայ, որ է Յովհաննու Մկր-տչի Նայրի դուռը։ Այս տեղ, որ Յով-հաննու անապատ կը կոչուի ; ձգնեց կանա-կոծ վայրինակ Մեծն ի ծնունդն կնքաձօյ; և պատրաստուեց մինչև յայտնութեան

թիւն կոչելու զմարդիկ. և Մեսիայի գալուստը ծանուցանելու :

Այրը լերան մի ստորոտին վրայ շինուած և Ինէ-էկնէ ժողին վրայօք երկնցած է, որ այս ըսած տեղս ձորին խիստ խորունկ տեղն է. բնակարան այր է, և 7 մեդր երկայնութիւն, 3 մեդր լայնութիւն և նոյնչափ ալ բարձրութիւն ունի. դուռը դէպ 'ի հիւսիսային արեւմուտք կը բացուի : Աղօթարանի և վանքի մի տեղւոյ մնացորդներ դեռ կ'երեւին, որ ժամանակաւ այրին վրայ շինուած էին :

Այրին դիմաց՝ հիւսիսային արեւմտակողմը Սարաֆ ըսուած պզտի գիւղը կը տեսնուի :

Յովհաննու ծննդեան, կամ Այն-Քարեմի մէջ և անոր մերձակայքը գըտնուած ուխտատեղիքն ասոնք են զոր ստորագրեցինք :

Անոնցմէ դուրս է Փիլիպպոսի աղբիւրը, ուր ուխտաւորաց սովորութիւն եղած չէ այցելելու, ըստ որում ոչ շէնք կայ և ոչ ալ ճանապարհի կողմանէ պատեհութիւն ունի հանդիպելու : Յովհաննու Ծննդեան գիւղէն մէկ ժամ և մէկ քառորդ կը տեւէ, ճանապարհը խիստ

քարոտ ու դժուարակոխ է. Ասուէ-Հանէ բռնուած ձորի մը, որ հին ժամանակ Երուսաղէմէն Պէյթ-Ջիպրիլ ու Գազա գնալու մեծ ճանապարհ էր (1), հարաւոյին արեւմտեան եզերքը կ՚ինկնի. լեռնադաշտակի ծայրը, զոր տեղացիք Այն-Հանէ կը կոչեն, ջուրը հեռաւոր տեղէ մի գետնափոր ճանապարհով կուգայ, եւ այս տեղ փոքրիկ աւազանի մը մէջ ժողվելով, յետոյ դուրս կը թափի. աւազանը պզտի խորանի ձեւով շինուած է: Այս տեղ մկրտեց Փիլիպպոս առաքեալ Տիրոջն հրամանաւ Կանդակէս թագուհւոյն Եթովպացի ներքինին, որ Երուսաղէմ եկեր էր Աստուծոյ երկրպագութիւն ընելու, ու Գազա կը դառնար կառքի մէջ նստած, եւ Եսայի մարգարէի գիրքը ձեռքը: Փիլիպպոս տեսնելով նորա ջերմ հաւատքն ու ճըշմարտութեան համար ունեցած փափաքը, թէ՛ նորա միտքը լուսաւորեց մարգարէին մութ խօսքերը պարզելով եւ թէ մկրտութեան կնիքը տուաւ (2):

Այն տարիներս 1859ին Յովհաննէս Ա.

(1) Գործք. Ը. 26:
(2) Գործք. Ը. 27—40:

Պատրիարքը զինեց հանդերձ փառքի պայ-
տէրոջը, որու մէջ կան այգիներ ու թը-
զենիներ, և հոման Հայոց անմահական թա-
գաւորութեան, այսու ամենայնիւ մինչեւ
ցայսօր դեռ. ձեռնարկութիւն մի եղած չէ,
որ ժամանակին կրնայ ծառայել անմա-
հանութեան իրաւունք հաստատելու
համար ։

Երուսաղէմի հայրապետութեան պատրիարքար-
մը այգիին մէջ երեք սիւներ կան, որոնց
կը ցուցնեն թէ հին ժամանակ եկե-
ղեցի մը պատկանած են այս տեղս ։

Այն ատեններուն Հռոմայեցիք կայ Ներ-
լինէին զնայցա, բայց Համալսարանը քա-
րուքս ուսումնարան է ։

Ասոր կը քաղաք մեր Տաճարաց այ-
ցելութիւնը ։

ՄԵՏԱՂԱՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի Յորդանան. Դ. Մարտին ժամ. Է. Ուղեց.

Յորդանանու սրբութիւնը
մեր ազգին մէջ դարէ մի քիչ մը եղ փա-
փանուած է, թէև Հանրապետութեան
րութեանց համար որ Զ ժամ հեռաւոր է,

և թէ աստուածապաշտական մանկունքն վայելեն զայս հանդէսը, որ ամեն տարի սպասեն չլինիր, մէկ կամ երկու անձինք զոհ կ'երթան խղճի ուխտապահութեանը։ Սուղում ասեղ [illegible] թեան դէմ եւղած զեղծմունքները, որ ճշմարիտ բարեպաշտ և պատուոյ արժէ մարդ։ Մի՛ երբէք չընդունիր և ոչ ընդունած ունենայ։ Յունաց ուխտաւորքը, որ ամեն տարի սովորութիւն ունին գնալու, ասոնք ալ կանուխ կը սպասաւորին գետին մէջ լուացուելու և կրկին մկրտուելու. այս սովորական է որ բանակներն զանոնք հոն սպասեն չեն բերեր մէջտեղ։

Սուրբ Աթոռս 'ի հին ժամանակաց սովորութիւն ունի քանի մի ուղտի բեռ Յորդանանու ջրէն բերել տալով, բարեպաշտ ուխտաւորաց բաժնելու։ Այս չէ անգամ Լուսաւորչեանց եկեղեցին կը տանին, և անով մկրտութիւն կ'ընեն. կամ մկրտութեան ջուրին կը խառնեն, որ խիստ մեծ յարգ ունի բարեպաշտին։ Եկեղեց [illegible] Այսպէս Յորդանանու ջրէն, այն Յորդանանին [illegible] լինելով աստուածային հրաշալիքն։ Ամէն.

Եսայի Ա. Պատրիարքին չինու պատուական ամաններ շնորհած էր մէջը դնելու համար, որոյ փոխարէն և Վեհ. Կայսրը իւր և իւր Կայսրուհւոյն կենդանագիր պատկերները յուղարկեց (1)։

Այն ճանապարհորդութիւնը, ինչպէս նաև հետագայ Երկոտասաներորդ և վերջին ճանապարհորդութիւնը Այցելութեանց կարգին մէջ դասաւորելիս ուրիշ նպատակ չունի, բայց միայն առաջարկել նոյն սահմաններուն մէջ գտնուած սուրբ Տեղերը, ուր Յիսուսի Քրիստոսի մարմնաւոր Տնօրէնութեան խորհուրդները կատարեցան։

Ճանապարհորդութիւն

Յոպպէի դռնէն դուրս ելնելով, անմիջապէս ձախակողմեան ճանապարհէն՝ Գեհոնի ձորն աջ կողմը ձգելով և Սիոն լերան ստորոտովը յառաջ կ'երթանք, յետոյ աջակողմը Ակեղդամայի առջևէն կ'անցնինք և 15 րոպէին Յաբայ-Հոր (Աբբայ-Հոր) կը հասնինք։ Ասկէ Կեդրոնի հեղեղատը բռնելով,

(1) Տես 'ի ԹԻՒՍ. Գ. ամսոյ. Հրեշտակ.

որոյ նախ ուղղութիւնն է դէպ 'ի հարաւային արեւելք, մէկ ժամ և 5 րոպէին հանգիստ ճամբով Կեդրոնի ձախ եզերքին վրայ գնալով Երուսաղէմն աչուընէս աներեւոյթ կը լինի. և մէկ ժամէն յետոյ ճանապարհին վրայ աջ դին հոր մի կը հանդիպի, որուն մէջ միշտ ջուրը պակաս չէ։ Ութ բոպէ եւս քալելով, ձախ դին ճանապարհին մօտ Մղէփէ ըսուած վրանաքնակ ժողովրդին գերեզմանոցն է. ուր Տէրվիշի մի գերեզման ալ կայ, որուն ջերմեռանդ Արաբացիք ուխտի գնալով ուղտի հնացեալ համետներ ու աթոռներ, կժեր, կոտրտած խեցամաններ, վրանի կտորուանքներ և այլն, կը նուիրեն։ Յօթը բոպէին՝ աջ կողմը Կեդրոնի մէջէն անցած ուղին կը մտնենք, և ձախ կողմը նոյն հեղեղատին եզերքովը յառաջ կ'երթանք, որ 50 մեդրաչափ հեռու՝ ըսած հեղեղատը օրինաւոր վիհ մի կը դառնայ երկու ձեռպացեալ քարաժայռ պարիսպներու մէջտեղը փորուած. և ժայռին երեսը մողի նման ծակեր բացուած, որոնց մէջ հին ժամանակները ճգնաւորներ կը բնակէին։

Բազմէ բազմեն Յունաց Հայր Սաբայի վանքը կը հանդիպի, որ խիստ նշանաւորական գերեզման մը ունի։ Քրիստոնէութեան առաջին դարերէն սկսեալ բազմաթիւ ճգնաւորներ կուգային այս տեղ բնակելու։ Եւդոկիա Թագուհին աշտարակ մը շինել տուած է վանքին հարաւակողմը, որ իւր աւերակները կը մնայ, և ուխտաւորները ատոր մէջ կը բնակեցընեն՝ եթէ գիշերը մնալու ըլլան։ Դրանը այնչափ բարձր շինուած է, որ խիստ երկար սանդուղ մը պէտք է վեր ելնելու համար։ Ինչ ժամանակ յետոյ Ս. Եւթիմիոսի աշակերտ Հայր Սաբա իւր վարդապետին յաջորդելով այս վանքը շինեց։

Վանքին դուռը հանդէպան, կրօնաւորներէն մին, որ վանքին կից եղած հիւսիսային բարձր աշտարակին վերայ պահապանութիւն կ՚ընէ, զամբիւղ մը վար կը կախէ, և անով կ՚ընդունի Երուսաղէմի Յունաց պատրիարքին կողմէ տրուած յանձնարարական գիրը, առանց որոյ կարելի չէ որ ներս մտնել ընդունին։ Թուղթին վաւերական ըլլալը ստուգելէն յետոյ՝ նշան կուտայ, և

անմխիթարութեան ամրակուռ երկաթէ դուռը
կը բացուի։ Յետոյ ատոր սանդուղ
մը վար կ'իջեցնեն. երկրորդ երկաթէ
դռնէ մը անցնելէն յետոյ՝ ուրիշ աւելի
կարծես սանդուղ մը կը կախեն և պզտի
քարայատակ դաւթի մը մէջ կ'ելնենք։
Այս աւել փոքրիկ ճամբա մը կայ քու-
թովկ ձեւով, որու մէջ է Հայր Աբբայի
պալատը։ Աւելի քով է Ա. Նիկողայոսի ե-
կեղեցին ժայռի մէջ փորուած. խիստ
հինաւուրց եկեղեցի է։ Անկէ՝ ուրիշ
փոքրիկ ճամբա մը կը մտնենք, ուր ամ-
փոփուած են Պարսից Խոսրով Թագա-
ւորի զօրաց ձեռքով նահատակուած
ճգնաւորներուն մասունքները, 7 դա-
րուն մէջ։ Այն ժամանակներս այս վան-
քին մէջ 4000 կրօնաւոր կը ճգնէին, և
շրջակայ [illegible] մէջ գտնուած
բոլոր ճգնաւորաց թիւը 10,000ի կը
հասնէր, որոնք ամենքը Հայր Աբբայի
վանքին վանահօր հրամանին տակն էին։
Վ[illegible] քանակութ
հին է, [illegible] և [illegible]
[illegible] զարդարուած։
Արծաթաւոր [illegible] մը ցոյց կու տան
և [illegible] թէ Հայր Աբբայի անկած է,

որուն արմատները կորիզ (կուտ) չունին։

Յովհաննու Կոստանդնուպօլսեցւոյն գերեզմանն ալ հոս է կ'ըսեն, որուն վրայ է իւր ճգնարանը։ Անկէ կ'երթուի այր մի և փոքրիկ մատուռ մի միասին յատակով, ուր Հայր Սաբա բնակած է կ'ըսեն, և Կեդրոնին վրայ կախուածի պէս շէնք մի է և Առիւծի այր կը կոչուի։ Յոյնք կը պատմեն թէ, օր մի Ս. Սաբա դուրս ելած ըլլալով, առիւծ մի կուգայ այրին մէջ պառկելու. յետ դառնալուն սուրբը, առիւծը կը տեսնէ, և Աստուծոյ ապաւինելով՝ ըստ սովորութեանը ներս կը մտնէ և կըսկսի ժամերգութիւնն ընել. դեռ խօսքը բերանը՝ քունը կուգայ՝ կըսկսի մրափել. առիւծը քովը կը մօտենայ, թեզանիքէն խածնելով կը քաշէ դուրս կը տանի. կ'արթննայ Ս. Ճգնաւորը, ներս կը մտնէ և նորէն կը շարունակէ իւր աղօթքը. դարձեալ մրափը կուգայ, և երկրորդ անգամ առիւծը զինքը քաշելով դուրս կը հանէ այրէն։ Նոյն ժամանակ խիստ ձայնով մի կը դառնայ կ'ըսէ առիւծին. Մինակ քեզ և ինծ բաւական տեղ չկայ այս տեղ։ Իւր անկիւնէն միջոցը կուտայ կէսն

դանուոյն որ հոն պտուկի․ առիւծն հը-
նազանդելով՝ այն օրէն 'ի վեր սուրբ
Ճգնաւորին հետ մէկ տեղ կը բնակի
այրին մէջ։ Յայսմաւուրքին մէջ կը յի-
շատակի թէ՝ Ս․ Գերասիմոս իւր խիստ
սրբութեանը համար առիւծ մի իրեն
կըսպասաւորէր, Յորդանանէն ջուր բե-
րելով(1)։ Այս սուրբին վանքը քիչ մի
վարը պիտի տեսնենք։ Ժամանակաւ
այն երեւելի վանուց մէջ Հայ միաբանք
եւս կը բնակէին, ինչպէս կը վկայէ Հան-
նէ(2), և վանքին մէկ մասն ալ իրենց ձեռ-
քըն էր մինչեւ յիշեալ պատմագրին
ժամանակ․ բայց թէ ո՞ր ժամանակէն
'ի վեր հեռացած են անկէ, յայտնի չէ։
Դեռ մինչեւ ցայսօր ականատեսք կը
վկայեն, թէ մեծ եկեղեցւոյ գմբէթին
մէջ հայերէն երկաթագիր գրուածներ
կան․ նաեւ հայերէն ձեռագիր գրեանք
եւս գտնուած են հոն։

Հայր Սաբայի վանքէն ելնելով, եւ
Երուսաղէմի ճանապարհը յետ դառ-
նալով՝ Կեդրոնի եզերքը բռնած, մինչև

(1) Յայսմ․ Ապրիլ 25։ Հաննէ․ պատմ․ Ս․ Երուսաղէմի․ յեր․ 278։

(2) Հաննէ․ անդ․ յերես 279։

աջ կողմի աւազին. ճանապարհը՝ որ 20 րոպէ կը տեւէ, Կեդրոնին միւս եզերքը կ'անցնի։ Քանի մի քայլ եւս առնելով, աջ կողմը ճամբուն վրայ Պէր-էլ-Նըքաղ կոչուած աղբիւրը կը հանդիպի. ասկէ անդին Պետուիններու սահմանն է։ Բոլոր այս ճանապարհները ձորերուն հեղեղատներուն մէջ, լեռներու ստորոտներուն ու գլուխներուն վրայ ըլլալուն խիստ յոգնեցընող են։ Թէպէտ ոլորուն ճանապարհները շատ են, այսուամենայնիւ գլխաւոր ուղղութիւնն է դէպ 'ի յարեւելք, և ամենաաստուկոյն անապատի մի մէջէն ալ կ'անցնուի է։

Բառորդ մի եւս քալելէն յետոյ, բարձր տեղ մի կը հասնինք, ուսկէ կը տեսնուի Մեռեալ ծովը։ 25 րոպէ աւելի անդին ձախ Թեւի վրայ, ճանապարհին մօտ սառնիճ մի կայ Պիր-էլ-Նեմրա անուանով, որու մէջ երբեմն ջուր կը գտնուի, բայց գոյնը ճերմըկեկ է։

Տասը րոպէ եւս յառաջ երթալով քարակոյտեր կը հանդիպին խորհրդով դիզուած, որպէս զի Մահմետականք իմանան որ այս տեղերս Նէպի-Մուսայի դիմաց կը գտնուին. Նէպի-Մուսա,

ոյժաքինքն Մովսէս մարգարէ լեառնը, խիստ հին վանքերէն մին է, 4 ։ դարուն մէջ հիմնարկուած։ Խոսրով Թագաւորի զօրքերը սոյն վանքին ալ չխնայեցին ։ Ժամանակէ յետոյ մահմետական Արաբացիք հաւատալով Թէ Մովսէս մարգարէ ասոր մէջ Թաղուած է, տիրեցին անոր եւ քիչ շատ փոփոխութիւններ ընելով՝ Մինարէ մի եւս քովը տնկեցին. պահպանութիւնը քանի մի Հնդիկ կրօնաւորներու յանձնուած է, որոնք քրիստոնէից չեն Թողուր ներս մտնելու ։

Իսկ Թէ Մովսէս մարգարէն ինչպէս այս տեղ մեռաւ եւ Թաղուեցաւ, աւասիկ Մահմետական Արաբացւոց աւանդութիւնը ։

Հարիւր քսան տարեկան հասակին հասած էր Մովսէս՝ առանց եւ ոչ մէկ փոքր տկարութիւն մի զգալու իւր ծերութեան պահանջելովը, ըստ որում Աստուած, որու սիրելի էր, խոստացած էր որ այս աշխարհիս մէջ Թողու զինքը եւ իւր քով չկանչէ՝ մինչեւ որ ինքն իւր յօժար կամօքը գերեզման չիջնէ ։ Մովսէս, որովհետեւ գիտէր Թէ իւր ժողովուրդը իւր մահուանէն յետոյ ուղիղ

ճանապարհէն մօտենալով՝ Աստուծոյ բարկութեանը պիտի հանդիպէին, մեռնելու փոյթ չէր տանիր, և կը զգուշանար ամենեւին գերեզմանի չմօտենալու ։ Սակայն ժամանակն եկած հասած էր նորա մարմնոյն յաւիտենական հանգիստ տալու ։ Օրին մէկը, երբ նա լեռներու վրայ կը շրջէր, ձիւնի նման ճերմակ բլրի վրայ չորս անձինք տեսաւ, որոնք մեծ աշխատանքով ժայռին կողերուն վրայ խուց մի կը փորէին ։ Ասոնք Աստուծոյ չորս հրեշտակներն էին ու- թանձրկեկ վերարկուով մի պըլլուած էին, որ ապահովապէս կարենան խաբել մարգարէն ։ «Ի՞նչ կ՚ընէք դուք այս ամայի տեղը» հարցուց իրենց Մովսէս ։ «Մենարան մի կը փորենք, ուր տեղ մեր թագաւորը պահել կ՚ուզէ իւր ամենէն թանկագին գանձերէն մինը, — —պատասխանեցին աշխատողները. —Ասոր համար է որ այս ամայի տեղը եկանք փորելու ։ Մեր գործը գրեթէ լըրացած է. հիմակ պիտի սպասենք այս տեղ մինչեւ թանկագին գանձուն գալը, որ շատ չուշանար» ։

Արեգակն իւր կիզիչ ճառագայթ-

նէրը կը սփռէր ; և մօտ տեղերը տեղ
մի չկար որ ջերմութենէ պատսպարուի։
Փորուած խոռոչը միայն աղուոր շուք մի
և պատրողական զովութիւն մի կ՚ըն-
ծայէր . Մովսէս խիստ յոգնած լինելով
մէջը մտաւ որ պահ մի հանգիստ առ-
նու , և ներսի կողմը նստարանի նման
քարէ յօրինուած տեղւոյն վրայ հան-
գիստ առաւ ։ Նստելու չմնաց՝ չորս
աշխատաւորաց մին քովը մօտենալով
մեծ յարգութեամբ խնձոր մի մատուց
իրեն , այնպէս սիրուն գունով և անոյշ
հոտով , որ տեսնողին բերնի ջրերը կը
վազցնէր ։ Մարգարէն ձեռքն առաւ
խնձորը և քթին մօտեցընելու չմնաց՝
ինկաւ մէկէն յաւիտենականութեան
քնոյն մէջ ։ Հրեշտակները՝ որ Ամենակա-
լին հրամանակատար պաշտօնեաներն են ,
նորա հոգին թեւերնուն վրայ կրելով
Աստուծոյ աթոռոյն առաջն տարին . և
մարմինը սոյն այրիս մէջ կը կենայ , ուր
որ մինչեւ ցայսօր հանգուցած է ։ Ան
ժամանակէն 'ի վեր սոյն ժայռը , որ օրէ-
նսդիր Մարգարէն պատուեց , դեռ իւր
արտաքին ճերմկութիւնը կը պահէ , զոր
եթէ քիչ մի փորելու ըլլայ մարդ , տակը

դժոխատիպ տեսութիւն մի կը տեսնէ .

17 բոպէին արագընթաց զառ 'ի վայրէ մի վար իջնելով՝ ջրամբարի մը քով կը հասնինք Պէրէ-Հէնըքֆոա անուն, որ ժայռին մէջ փորուած է . միշտ ջուր չգտնուիր մէջը, և ամառը ցամաքակայ է։ Յետոյ 18 բոպէին ճանապարհն այնքան կը դէշնայ, որ հարկ կ'ըլլայ ոտքով քալելու . 17 բոպէ աւելի անդին լայն ձորի մէջէ կ'անցնուի Սարը-Խըզըրայէ անուն, կամ ըստ այլոց Սարը-Էօ-Սարանէ։ Յետոյ 43 բոպէի չափ Լէզգիա կոչուած պզտի դաշտի մը մէջէ քալելով, ձախ դին կը թողուի Երիքօյի ճանապարհը եւ Սարը-Էլ-Բինէդըր ձորը կ'իջնուի, որ մեծ հեղեղատ մի է, ուր անձրեւ եկած ժամանակ միայն ջուր կը գտնուի։

8 բոպէ յառաջ քալելով՝ զառ 'ի վայր մի կը հանդիպի, ուր խոհեմութիւն բանեցընել ուզողը պէտք է դարձեալ ոտքով անցնի եթէ չուզեր որ գլուխը պատառուի։ Նոյն տեղ աջ կը գտնուի այն ճերմակ քարերէն, որոնց մէջը սեւ է, գորշ հաստ մի ունի ու ածուխի նման կը վառի ։

25 րոպէ եւս այն հեղեղատին մէջէն քալելէն յետոյ, աջ կողմը հանդիպած ճանապարհը կը շարունակեմք ձորին եզերքովը, և երեք րոպէէն ուրիշ քարակոյտերու առջեւէ կ'անցնիմք ։ Տասը րոպէէն ուրիշ ճամբայ մի եւս թող կուտամք ձախ թեւի վրայ՝ որ Նիրքով կը տանի, և 7 րոպէ եւս քալելով Մ՚եռեալ ծովը դիմացնիս կը տեսնեմք, և ծովային հոտը սաստկապէս կը զարնէ մարդուս քթին ։

30 րոպէ մի ծովեզերեայ՝ նշաններ կրող մերկ և հոռ. հոն ածխացեալ ժայռեր ունեցող գետնէ մի անցնելէն յետոյ Մարկեր Տաղըր կը հասնինք, որ Պիծակներու ձոր ըսել է. լայն հեղեղատ մի է Մ՚եռեալ ծովուն կողմը՝ մացառներով լցուած ։ Անկէ անդին գետինը շատ տեղեր աղային նիւթերէ գոյացեալ ճերմակ բիծերով ծածկուած է, որ գետնին երեսը կեղեւներ կը կայեն ։ Ճանապարհին հետքը երբեմն աներեւոյթ կ'ըլլայ, և մացառներուն եղեգնուտներուն, օձանի եւ ուրիշ տունկերու թուփերուն մէջ կը մնայ ։ Նոյն տեղուանքը, մինչեւ Մեռեալ

—կու—Տապպուրի մէջ որսորդները կը գըտ-նեն ասատրակ, կաքաւ, կարմրաթեւ սարիկ (Գարա Իաուգ), շնագայլ, վիթ (ղալալ), Նապաստակ՝ բայց քիչ, և ու-րիշ կենդանիներ ։

30 րոպէ մի եւս աւելի հեռուն աջ կողմը Նահր—էլ—Աքայիր ըսուած առուա-կին առջեւէն կ՚անցնուի, որու ջուրը խմելու կուգայ․ չորս դիէն եղեգով պա-տած է և մէջը մանրիկ ձկներ կը սնու-ցանէ ։ Նակէ մինչեւ Մ՚եռեալ ծով 12 րոպէ կը մնայ և Թուփքի մի փրայէ կ՚ան-ցնուի, որ է ծովուն և Մ՚Հէշէփիղ ը-սուած պզտի հեղեղատին մէջտեղը ։ Ձմեռը անձրեւներու ժամանակ յո-շեալ Թուփքը ջրով կը ծածկուի, ու հե-ղեղատին ջուրը ծովուն հետ կը միանայ, վասն որոյ վտանգաւոր կ՚ըլլայ անցնիլը ։ Թ՚ուփքին վրայէն անպակաս են փոշաներ և մինչև անգամ ծառեր, զոր Մ՚եռեալ ծովը Յորդանանէն ընդունելով՝ իւր ե-զերքներուն վրայ դուրս կը նետէ ։ Պզտի կղզեակ մի կ՚երեւի հոս Ռէճմ—Լ՚ոտի ա-նունով, որ Ղ՚ոտայ կոյտը կը նշանակէ, և շատ անգամ ջրով պատած կ՚ըլլայ ։ Կան շէնքի քարեր և հիմ մի որ 7—8 մե-

դըր երկարութիւն և 2 մետր լայնութիւն ունի ։ Ծովեզերքէն 200 մետր հեռու է ։

Մեռեալ ծով

Երուսաղէմի արեւելակողմը՝ 10 մղոն հեռու է Մեռեալ ծովը . Միջերկրականէն 392 մետր և Երուսաղէմէն 1171 մետր ցած է . երկու անհուն լեռանց շղթայի մէջ է , Յուդայի լեռները արեւմուքէն և Մովաբայ լեռները արեւելքէն . վերջինին մէջ է՝ Մեռեալ ծովուն հիւսիսային ծայրին դիմացը , Նաբաւ լեռը , ուր մեռաւ Մովսէս տեսնելովնոյն տեղէն խոստացեալ երկիրը[1]։ Երեմիա մարգարէն հոն այրի մէջ ծածկեց Տապանակը , Կտակարանաց Տապանակն ու Խնկոց սեղանը , և դուռը ամրցուց [2] ։

Մեռեալ ծովը 20 մղոն երկայնութիւն և 4 մղոն միջին լայնութիւն եւ 340 մետր խորութիւն ունի ։

Հին ժամանակ բարեբեր երկիր մի

(1) Բ. Օրէնք. ԼԴ ։
(2) Բ. Մակ. Բ. Ե.

էր և Զոր աղի կը կոչուէր ըստ Սուրբ Գրոց, և Յորդանանու ջուրը ողոգանելով՝ աստուածային դրախտ կը դառնար։ Ղովտ Աբրահամու քովէն զատուելով՝ հօս եկաւ բնակեցաւ։ Հինգ քաղաք կը յիշատակուին այս տեղ, որ են՝ Սոդոմ, Գոմոր, Ադամա, Սեբոյին և Սեգովր, որոնք իւրաքանչիւր առանձին թագաւորներ ունէին։ Ինչ ժամանակէ յետոյ ուզելով Աստուած այս քաղաքաց ժողովուրդը պատժել իրենց գործած չար մեղքերուն համար, որոնց մէջ և ոչ տասն արդար մարդիկ կային, Ղովտը միայն իւր կնոջն և երկու աղջկանց հետ դուրս հանելով հրեշտակաց ձեռօք, յերկնից ծծումբ և կրակ մաղեց վրանին, և այրեց Սոդոմն ու Գոմոր և շրջակայ միւս քաղաքները (1)։

Երեք գետ կը հոսեն Մեռեալ ծովուն մէջ, նախ՝ Յորդանան գետը, որոյ ջրերը առանց խառնուելու ծովուն ջրին հետ, հիւսիսային կողմէն մտնելով՝ հարաւակողմէն դուրս կ'ելնէ։ Երկրորդ՝ Կալքերոյէ գետը, որուն ջուրը Մովաբայ լեռներէն բխող հանքային տաք աղբիւ-

(1) Ծննդոց ժթ. 24։

բակներէ կը գոյանայ ։ Ասոր մէջ մտնելով Հերովդէս Մեծն՝ փոխանակ առողջութիւնը գտնելու, իւր մահը գըտաւ [1] ։ Երրորդ՝ Առնոնի գետը (Վա-տի-էլ-Մօճիպ) ուսկէ Իսրայէլացիք ցամաք ոտքով անցան [2] ։

Մեռեալ ծովուն ջուրն խիստ աղի ըլլալն է անշուշտ պատճառ, որ մէջը ամենեւին կենդանի չեն գտնուիր. Ջուրը կպչուն է, բայց բիւրեղի նման պայծառ. Հնար է մէջը լող գալ առանց վըտանգի, և ծանրութիւնը չթողուր որ մարմինը խիստ խորը իջնէ, այլ ջրին երեսը լաւթի նման թեթեւ կը բռնէ. Դուրս ելնելէն յետոյ հասարակ ջրով պէտք է լուացուիլ որ աղիութիւնը երթայ ։

Մեռեալ ծովէն դէպ 'ի հիւսիսային արեւելք 7 րոպէ չոր գետնի մի վրայ քալելով, յետոյ 40 րոպէի չափ չոր մացառներու մէջէ, և յետոյ դարձեալ 45 րոպէ դէպ 'ի հիւսիս չոր երկրի վրայէ անցնելով՝ պզտի ձորակի մի մօտ կը հասնուի, որ ձմեռը ճահիճ և ամառը կա-

(1) Յովսեփոս. Պատմ. պատեր. Ա. 21 ։
(2) Թւոց ԻԱ. 13 ։

նաչութեամբ ծածկուած կ՚ըլլայ։ Երկու րոպէ եւս քալելով Յորդանանի ափունքը կը հասնուի. և 5 րոպէ եզերքը բռնած երթալով մացառուտ տեղ մը կը հանդիպի, որու մէջէն անցնելով՝ 9 րոպէին կը հասնինք այն տեղ, ուր Տէրըն մեր Յիսուս Քրիստոս Յովհաննու Մկրտչի ձեռօք մկրտուեցաւ։

Յորդանան

Յորդանան գետին ակունքը Լիբանան լեռներէն և յանուանէ յիշատակեալ՝ մեծ Հերմոնէն է, որ Տիբերական ծովէն անցնելով և քառասուն մղոնաչափ տեղ պտըտելէն յետոյ Մեռեալ ծովուն մէջ կը թափի. խիստ սրընթաց լինելուն, լողորդ մի որքան ալ վարպետ ըլլայ, վտանգի կը հանդիպի. ամենէն խոր տեղը 5 մեդր է, լայնութիւնը 50 էն 70 մեդր։ Յորդանանու բոլորտիքը երկրաւոր դրախտ մի է, ուր գարունը տարին տասուերկու ամիս կը տիրէ, ոչ կանաչեղէնք կը պակսին և ոչ թռչունները օտար երկիրներ կը հեռանան։

Աւանդութեամբ կ՚ըսուի թէ Խա-

րայելացիք գետոյն այս տեղը հասնելով, ցամաք ոտքով այս կողմի եզերքն անցան(1)։ Յեսու Իսրայէլի ժողովրդոց հրամայեց որ նոյն տեղւացմէ 12 քար վերցընեն տանին, զորոնք յետոյ իւր բանակին մէջ դնել տուաւ՝ 'ի յիշատակ այն սքանչելեաց, որոնց ականատես եղան, այսինքն Յորդանանու ջրոյն երկուսի բաժնուելով այնքան բազմութեան ցամաք ոտքով անցնիլը(2)։

Նոյն տեղը դարձեալ Եղիա մարգարէ իւր վերարկուովը ջրին զարկաւ՝ ցամաք ոտքով իւր աշակերտին Եղիսէին հետ անցաւ միւս կողմը։ Նոյն մկրտեցաւ Քրիստոս, և հաւանական է որ աստեղէս անցաւ միւս կողմը Յովհաննու առջի մկրտած տեղը(3)։

Քրիստոնէութեան առջի դարերուն անապատասէր ճգնաւորներ բազմութեամբ կուգային Յորդանանու եզերքները բնակելու։ Քրիստոսի Տեառն մերոյ մկրտուած տեղը գետին մէջ մեծ խաչ մի տնկուած կար 4ր դարուն մէջ,

(1) Յեսու. Գ. 16—17։
(2) Անդ. Դ. 3։
(3) Յովհ. Ժ. 40։

և գետին եղերքը երկու կողմանց մարմարեայ քարերով ծածկուած էին ։

Այս տեղւոյս դիմացը միւս եղերքին վրայ Մարիամ Եգիպտացին խորտակած կենօք 33 տարի ապաշխարելէն յետոյ՝ վախճանեց իւր կեանքը և Զօսիմոսի ձեռօք հոս թաղուեցաւ ։

Յորդանանէն յետ դառնալով մինչև այն ճանապարհը որ Մեռեալ ծով կը տանի, ձեռք կ՚առնումք այն շաւիղը որ յարևմուտք կ՚առաջնորդէ քիչ մի դէպ 'ի հիւսիս միտելով ։

Մացառուտ տեղէն դուրս ելնելուն՝ աջ ու ձախ դին մանր մունր բլրակներ կ՚երևին կանոնաւոր ձևերով, որ կարծես թէ մարդոց ձեռքով շինուած են ։ Գետէն 15 րոպէ հեռանալով, չոր գետնի մի վրայ կը գտնենք զմեզ, և աջ դին հիւսիսային արևելք նայելով ճանապարհէն 2 հազարամետր ներս աւերակ վանք մի կը տեսնուի, զոր Արաբացիք Քասր-էլ-Եահուտ կ՚անուանեն ։ Այս վանքն է յանուն Ս. Յովհաննու Մկրտչի կառուցեալ, զոր Հաննէ եւս կը յիշատակէ (1) ։

(1) Պատմութիւն Ս. Երուսաղէմի, յերես 276 ։

47 քայլէն՝ Նահր-էլ-Թէյր ըսուած հեղեղատը կը հանդիպինք, որու եզերքները կանոնաւորութեամբ զարդարուած են տեղ տեղ ծաղիկներով։ Այս հեղեղատը Ձոր Եշքողայ կոչուած է Սուրբ Գրոց մէջ (1)։

Հոս մօտ է Գաղգաղա, ձախակողմեան եզերքին վրայ փոքրիկ բլուր մի է, զոր տեղացիք Դէլ-Ճըլճուլ կը կոչեն։ Իսրայէլացիք Խոստացեալ երկիրը ոտք կոխելնուն առաջին կայանն ըրին Գաղգաղան. ուր Յեսու 12 քարերովը խորան մի կանգնեց։ Չորրորդ դարուն այն քարերը այս տեղ կը կենային դեռ, և 7դ դարուն մէջ ևս տեսնող կայ եկեղեցւոյ մի մէջ դրուած, որ Միքայէլ հրեշտակապետի անուանը նուիրուած էր։ Այսօր քարերէ 'ի զատ բան չտեսնուիր, և տեղ տեղ միւսաիքնով շինուած յատակներու աւերակներ կ'երեւին։

Հարաւային կողմը, մէկ մղոն հեռու Տէյր-էլ-Հաճլա կոչուած հին վանքի մը աւերակներ կան յանուն Ս. Գերասիմոսի։ Վեշտասաներորդ դարուն մէջ դեռ

(1) Յեսու Ժ. 24։

կանգուն կը կենար և Յոյն կրօնաւորներ կը բնակէին ։ Ասկէ յետոյ շատ ժամանակ չէ տեւած՝ աւրուեր է . և հիմակ մէկ մաս մի միայն կանգուն կը կենայ , որու վրայ նկարներ կ'երեւին ։

30 րոպէին Երիքով կը հասնինք , որ Բենիամինի ցեղին քաղաքներէն մին էր։

Այն քաղաքը Յեսու Քանանացւոցմէ առաւ , փողերու ձայնով պարիսպները կործանելով , և Ռախաբէն 'ի զատ բոլոր բնակիչները սրէ անցուց։ Ինքը Յեսու անէծք դրաւ առաջի Աստուծոյ այն մարդոյն որ կրկին շինելու լինի (1) ։

Հերովդէս Մեծն ձի վազցընելու ասպարէզ , ամֆիթէատրոն , և աշտարակ մի շինել տուաւ . հոս խեղդել տուաւ իւր Արիստաբուլոս որդին , որ Մակաբայեցւոց վերջին շառաւիղն էր մօրը կողմանէ ։ Երիքովի մէջ դարձեալ բանտարկել տուաւ իւր մեծամեծները , որ ինքը մեռնելէն յետոյ , ըստ որում դէշ հիւանդացած էր , զանոնք բոլոր սպաննեն , որ համաշխարհական սուգ մի ըլլայ իւր մահուան օրը ։

(1) Յեսու Զ . 26 ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս գիտէր մի կեցաւ Երիքովի մէջ ։

Զակքէի տանը տեղը, ուր Յիսուս եկեղեցի շինուեցաւ, կը կարծուի թէ այս բանկին մօտ եղած բերդ, ուր հիմայ անկանոն զօրք կը կենան ապահովութեան համար ։ Աւազակաբարոյ ամբոխներ չենեց հոս և պահապաններ դրուան (1). և Երուսաղէմի պաշարման միջոցին Երիքով կործանեցաւ 70 թուոյն Քրիստոսի ։ Մորիանոս կրկին շինեց և քրիստոնէից քաղաք եղաւ ։ Երիքովի եպիսկոպոսներէն գտնուած են Նիկիոյ, Կոստանդինուպոլսոյ, Լիդի ժողովներուն մէջ, և Գրիգոր անուամբ եպիսկոպոս մի եւս Երուսաղէմի ժողովքի մէջ գտնուեր է Անթիմոսը նզովելու համար ։ Յուստինիանոս կայսրը եկեղեցի մի և հոգետուն մի շինել տուաւ ուխտաւորաց համար ։ Քանի որ Մահմետականաց ձեռքն ինկաւ Երիքով, կործանեցաւ իր շուքը, և հազիւ 250 բնակիչ մնաց մէջը ։

Մեր օրերնիս (1840,) Եգիպտացի Իպրահիմ փաշային երեսէն ալ մեծ վե-

(1) Յովսեպ. Հնախ. պատմ. Ժ. 23։

նախկին չինեց՝ իրենն զեկուցագրի քաղաքը. Յորդանանու ձորակը. Պետրոս Ինձինեանի յարձակում կրեցին, գունդ մի զօրք խոլեց Երիքով, որ գնացին քաղաքը կը զօրանելով աւերեցին.

Այն քաղաքը հին ժամանակ Արմաւենեաց քաղաք ևս կը կոչուէր. Հողը խիստ բարեբեր է. ժամանակաւ խիստ շատ բալասանի ծառ կը գտնուէր. Այժմ միայն մեղմ ու բարեխառն է. Ջուրն առատ. եթէ լաւ մշակուելու լինի, զանազան արդիւնքներ կու տայ. կրնայ լաւ բրինձ, քնջութ (չանճրուկ), լեղակ (չիվիտ), շաքարեղէգ և Ամերիկայի յատուկ բերքեր, նոյնպէս վուշ (քեթեն), կանեփ (քէնտիր) և ուրիշ շատ տեսակ բերքեր.

Երիքովի բոլորտիքը մացառուտ է և փշաբեր թուփերով լեցուն. և երկու տեսակ պտուղ կը բերեն, մէկ մի Տամ քառասնը որ մանր կերակրի նման պտուղ է, պզտիկ զանգով և անհամ ճաշակաւ. Երկրորդն է Զագկումի ծառը, որուն պտուղը ձիթապտղի կը նմանի և քիչ մը կայ միջին. Արաբները մէջէն զեղին ձէթ մը ճերմակ իւղ մը կը հանեն, որ վէրքերու օգտակար կը համարի.

Դէպ ՚ի հիւսիսային արեւմուտք դը-նալով Տաւրի և Զ. լեռնաշղթայի թեւածկերուն մէջի որոտուն ճանապարհէն, 25 րոպէ-էն Ը.ջի-Էլ-Մօղլու բառած ակը կը հան-դիպի, այն է Հաճմէքին Լէյլէբէ աղբիւր կանչածը(1); բաւ որում ջրերը յատա-ջաղացի գէշ ըլլալով, մէկտեղ միաբանութեան աղօթքով ըսուածոց(2), այս պատճա-ռաւ իւր անուանը կը մնայ։

Անկէ 20 քայլ հեռու, դէպ ՚ի հիւ-սիսային արեւմտակողմն է Փաշա-Ջերմեան ջրով. ճանապարհին վրայ երկու երեք տեղ չիւրութեան աւերակներ և ջաղաց-քի ահագին քարեր կը տեսնուին. որ կ՚երեւի թէ եղբայրապետի ջաղացքի էն, բաւ որում մինչեւ 14ր դար շա-րունակէգի մշակութիւն կ՚ըլլար այս կողմերս։ Փրկութեան լեռն այն է՝ ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս քա-ռասուն օր և քառասուն գիշեր ծոմ ծածկապահութեամբ, և յետոյ Աւետա-րանին ... փորձեց. երբեք մի-բերպ ... տեղ ծակեր ու խոռոչներ կան, ուր ճգնաւորք կը բնակէին հին ժամա-

(1) Վանք. ... 299.
(2) Դ., Թագ. ք. 18.

նակիները։ Ատոնց մէջ մէկ հատ մը կայ ըերանը արեւմտեան կողմը, ծածկեա-գանով, այն է՝ ուր բստ աւանդութեան կեցաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Յետ դառնալով մինչեւ այն տեղ ուր ճանապարհը դէպ 'ի վար կ'իջնէ, կ'ըլլայ մարդ տակէ կէս ժամու մէջ Փորձութեան լերան գլուխն ելնել, ուր բստ աւանդութեան սատանան փորձելով զՔրիստոս մեր՝ աշխարհիս բոլոր թագաւորութիւնները նորա ցոյց տուաւ։ Քրիստոնէութեան առջի դարերուն մէջ պզտի եկեղեցի շինուած կար այս տեղ, որու խաւարակին մէկ մասը դեռ կը կենայ։

Փշալից անտառին մէջանեղէն դէպ 'ի Հարաւային արեւմուտք յառաջ գնալով (Փորձութեան լեռը աջ կողմը թողլով), 7 քայլէն փոքրիկ բլուր մը կը հանդիպի՝ Դէլ-էլ-Մուխրաք անուն, որ կարծես թէ, մարդոյ ձեռօք շինուած է. 20 քայլէ մը եւս քալելով՝ Նահր-էլ-Քէլթ՝ կը հանդիպի, ուսկէ անցանք Երուսաղէմէն Երիքով երթալ ժամանակնիս։ Այս տեղաց շուրջ մը կ'անցնի, արու վրայ ժամանակաւ կամուրջ կայ եղեր, ինչպէս աւերակները կ'երեւին.

նաեւ ճանապարհին փոքր տեղ տեղ հին քանդակներու մնացորդներ կան ըստ աւանդութեան, որոնք Խոսրով եւ Բագարատ կը կոչուին։ Այս տեղւոյս համար կ'ըսէ աւանդութիւնը թէ, Փրկիչն մեր Յիսուս կոյրին աչքը բացաւ, Երկնային լոյս զօրութեամբ ժամանակ(1)։

Նահր-էլ-Քելպէն մեկնելով դէպ 'ի յարեւմուտք 10 րոպէին գէշ ճանապարհաւ մի կամուրջ Նահր-էլ-Աւէլու, ձախ կողմերնիս թողլով Պեյթ-էլ-Տապուր կոչուած ժայռի մի վրայի փոքրիկ շէնքը։ Անկէ 25 րոպէին դժուար ճանապարհներէ քալելով՝ աջ կողմերնիս սառնորմ մի կը հանդիպի Խան-Խալտէ-Տաղպուր անուն, ուր միայն ձմեռը ջուր կը գտնուի։ 10 րոպէ եւս քալելով ջրանցքի մը քովերէն, աջ կողմերնիս ճանապարհէն 70 մեթր ներս հին շէնք մի կայ, ուր ժամանակաւ անապատական մի կը բնակէր Յովհաննէս անուն մենակեցունեալ Խօզքիկ։ Յետոյ Նահր-էլ-Քելպէ դիւրաւ կարգը թողլով՝ ձախ դին Սաղմի-էլ-Քեպար հիւսիսային ուղղութեամբ յառաջանք գնացինք եւ մեծ մեծ ճանապար-

(1) Ղուկ. ԺԸ. 40—42։

Կը բռնելով․ մերձակայքս հեղեղատներն մէջ կ'իջնունք, և 30 րոպէ մի քալելէն յետոյ դուրս կ'ելլենք գէշ դաշտավայրէ մը․ ուսկէ անդին ձախու դին կ'իյնենք Ս-ուֆ-Բուման ձորը․ 40 րոպէէն Խան-էլ-Ահմար) և 20 րոպէէն դէպ 'ի Հիւսիս դառնալով Խան-էլ-Աքրապ կը հասնինք։ Այս անունը կ'երեւի թէ հին ժամանակներէն 'ի վեր իշխանութեան հասնող անեղ ջնջուած կայր։ Նոյն անունով վերայ Խա-ռաջեալ Փաշային եւս խան մը շինել տը-ւաւ, որ հիմակ աւերակ է․ դեռ մին-չեւ յայսօր սառնոցները կը կենան։ Հիւսիսային արեւելակողմը բլրին վերայ րաւ ամրոց մի կայ, խորամանկով շինւ-ատարած, ուր կ'երեւին աղբերաձեւ և ձուածեւ կամարներ։

Դէպ 'ի յարեւմուտս մեծ ճանապար-հին վերայ գնալով, և 25 րոպէէն դաշ-տի մի մէջէն անցնելով, ուր անդր Կարաւ-հեւ վարաշեալն Պետրոսիններու դէմ յաղ-թութիւն մի տարաւ, պզտիկ բլուր մի կ'ելլենք, և յետոյ առատաջրաններէն վար Ս-ուրբ-Սերոբ բռնուած ձորին մէջ կ'իջնենք։ 10 րոպէ մի եւս յետոյ ուրիշ ձոր մը կ'իջնենք Ս-ուրբ-Ռէյ-Խան-Ալի անուն․

տակէ այլ անցնին 28 քառորդ գնալով՝ ձախ կողմը Հեղեղատ մը և Նեզրի Մուսսէ գետակը շարժող մի Թաղման Աւարակաբերդ, ուր ձորը բացուած կ'երեւնայ, որու ծայրը՝ մէկ ժամէն յետոյ կը հասնինք Նաւաբերդոյ աղբիւրը, զոր Խուտղաւրաքը Պէր-էլ-Հարամի (աւազակաց ջուր) կ'անուանեն։ Հոս այլ իջեւանի մը աւերակ մնացորդներ կը տեսնուին։

Նաւաբերդոյ աղբիւրէն մեկնելով՝ քարոտ ճանապարհներով, 18 քառորդ յետոյ ձախ կողմէն վրայ սառնիւծ մի կը տեսնուի քիչ մի ներքեւ, Պիր-էլ-Նայիփ անուն։ Հինգ քառորդ մի եւս քալելով լեռնադաշտի մի վրայ կ'ելնենք, ուսկէ արեւմտեան կողմը Նեթանիա գիւղը և Հարտուտի գետն Տրաբլուս կ'երեւի, Նալուսիոյ մէն Նահար-Քամարէ կը կայծուր. Մեծկէկ հայրենիքը, որ Նաբլուսայ երեւելէն Յակոբ փոփոխելու ժամանակը անկոծինց զինքը (1)։ Նակէ այլ 5 քառորդ յառաջ գնալով կը հանդիպինք այն առաջնորդող Յակոբայ ջրհորին, որու վրայ Յիսուս նստած ժամանակը Սամարացւոց կնոջ ըսաւ իրեն. «Տէր եթէ

(1) Ծն. ԼԵ. Դ.

հոս եղած ըլլայիր, եղբայրս չէր մեռներ։
Այն անեղուգոյ ուխտը պարտէն մեր Լօռ-
ներբողալ այցելութեան մէջ կատարուեցին։
Եւ այն անեղուանքը մինչեւ Պաղարանք
գերեզմանը եւ անկէ մինչեւ Հաւքար-
ձոր՝ եւ Պեթաւանի ձորէն անցնելով
մինչեւ Արուաղէմ գալը. Ճանապար-
հը բարեպաշտ ուխտաւորքը արդէն առ-
ված լինելով, այս անգամ կը վերջացնենք
մեր Մետասաներորդ այցելութիւնը։

ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Ի Նազարէթ, ի Սամարիա եւ այլն։

Այս ճանապարհորդութիւնն ալ ա-
տաժանական է, եւ յատուկ եղանակաւ կը կա-
տարուի, որովհետեւ ցամաքային ճանապարհորդու-
կ'ընեն կրկնակ ուղեւորութիւնը. բայց
որպէս զի Աբրահամու Տեղւոյն վրայ, ուր
Բեթղեհեմի. Տեառն մերոյ [illegible]
Խորհուրդները ու զբաղմունքները հա-
[illegible], կատարելապէս [illegible] ուրախութեան
մէջ առանք, [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] ու [illegible] [illegible]

ընդունելու. Հռոմայ հետաւոր անկելոց փառացը եւս անկեղծութիւնները. այլ, անձանց արդի մեծամեծ նախապատրաստելով։

Լուսաւորեալներն մնացեր ՚ի Նազարեթ, Սամարիայէն անցնելով երեւան մնան տեղ է, և երկու աւուր մէջ կրնայ մտնալ երթալ։

Դամասկոսի ճանապարհը

Յոպպէի դուռնէն ելնելով, դէպ ՚ի հիւսիս գնալով ճամբան բռնելու է, այն որ կը տանի Թագաւորաց գերեզմաններ, և անանցանելի արդիւնի մեծ ճանապարհը կ'ելնենք և Յովսափաթու յորդ մէջէն անցնելով բարձրիկեկ տեղ մը կը հասնինք, ուսկէ կ'երեւի Սիոնը (Սուրբ գիրք). Նեբի Սամուէլ (հին Արիմաթեա) գիւղերը. և 20 րոպէին կը գտնենք գետը Սարոն լերան վրայ, ուր տեղ Յորդանու մեծ քահանայապետաց, իւր քահանայապետութեան պաշտօնները հաղորդած Նաբուքոդոնոսորի մեծին գերութեան, որ Տիգրան ու Կիւրոս քաղաքներուն տանելով յետոյ՝ աւերակ քաղաքին եւս տիրելու կուգայ։ Ն.

զեքսանդրի պատմական երկրամասն Թուհանա-
յաւակնութեան, որոնց ներկայացուցանքը իսկ և
բազմին մէջ արկանած էր, Թմկաւ խանսաւ
Հեցաւ Սամբաց ամուսանն գիտնալն որ
անոր Թագուհին վերայ դրուած էր, և տուփն
քաղաքին եւ ա մահմեղուլ՝ զոհ մատուցց Տա-
ճարին մէջ:

Անկէ 20 քայլ կը տեսնէ Դեղեւեղ
Սամս բլուրը, որ Հին Գորգսեա քաղաքին
տեղն է. ուսկէ էր Սաւուղ. ասկէ ևս
մերձակայ Պերքու Հանդէս, որ Ս. Գրոց Ա-
նենա խաւած քաղաքը կը կարծուի, 20 քա-
ղէ է. արեւմտեան կողմը բլուրի մը
վրայ Եղեմիկոլ, Հին Գաբաւոն քաղաքը
կ'երեւի, ուր Յեսու արեգակը կեցու-
ցուց իւր ընթացքէն(1):

Ուստեղտ ժամէ քիչ մը անդին գենա-
լով զետեղինը պատուական կերպեկը ձևով տե-
ղին մը կը տեսնուի ուրանուած գերեզման.
Ճանապարհին վրայ կը հանդիպի Նեբե-
Եղե-Սիդոն գիւղը, որ է Եմմաւուս քաղա-
քը. ուր բան մը նշանակալութեան Լ մանկ-
նանց. ամենահաւանքը Աշոտն Հայր Յակ-
ոբեանց Հեա միջնեան Հոա զանգեալ մեացն՝
անուան որ մաանունին Յեսուա Նեղանեանին

(1) Յեսու Ժ. 6

չէր, և յետ դառնալով. Տաճարին մէջ գտան զինքը, որ բանաստեղծներուն հետ նստեր հարցմունքներ կ'ընէր (1)։ Այն [illegible], վասն զի [illegible] մեծ մասը [illegible] կը կենայ ։

Սակէ զետ ՚ի Հիւսիս Նազարէթի ճամ-նապարհը բռնելով, 44 քայլերին կը հաս-նինք հոս. սոյն քաղաքը [illegible] կը կոչուի ։ Արքային [illegible] եղած ժամանակ [illegible]. Պ[illegible]. պատ-[illegible] Յովսէփ [illegible] մէջ երկու [illegible] մինչև [illegible] բարձրա-ցած [illegible], [illegible] Պետրոսին [illegible], և Յով-սէփ [illegible] Ա-ստուծոյ [illegible]։ Այս ուրիշ շատ [illegible] եղած էր սոյն քաղաքս ։ Հին [illegible] չէնքեր ցարդ կը [illegible]։ [illegible] և ս կ'երևի [illegible] մի [illegible] նէր, որուն [illegible] կը կոչեն ։

Բեթլեհեմէն մինչև [illegible] կոչուած [illegible] 5 ժամու չափ է. [illegible] կը [illegible]. Պետ[illegible] ։ [illegible]

(1) Ղուկ. բ. 41—51 ։

ըմպին աղբիւրը, Պարբեկա-Նայեռ, Ի ձաղ-
գած և ուրիշ առուերաց ամբողջը. մինչեւ
Ի-ղ-Սառւքէն գիւղը՝ իսկ Հաւանունն ի
ջերամսը որ առուերակ է Հինայ, գիւղէն
20 քայլ հեռու է, ուսկէ 3 քայլ ան-
դին կարմիր ծառոյ մի տակ կ'իջնեն ու
փորաքար ձեռնապայրհորդը հանգստու-
թիւն առնելու ։

Խան-Էօ-Սայւ թէ-էն մեկնելով, 25
քայլէն Քաւսպուլան գիւղին մամկին անգ-
նելով՝ Իէղ-մեն գիւղը կը հասնինք, որ
այժ կողմերինս կ'ենթէի ։ և կէս ժամէն
Պողիկէն լերան շղթայն կը անեանեւի
գէպ 'ի հիւսիսակողմը, և նոյն կողմը
դարձեալ հողեգամին մէջ կ'երեւայ Սէծ
Հերմոն լեռը ձիւնապատ գագաթով ։
Մէկ ժամ և 10 քայլէն կը հասնինք Պու-
ղիկին լերան շղթային ստորոտն եղած
Հասրացու գիւղը, թողով ձախակողմն
քանի մի մանր մանր գիւղակներ ։

Անկէ մինչեւ Քասեփ մեծ գիւղը
55 քայլ կը տեւէ ։ Այս տեղ Նալողեւսի
(Սիկկիմ) ձեռնապայրհը թողով ձախ
կողմէ վրայ, կէս ժամէն քանի մի շերերով
գէպ 'ի ներս, Պէր-Կալ-մարմաղ (Սալափը նա-
հապետի հօրը) կ'երթանք, որ և Սամա-

բացի կնոջ. հայր կը կոչուի, որ ճանապարհին մեռաւ ալ. Թեւուի վերայ է, Պարսկին լերանց ստորոտը, աւերակներով ծածկուած. և երեք չորս ոտք բարձր հին պարսպ մի շրջապատուած։ Հորին բերանը հին եկեղեցւոյ մի տանն է, որ ժամանակաւ շինուած է եղեր վրան։

Այն հորին մօտն եղած դաշտին մէջ Աբրահամ իւր կնոջը Սարայի և Ղովտ [illegible] ալի հետ խօսակցէն գալով իւր վրանները բարեց, և սեղան մի եւս կանգնեց Աստուծոյ, և Աստուած իրեն երեւալով՝ խոստացաւ նորա զաւակացը տալու խոստացեալ երկիրը։

Յակոբ եւս Միջագետքէն գալով նոյն դաշտին մէջ բարեց իւր վրանները, և Սիւքեմայ ազգը հարիւր գառն տալով՝ ծախու առաւ ինչեալ դաշտը. և այն տեղ այժմ հօրը փորեց. Քրիստոսէ 1733 տարի յառաջ։ Պատրիարքաց այս տեղ եկաւ. Յովսէփ Հեբրոնի ձորէն իւր եղբարքը որոնելու, եւ Դոթայիմ ըռուած տեղը գտաւ զերենք, և յետոյ Իսմայելացւոց վաճառականաց ծախուեցաւ (1)։ Սիքեմ Յակոբայ նահապետին

(1) Ծննդ. ԼԷ։

այն երկիրը կործանեցաւ. ժամանակագրութիւն Թէոփա-
նայ ... Յովսեփիան ...
... Ս. Գրիգոր ...
և ...
(Անիի) ... Յովսեփեան
...[1].

Յիշեալ տեղը քառակուսի փոքրիկ շրջապատով մը որոշուած է, Յակոբ Նահապետեան արքեպիսկոպոսի 10 րոպէ հեռաւորութեան 'ի Հիւսիս, որու մէջ հինսիկ ուրիշ գերեզմանաքարեր մի կը տեսնուին, և շատ կանգնելի ձևով.

Գրիգորիս վարդ Հեթումեան Թագաւորին եկեղեցի մի շինել տուած էր. Այն եկեղեցին և կամ յետոյ այլոց ձեռօք նորոգուածը 730 թուին 'ի վեր կը կենայ, խաչաձև էր և ջրհորը մէջտեղը. և կը կարծուի որ վերջին կործանումն եղած է 1187 ին, ըստ որում անկէ յետոյ ոչ մի ազգի պատմագրաց քով յիշատակուի. Ս. ... մէջ ... ցոյց ... [illegible]

Յիշեալ ջերմաղբիւրներու ... կ'ե-
րեւի ... [illegible]

(1) Ծնունդք. ... 24. Յեսու ... 32.

կանգնին ունեցած բարձրութիւնն է 2,700 ոտք . շինութեանց նշանաւորք չկան բնաւ ։ Յետոյ Գորգի քաղաքը անունեքն յեռայ անտառաշ քարերով մեղմն կանգնեցելով. Գերագոյն լերան վրայ գոհ մնացուց Նա տոնածոյ, եւ քարերուն վրայ Նոյեան ա րեւելք գտեց, զոր Մովսէս արդէն Նոյա յեղի տոհմաց սահմանի գրած էր (1) ։

Գերագոյն լերան արքի Նրոր անուն գիւղը կայ, եւ անուշ ջրի աղբիւր մը ։

Յակոբայ Ջրհորին արեւմտակողմն կը տեսնուի Գորգիզին լեռը 2,650 ոտք բարձր քան զՄէթերիկնական ծովու երեսին ։ Յետոյ տար ընծայեցուց Համւածի, Գեւիի, Յաւդայի, Իսաքարայ, Զաբուղոնի եւ Բենիամինի ցեղերը, որ արձնաւորեանջներովն եւ Գերագոյն լերան վրայ օրհնութիւններ կարդալ, իսկ Միւսները ցեղերուն վրայ անիծքներ ։ որոնք որի նազանդ գանուած կին ։ Այդ լերան վրայ Սիմէոնի զինուորը ՝ տաճար մի կանգնեց, որ Հրէից եւ Սամարացւոց մէջ ... ։ Նաւախին քահանայապետն ... Մաակ ... , ... 330 տարի

(1) Յեսու Ը. 30—32 ։

յառաջ. յետ այնորիկ ևեթ քահանայապետն և ոչ ժողովուրդեն մի՛ որ օրինաւորաց գտնուէր, Սամարիա կը փոխուէր միայն այն երթալով պատուականութեան ու-թշնամութիւնը հաստատուեցաւ երկու կուսակցութեանց մէջ։

Յամի 170, Քրիստոսէ յառաջ, Գարիզինի տաճարը Արամազդայ նուիրեցաւ. և շինութենէն 200 տարի յետոյ Յովհաննէս Հիւրկանոսի ձեռօք կործանեցաւ (1)։

Քրիստոնէութեան ժամանակ եկեղեցիներ շինուած կային այն լերան վըրայ։ Զենոն կայսեր օրով Սամարացիք քրիստոնէից վրայ յարձակելով Պենտէկոստէի օր մը, Տերտուղիանոս եպիսկոպոսին՝ որ ժողովուրդը կը հաղորդէր եկեղեցւոյ մէջ, մատները կտրատեցին ու հետը եկեղեցին այրեցին։ Զենոն, ի պատիժ Սամարացւոց, վռնելով հալածեց Գարիզինէն և քրիստոնէից տուաւ զայն, և անոր գլուխն ալ եկեղեցի մը կանգնեց յանուն Ս. Աստուածածնի և պահպանութեան համար պարսպեց։

Անաստասիոս կայսեր ժամանակ գար-

(1) Յովսեպ. Հնախօս. ԺԳ. 17։

ձեւալ յարձակեցան Սամսոնացիք լերանը ստորոտներէն կողմերէն, պահապանները հալածեցին, բայց իրենք ալ բռնուելով պատժեցան ։

Ս. Աստուածածնի եկեղեցւոյն հին մերը դեռ կը կենան, որոնցմէ յայտնի է թէ ուխտաւորինի էր և դէպ 'ի յարեւելս ուղղեալ էր տաճար սեղանը, եւ չորս ալ կողմերակի սեղաններ ունէր ։ Նաանցմէ 'ի զատ ուրիշ հնութեան մնացորդներ ևս կ'երեւին . լերանը հիւսիսային արեւմտեան կողմը գիւղի մի աւերականներ կան, որոնց մօտ դէպ 'ի յարեւմտեան հիւսիս՝ արտաքի մի մէջ Սամսոնցիք ամէն տարի կուգան խնճոյք ընհերը մատուցանելու ։

Յակոբայ-Ջրհորէն դէպ 'ի հիւսիսային արեւմտեայ գնալով Գերգաղ և Գարիզին լերանց մէջէն, 25 քայլէն Նաբլուս քաղաքը կը հասնինք ։

Այս քաղաքը հին ժամանակ Սիւքեմ կը կոչուէր, որու մէջ Յակոբ նահապետն բնակեր, բայց քանանացւոց աւանդներէն [illegible] կաղապարեցին և կանայքին ու [illegible] գերի տարին, 'ի պատիժ այն անպատուութեան, զոր Շմաւէ

բի որդի Աբուբէքրին իրենց քաղաքը բերաւ(1)։

Երբ Իսրայէլի Թագաւորութիւնը երկուսի բաժնուեցաւ, Յերոբովամ Սիկիմը գեղեցկացուց ամրցուց և իրեն մայրաքաղաք ըրաւ։ Ովսէէ Թագաւորի ժամանակ Ասորեստանցւոց Սաղմանասար Թագաւորը գալով Իսրայէլի տասը ցեղը գերի տարաւ և իշխանութիւնն վերջացուց 254 տարի տիրելէն յետոյ։ Եւ անոնց տեղ կռապաշտ ազգեր եկան բնակեցան, որոնք հոն գտնուող սակաւաթիւ տեղացւոց հետ խառնուեցան, և ասոնցմէ յառաջ եկած է արդի Սամարացւոց ցեղը։

Սամարիա խիստ կանուխ ընդունեց քրիստոնէութեան կրօնքը. այն քաղաքէն էր Ս. Յուստինոս, որ 167 թուին նահատակուեցաւ. Պեղամանոս եպիսկոպոսն Սամարիոյ, 314ին Նէոկեսարիոյ ժողովոյն մէջ էր։ Խաչակրաց ժամանակ իշխանութիւնն ալ քրիստոնէից ձեռքն անցաւ մինչև 1187, յորում ժամանակ կը Սամարիա ինկաւ Մահմետականաց ձեռքը։ 1834ին, երբ Իբրահիմ փաշայ Աքոն լեռանը վրայ պաշարուեցաւ. Սա-

(1) Ծննդոց ԼԳ. 27.

մտրատյիներէն, որոնց գլուխ էր Շ. Էն Բասսիլ-Լ'Հեմէր, Սէնհեմէր-Լ'ըբ Ներբ մեսալով, հաշտութիւն խօսեցաւ յիշեալ Շ. Էնտին հետ՝ ընդունելով նորա առաջ քարկած պայմանները, եւ Սամսոնդագի Պէլլահէք մեկնեցան իրենց տեղը. բայց յետոյ Իպրահիմ փաշայ յարձակեցաւ Նապլուսի վրայ մեծ ճարը առրեց, եւ չէն Բասսիլ-Լ'Հեմէրն ձերբակալ ընելով Դամասկոս տարաւ եւ չորս որդւոցը հետ գլխատեց։

Նապլուս Սուրբ Երուսաղէմի մօձակ է, ուր տեղ առաջնները եկեղեցի եւ հօգէտուն մի ունէին Հայք, ուր կ'իջեւանէին ցամաքաւ եկող ուխտաւորք. նաեւ բաւական արտ եւ ձիթենիներ եւս կային հոն եկեղեցւոյն կալւած. բայց միաբանք չկարենալով տանիլ բնակչաց բռնութեանը եւ զրկանքներուն, թողուցին հեռացան. թողլով եկեղեցին եւ կալուածները աւարառուներուն ձեռքը. բայց որուն որքան յանցանքն եւ Պաղեստինու կուսակալէն հրամաններ բերել տուին՝ որ ոչ ոք ձեռք երկնցնէ Հայոց կալուածներուն՝ եւ ձիթենիներուն, սակայն չկարցին գլուխ հանել։

Խօսած գիտեցինք դիւրը ունի Նաւարրա-ու. Հողը բարեբեր է, «անհամեմատ աղբիւ-րանքներէ կը վազէ ջուրը, որոնց մէջ ա-մենէն պատուականն է Գարիզին լերան կողմէն վազածը, որ Սան–Էլ–Լայն կը կո-չուի, որ ամենէն գլուխն բանը է, և շատ ջաղացքներ կը դարձընէ։ Սոս Սալվա-րայի Հրէից Սենահոկայէն մէջ Սատուա-ծաշունչ գրոց թանկագին ձեռագիր մի կայ մագաղաթեայ և գլանի վրայ ոլո-րուած, զոր կըսեն Սհարոնի թոռնու-դի Աբիսայի ժամանակէն կը համարին, այսինքն Քրիստոսէ 1500 տարի յառաջ։ Նաւարրայի բնակիչք 15,000 հոգի կը համարուին, որոնց մեծագոյն մասը մահ-մետական են։

Նապլուսէն մեկնելով, գնացինք եր-կար մշակուած ձորի մը մէջէ անցնելով 22 րոպէին Ռաֆիտիէ բանած գիւղը և 25 րոպէին Օսարա և Հեռազհեան, Ջ՛ինէր Պէյթ–Իլ–ղէն, Պէյթ–Իղա գիւղերը կը անցանէինք. Գերիզին և Գարիզին լերանց կողմերան վրայ կեցած։ Այն վերջին գիւ-ղին քանի մը յարաւ Ենթիարէն կ[illegible] Սեբեստիոն [illegible] Ճամբան [illegible] Տէյր–Իսըր–Իմիք [illegible] Պէյթ–Իլ–[illegible]

դին, Նաւատորոս եկեղեցին և Շէյխ-Ահմէդի կոչուած Թիւրքէն ժամով, 35 քայլէն՝ ձորին մը մէջէն իջնելով Արքունիկոն քաղաքին հին քաղաքը կը հասնինք, այն է Սուրբ Պօղոս Առաքեալը(1), որոյ անունը յետոյ Սամսոնիս կոչուեցաւ։

Նշանաւոր ատաճար մը կանգնեց Տահայրս, ատոր համար Եղիա մարգարէն ելաւ, ըստ իրեն թէ՝ շատ տարի այդ տի անձրեւ առանց անձրեւ և ցող չինելու(2)։ Յետոյ բոլոր Տահայրս երկրպագութեան փառաբանութեամբ տաճարին մէջ կանչելով՝ զամենքը մէկէն սրբէ անցընելով տուաւ, և Տահայրս կռոց արձանն ալ այրեց։

Քանանացիք յետոյ Սէնձ Նշգքաւաղով Նգփարսանեն զառնացեալ անիրեց այն քաղաքին։ Նախատարտուրք և Նեոկղոնադի ձեռոք կործանուեցէն յետոյ (107 տարի Ք. Ա.) Պոնտացիս Նաւթւոյ երկրին փոխի Հիւպատոսը կրկնին շինեց։ Հետագ Սէնձն ատեն չէնցուց և Սեբաստիա կողմէ Նիպատոսի Օգոստոսեայ կայսերը, քաղաքն Սեբաստիոյ քաղաքացի կամ տ-

(1) Յետ. ԻԲ. 20.
(2) Գ. Թագ. ԺԷ.

դաստափառ կը նշանակէ յունարէն լե-զուաւ ։ Փիլիպպոս առաքեալ այս քա-ղաքին մէջ քարոզեց և շատ հրաշքներ գործեց(1) ։

Քրիստոնէութիւնը ծաղկած էր Սե-բաստիոյ մէջ մինչեւ Պարսից և Մահ-մետականաց զօրանալը, որոնց ժամա-նակ սկսաւ քրիստոնէութիւնը և իւր բարեպաշտական հաստատութիւնները կործանիլ։ Հիմակ հին շէնքերէ մնա-ցած սիւներ կան, երկու աշտարակ, Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյն աւե-րակները, ճերմակ գմբէթ մի որ Աբ-դիա, Եղիսէ մարգարէից և Յովհան-նու Մկրտչի գերեզմաններուն վրայ շի-նուած է, և Իսլամաց ձեռքն է։

Սամարիայի լեռնէն իջնելով, 5 րոպէ անցքին, ճամբուն վրայ ձախ դին վեց սիւն կ'երեւի կանգուն. աջ դին է Պէյթ—Իմ-րին քարուած մեծ գիւղը լերան ստորոտը։

Այն սիւներուն եղած տեղէն մինչև Սանուր գիւղը երկուքուկէս ժամ է, որ կղզիակ բլրի մի վրայ շինուած է և ճա-նապարհին ձախ կողմը կ'իյնի։ Սանու-րը հին Բեթուլիա քաղաքն է, Յուդի-

(1) Գործք. Ը. 5։

թի հայրենիքը, այն որ Հոլոփեռնեսի գլուխը կտրելով Հրէից ազգը ազատեց[1]։ Քաղաքին դիրքը այնպէս ամուր է, որ Ճէզզար փաշայն 5000 զօրքով պաշարեց և չկարաց առնել, թէպէտ և քաղաքին մէջ հազիւ 2000 Զինելական կային։ Նորա յաջորդը Ապտուլլահ փաշայն թէպէտ և 1830 ին աւերեց քաղաքին, բայց 6000 մարդիկ կորսնցուց։ Իպրահիմ փաշային ետև, պարիսպները կործանեց, և յետոյ դարձեալ շինուեցան։

Սանէ մինչեւ Մէսուտիէ գիւղը որ աջ կողմը կ'ինկնի, մէկ ժամ է, և 7 րոպէ աւելի յառաջ գնալով Հիւսիսային կողմը կը տեսնուի Եսդրելոն դաշտին մէկ մասը. Նազարէթի լեռները. և Ճանապարհին վրայ աջ կողմը Միսանենի նման ծառ մը կ'երեւի, որուն ճիւղերը լաթի քուրջերով զարդարուած են. Սահմանապահները կը հաւատան որ այն ծառին շուքին ներքեւ մատուցուած աղօթքը կը լսուի։

Այս ծառին տեղէն մինչեւ 'ի Ճէնին մէկ ու կէս ժամէն քիչ մի աւելի է.

(1) Յուդիթ Դ. 5։ Ե. 3։

ճանապարհը բաւ մեծի, մարմին ծայրերու մէջն է ։ Կը կարծուի Թէ այն քաղաքի մէջ մտնելու ժամանակ տասը բորոտնե-րը պատահեցան Յիսուսի, և ողորմու-Թիւն խնդրելով իրմէ՝ բժշկուեցան (1)։ Այս տեղ հաւ եկեղեցի կար և 1555 Թուին աւերակ եղած է, բայց հիմակ և ոչ տեղը յայտնի է ։ Ջ'ընինի ընակերու-տարքը ջնջուած է . պատառուածքն երկիր ունի մշակութեան, և արմաւենիք ծա-ռերը գեղեցիկ տեսք մի տուած են իրեն։

Ջ'ընինէն մեկնելով ճանապարհն է դէպ 'ի Հիւսիսային արեւելք Նազարէ-Թի (Մ'Էրճ–Իպն–Ա'մէր) բարեբեր դաշ-տին մէջէն, որ Գալիլեաստանի մէջ ամե-նէն հռչակաւորն է . եւ անկիւնի ձեւ-ւանի., Հիւսիսային արեւմտեան կողմէն մինչեւ Մ'Էրկիրաւոնի ծովը կը հասնի ։ արեւելքէն՝ երեք ձորով կերկնցած է ։ մին Թաբօր և Հերմոն լերանց, երկրոր-դը Հերմոն և Գեղբուէ լերանց ; և երր-որդը Գեղբուէյ լերան և Ջ'ընինի մէջ-տեղ ։ Երկայնութիւնն է 12 մղոն, եւ լայ-նութիւնը 5 ։ Քանի մի գիւղեր մէջէն կ'անցնին ։

(1) Ղուկ. ԺԷ. 11–14.

Ճինինէն 17 ժամ քալելէն յետոյ, ձախ թեւին վրայ երեք գիւղ կ'երեւին եւ դիմացը կը տեսնուի Գելբուէի լեռը, որ երեւելի է Փղշտացւոց դէմ Սաւուղի տուած պատերազմաւ, ուր երեք որդւոց հետ սպաննուեցաւ (1). Անկէ մինչեւ ի Զէրային մէկ ու կէս ժամ է:

Զէրային հին Յեզրայէլ քաղաքն է Իսաքարայ ցեղին (2), որ հռչակաւոր է իւր պատմական դէպքերով. 1183 ին Սալահէտտինի զօրքերը հիմնայատակ ըրին այն քաղաքը. այսօր մեծկակ գիւղ մի է աղէկ շէնքերով:

Զէրայինէն մինչեւ Սօլամ մէկ ու կէս ժամու ճամբայ կը տեւէ: Սօլամ Սունամ քաղաքն է Ս. Գրոց (3). ուսկից էր Սունամացին որ Աբիսակ կը կոչուէր. Նոյն քաղաքին մէջ յառաջ Եղիսէ կենդանացուց այն տղայն, որ իրեն հիւրասիրութեան վարձատրութիւն տուած էր (4). Հիմակ այդտեղ գիւղ մի է փոքր Հերմոնեան լերին ստորոտին վրայ, ուր սակայն հնադարեան եկեղեցի մի կայ:

(1) Ա. Թագ. ԻԱ.
(2) Յեսու ժթ. 17.
(3) Յեսու ժթ. 18.
(4) Դ. Թագ. Ը. 1.

Ֆուլէյէն ելնելով 25 րոպէին Ս. Յովալէ գիւղը կը հասնինք, որու մօտ է Համինուն ու եփրայիմ անդրոյթը, ուր տեղ Գիտնաբանից՝ ակինքէն ատեան պատմելով մէջ Տաճկաց հետ, եւ չորս հազար մարդով՝ Նաբոլէոն եւ Գլէպէրի զօրավարութեամբ քանդուեցան Տաճիկ զօրքեր (1799):

Ասկէ 7 րոպէ անդին Նազարէթ գնալու ճանապարհը թողլով, ձախու գիւղ եւ դէպ 'ի Եզրայելոնեան ելլելով գնալով Հերմոնի ստորոտը, 40 րոպէին Նային քաղաքը կը հասնինք, որ փոքրիկ գիւղ մի է Մահմետականաց՝ նոյն լեռան քոքը: Այս տեղ յարութիւն տուաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս այրի կնիկան որդւոյն՝ երբ թաղելու կը տանէին (1): Հրաշագործութեան տեղը յառաջագոյն եկեղեցի կայ, որ հիմայ քանդուած վիճակ է: Նային մէկ ժամ դէպ 'ի յարեւելք է Ենդոր բաւական անին, ուր Սաւուղ ձեւոյ պատագամ հարցուցեր վհուկ կնիկան (2):

Նայինէն 45 րոպէ կը տեւէ Կիսոնի հռչակաւոր հեղեղատը: 25 վայրկեան

(1) Ղուկ. Է. 11—17:
(2) Ա. Թագ. ԻԸ. 8:

եւս յառաջ գնալով՝ այն կողմը կերթայ մի կը տեսնուի որ Նաւարեցւոց գաւառը կ'ելնէ. ասոր արեւելեան կողմն է Նազարէթի շրջակայքը, և արեւմտեան կողմն է այն Սրբուհւոյն լեռները, ուսկէ Նազարեթցիք ուզեցին որ Յիսուս վար գահավիժեն.(1) ։

Այս ամբողջ մինչեւ 'ի Նազարէթ մէկ ժամ է։ Սուրբ Գիրք · արտասնութեան մէջ առաջին անգամն Ղուկաս կը յիշատակէ իւր աւետարանին մէջ (Ա. 26)։ Այս քաղաքին մէջ կը բնակէր Սուրբն Յովսէփ և անոր հետ Կոյսն Մարիամ, որմէ ընկալաւ Աստուծոյ Որդին մարդկային մարմին, և աշխարհիս փրկութիւնը հրաշագործեց։ Աւետարանագիրն Մեծն գեղեցիկ նկարագրի մի ճինեց այն տաճար … վրայ … այր. հրեշտակապետն երեւցաւ Մարիամ Կուսին, աւետելով բանին Աստուծոյ նորա. արգանդին մէջ մարմին առնելու գալը։ Մինչեւ 1219 տարի անկարամ աւերեցաւ և կործանեցաւ. Մինչեւ Սուլթանն եւկեղեցին. Դամասկոսոյ սուլթանութեան և … Հաւատ ընծայեցաւ լատինաց, մինչեւ

(1) Ղուկ. Դ. 29։

1291 Թուականին գետ Աստուածածնի տունը իւր ամբողջութեամբը կը կենար, և նոյն տարին, Մայիսի 10ւ օրը յանկարծ անհետացաւ, և ի բաց Դալմատիէթի մէջէն՝ և Պռաղմաւոսյի Տերսատտ քաղաքին մէջ կը գտնուի. և անկէ ետև 1294 Դեկտեմբեր 10 ին հրաշքով կը փոխադրի Անեգոնատի, յետոյ մերձակայ լերան վրայ, վերջապէս. Լորէտ քաղաքին մէջ կը հանգչի, ուր մեծ ջերմեռանդութեամբ պատուի և յաճախ կ'ընդունի միջնչեւ ցայս օր Հռոմէական պատգամաւորներէն.

Պրոտեստանտները քանի մը անգամ փորձեցին նորոգել Սուրբ տեղւոյս եկեղեցին և իւրենց հաստատուն կանդ մը հաստատել, և քիչ ժամանակ մնացին յետոյ վտարուեցան անկէ. վերջապէս 1780 ին հաստատուեցան, եկեղեցին և վանքը կրկին անկախ նորոգեցին:

Սուրբ Տունն ունի 17 ոտք տարածութիւն նեղ կ'իջնէ. տասն և չորս ոտք էլ նորոգած զարդարուած մաս մը կայ, որ Աստուածածնի տանը պատկեր կ'ըսեն Լորետոյ. և երկու խորան կայ մէջը, և այս երկու պատուանդանաց միջնանցքն երկու ոտք տարածութեամբ Սուրբ Սեղան մէջ

կ՚իջնուի որ բոլորովին միմեանցից և պա-
տերը մարմարով պատած է ։ Ոչ ձեռքին
վրայ կը տեսնուի կարմրաքարեայ սիւնին
բունը, որ իբր նշան դրուած է այն
տեղւոյն վրայ՝ ուր կանգնած էր ամե-
նասուրբ Աստուծոյ Երկնաւոր Պատգամա-
բերին (Հրեշտակապետին) հետ խօսե-
լու ժամանակ. իսկ Հրեշտակապետը
կանգնած տեղին ալ այն է, ուր իւր ա-
նուանքը սեղան մը կանգնած է ։ Այն
ուրիշ մէջ ալ մէջ երկու մատուռներ
եւս. ու վերջին մատուռին մէջէն 13
սանդ աստիճանով պղտի մը մէջ կը մտնուի,
որուն ինչ ըլլալը յայտնի չէ ։

Նազարէթի հիւսիսային արեւելեան
կողմը, իբր 500 մետր հեռու, քաղաքին
մէկ հատիկ աղբիւրն է, որ Աստուածած-
նի աղբիւր կը կոչուի, ուր տեղ ըստ ա-
ւանդութեան, ջուր. Համեմատ եկած
ժամանակ երեւցաւ իրեն Գաբրիէլ
Հրեշտակապետը ։ Ջուրը ջրմուղէ մը
անցնելով կու գայ աղբիւրը, որուն ակն
է քանի մը մետր անդին Յունաց եկե-
ղեցւոյն մէջ ։ այս հին եկեղեցւոյ մը վը-
րայ շինուած է, եւ Յոյնք այս տեղւոյս
համար կ՚ըսեն թէ՝ Հրեշտակապետը ա-

առաջին անգամ երեւելուն Ամենասուրբ կուսին։

Լատինաց վանքէն 180 մետր հեռու ուրիշ եկեղեցի մի եւս կայ, որ Սինակոկ կը կոչուի. որու համար կ'ըսեն Լատինք թէ այն տեղւոյն վրայ է, յորում Տէր մեր Յիսուս Քրիստոս Եսայի մարգարէի գիրքը կարդաց եւ Աստուծոյ արքայութիւնը կը քարոզէր Հրէից, եւ ժողովուրդը զինքը դուրս հանելով անկէ՝ տարեր լեռան որ ժայռին բարձրէն (արտաւան) վար գահավիժեն(1)։ Այն եկեղեցին Հռոմէական Յունաց ձեռքն է, իսկ Նշանաւոր վէմը քաղաքէն 3 հազարամետր հեռու հարաւակողմն է, ուր ժամանակաւ եկեղեցի կար։

Նազարէթ անհարթ գետնի վրայ կառուցուած է. խառնուղիներ շատ կան մէջը, որոնցմէ կ'անցնին ջրհասատող քարաժայռերէն հոսած անձրեւները. փողոցները նեղ եւ աղտոտ են։ Բնակիչքը 6000 հոգի են. Տաճիկ, արեւելեան Յոյն, կաթոլիկ Յոյն, Լատին, Մարոնիտ եւ Բողոքական։

Նազարէթէն մեկնելով 1 ժամ եւ 40

(1) Ղուկ. Դ. 29։

րոպէին կը հասնինք Թոփգափուին դրան առջը, և անկէ մինչեւ լերան դաշտավայրը ելնելը 50 վայրկեան կը տեւէ, ուր տեղ Յոյնք եկեղեցի մի ունին. եւ Լատինք Ս. Ալբերտո-Բեատ եկեղեցին։

Թաբօր լեռը Նազարէթէն 100 մետրաչափ, Տիբերիայէն 760, և դաշտէն 400 մետր բարձր է։ Աստ Տէրն մեր Յիսուս Քրիստոս իւր երեք գլխաւոր աշակերտաց ցուցուց. պայծառակերպելով իւր աստուածային փառքը ցոյց տուաւ։ Հեղինէ Թագուհին հոն, ինչպէս կ'ըսուի թէ 326 ին եկեղեցի մի շինեց Այլակերպութեան անուան մեծայ, որ լերանը հարաւային արեւելակողմն կ'իյնի. եւ երկու սուրբ եկեղեցիներ եւս. շինեցան յանուն Մովսէսի եւ Եղիայի, զորոնք Պատմիչ Նիկեփորոս Կալիստոս Զանազանորդը կը յիշատակէ. Այն սպարապետն լերանս վրայ Հայք եւս առանձին վանք եւ եկեղեցի ունէին, ինչպէս նաեւ Տիբերիական ծովակն եզերքը եւ ուրիշ տեղերուանք Գալիլէացւոց. որոնց Հայ վարդապետ մի (Մխիթար?) գրուց ծագայելով Հայոց ՋԿԸ. (1519.) Թուականին, ականատես եղած է. Թաբօրա-

կան՝ ընդամէն նկարագրութիւնը կ'ընէ եւ Եղիշէ Երէց, ուր գնացած է անձամբ եւ կամ թերեւս հոն մնացած է Հայ վանորէից մէջ։

Պատերազմի երեւան շատ անգամ կործանուած եւ Մահմետականաց ձեռք անցած է. վերջին աւերումը տուաւ Պիպարս (Փընտուխտար) 1263 թուին։ Մինչեւ ցայսօր տակաւին շատ աւերակներ կը տեսնուին ընդհանդարձին վրայ, արտաքին մնացորդներ, ժայռերու մէջ փորուած խուցեր, աշտարակի կամարներ եւ անթիւ սառնիճներ։

Թաբոր լերան ստորոտէն մինչեւ Գալիլեայի կամ Տիբերիական ծովը չորս ու կէս ժամ է, որ Գենեսարէթայ ծով եւս կ'ըսուի, համանուն քաղաքէն առնելով (1)։ Տիբերիական ծովը Միջերկրականէն 230 մետր ցած է. հիւսիս-հարաւ երկայնութիւնը եւ երկու մղոն լայնութիւն ունի, ամենէն շատ խորութիւնն է 55 մետր. ջուրը քաղցր ու ձկնաւէտ է։ Փիլիպէս մեր Յիսուս շատ անգամ նաւարկութիւն ըրած է այս ծովին վրայ եւ հրաշքներ գործած։

(1) [illegible]

Տիբերիա քաղաքը համանուն ծովուն եզերքը կառուցեալ է, որու հիմնադիրըն է Հերովդէս Անտիպաս Չորրորդապետը, զոր 'ի պատիւ Տիբերոս կայսեր անուանակոչեց, և իրեն մայրաքաղաքը ըրաւ: Երուսաղէմի կործանումէ ետքը, Հրէից ապաստանի քաղաք եղաւ Տիբերիան և իրենց քոլնուիրական կը համարուէր, ուր տեղ կային երեւելի կարդացողներ: Առաջին եկեղեցի շինողն եղած է հոս 'ի քրիստոնէութեան դարձող Յովսէփ անունով Հրեայն Մեծին Կոստանդիանոսի ժամանակ, և քիչ ժամանակէն եպիսկոպոսանիստ քաղաք եղաւ: Շատ անգամ պատերազմներ տեսած է Խաչակրաց և Խալիֆայից և Սուլդանաց կողմէն: Անցեալ դարուն Աքեայի Դահիր-Էլ-Ամր փաշայն բերդերը նորոգեց. և 1833 ին Եգիպտոսի Իպրահիմ փաշայն կրկին նորոգեց, և 20 թնդանօթ դրաւ պարիսպներուն վրայ, որոնք յետոյ Աքեա փոխադրուեցան: 1837 ի շարժէն պարսպին շատ տեղերը ճեղքեցան և ծակեր բացուեցան, որոնք իբրեւ դուռ կը ծառայեն, ըստ որում քաղաքադուռ մէկ հատ միայն ունի

արեւմտեան կողմը ։ Բնակիչքն են 3500 հոգի, մեծ մասը Հրեայ ։

Տիբերիայէն մինչեւ Բեթսայիդա երկու ժամու ճամփայ կայ, որ Պետրոսի, Փիլիպպոսի եւ Անդրէասի հայրենիքն էր, եւ հիմակ Էդ-Դէյլ կը կոչուի. եւ անկէ մինչեւ'ի Կափառնաում մէկ ու կէս ժամ է ։ Հիմակուան եղած քաղաքը Թէլ-Հում կը կոչուի, որ լճին մօտ է, ինչպէս Մատթէոս աւետարանիչ (Դ. 13) Կափառնաումի համար ծովեզերեայ քաղաք կ'ըսէ ։ Հիմակ Թէլ-Հում քանդ տեղն աւերակ մի է ։ այժմ եօթը ութ խրճիթներ կը տեսնուին չոր քարերով շինուած ։

Կափառնաումէն 40 քայլ կը տեւէ Գորազինը, որ հիմակ Քէրազէ կը կոչուի, եւ հիւսիսային արեւմտակողմը կ'ինկնի ։

Տիբերիայէն շատ հեռու չէ այն նշանաւոր դաշտը Հիտտինի (1), որուն մէջ է այն տեղն ուր Յիսուս Քրիստոս եօթն հացով եւ քանի մի ձկով չորս հազարէն աւելի մարդիկ կշտացուց (2) ։

(1) Այս դաշտին մէջ ընդունեցին խաչակիրք վերջին հարուածը, որով վերջացաւ իրենց իշխանութիւնը Պաղեստինու մէջէն ։

(2) Մատթ. ԺԵ. 32—38 ։

Յիշեալ աւերութեան վերայ կեր՝ նշան քանի մի սեւ խոշոր քարեր կը տեսնուին ծա-ծածկարանքին քով՝ աջ դին, և ձախ դիմա-ցը։ Սոս եւս հնուց եկեղեցի կար, ո-րուն հիմունք և ոչ աւերակները կ՚երեւին։

Սոսէ երեք ժամ կը տեւէ դէպ ՚ի հիւսիսային արեւմուտք Տիբերիադայ Լեռը. որուն գագաթը դիւրութեամբ կ՚ելնուի 5 վայրկեանի մէջ, ուր տեղ Յի-սուս Քրիստոս իւր երանութիւնները տուաւ (1). Այս բլրին հիւսիսային կողմը կ՚իյնայ Սաֆէտ քաղաքը. 4000 բնակիչ-ներ, և երրորդ մասը հրեայ են։ Սա-ֆէդ հրէից մեծ սրբազան քաղաքներէն մին համարուած է. Սոսկէ մէկ ժամ է Լուպիէ մեծ գիւղը, ուր Փոնաբարդին Ժիւնօյ զօրավարը իւր զօրքերովը Լուսնայ-կէն գարնու ժամանակ Թիւրքաց-առաջին յարձակումն մի կրեց, և նորէն յետ դարձաւ ՚ի Կանան, ուր երկու օ-րէն յետոյ Քլէպէր օգնութեան հա-սաւ իրեն (1799 Ապրիլ)։

Լուպիէէն երկու ժամու ճանապարհ է սիրելի ՚ի Կանա Գալիլեա. ուր մանկ-լու ժամանակին մայրն ջուրը որ աւ

(1) Մատթ. Ե. 3—11.

կողմը կը տեսնուի, աւերակ մզկիթ մը է, որ կը կարծուի թէ Նաթանայէլի տանը տեղն է ։ Կանայի մէջ եղաւ Թագաւորազն իշխանը Յիսուսի մօտ որ իւր օրհասական որդին գայ առողջացընէ (1) ։ Դարձեալ նոյն քաղաքին մէջ իւր առաջին հրաշքը գործեց Յիսուս հարսանեաց օր մը, ուր ինքն իւր մօրը հետ կը գըտնուէր, ջուրը գինիի փոխելով ։ Գիւղէն յիսուն մեդրաչափ հեռու ձախ դին՝ պզտիկ գետնի մը վրայ աւերակներ կը տեսնուին և մէկ ձերմակ սիւն մը, որ Հեղինէին Սիմոն Կանանացւոյ տանը տեղւոյն վրայ շինել տուած եկեղեցւոյն են ։ Նոյն Սիմոն Կանանացիին հարսանեաց օրն էր որ Յիսուս գինեփոխութեան հրաշքն ցոյց տուաւ ։ Յունաց եկեղեցւոյն մէջ երկու հատ կուժ կը գտնուին, որոնց մէջ էր կ'ըսեն ջուրը զոր Յիսուս գինիի փոխեց ․ քարէ փորուած են խոշոր (խոպա) չէնքով ։ Կանա, զոր տեղացիք Քէֆր-Քանա կ'անուանեն, 600 բնակիչ ունի, Յոյն և Մահմետականք

Նազարէթէն մինչեւ 'ի Քայֆա կամ Հայֆա ծովեզերեայ քաղաքը՝ 8 ժամու

(1) Յովհ. Դ. 46—54.

չափ կայ, Կարմիրս լերան ստորոտը շինուած, 4000 բնակիչ ունի խառն ազգերէ:

Բայզիտէն մէկ ժամու մօտ կայ Կարմիրս լեռը, որ նշանաւոր է Եղիա եւ Եղիսէ մարգարէից յիշատակաւը, ուր անդ Եղիա Բահաղու մարգարէները պանթապարար ըրաւ, եւ յետոյ Կիսոնի հեղեղատին մէջ իջեցընելով զանոնք ջարդել տուաւ (1):

Քրիստոնէութեան առաջի դարերէն 'ի վեր աստ բնակող անապատականք Ս. Աստուածածին ընդունելով, սկսան կրկին եւս քարոզել զՅիսուս Քրիստոս:

Չորրորդ դարուն մէջ եկեղեցի մը շինուեցաւ Հեղինէի ձեռօք:

Յամի 412, Յովհաննէս պատրիարք Երուսաղէմի կանոններ տուաւ Կարմեղոս լերը ճգնող կրօնաւորներուն: Շատ երեւելի եւ սուրբ ճգնաւորներ բնակած են այս լերանս վրայ: Շատ անգամ յարձակում եւ աւերում ստացած են Կարմեղոս լերանս վանքերը եւ եկեղեցիք: Վերջին ժամանակներս (1821) Աքեայի Աբդուլլահ փաշային ձեռամբ-

(1) Գ. Թագ. ԺԸ. 1—40:

րով որ այն ատեն ամփոփարով կղզւոյ իւր Թշնամեաց օգտակար ըլլար մի ըլլալ. Թէ՛ եկեղեցին և Թէ վանքը քանդել տուաւ, և անոր նախաթերանքը վանքին մօտ ապարանք մի շինելով՝ ամառը հոն անցընելու՝ կուգայր. Բայց պարի յետոյ Յովհ. Գագիկեան անուն կրօնաւոր մի պատճառ եղաւ կրկին շինութեան վանուց և եկեղեցւոյն, և Կարմելեան անուամբ միաբանութիւնն հաստատւեցաւ, որ հիւրասիրութեամբ կ՚ընդունի ու խաղաղ գնացող քրիստոնեայքը։

Լատինաց վանքը քառանկիւնի մեծ շէնք մի է լերանը հիւսիսային արեւմըտեան ծայրը. եկեղեցւոյն առաջ խորանին տակը այր մի կայ, ուր կ՚ըսուի Թէ Եղիա և Եղիսէ մարգարէները կը բնակէին, որու մէջ հիմա սեղան պատրաստանով կ՚ելլեն. Պարտիզին մէջ պարսպէ բուրգ մի կը տեսնուի, որու տակ Թաղուած են Գաղղիացի զօրքերը, որոնք 1799 ին յիշեալ վախճանաւ մէջ Զարգացուեցան Նափոլէոնի պատերազմներէն.

Եկեղեցւոյն գլխաւոր դրանը առջեւ ծովուն ամենայ մի կայ. այն է Ս. Գարմէլի Մարիամ, որուն ապաստանութիւնը

Եղիայի և Եղիսէի ժամանակէն կը համարուի. և 1635 Թուականէն 'ի վեր է Մահմետականաց ձեռքն է, և Իսլամ մի կը պահպանէ, և ուղողը կրնայ պարգեւ մի տալով ներս մտնելու: Բարանձաւ մի է բնական և մարդու ձեռօք հարթուած:

Կարմելոս լեռնէն մէկ ժամ է Ս. Եղիայի աղբիւրը, որ ժայռի մէջէ կը բխէ:

Կարմելոս լեռնէն մինչեւ Աքքա, որ ըստ գրոց Պտղոմայիդ կը կոչուի, երեք ու կէս ժամ է:

Կարմելոսը սուրբ երկրին վերջին ծայրն է, ուր կը լմանայ գրեթէ ուխտաւորութեան շրջանը, ուստի և մենք այս տեղ լրացընելով մեր պատմական և տեղագրական համառօտ տեղեկութիւնը և աւանդութիւնը, կը թողումք բարեպաշտ ուխտաւորաց որ գիտնան արդիւնաւորել և զօրացնել իրենց հոգւոյն ու սրտին մէջ ընդունած զգացմունքները և ետքը առ Արքայն տեղիս և առ Յիսուս Քրիստոս Փրկիչն, որ է կուսին փառաբանութեանց:

ՎԵՐՋ